

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

ԻՆՉՊԵ՛Ս ՍԿՍՎԵՑ ԱՄԵՆ ԻՆՉ.

ԾՆՆԴՈՑ 1-11

ԲՈՒ ԱԹԼԻ

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ

(ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ 1Ա

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ, ՄԱՐՇԱԼ, ՏԵԽԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Այս գրքում կիրառված տեխնիկական աղբյուրների համառոտ բացատրություններ.....	4
Երբայերեն բայի ձևերի համառոտ սահմանումները, որոնք ազդում են բացատրության վրա.....	6
Այս մեկնաբանության գրքում կիրառվող հապավումները.....	12
Հեղինակի խոսքը. Ինչպես կարող է ձեզ օգնել այս մեկնաբանությունը.....	14
Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վստահելի ճշմարտության անձնական ուսումնասիրություն..	17
Մեկնաբանություն.	
Ծննդոց 1-11 ուսումնասիրության բացման խոսք.....	25
Ծննդոց գրքի ներածություն.....	27
Ծննդոց 1:1-2:3.....	36
Ծննդոց 2:4-25.....	64
Ծննդոց 3:1-24.....	75
Ծննդոց 4:1-26.....	92
Ծննդոց 5.....	100
Ծննդոց 6:1-22.....	104
Ծննդոց 7.....	117
Ծննդոց 8:1-22.....	121
Ծննդոց 9:1-29.....	125
Ծննդոց 10:1-32.....	135
Ծննդոց 11:1-32.....	144
Հավելված. Վարդապետական սկզբունքներ.....	150

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Երկրագնդի տարիքը և ստեղծումը.....	41
<i>Yom</i> , Ծննդոց 1:5.....	48
Բնական ռեսուրսներ, Ծննդոց 1:24-2:3 համատեքստային հասկացությունները	55
Երկրագոյություն, Ծննդոց 2:3.....	61
Աստվածության անունները, Ծննդոց 2:4.....	66
Նոր Կտակարանի զարգացումները Անկման վերաբերյալ, Ծննդ.3 Ներածություն.....	77
Օձը, Ծննդոց 3:1.....	78
Անձնական չարք, Ծննդոց 3:1.....	80
Ինչո՞ւ Աստված Ադամին ու Եվային կենդանու կաշվից հագուստներ հագցրեց, Ծննդ.3:21....	87
<i>‘Olam</i> (Հավիտյան), Ծննդոց 3:22.....	88
Քերովրե, Ծննդոց 3:24.....	90
«Գիտենալ», Ծննդոց 4:1	94
«Աստծո որդիները» Ծննդոց 6-ում, Ծննդ.6:2.....	105
Հսկաներ, հզոր մարդիկ կամ մարդկանց խմբերի համար գործածված տերմիններ, Ծննդ.6:4....	108
Արդարություն, Ծննդոց 6:9.....	110
Ուխտ, Ծննդոց 6:18.....	115
Գինի և թունդ խմիչքներ, Ծննդոց 9:21.....	128
Ռասսիզմ, Ծննդոց 9:25.....	130

«ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉԸ» ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. Բառարանային՝

Հնագույն Եբրայերենն ունի մի քանի հասանելի գերազանց բառարաններ՝

Ա. *Հին Կտակարանի Եբրայերեն և Անգլերեն Բառարան* Ֆրենսիս Բրաունի, Ս. Ռ. Դրայվերի և Չարլզ Ա. Բրիգգի կողմից (*Hebrew and English Lexicon of the Old Testament* by Francis Brown, S. R. Driver, and Charles A. Briggs): Այն գրվել է Ուիլյամ Գեսինիուսի Գերմաներեն Բառարանի հիման վրա: **Հայտնի է BDB հապավումով:**

Բ. *Հին Կտակարանի Եբրայերեն և Արամերեն Բառարանը* Լյուդվիգ Բոհլերի և Ուոլթեր Բոմգարթների կողմից (*The Hebrew and Aramaic Lexicon of the Old Testament* by Ludwig Koehler and Walter Baumgartner), թարգմանված Մ. Ի. Ջ. Ռիչարդսոնի կողմից (M. E. J. Richardson): **Հայտնի է KB հապավումով:**

Գ. *Հին Կտակարանի Եբրայերեն և Արամերեն Համառոտ Բառարան* Ուիլյամ Լ. Հոլլադեյի կողմից (*A Concise Hebrew and Aramaic Lexicon of the Old Testament* by William L. Holladay) և հիմնված է վերը նշված Գերմաներեն բառարանի վրա:

Դ. Մի նոր հինգ հատորանոց աստվածաբանական բառային ուսումնասիրություն *Հին Կտակարանի Աստվածաբանության և Էզգեգետիկայի Նոր Միջազգային Բառարան* վերնագրով, խմբագրված Ուիլյամ Ա. Վան Ջեմերենի կողմից (*The New International Dictionary of Old Testament Theology and Exegesis* edited by Willem A. Van Gemeren): **Հայտնի է NIDOTTE հապավումով:**

Որտեղ որ կան բառերի նշանակալի տարբերություններ, ներկայացրել են մի քանի անգլերեն թարգմանություններ (NASB, NKJV, NRSV, TEV, NJB) թե՛ «բառ առ բառ» և թե՛ «դինամիկ հավասարագոր» թարգմանություններից (տես՝ Գորդոն Ֆիլի և Դուգլաս Սթյուարթ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 28-44 /Gordon Fee & Douglas Stuart, *How to Read the Bible For All Its Worth*):

II. Քերականական

Սովորաբար քերականական վերլուծությունը հիմնված է Ջոն Օուենգի *Հին Կտակարանի Վերլուծական Սկզբունք* չորս հատորանոց գրքի վրա: Սա միաժամանակ համեմատվել է Բենջամին Դեյվիդսոնի *Հին Կտակարանի Վերլուծական Եբրայերենը և Քաղղեական Բարբառը* /Benjamin Davidson *Analytical Hebrew and Chaldee Lexicon of the Old Testament*/գրքի հետ:

«Դու կարող ես հասկանալ Աստվածաշունչը՝ շարքի ՀԿ-յան հատորներից մեծամասնության մեջ կիրառվող քերականական և սինթետիկ կազմությունների համար մեկ այլ օգտակար աղբյուր է Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների կողմից ներկայացված «Օգնություն թարգմանիչների համար շարքերը»: Դրանք վերնագրված են «———— մասին ձեռնարկ»:

III. Տեքստային

Ինձ հարազատ է Եբրայերեն բաղաձայն նիշերով գրված տեքստի ներշնչանքը (ոչ թե Մագորեթիկ ձայնավոր նիշերով և մեկնություններով): Ինչպես և բոլոր ձեռագիր, հնագույն տեքստերում այստեղ էլ կան որոշ խրթին հատվածներ: Սովորաբար դրա պատճառները հետևյալն են՝

Ա. *hapax legomena* (Եբրայերեն ՀԿ-ում միայն մեկ անգամ գործածված բառեր)

Բ. դարձվածքաբանական տերմինները (բառեր և աչտահայտություններ, որոնց բառացի նշանակությունները անհետացել են)

Գ. պատմական անստուգությունները (հին աշխարհի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունների պակասը)

Դ. Եբրայերենի սահմանափակ բառադարանի բազմասեմիտիկ հիմնահարթակը

Ե. հետագա դպիրների կողմից ձեռքով արտատպված հնագույն եբրայերեն տեքստերի հետ կապված խնդիրները

Զ. Եգիպտոսում ուսանած եբրայեցի դպիրները, որոնք ազատ են զգացել վերարտադրելու այն տեքստերը, որոնք արտատպել են, դրանք դարձնելով ամբողջական և իրենց օրերի համար հասկանալի (NIDOTTE էջ՝ 52-54):

Գոյություն ունեն Մագորեթիկ տեքստային ավանդույթից դուրս եբրայերեն բառերի և տեքստերի մի քանի աղբյուրներ.

Ա. Սամարիայի Հնգամատյանը

Բ. Մեռյալ Ծովի Գալարները

Գ. Հետագայում գտնված որոշ մետաղադրամներ, նամակներ և բրածոներ (չայրվող խեցեգործության՝ կավից պատրաստված առարկաների կտորներ, որոնց վրա կան գրություններ)

Սակայն շատ հատվածների համար, ՀԿ-ի համար գոյություն չունեն ձեռագրային ընտանիքներ ինչպես հունարեն ՆԿ-ի ձեռագրերն են: Մագորեթիկ Տեքստի (մ. թ. 900) տեքստային հավաստիության շուրջ հետաքրքիր համառոտ հողվածի համար տե՛ս «Հին Կտակարանյան Տեքստի Հավաստիությունը» Բրյուս Կ. Ուոլթթի կողմից /"The Reliability of the Old Testament Text" by Bruce K. Waltke/ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 51-67:

Գործածվող Եբրայերեն տեքստը *Biblia Hebraica Stuttgartensia* է Գերմանական Աստվածաշնչյան Ընկերությունից, 1997, որը հիմնված է Լենինգրադ Կոդեքսի (մ. թ. 1009) /Leningrad Codex/ վրա: Երբեմն օգնության են հասնում հնագույն տարբերակները (Հունարեն Սեպտուագիստան, Արամերեն Թարգումները, Սիրիակ Փեշիտտան և Լատիներեն Վուլգատտան), եթե Եբրայերենը անորոշ կամ սկներն շփոթեցնող է:

ԵՐՐԱՅԵՐԵՆ ԲԱՅԻ ԶԵՎԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՉԴՈՒՄ ԵՆ ԲԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

- I. Երբայերենի պատմական զարգացումը համառոտ տեսքով
- Երբայերենը համարվում է հարավարևմտյան Ասիական լեզվախմբի Սեմական ընտանիքի մի մաս: Անունը (որը տրվել է ժամանակակից գիտնականների կողմից) գալիս է Նոյի որդուց՝ Սեմից (տես՝ Ծննդ.5:32; 6:10): Սեմի սերունդները թվարկված են Ծննդ.10:21-31-ում որպես Արարներ, Երբայեցիներ, Սիրիացիներ, Արամեացիներ և Ասորիներ: Իրականում որոշ Սեմական լեզուներ կիրառվում են այն ազգերի կողմից, որնք նշվում են Քամի սերնդաբանության մեջ (տես՝ Ծննդ.10:6-14)՝ Քանանը, Փյունիկեն և Եթովպիան:
- Երբայերենը այս Սեմական լեզուների հյուսիս-արևմտյան լեզվախմբի մի մասն է: Արդի գիտնականներն ունեն այս հնագույն լեզվախմբից օրինակներ՝
- Ա. Ամորիերեն (*Mari Tablets* Ք. Ա. 18-րդ դար, Աքքադերենում)
 - Բ. Քանաներեն (*Ras Shamra Tablets* 15-րդ դարից, Ուգարտերենում)
 - Գ. Քանաներեն (*Amarna Letters* 14-րդ դարից, Քանանի Աքքադերենում)
 - Դ. Փյունիկերեն (Երբայերենը կիրառում է Փյունիկերենի այբուբենը)
 - Ե. Մովաբերեն (Մեշայի քարը, Ք.Ա. 840)
2. Արամերեն (Պարսից Կայսրության պաշտոնական լեզուն, որը կիրառվում է Ծննդ.31:47-ում /2 բառ/, Երեմ. 10:11, Դան.2:4բ-6, Եզրաս 4:8-6:18, 7:12-26 և առաջին դարի Պաղեստինի հրեաների խոսակցական լեզուն)
- Երբայերեն լեզուն կոչվում է «Քանանի շուրթ /հայ.՝ լեզու/» Եսայի 19:18-ում: Առաջին անգամ այն անվանվում է «Երբայերեն» Իմաստություններ գրքի նախաբանում (Բեն Սիրաքի Իմաստություն), մոտ Ք.Ա. 180-ին (և մի քանի ավելի շուտ գրի առնված տեղերում, տես՝ *Israhelshu* *Աստվածաշնչյան Բառարան*, հատոր 4, էջ՝ 205 /*Anchor Bible Dictionary*): Այն ամենամոտն է Մովաբերենին և Ուգարիտում գործածվող լեզվին: Աստվածաշնչից դուրս Երբայերենի կիրառության օրինակներ են՝
- 1. Գեյզեր օրացույցը, Ք. Ա. 925 (դպրոցական մի տղայի գրություն)
 - 2. Սելովամի Արձանագրությունը, Ք. Ա. 705 (թունելային գրություն)
 - 3. Սամարիայի Օստրակա, Ք. Ա. 770 (հարկերի հաշվետվություն կավե կտորների վրա)
 - 4. Լացիսի նամակները, Ք. Ա. 587 (պատերազմական կապեր)
 - 5. Մակկաբայեցիների մետաղադրամները և կնիքները
 - 6. Մեռյալ Ծովի Գալարների որոշ տեքստեր
 - 7. Բազմաթիվ մակագրություններ (տես՝ «Լեզուներ /Երբայերեն/», ABD 4:203ff)
- Բոլոր Սեմական լեզուների պես երբայերենին բնորոշ են երեք բաղաձայներով կազմված բառերը (եռաբաղաձայն արմատ): Այն թեքական /հոլովվող, խոնարհվող/ լեզու է: Եռաբաղաձայն արմատները կրում են բառի հիմնական նշանակությունը, մինչ նախաձայնավոր, վերջաձայնավոր կամ ներքին հավելումները արտահայտում են շարահյուսական ֆունկցիաները (ձայնավորները ավելանում են հետագայում, տես՝ Սյու Գրին, *Աստվածաշնչյան Երբայերենի Լեզվաբանական Վերլուծություն*, էջ՝ 46-49 /*Sue Green Linguistic Analysis of Biblical Hebrew*):
- Երբայերեն բառապաշարը՝ լեքսիկոնը, արտահայտում է արձակի և պոեզիայի միջև եղած տարբերությունը: Բառերի նշանակությունները կապված են ժողովրդական ստուգաբանության հետ (ոչ թե լեզվաբանական ծագումնաբանության): Բառախաղերը և հնչյունախաղերը բավականին տարածված են (*paronomasia*):

II. Ստորոգման առանձնահատկությունները Ա. ԲԱՅԵՐ

- Նորմալ բառային հերթականությունը հետևյալն է՝ ԲԱՅ, ԴԵՐԱՆՈՒՆ, ԵՆԹԱԿԱ (պարագաների հետ), ԽՆԴԻՐ (պարագաների հետ): Հիմնական անդրոշ՝ չլեզուված ԲԱՅԸ *Qal* բայն է, ՎԱՂԱԿԱՏԱՐ, ԱՐԱԿԱՆ, ԵԶԱԿԻ ձևով: Այսպիսին է Երբայերենի և Արամերենի նախադասությունների կազմությունը: ԲԱՅԵՐԸ խոնարհվում են ցույց տալու՝
- 1. թիվ՝ եզակի, հոգնակի, երկակի
 - 2. սեռ՝ արական և իգական (միջին սեռ չկա)

3. եղանակ՝ սահմանական, ստորադասական, հրամայական (ժամանակակից արևմտյան լեզուների նմանությամբ՝ գործողության կապը իրողության հետ)
4. ժամանակ (ձևերը)
 - ա. ՎԱՂԱԿԱՏԱՐԸ, որն արտահայտում է ավարտված գործողություն՝ մեկնարկի, ընթացքի և եզրահանգման իմաստով: Առհասարակ այս ժամանակաձևը կիրառվում է անցյալի գործողության համար, որն արդեն տեղի է ունեցել:

Ջ. Ուոշ Ուոթսը *Ճարտահյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*) ասում է՝

«Վաղակատար ժամանակաձևով նկարագրված միանշանակ իրադարձությունը նույնպես համարվում է որպես հաստատ՝ որոշակի: Անկատարը կարող է նկարագրել որպես հնարավոր կամ ցանկալի կամ ակնկալելի իրավիճակ, մինչդեռ վաղակատարը դիտարկում է այն որպես իրական, հաստատ կամ ակտուալ» (էջ՝ 36):

Ս. Ռ. Դրայվերը *Եբրայերենում Ժամանակների Կիրառության Քննախոսություն* (S. R. Driver *A Treatise on the Use of the Tenses in Hebrew*) գրքում այսպես է նկարագրում.

«Վաղակատարը ներգրավված է մատնացույց անելու գործողությունները, որոնց իրականացումը ընկած է անշուշտ ապագայում, սակայն համարվում է որպես կախման մեջ գտնվող այնպիսի կամքի անփոփոխելի որոշումից, որ դրա մասին կարելի է արտահայտվել որպես իրականում տեղի ունեցած՝ կատարված. այդ իսկ պատճառով լուծումները, խոստումները կամ հրամանները՝ հատկապես աստվածայինը, հաճախակի արտահայտվում են վաղակատար ժամանակով» (էջ՝ 17, օր.՝ մարգարեական վաղակատարը):

Ռոբերտ Բ. Քիշոլմ Գրոսերը *Մեկնությունից մինչև Բացատրություն* (Robert B. Chisholm, Jr. *From Exegesis to Exposition*) այս բայի ձևը այսպես է սահմանում՝

«...դիտարկում է իրավիճակը դրսից որպես մի ամբողջություն: Որպես այդպիսին այն արտահայտում է պարզ փաստ՝ լինի դա գործողություն, թե վիճակ (ներառյալ իրողության կամ մտքի վիճակը): Գործողությունների համար կիրառելիս այն հաճախ դիտարկում է գործողությունը որպես կատարված՝ խոսողի կամ պատմողի հոետորական տեսանկյունից (փաստացի կամ իրականում լինի այն ավարտված, թե ոչ, հարցը դրանում չէ): Վաղակատարը կարող է առնչվել անցյալում, ներկայում կամ ապագայում տեղի ունեցած գործողության կամ վիճակի: Ինչպես վերը նշվեց, ժամանակային սահմանները, որոնք ազդում են այն բանի վրա, թե ինչպես կթարգմանեն վաղակատարը ժամանակային օրինատացիա ունեցող լեզուներով, ինչպես օրինակ անգլերենն է, պետք է որոշվեն ըստ համատեքստի» (էջ՝ 86):
 - բ. ԱՆԿԱՏԱՐԸ, որն արտահայտում է գործողությունն ընթացքի մեջ (անավարտ, կրկնվող, շարունակվող կամ պատահական), հաճախ որևէ նպատակի հասնելու շարժ՝ ընթացք: Սովորաբար այս ժամանակաձևը կիրառվում է Ներկա և Ապառնի գործողության համար:

Ջ. Ուոշ Ուոթսը *Ճարտահյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*) գրքում ասում է.

«Բոլոր ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ ներկայացնում են անավարտ վիճակներ: Դրանք կամ կրկնվում են, կամ զարգանում, կամ էլ պատահականություն են: Այլ խոսքերով կամ մասամբ զարգացող են, կամ էլ մասամբ հստակ՝ որոշված: Բոլոր դեպքերում էլ դրանք ինչ-որ առումով մասամբ են կատարված, այսինքն՝ անկատար» (էջ՝ 55):

Ռոբերտ Բ. Քիշոլմ Գրոսերը *Մեկնությունից մինչև Բացատրություն* (Robert B. Chisholm, Jr. *From Exegesis to Exposition*) ասում է.

«Դժվար է նվազեցնել անկատարի իմաստը մինչև միանշանակ հասկացության, քանի որ այն ընդգրկում է թե՛ ձև, և թե՛ եղանակը: Երբեմն անկատարը կիրառվում է սահմանական ձևով և կատարում է օբյեկտիվ սահմանում: Այլ դեպքերում գործողությունը դիտարկում է ավելի սուբյեկտիվորեն, ինչպես օրինակ վարկածային, պատահական, հնարավորին և այլն» (էջ՝ 89):
 - գ. Ավելացված *waw*, որը ԲԱՅԻՆ կապում է նախորդող ԲԱՅԻ(երի) գործողությանը:
 - դ. ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ, որը հիմնված է խոսողի կամքի և լսողի կողմից կատարած պոտենցիալ գործողության վրա:
 - ե. Հնագույն Եբրայերենում միայն ծավալում համատեքստը կարող է որոշել հեղինակի կողմից ներկայացված նպատակահարմար ժամանակային կողմնորոշումը:

- Բ. Յոթ կարևոր հոլովները և դրանց հիմնական նշանակությունները: Իրականում այս ձևերը համատեքստում գործում են միմյանց հետ փոխկապակցված և չպետք է առանձնացվեն:
1. *Qal* (Kal), ամենատարածվածը և հիմնականը բոլոր խոնարհումների մեջ: Այն արտահայտում է պարզ գործողություն կամ վիճակ: Ակնարկվող պատճառաբանություն կամ յուրահատկություն այստեղ չկա:
 2. *Niphal*, երկրորդ ամենատարածված խոնարհման ձևը: Այն սովորաբար ԿՐԱՎՈՐԱԿԱՆ է, սակայն այս ձևը նաև գործում է որպես փոխադարձ և անդրադարձ բայ: Այն նույնպես չունի ակնարկվող պատճառաբանություն կամ յուրահատկություն:
 3. *Piel*, այս ձևը ներգործական է և արտահայտում է գործողությունը վիճակի վերածելու իմաստ: *Qal* արմատի հիմնական իմաստը վերածվում է կամ ըղայնվում դառնալով վիճակ:
 4. *Pual*, սա *Piel* բառի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ կրկնօրինակն է: Այն հաճախ արտահայտվում է որևէ ՀՈՒԻ միջոցով:
 5. *Hithpael*, որը փոխադարձ կամ անդրադարձ արմատ է: Այն արտահայտում է *Piel* արմատին կրկնվող կամ շարունակվող գործողություն: Հազվագյուտ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ձևը կոչվում է *Hathpael*:
 6. *Hiphil*, սա *Piel-ին* հակադարձ պատճառական արմատի ներգործական ձևն է: Այն կարող է ունենալ թույլատրելի ասպեկտ, սակայն սովորաբար վերաբերում է ինչ-որ իրադարձության պատճառին: Եռնեստ Ջեննին՝ մի գերմանացի հրեա քերականագետ, կարծում ր, որ *Piel*-ն արտահայտում է վիճակի վերածվող ինչ-որ բան, մինչ *Hiphil*-ը ցույց է տալիս, թե դա ինչպես է տեղի ունենում:
 7. *Hophal*, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ կրկնօրինակն է *Hiphil-ի*: Վերջին երկու արմատները ամենաքիչն են կիրառվում այս յոթ արմատների մեջ:
- Այս տեղեկության մեծ մասը վերցված է Բրյուս Կ. Ուոլթթի և Մ. Օ'Բոնորի կողմից գրված *Աստվածաշնչյան Եբրայերենի Շարահյուսության Ներածություն* գրքից (Bruce K. Waltke and M. O'Connor *An Introduction to Biblical Hebrew Syntax*, էջ՝ 343-452):
- Գործոնների և պատճառականության աղյուսակ: Եբրայերեն ԲԱՅԻ համակարգը հասկանալու հարցում կարևոր է, որ այն դիտարկվի որպես ՍԵՌԻ փախկապակցման կերպ: Որոշ արմատներ հակադարձ են այլ արմատներին (այսինքն՝ *Qal – Niphal; Piel - Hiphil*):
- Ներքևում տրված աղյուսակը փորձում է տեսանելի կերպով ներկայացնել ԲԱՅԻ արմատների հիմնական պատճառականության ֆունկցիաները:

ԲԱՅԻ սեռը	Ոչ երկրորդական Գործոն	Ներգործական Երկրորդական Գործոն	Կրավորական Երկրորդական Գործոն
Ներգործական	<i>Qal</i>	<i>Hiphil</i>	<i>Piel</i>
Չեզոք Կրավորական	<i>Niphal</i>	<i>Hophal</i>	<i>Pual</i>
Անդրադարձ/Հակադարձ	<i>Niphal</i>	<i>Hiphil</i>	<i>Hithpael</i>

Այս աղյուսակը վերցված է ԲԱՅԻ համակարգի վերաբերյալ մի գերազանց քննարկումից՝ նոր Աքքադերենի ուսումնասիրության լույսի ներքո (տես՝ Բրյուս Կ. Ուոլթթ, Մ. Օ'Կոններ, *Աստվածաշնչյան Եբրայերենի Շարահյուսության Ներածություն*, էջ՝ 354-359 /Bruce K. Waltke, M. O'Conner, *An Introduction to Biblical Hebrew Syntax*):

Ռ. Հ. Քեննեթը, *Եբրայերեն Ժամանակների Համառոտ Պատմություն* /R. H. Kennett, *A Short Account of the Hebrew Tenses*/ իր գրքում տալիս է անհրաժեշտ զգուշացում:

«Սովորեցնելիս ես ընդհանրապես հայտնաբերել եմ, որ Եբրայերեն լեզվի ժամանակները սովորելիս ուսանողի հիմնական դժվարությունն է հասկանալ այն նշանակությունը, որը այդ բառերը փոխանցում են հենց իսկ Եբրայեցիների՝ հրեաների մտքին. այսինքն, մարդիկ հակված են ինչ-որ թվով լատիներեն կամ անգլերեն ժամանակաձևեր նշանակել յուրաքանչյուր Եբրայերեն ժամանակի համար որպես համարժեքներ, որոնցով տվյալ ժամանակը կարելի է ընդհանուր իմաստով թարգմանել: Արդյունքում

ձախողում ենք հասկանալ նշանակության նմանօրինակ հիանալի երանգներից մեծ մասը, որոնք կյանք և կենսունակություն են հաղորդում Հին Կտակարանի լեզվին:

Եբրայերեն բայերի գործածության դժվարությունը կայանում է միայն տեսակետի մեջ՝ մեր տեսակետից բացարձակ տարբեր, ըստ որի էլ Եբրայեցիները դիտարկում են գործողությունը. *Ժամանակը*, որը առաջին հայացքից մեզ հետ է, ինչպես հենց „Ժամանակ, բառն է ցույց տալիս, նրանց համար երկրորդական կարևորության է: Հետևաբար կարևոր է, որ ուսանողը հստակ հասկանա ոչ այնքան լատիններեն կամ անգլերեն ժամանակաձևերը, որոնք կարող են օգտագործվել Եբրայերեն յուրաքանչյուր ժամանակ թարգմանելիս, այլ յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունը այնպես, ինչպես ներկայացվում է հենց հրեական մտածելակերպի համար:

«Ժամանակներ» անվանումը Եբրայերեն բայերին տալիս շփոթեցնող է: Այսպես կոչված Եբրայերեն «ժամանակները, չեն արտահայտում *Ժամանակ*, այլ պարզապես գործողության *վիճակ*: Իհարկե, եթե *վիճակ* տերմինի գործածությամբ շփոթություն չառաջանար գոյականների և բայերի մեջ, ապա *վիճակներ* տերմինը շատ ավելի հարմար անվանում կարող էր հանդիսանալ, քան *Ժամանակները*: Մշատապես մեր մտքում մենք պետք է նկատի ունենանք, որ անհնար է Եբրայերեն որևէ բայ թարգմանել անգլերենի առանց սահմանափակումներ կիրառելու, որը Եբրայերենում լիովին բացակայում է: Հին Եբրայեցիները երբեք գործողությունը չէին դիտարկում անցյալի, ներկայի կամ ապագայի մեջ, այլ պարզապես որպես *կատարյալ*, այսինքն՝ ավարտված, կամ *անկատար*, այսինքն՝ զարգացման ընթացքի մեջ: Երբ ասում ենք, որ տվյալ Եբրայերեն ժամանակը համապատասխանում է անգլերենի Կատարյալին, Գերակատարին կամ Ապառնուն, մենք նկատի չունենք, որ եբրայեցիները այդ գործողության մասին մտածում էին որպես Կատարյալի, Գերակատարի կամ Ապառնու, այլ պարզապես այն անգլերեն այդպես է պետք թարգմանել: Գործողության *Ժամանակը* եբրայեցիները չէին փորձում արտահայտել որևէ բայի ձևով (նախաբան և էջ՝ 1):»

Երկրորդ լավ զգուշացմամբ Սյու Գրումը իր *Ատվածաշնչյան Եբրայերենի Լեզվաբանական Վերլուծություն* գրքում մեզ հիշեցնում է.

«Ոչ մի կերպ հնարավոր չէ իմանալ, թե արդյո՞ք հնագույն մեռած լեզուներում ժամանակակից գիտնականների կողմից բառերի արմատական դաշտերի և նշանակության միջև եղած կապերի վերականգնումը պարզապես իրենց սեփական կանխագագացումների կամ իրենց մայրենի լեզվի կամ էլ ներկայումս Դասական Եբրայերենում առկա բառերի արմատական դաշտերի անդրադարձը չէ» (էջ՝ 128):

Գ. Եղանակներ (որոնք միայն հանդիսանում են ժամանակակից արևմտյան լեզուներից քաղված նմանություններ)

1. Պատահեց, պատահում է (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ), սովորաբար կիրառում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակը կամ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ (բոլոր ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են):

2. Պատահելու է, կարող էր պատահել (ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ)

ա. կիրառում է ընդգծված ԱՆԿԱՏԱՐ ժամանակ

(1) ԸՂՋԱԿԱՆ (ավելացված հ), առաջին դեմքի ԱՆԿԱՏԱՐ ձևը, որը ընդհանրապես արտահայտում է ցանկություն, խնդրանք կամ ինքնավստահություն (այսինքն՝ խոսողի կողմից կամեցած գործողություններ)

(2) ՀԱՅՑԱԿԱՆ (ներքին փոփոխություններ), երրորդ դեմքի ԱՆԿԱՏԱՐ (ժխտական նախադասություններում կարող է լինել երկրորդ դեմք), որը ընդհանրապես արտահայտում է խնդրանք, թույլտվություն, հորդոր կամ խորհուրդ:

բ. Կիրառում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակը *lu* կամ *lule* հետ

Այս կազմությունները նման են Կոյնե Հունարենի ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություններին: Կեղծ խոսքի (միջանկյալ նախադասություն) արդյունքում առկա է կեղծ եզրակացությունը (վերծանումը):

գ. Կիրառում է ԱՆԿԱՏԱՐ ժամանակը և *lu*

Համատեքստը և *lu*, ինչպես նաև ապագայի կողմնորոշումը, ընդգծում են այս ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ կիրառությունը: Ջ. Ուոշ Ուոթսի *Շարահյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts A Survey of Syntax in the Hebrew Old Testament) գրքից մի քանի օրինակներ են ծննդ. 13:16; 2 Օր. 1:12; 3 Թագ. 13:8; Սաղմ. 24:3; Ես. 1:18 (տես՝ էջ 76-77):

Դ. Waw – Փոխարկելի/հաջորդական/հարաբերական: Այս յուրահատուկ Եբրայերեն (քանաներեն) շարահյուսությունը տարիների ընթացքում մեծ շփոթության պատճառ է հանդիսացել: Այն կիրառվում

է տարբեր կերպերով, հաճախ համաձայն ժանրի: Շփոթության պատճառն այն է, որ սկզբնական գիտնականները եղել են Եվրոպացիներ և փորձում էին թարգմանել իրենց մայրիենի լեզուների լույսի ներքո: Երբ պարզվեց, որ այսպես դժվար է, նրանք մեղադրեցին խնդրին, որ Եբրայերենը «ենթադրյալ» հնագույն, վաղնջական լեզու է: Եվրոպական լեզուները ԺԱՄԱՆԱԿԻ վրա հիմնված ԲԱՅԵՐ են: Մի քանի տարբերությունների և քերականական կիրարկումներ բնորոշվում էին ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԻ արմատներին WAW հավելումով: Սա փոխում էր գործողության հանդեպ դիտարկումները:

1. Պատմական գրույցներում ԲԱՅԵՐԸ օրինաչափությամբ կապված են իրար:
2. *Waw* նախածանցը ցույց էր տալիս հատուկ կապ նախորդ ԲԱՅ(ԵՐ)Ի հետ:
3. Ավելի ծավալուն համատեքստը միշտ համարվում է ԲԱՅԻ շղթան հասկանալու բանալին: Սեմական ԲԱՅԵՐԸ չեն կարող առանձին վերլուծվել:

Ջ. Ուոշ Ուոթսը *Ճարտիկություն Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*) նշում է Եբրայերենի տարբերությունը ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԻՑ և ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻՑ առաջ *waw* նախածանցի կիրառության մեջ (էջ՝ 52-53): Ինչպես որ ՎԱՂԱԿԱՏԱՐԻ հիմնական գաղափարը անցյալ է, *waw* հավելումը հաճախ պրոյեկտում է այն ապառնի ժամանակի մեջ: Սա նաև ճիշտ է ԱՆԿԱՏԱՐԻ համար, որի հիմնական գաղափարը ներկան կամ ապառնին է. ավելացված *waw* տանում է այն անցյալ: Այս անսովոր ժամանակի փոփոխությունն է, որ բացատրում է *waw*-ի հավելումը, ոչ թե հենց ժամանակի հիմնական նշանակության փոփոխությունը: *Waw* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ լավ են գործում մարգարեության հետ, մինչ *waw* ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ՝ պատմությունների հետ (էջ՝ 54, 68):

Ուոթսը շարունակում է իր սահմանումը՝

«Որպես արմատական տարբերություն *waw* կապի և *waw* հաջորդականի միջև առաջարկում են հետևյալ թարգմանությունները.

1. *waw* կապը հայտնվում է միշտ զուգահեռ համագոր մատնացույց անելու համար
2. *waw* հաջորդականը հայտնվում է միշտ հաջորդականություն մատնացույց անելու համար: Այն *waw* -ի միակ ձևն է, որ կիրառվում է հաջորդական անկատարներով: Անկատարների միջև եղած հարաբերությունը կապված այս բանի հետ կարող է լինել ժամանակավոր հերթականություն, տրամաբանական հետևանքներ, տրամաբանական պատճառ կամ տրամաբանական հակադրություն: Բոլոր դեպքերում էլ առկա է հաջորդականություն» (էջ՝ 103):

Ե. ԱՆՈՐՈՇ – Գոյություն ունեն երկու տեսակի ԱՆՈՐՈՇ

1. ԱՆՈՐՈՇ ԲԱՑԱԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք «ուժեղ, անկախ, ուշագրավ արտահայտություններ են, որ կիրառվում են դրամատիկ էֆեկտների համար: Որպես ենթակա, այն հաճախ չի ունենում գրավոր բայ, իհարկե «լինել» բայը հասկացվում է, սակայն բառն ինքնին մեկուսացված է» (Ջ. Ուոշ Ուոթսը *Ճարտիկություն Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*, էջ՝ 92):
2. ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, որոնք «քերականորեն կապված են նախադասության հետ նախդիրներով, ստացական դերանուններով, և կազմության կապով» (էջ՝ 91):

Ջ. Ուեյնգրինը *Դասական Եբրայերենի Գործնական Զերականություն* (J. Weingreen, *A Practical Grammar for Classical Hebrew*) գրքում նկարագրում է կազմության վիճակը.

«Երբ երկու (կամ ավելին) բառեր այնքան են սերտորեն կապված, որ միասին նրանք կազմում են մի բաղադրյալ գաղափար, կախյալ բառը (բառերը) ասել է թե կազմության վիճակում է» (էջ՝ 44):

Չ. ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԸ

1. Նախադասության մեջ նրանք միշտ դրվում են սկզբից
2. Մեկնաբանական կարևորությունը
ա. *ha* – պատասխան չի ակնկալում
բ. *halo* – հեղինակը ակնկալում է «այո» պատասխան

ԺԽՏԱԿԱՆՆԵՐԸ

1. Դրանք միշտ դրվում են նախքան ժխտվող բառերը
2. Լայն տարածում գտած ժխտական է *lo*՝
3. *'al* տերմինը ունի պատահականության նշանակություն և կիրառվում է ԸՂՁԱԿԱՆԱՆԻ և ՀԱՅՏԱԿԱՆԻ հետ

4. *lebhilti* տերմինը, որ նշանակում է «որպեսզի... չ...», կիրառվում է ԱՆՈՐՈՇՆԵՐԻ հետ
5. *'en* տերմինը կիրառվում է ԴԵՐԲԱՅՆԵՐԻ հետ:

Է. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գոյություն ունեն չորս տեսակի պայմանական նախադասություններ, որոնք իրականում Կոյնե Հունարենում համագործն են:
 - ա. ինչ-որ բան, որ ենթադրվում է տեղի է ունենում կամ կարծվում է որպես կատարված (հունարենում ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ)
 - բ. ինչ-որ բան, որ հակառակ է փաստին, որի իրականացումը անհնար է (ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳ)
 - գ. ինչ-որ բան, որը հնարավոր է կամ նույնիսկ հավանական (ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ)
 - դ. ինչ-որ բան, որը ավելի քիչ հավանական է, հետևաբար իրականացումը անստույգ է՝ տարակուսելի (ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳ)
2. ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ
 - ա. երբ ենթադրվում է, որ ճիշտ է կամ իրական իրավիճակ, միշտ կիրառվում է ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԴԵՐԲԱՅ և սովորաբար միջանկյալ նախարկությունը /միջանկյալ նախադասությունը/ սկսվում է՝
 - 1) *'im*
 - 2) *ki* (կամ *'asher*)
 - 3) *hin* կամ *hinneh*
 - բ. Փաստին հակառակ իրավիճակը միշտ կիրառում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ասպեկտի ԲԱՅ կամ որևէ ԴԵՐԲԱՅ սկզբնական *lu* կամ *lule* ԴԵՐԲԱՅՈՎ:
 - գ. Ավելի հավանական իրավիճակը միշտ կիրառում է ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ կամ ԴԵՐԲԱՅՆԵՐ նախարկության մեջ, սովորաբար *'im* կամ *ki* են կիրառվում որպես սկզբնական ԴԵՐԲԱՅՆԵՐ
 - դ. Ավելի քիչ հավանական իրավիճակը կիրառում է ԱՆԿԱՏԱՐ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆԵՐ նախարկության մեջ և միշտ գործածում է *'im* որպես սկզբնական ԴԵՐԲԱՅ:

ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

AB	Խարիսխ Աստվածաշունչ (Anchor Bible) մեկնաբանության գիրքը, խմբ. Ուիլյամ Փոքսուելի և Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
ABD	Խարիսխ Աստվածաշնչի Բառարան (Anchor Bible Dictionary, 6 vols.), 6 հատոր՝ խմբ. Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
AKOT	Հին Կտակարանի Վերլուծական Բանալի (Analytical Key to the Old Testament) Ջոն Ջոզեֆ Օուենսի կողմից
ANET	Մերձ-արևելյան Հնագույն Տեքստեր (Ancient Near Eastern Texts) Ջեյմս Բ. Դրիսչարդ
BDB	Նոր Կտակարանի եբրայերեն և անգլերեն բառարան Ֆ. Բրաունի, Ս. Ռ. Դրայվերի և Ս. Ա. Բրիգգի կողմից
IDB	Մեկնաբանի Աստվածաշնչյան Բառարան, (4 հատոր), (The Interpreter's Dictionary of the Bible), խմբ. Ջորջ Ա. Բաթիքի կողմից
ISBE	Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարան, 5 հատոր, խմբ. Ջեյմս Օրրի կողմից (International Standard Bible Encyclopedia)
JB	Երուսաղեմի Աստվածաշունչ (Jerusalem Bible)
JPSOA	Սուրբ Գիրքը ըստ Մասորետիկ Տեքստի՝ Նոր Թարգմանություն, (The Jewish Publication Society of America)
KB	Հին Կտակարանի եբրայերեն և արամերեն բառարան, Լյուդվիգ Կոհլերի և Վոլտեր Բաումգարտների կողմից
LAM	Սուրբ Գիրքը հնագույն արևելյան ձեռագրերից (the Peshitta), Ջորջ Մ. Լամսայի կողմից
LXX	Սեպտուագինտա (հունարեն-անգլերեն) Չոնդերվանի կողմից, 1970
MOF	Աստվածաշնչի Նոր Թարգմանություն, Ջեյմս Մոֆֆատի կողմից
MT	Մասորետիկ եբրայերեն տեքստը (Masoretic Hebrew Text)
NAB	Նոր Ամերիկյան Աստվածաշնչյան Տեքստ (New American Bible Text)
NASB	Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչ (New American Standard Bible)
NEB	Նոր Անգլերեն Աստվածաշունչ (New English Bible)
NET	Նոր Անգլերեն Թարգմանություն՝ երկրորդ Բեստա հրատարակչություն (New English Translation)

NIDOTTE	Հին Կտակարանի աստվածաբանության և էզգեզետիկայի նոր միջազգային բառարան, 5 հատոր, խմբ. Ուիլեմ Ա. Վան Գեմերենի կողմից (New International Dictionary of Old Testament Theology and Exegesis)
NIV	Նոր Միջազգային Տարբերակ (New International Version)
NJB	Նոր Երուսաղեմի Աստվածաշունչ (New Jerusalem Bible)
NKJV	Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (New King James Version)
NRSV	Վերանայված Ստանդարտ Նոր Աստվածաշունչ (New Revised Standard Bible)
OTPG	Հին Կտակարանի քերականական վերլուծության ուղեցույց, Թոդ Ս. Բիլի, Ուիլյամ Ա. Բենկսի և Քոլին Սմիթի կողմից (Old Testament Parsing Guide)
REB	Վերանայված Անգլերեն Աստվածաշունչ (Revised English Bible)
RSV	Վերանայված Ստանդարտ Տարբերակ (Revised Standard Version)
SEPT	Սեպտուագինտան, հունարեն-անգլերեն, Չոնդերվանի կողմից, 1970 (The Septuagint)
TEV	Այսօրվա Անգլերեն Տարբերակ, Աստվածաշնչյան Ընկերությունների Միությունից (Today's English Version)
YLT	Յանգի Սուրբ Գրքի Բառացի Թարգմանությունը, Ռոբերտ Յանգի կողմից (Young's Literal Translation)
ZPBE	Չոնդերվանի Պատկերազարդ Աստվածաշնչի Հանրագիտարան, խմբ. Մերրիլ Ս. Տեննիյի կողմից (Zondervan Pictorial Bible Encyclopedia, 5 vols.)

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ. ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՁԵՉ ՕԳՆԵԼ ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը ռացիոնալ և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հնադարում ներշնչված գրողին այնպես, որ Աստծուց ուղարկված պատգամը հասկացվի և կիրառվի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը կարևոր է, սակայն դժվար սահմանելի: Այն իր մեջ ընդգրկում է նվիրում և Աստծո առջև բաց վիճակ: Պետք է լինի քաղց (1) Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, (3) Նրան ծառայելու: Այս գործընթացը պահանջում է աղոթք, խոստովանություն և ապրելակերպի փոփոխության հոժարակամություն: Սուրբ Հոգին շատ կարևոր է մեկնության այս գործընթացում, սակայն թե ինչու են անկեղծ և աստվածավախ Քրիստոնյաները Աստվածաշունչը այլ կերպ հասկանում՝ հանելուկ է:

Ռացիոնալ գործընթացը ավելի հեշտ է նկարագրել: Մենք պետք է լինենք հետևողական և ազնիվ տեքստի նկատմամբ և մեր անձնական և հարանվանական հակումների ազդեցության տակ չընկնենք: Մենք բոլորս էլ պատմականորեն պայմանական ենք: Մեզանից ոչ ոք օբյեկտիվ կամ չեզոք մեկնաբան չէ: Այս մեկնաբանության գիրքը առաջարկում է մանրամասն ռացիոնալ գործընթաց, որը պարունակում է մեկնության երեք սկզբունքներ, որոնք նախատեսված են օգնելու մեզ հաղթահարելու մեր հակումները:

Առաջին սկզբունքը

Առաջին սկզբունքն է նշել այն պատմական միջավայրը, որում գրվել է աստվածաշնչյան գիրքը և հատուկ պատմական իրավիճակը՝ տվյալ գրքի հեղինակին ճանաչելու համար: Բնագրի հեղինակը ուներ նպատակ՝ պատգամը փոխանցելը: Տեքստն ինքնին ոչինչ չի կարող նշանակել մեզ համար, եթե այն իրականում ոչինչ չի նշանակել բնագրի՝ հնում ներշնչված հեղինակի համար: Կարևորը նրա մտադրությունն է, և ոչ թե մեր պատմական, զգացական, մշակութային, անձնական կամ հարանվանական կարիքը: Կիրառությունը մեկնաբանության անբաժանելի մասն է, սակայն ճիշտ մեկնությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Այն պետք է և ս մեկ անգամ հիշեցնի, որ յուրաքանչյուր սուրբգրային տեքստ ունի միայն մեկ նշանակություն: Այս նշանակությունը հենց այն է, ինչ բնագրի հեղինակը մտադիր է եղել Սուրբ Հոգու առաջնորդությամբ փոխանցել իր օրերի մարդկանց: Այս միակ նշանակությունը կարող է ունենալ տարբեր հնարավորին կիրառություններ, տարբեր մշակույթների և իրավիճակների համար: Այս կիրառությունները պետք է կապ հաստատեն բնագրի հեղինակի փոխանցած կենտրոնական ճշմարտության հետ: Այդ իսկ պատճառով, այս սերտողության ուղեցույց մեկնաբանության գիրքը կազմված է Աստվածաշնչյան յուրաքանչյուր գրքի համար տրված ներածական մասով:

Երկրորդ սկզբունքը

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները տարբերելն է: Աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք միավորված փաստաթուղթ է: Մեկնաբանները իրավունք չունեն առանձնացնելու ճշմարտության մի մասը և անտեսել մյուսները: Ուստի, նախքան առանձին գրական որևէ բաժին մեկնաբանելը մենք պետք է աշխատենք հասկանալ աստվածաշնչյան ամբողջ գրքի իմաստը: Առանձին բաժինները՝ գլուխները, պարագրաֆները կամ համարները, չեն կարող փոխանցել մի այնպիսի իմաստ, որը չի փոխանցում ամբողջ բաժինը: Մեկնությունը պետք է սկսի ամբողջականի դեղուկտիվ մոտեցումից դեպի առանձին մասերի ինդուկտիվ մոտեցում: Ուստի այս մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողին վերլուծելու յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը պարագրաֆներով: Բաժանումներն ըստ պարագրաֆների և գլուխների ներշնչված չեն, սակայն դրանք օգնում են մեզ տարբերակելու բաժիններն ըստ մտքի:

Ըստ պարագրաֆի մեկնաբանությունը՝ և ոչ թե ըստ նախադասության, հատվածի, արտահայտության կամ բառային մեկնաբանության, հանդիսանում է աստվածաշնչյան հեղինակի նկատի ունեցած նշանակությանը հետևելու բանալին: Պարագրաֆները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, որոնք հաճախ կոչվում են թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարագրաֆի մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, հատված և նախադասություն ինչ-որ ձևով կապված է այս ընդհանուր թեմայի հետ: Դրանք կամ սահմանափակում են, ընդլայնում, բացատրում, կամ էլ այն հարցադրում: Ծիշտ մեկնության համար իրական բանալի է հանդիսանում ըստ տարբերության բնագրի հեղինակի մտքին հետևելը՝ առանձին գրական բաժինների միջով, որոնք էլ հենց կազմում են աստվածաշնչյան գիրքը: Այս ուղեցույց հանդիսացող

մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողներին այդ անել համեմատելով ժամանակակից անգլերեն թարգմանությունները: Ընտրված են այս թարգմանությունները, քանի որ դրանք կիրառում են տարբեր թարգմանությունների տեսություններ:

- (ա) Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության հունարեն տեքստը վերանայված չորրորդ խմբագրությունն է (The United Bible Society – UBS⁴): Այս տեքստը բաժանվել է պարագրաֆների տեքստային ժամանակակից գիտնականների կողմից:
- (բ) Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (The New King James Version - NKJV) բառ առ բառ գրական թարգմանություն է՝ հիմնված հունարեն ձեռագիր ավանդույթի վրա, որը հայտնի է Textus Receptus անունով: Այս տարբերակի պարագրաֆների բաժանումները ավելի երկար են, քան մյուս թարգմանություններինը: Այսպիսի ավելի երկար ենթաբաժինները օգնում են ուսանողներին տեսնելու ընդհանուր թեմաները:
- (գ) Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (The New Revised Standard Version - NRSV) փոփոխված բառ առ բառ թարգմանություն է: Այն միջնապատ է ձևավորում տվյալ երկու ժամանակակից տարբերակների միջև: Այս գրքի պարագրաֆների բաժանումը բավականին օգտակար է թեմաները տարբերակելու համար:
- (դ) Այսօրվա Անգլերեն Տարբերակը (The Today’s English Version - TEV) դինամիկ համարժեք տարբերակ է, որը հրատարակվել է Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության կողմից: Այն փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս մարդիկ կամ ընթերցասերները կարողանան հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարագրաֆների բաժանումը կատարված է ըստ խոսողի, քան ըստ թեմայի, այնպես ինչպես NIV (New International Version – Նոր Միջազգային Տարբերակ) թարգմանության մեջ: Մեկնաբանողի նպատակների համար այն օգտավետ չէ: Հետաքրքիր է նշել, որ թե՛ UBS⁴ և թե՛ TEV տարբերակները հրատարակվել են նույն անձի կողմից, սակայն դրանց պարագրաֆների բաժանումը տարբերվում են:
- (ե) Երուսաղեմի Աստվածաշունչը (The Jerusalem Bible - JB) դինամիկ համարժեք թարգմանություն է, որը հիմնված է Ֆրանսերեն Կաթոլիկ թարգմանության վրա: Այն շատ օգտակար է համեմատելու համար պարագրաֆների բաժանումը Եվրոպական տեսանկյունից:
- (զ) Տպագրված տեքստը 1995 թ. թարմացված Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչն է (New American Standard Bible /NASB/), որը բառ առ բառ թարգմանություն է: Ըստ համարների մեկնաբանությունների ժամանակ օգտագործվում է պարագրաֆային այս բաժանումը:

Երրորդ Սկզբունք

Երրորդ սկզբունքն է Աստվածաշունչը կարդալ տարբեր թարգմանություններով, իմաստը հնարավորինս ամենաընդլայնված շրջանակներում (իմաստաբանական դաշտը), որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերը կամ արտահայտությունները, հասկանալու համար: Հաճախ հունարեն բառը կամ արտահայտությունը կարելի է մի քանի կերպով հասկանալ: Այս տարբեր թարգմանություններից բխում են այլ տարբերակներ, որոնք օգնում են հասկանալու և բացատրելու հունարեն ձեռագրի տարբերակները: Մրանք չեն ազդում վարդապետության վրա, սակայն օգնում են մեզ վերադառնալու հին դարերում ներշնչված հեղինակի կողմից գրված բնագիր տեքստին:

Չորրորդ Սկզբունք

Չորրորդ սկզբունքը գրական ժանրը նշելն է: Բնագրի ներշնչված հեղինակները ընտրում են արձանագրել իրենց պատգամները տարբեր ժանրերում (օր.՝ պատմական իրադարձություն, պատմական դրամա, պոեմ, մարգարեություն, ավետարան [առակ], նամակ, հայտնություն): Այս տարբեր ժանրերը ունեն մեկնաբանության համար հատուկ բանալիներ (տե՛ս՝ Գորդոն Ֆի և Դագ Ստյուարտ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով* կամ Ռոբերտ Սթեյն, *Խաղալ Կանոններով*, /Gordon Fee and Doug Stuart, *How to read the Bible for All Its Worth* or Robert Stein, *Playing by the Rules*):

Այս մեկնաբանության գիրքը ուսանողին առաջարկում է իր մեկնությունը ստուգելու արագ միջոց: Այն վերջնական չէ, այլ տեղեկատվական և խորհելու առիթ ընձեռնող: Հաճախ մյուս հնարավորին մեկնաբանությունները օգնում են մեզ չլինելու սահմանափակ, ղոգմատիկ և հարանվանական: Մեկնաբանները

կարիք ունեն ավելի լայն թարգմանչական շրջանակների, որպեսզի հասկանան, թե որքան անորոշ կարող է լինել հնագույն տեքստը: Ապշեցուցիչ է, թե որքան քիչ համաձայնություն կա Քրիստոնյաների միջև, որոնք պնդում են, որ ճշմարտության իրենց աղբյուրը Աստվածաշունչն է:

Այս սկզբունքներն օգնել են ինձ հաղթահարել շատ պատմական համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ չափազանց ուշադիր վերաբերվել հնագույն տեքստերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ այն օրհնություն կլինի նաև ձեր համար:

Բոր Աթլի
Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարան
Հունիս 27, 1996

Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վատահեղի ճշմարտության անձնական ուսումնասիրություն

Կարո՞ղ ենք մենք իմանալ ճշմարտությունը: Որտե՞ղ գտնել այն: Կարո՞ղ ենք այն տրամաբանորեն հաստատել: Արդյո՞ք գոյություն ունի վերջնական ապացույց: Արդյո՞ք կան բացարձակ ճշմարտություններ, որոնք կարող են առաջնորդել մեր կյանքը, մեր աշխարհը: Արդյո՞ք կյանքն իմաստ ունի: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ր ենք գնում: Այս հարցերը՝ որոնց շուրջ բոլոր բանական մարդիկ խորհում են, հետապնդել են մարդկային բանականությանը ժամանակի գոյությունից ի վեր (Ժող.1:13-18; 3:9-11): Ես կարող եմ հիշել իմ անձնական փնտրտուքները կյանքիս ինտեգրման կենտրոնի համար: Ես դարձել եմ Քրիստոնյա հավատացյալ երիտասարդ տարիքում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիքում նշանակալի մարդկանց վկայությունների վրա: Երբ հասունացա, հասունացան նաև իմ և ինձ շրջապատող աշխարհի մասին հարցերս: Պարզ մշակութային կամ կրոնական կյիշենները չէին իմաստավորում իմ կարդացած կամ վերապրած փորձառությունները: Դա շփոթության, փնտրտուքի, երազանքների և հաճախ հուսահատության զգացողության ժամանակ էր՝ ի դեմս այս անզգամ, բարդ աշխարհի, որտեղ ապրում էի:

Շատերը պնդում էին, որ ունեն այս կարևոր հարցերի պատասխանները, թեև հետազոտելուց և խորհելուց հետո հասկացա, որ նրանց պատասխանները հիմնված էին (1) իրենց անձնական փիլիսոփայության, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառության կամ (4) հոգեբանական կանխատեսումների վրա: Ես կարիք ունեի ստույգության որոշակի աստիճանի, վկայությունների, ինչ-որ բանականության, որի վրա կարող էի հիմնել իմ աշխարհայացքը, ինտեգրման կենտրոնը, ապրելու իմ նպատակը:

Այս բոլորը ես գտա Աստվածաշնչի իմ ուսումնասիրության մեջ: Սկսեցի փնտրել արժանահավատության փաստեր, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական հուսալիության մեջ, որը հաստատված է երկրաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրտության մեջ, (3) իր ամբողջացվելու համար ավելի քան հազար վեց հարյուր տարի տևած Աստվածաշնչի պատգամի միաբանության մեջ և (4) մարդկանց վկայությունների հիման վրա, որոնց կյանքերը Աստվածաշնչի հետ շփվելու արդյունքում ընդմիշտ փոխվել էին: Քրիստոնեությունը, որպես հավատքի և հավատամքի միավորված համակարգ, կարողանում է աշխատել մարդկային կյանքի բարդ հարցերի հետ: Այն ոչ միայն ապահովեց բանական հիմք, այլ նաև աստվածաշնչյան հավատքի փորձառական առանձնահատակությունը ինձ տվեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել եմ իմ կյանքի ինտեգրման կենտրոնը՝ Քրիստոսին, երբ հասկացա այն Սուրբ Գրքի միջոցով: Դա արբեցնող փորձառություն էր, զգայական ազատագրում: Համենայն դեպս, ես դեռ կարող եմ հիշել այն ցնցումը և ցավը, որ վերապրեցի, երբ հասկացա, թե այս գրքի քանի տարբեր մեկնություններ էին պաշտպանվում, երբեմն նույնիսկ միևնույն եկեղեցիների և միևնույն մտածելակերպի դպրոցների ներսում: Աստվածաշնչի ներշնչված լինելու ու արժանահավատության հաստատումը դեռևս վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս եմ հիմնավորում կամ հերքում Աստվածաշնչում շատ խրթին հատվածների տարբերվող և իրարամերժ մեկնությունները, որոնք կատարվել են այնպիսի մարդկանց կողմից, որոնք պնդում են դրա հեղինակությունը և արժանահավատությունը:

Այս աշխատանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտը: Ես գիտեի, որ Քրիստոսի հանդեպ իմ հավատքը բերել է անսահման խաղաղություն և ուրախություն: Իմ մշակույթի հարաբերականության, իրարամերժ կրոնական համակարգերի դոգմատիզմի և հարանվանական գոռոզամտության մեջ միտքս փափագում էր բացարձակ ճշմարտությունների: Անտիկ գրականության մեկնությանը ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու իմ փնտրտուքների մեջ զարմացա, որ հայտաբերեցի իմ իսկ պատմական, մշակութային, հարանվանական և փորձառական շեղումները: Աստվածաշունչը հաճախ ես կարդացել էի միայն իմ սեփական հայացքները հաստատելու համար: Ես օգտագործել էի այն որպես դոգմայի աղբյուր հարձակվելու ուրիշների վրա, մինչ վերահաստատում էի իմ իսկ անհաստատ կողմերն ու թուլությունները: Որքան ցավալի էր այս գիտակցումն ինձ համար:

Չնայած որ երբեք չեմ կարող լինել օբյեկտիվ, այնուամենայնիվ կարող եմ դառնալ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները՝ ընդունելով դրանք և դրանց առկայությունը: Ես տակավին չեմ ազատվել դրանցից, սակայն առնակատվել եմ իմ սեփական թերությունների հետ: Հաճախ մեկնաբանը լավ Աստվածաշունչ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք թվարկել մի քանի նախադրյալներ, որոնք ես ներառում եմ իմ Աստվածաշնչյան սերտո-
ղության մեջ, որպեսզի դուք՝ ընթերցողներդ, կարողանաք ինձ հետ միասին դրանք ուսումնասիրել:

Նախադրյալներ

1. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը բացառապես ներշնչված՝ միակ ճշմարիտ Աստծո ինքնա-
հայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բնագրի աստվածային հեղինակի (Հոգու)
մտադրության լույսի ներքո, որը գրվել է մարդու կողմից՝ հատուկ պատմական միջավայրում:
2. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է հասարակ մարդկանց՝ բոլորի համար: Աստված
հարմար է գտել պատմական և մշակութային համատեքստում հստակ խոսել մեր հետ: Աստված չի
թաքցնում ճշմարտությունը, այլ ուզում է, որ այն հասկանանք: Հետևաբար, այն պետք է
մեկնաբանվի այդ օրերի և ոչ թե մեր օրերի լույսի ներքո: Աստվածաշունչը չպետք է նկատի ունենա
մեր համար մի բան, որը նկատի չի ունեցել առաջին անգամ կարդացողների կամ լսողների համար:
Այն հասկանալի է միջին հասկացողության տեր մարդկանց համար և կիրառում է նորմալ
հաղորդակցության միջոցներն ու տեխնիկաները:
3. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը ունի մի պատգամ և մի նպատակ: Այն ինքն իրեն չի
հակասում, թեև պարունակում է խրթին և պարադոքսալ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի
լավագույն մեկնաբանը հենց ինքը Աստվածաշունչն է:
4. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (ներառյալ մարգարեությունները) ունի միայն մեկ
նշանակություն՝ հիմնված բնագրի ներշնչված հեղինակի մտադրության վրա: Թեև երբեք չենք
կարող կատարյալ վստահությամբ ասել, որ գիտենք բնագրի հեղինակի մտադրությունը, սակայն
շատ ցուցանիշներ մատնանշում են դա.
 - ա. Ժանրը (գրական ձևաչափը), որը ընտրվել է արտահայտելու ուղղերձը
 - բ. պատմական միջավայրը կամ հատուկ իրավիճակը, որը երևան է բերել այդ գրությունը
 - գ. ամբողջական գրքի, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժնի գրական համատեքստը
 - դ. գրական բաժինների տեքստային կառուցվածքը (ուրվագիծը), երբ դրանք կապ ունեն ընդ-
հանուր ուղղերձի հետ
 - ե. պատգամը փոխանցելու համար կիրառված քերականական առանձնահատկությունները
 - զ. բառերը, որոնք ընտրվել են պատգամը ներկայացնելու համար
 - է. գուգահեռ հատվածները


Այս կետերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը դառնում է տվյալ հատվածի մեր ուսումնասի-
րության առարկան: Նախքան Աստվածաշնչի լավ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը թույլ տվեք
պատկերել մի քանի աննպատակահարմար մեթոդներ, որոնք օգտագործվում են այսօր, պատճառ
հանդիսանալով մեկնաբանությունների տարբերության, և հետևաբար պետք է դրանցից խուսափել.

I. Աննպատակահարմար մեթոդներ


- Ա. Անտեսելով Աստվածաշնչյան գրքերի գրական համատեքստը և կիրառելով յուրաքանչյուր
նախադասություն, ենթանախադասություն կամ նույնիսկ առանձին բառեր որպես ճշմարտության
սահմանումներ, որոնք կապ չունեն հեղինակի մտադրության կամ ընդլայնված համատեքստի հետ:
Սա հաճախ կոչվում է «տեքստային ապացույց»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը փոխարինելով այն ենթադրյալ պատմական միջա-
վայրով, որը քիչ է պաշտպանվում կամ ընդհանրապես չի պաշտպանվում հենց տվյալ տեքստի
կողմից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և կարդալով այն որպես առավոտյան լրագիր՝ գրված
հատուկ միայն արդի Քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և տեքստը ներկայացնելով խորհրդապատկերներով
որպես փիլիսոփայական, աստվածաբանական ուղղերձ, որն ընդհանրապես կապ չունի այն առաջին
անգամ լսողների և բնագրի հեղինակի մտադրության հետ:
- Ե. Անտեսելով բնագիր ուղղերձը, այն փոխարինելով սեփական աստվածաբանությամբ, սիրված
վարդապետությամբ կամ ժամանակակից թողարկմամբ, որոնք չեն առնչվում բնագրի հեղինակի

նպատակի և արձանագրված ուղղերձի հետ: Այս երևույթը հաճախ հաջորդում է Աստվածաշնչի առաջին ընթերցմանը, որպես միջոց հաստատելու խոստոյի հեղինակությունը: Սա հաճախ կոչվում է «ընթերցողի արձագանք» («ինչ է նշանակում տեքստն ինձ համար»):

Առնվազն երեք կապակցված բաղադրիչներ կարելի է գտնել մարդկային բոլոր գրավոր հաղորդակցությունների մեջ.



Նախկինում ընթերցանության տարբեր մեխանիզմներ կենտրոնացել են այս երեք բաղադրիչներից մեկի վրա: Սակայն Սուրբ Գրքի ներշնչանքն ավելի հարմար է հաստատել հետևյալ փոփոխված սխեմայով:



Իրականում բոլոր երեք բաղադրիչները պետք է ընդգրկված լինեն մեկնաբանության գործընթացին: Ստուգելու նպատակով, իմ մեկնաբանությունը կենտրոնանում է առաջին երկուսի վրա՝ բնագրի հեղինակի և տեքստի: Հավանաբար ես արձագանքում եմ այն շահարկումներին, որոնք նկատել եմ (1) տեքստի խորհրդապատկերորեն ներկայացնելու կամ հոգևորացնելու մեջ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանության մեջ (ինչ իմաստ ունի ինձ համար): Շահարկում հնարավոր է յուրաքանչյուր փուլում:

Մենք պետք է միշտ ստուգենք մեր շարժառիթները, հակումները, մեխանիզմները և կիրարկումները: Բայց ինչպե՞ս ենք մենք դրանք ստուգում, եթե մեկնաբանությունների համար սահմաններ և չափանիշներ գոյություն չունեն: Ահա այստեղ է, որ հեղինակի նպատակը և տեքստային կառուցվածքը ապահովում են մի քանի չափանիշներ՝ հնարավորինս սահմանափակելու ճիշտ մեկնաբանության շրջանակը:

Սուրբ Գրքի ընթերցանության այս աննպատակահարմար մեխանիզմների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշունչը լավ կարդալու և մեկնաբանելու համար այն մի քանի հնարավոր կերպերը, որոնք առաջարկում են հիմնավորման և հաստատման աստիճան:

II. Աստվածաշնչյան լավ ընթերցանության հնարավոր կերպեր

Այս պահին ես չեմ քննարկում հատուկ ժանրի պատկանող մեկնաբանության մեխանիզմներ, այլ ընդհանուր հերմենևտիկ սկզբունքներ, որոնք հարմար են աստվածաշնչյան բոլոր տեքստերին: Հատուկ ժանրի վերաբերող լավ գիրք է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով» Չոնդերվան հրատարակչության (*How To Read The Bible In All Its Worth* Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդը կենտրոնանում է առաջնահերթ ընթերցողի վրա, որը թույլ է տալիս Մուրբ Հոգուն լուսավորել Աստվածաշունչը անձնական ընթերցանության չորս ցիկլերի միջոցով: Այս մեթոդը Մուրբ Հոգուն, տեքստը և ընթերցողին դիտարկում է ոչ թե երկրորդական դերում, այլ առաջնային: Այն նաև ընթերցողին պաշտպանում է մեկնաբանների անհարկի ազդեցությունից: Ես լսել եմ, թե ինչպես են ասում. «Աստվածաշունչը շատ լույս է գցում մեկնաբանությունների վրա»: Այս ասելով նպատակ չունեմ թերագնահատել սերտողությանը օգնող մեկնությունները, այլ խնդրել, որ դրանք անպատեհ չկիրառեք:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնությունները հիմնավորել հենց տեքստից: Վեց ոլորտներ ապահովում են առնվազն սահմանափակ հիմնավորումներ.

1. Պատմական միջավայրը
2. Գրական համատեքստը
3. Քերականական կառուցվածքը (շարահյուսություն)
4. Արդի բառապաշարի կիրառությունը
5. Համապատասխան գուգահեռ հատվածները
6. Ժանրը

Մենք պետք է կարողանանք ապահովել մեր մեկնաբանությունների հիմքում ընկած պատճառներն ու տրամաբանությունը: Աստվածաշունչը մեր հավատքի և դրա կիրառման համար միակ աղբյուրն է: Ցավոք Քրիստոնյաները հաճախ համաձայնության չեն գալիս Աստվածաշնչի ուսմունքների և հիմնավորումների շուրջ: Ընթերցանության այս չորս ցիկլերը նախատեսված են ապահովելու հետևյալ մեկնաբանական հասկացությունները՝

1. Ընթերցանության առաջին ցիկլը
 - ա. Կարդացեք գիրքը մեկ անգամ նստելով. ևս մեկ անգամ կարդացեք այն այլ թարգմանությամբ, լավագույն դեպքում մեկ այլ թարգմանչական տեսությամբ:
 - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
 - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
 - բ. Փնտրեք ամբողջ գրքի գլխավոր նպատակը: Գտեք գրքի թեման:
 - գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական մի բաժին, պարագրաֆ կամ նախադասություն, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման
 - դ. Գտեք գերակշռող գրական ժանրը
 - (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմվածք
 - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստասիրական գրականություն, սաղմոսներ)
 - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ, պոեզիա)
 - դ) Օրենսգիրք
 - (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմվածքներ (Ավետարանները, Գործքը)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Հայտնության գրականություն

2. Ընթերցանության երկրորդ ցիկլը
 - ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ նյութերը
 - բ. Ընդգծեք հիմնական թեմաները և համառոտ սահմանեք դրանց բովանդակությունը
 - գ. Ստուգեք ձեր նպատակի սահմանումը և ընդլայնեք ընդհանուր նկարագրությունը սերտողությանը օժանդակող միջոցներով

3. Ընթերցանության երրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել պատմական միջավայրը և հենց Աստվածաշնչի միջից հատուկ իրավիճակներ այդ գիրքը գրելու համար
- բ. Թվարկեք պատմական իրողություններ, որոնք նշված են Աստվածաշնչյան տվյալ գրքում
 - (1) հեղինակը
 - (2) տարեթիվը
 - (3) ստացողները
 - (4) գրի առնվելու հատուկ նպատակը
 - (5) մշակութային միջավայրի առանձնահատկությունները, որոնք կապված են գրքի գրի առնվելու նպատակի հետ
 - (6) պատմական դեպքերի և դեմքերի հետ կապված խոսքերը
- գ. Ընդլայնեք ձեր ուրվագիծը՝ սխեման, պարբերությունների մակարդակի՝ աստվածաշնչյան գրքի տվյալ բաժնի համար, որը մեկնաբանում էք: Միշտ գտեք և ընդգծեք գրական ժանրը: Սա կարող է լինել մի քանի գլուխ կամ պարբերություն: Այն հնարավորություն է տալիս ձեզ հետևելու բնագրի հեղինակի տրամաբանությանն ու տեքստային կառուցվածքին:
- դ. Ստուգեք պատմական միջավայրը սերտողությանը օժանդակող միջոցներով

4. Ընթերցանության չորրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք տվյալ գրականական բաժինը մի քանի թարգմանություններով
 - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
 - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Գտեք գրականական կամ քերականական կառուցվածքը
 - (1) կրկնվող արտահայտությունները, Եփես.1:6,12,13
 - (2) կրկնվող քերականական կառուցվածքները, Հռոմ.8:31
 - (3) հակադրվող հասկացությունները
- գ. Թվարկեք հետևյալ կետերը
 - (1) կարևոր տերմինները
 - (2) անսովոր տերմինները
 - (3) կարևոր քերականական կառուցվածքները
 - (4) հատկապես դժվար բառերը, հատվածները և նախադասությունները
- դ. Գտեք համապատասխան գուգահեռ հատվածները
 - (1) թեմայի շուրջ փնտրեք տվյալ ուսմունքի հետ կապ ունեցող ամենահստակ հատվածը, կիրառելով՝ ա) «սխտեմատիկ աստվածաբանության» գրքեր, բ) համագոր հատվածները նշող Աստվածաշնչեր, գ) համաբարբառներ
 - (2) ձեր թեմայի շրջանակներում գտեք հնարավոր պարադոքսալ գույգ: Բազմաթիվ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են բարբառային գույգերով. շատ հարանվանական հակասություններ ծնվում են աստվածաշնչյան լարվածության միայն կեսի համար «տեքստային ապացույց» ներկայացնելու պատճառով: Ամբողջ Աստվածաշունչն է ներշնչված և մենք պետք է փնտրենք դրա ամբողջական պատգամը, որպեսզի մեր մեկնաբանության համար ապահովենք սուրբգրային բալանսը:
 - (3) Գտեք գուգահեռներ նույն գրքի, հեղինակի կամ ժանրի ներսում. Աստվածաշունչը հանդիսանում է իր իսկ լավագույն մեկնաբանը, քանի որ հեղինակը մեկն է՝ Մուրբ Հոգին:
- ե. Օգտագործեք սերտողությանը օժանդակող միջոցներ ստուգելու պատմական միջավայրի և դեպքերի ձեր ուսումնասիրությունները:
 - (1) սերտողության Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանությունների գրքեր (այս դեպքում ձեր սերտողության ընթացքում թույլ տվեք անցյալի ու ներկայի հավաստացյալ համայնքին օգնեն և ուղղեն ձեր անձնական սերտողությունը):

III. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Այժմ անցում ենք կատարում կիրառությանը: Դուք ժամանակ տրամադրեցիք հասկանալու տեքստը իր բնագրի միջավայրում: Այժմ պետք է այն կիրառեք ձեր կյանքի, մշակույթի մեջ: Աստվածաշնչի հեղինակությունը ես սահմանում եմ հետևյալ կերպ. «հասկանալ, թե ինչ էր ասում բնագրի հեղինակը իր օրերի համար և կիրառել այդ ճշմարտությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բնագրի հեղինակի՝ թե՛ ժամանակի և թե՛ տրամաբանության մեջ, մեկնաբանության նպատակին: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի որևէ պատգամ մեր օրերի համար մինչև չիմանանք, թե ինչ էր դա արտահայտում իր օրերի համար: Աստվածաշնչի պատգամը չպետք է երբևէ փոխի իր իմաստը:

Ձեր կազմած մանրակրկիտ ուրվագիծը՝ ըստ պարբերությունների (ընթերցանության երրորդ ցիկլը) կլինի ձեր ուղեցույցը: Կիրառությունը պետք է կազմվի ըստ պարբերությունների և ոչ թե մի խոսքի հիման վրա: Բառերն իմաստ ունեն միայն համատեքստի ներսում. նախադասության ենթամասերը նույնպես իմաստ են արտահայտում միայն համատեքստի ներսում. նախադասությունները նույնպես իմաստավորվում են համատեքստի ներսում: Միակ ներշնչված անձնավորությունը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում բնագրի հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լույսի ներքո: Սակայն լուսավորված լինելը դեռևս ներշնչանք չէ: Որպեսզի ասենք, որ «այսպես է ասում Տերը», մենք պետք է մնանք բնագրի հեղինակի նպատակի մեջ: Կիրառությունը պետք է կապված լինի հատկապես ամբողջ գրքի, գրականական բաժնի և պարբերության մտքի զարգացման ընդհանուր նպատակի հետ:

Թույլ մի տվեք, որ մեր օրերի խնդիրները մեկնաբանեն Աստվածաշունչը. թողեք, որ Աստվածաշունչը խոսի: Հնարավոր է այդ անելու համար մեզնից պահանջվի տեքստից հանել սկզբունքներ: Սա հավաստի կլինի, եթե տեքստը պաշտպանի տվյալ սկզբունքը: Դժբախտաբար, շատ դեպքերում մեր սկզբունքները պարզապես «մերն» են և ոչ թե տեքստիներ:

Աստվածաշունչը կիրառելու հարցում կարևոր է հիշել, որ Աստվածաշնչյան տվյալ տեքստի (բացառությամբ մարգարեությունների) համար միայն մեկ նշանակությունն է ճիշտ: Այդ նշանակությունը կապված է բնագրի հեղինակի մտադրության հետ, երբ նա կիրառում էր իր օրերի որևէ ճգնաժամ կամ կարիք: Հնարավորին շատ կիրառություններ կարող են սերվել այս մեկ նշանակությունից: Կիրառությունը հիմնված կլինի նամակը ստացողների կարիքների հիման վրա, սակայն պետք է կապված լինի բնագրի հեղինակի նպատակի հետ:

IV. Մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունները

Մինչ այժմ քննարկեցի մեկնաբանության և կիրառության մեջ առկա տրամաբանական և տեքստային գործընթացները: Այժմ թույլ տվեք համառոտ քննարկել մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունը: Հետևյալ ստուգացանկը ինձ օգտակար է եղել.

1. Աղոթեք, որ Սուրբ Հոգու օգնի ձեզ (տես՝ 1 Կորնթ.1:26-2:16)
2. Աղոթեք անձնական ներման և ձեզ հայտնի մեղքերից մաքրվելու համար (տես՝ 1 Հովհ.1:9)
3. Աղոթեք Աստծուն ավելի ճանաչելու ցանկության համար (տես՝ Սաղմ.19:7-14; 42:1ա; 119:1ա)
4. Կիրառեք ցանկացած նոր գաղափար անմիջապես ձեր կյանքի համար
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Դժվար է պահել տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև հավասարակշռությունը: Հետևյալ մեջբերումները օգնել են ինձ բալանսավորելու այս երկուսը.

1. Ջեյմս Վ. Սայր, *Սուրբ Գրքի Աղավաղում*, էջ 17-18, (James W. Sire, *Scripture Twisting*)
«Լուսավորություն գալիս է Աստծո ժողովրդի մտածելակերպի վրա և ոչ թե միայն հոգևոր էլիտայի: Աստվածաշնչյան Քրիստոնեության մեջ գուրու դասակարգում գոյություն չունի, ո՛չ լուսա-

վորյալներ, և ո՛չ էլ մարդիկ, որոնց միջոցով պետք է հատուկ մեկնաբանություններ կատարվեն: Այսպիսով, մինչ Սուրբ Հոգին տալիս է իմաստության, գիտության և հոգևոր զանազանության հատուկ պարզները, Նա չի նշանակում այս պարզներով օժտված Քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանները: Իր ժողովրդից յուրաքանչյուրը կարող է սովորել, քննել և զանազանել Աստծո Խոսքը, որը նաև հեղինակություն է հանդիսանում նույնիսկ այն մարդկանց համար, որոնց Աստված հատուկ կարողություններ է տվել: Ամփոփելով, ուզում եմ կիսվել իմ ենթադրությամբ ամբողջ գրքի վերաբերյալ. Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն մեր մեծագույն հեղինակությունն է բոլոր այն հարցերում, որոնց մասին խոսվում է այնտեղ. այն ընդհանրապես առեղծվածային չէ և կարող է ցանկացած մշակույթի մեջ ապրող հասարակ մարդու համար լիովին հասկանալի լինել»:

2. Ըստ Կիրկգարդի, տեղ գտած Բերնարդ Ռեմի, *Բողոքական Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, էջ 75 գրքում (Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*):

Համաձայն Կիրկգարդի, Աստվածաշնչի քերականական, բառային և պատմական ուսումնասիրությունը անհրաժեշտ է, սակայն առաջնային է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Մարդը պետք է կարդա Աստվածաշունչը *որպես Աստծո Խոսք*՝ սիրտն իր բերանի մեջ առած, իր ոտքի ծայրերի վրա կանգնած, ակնկալությամբ և Աստծո հետ հաղորդակցվելով: Աստվածաշունչը անմտությամբ, անուշադրությամբ, ակադեմիկորեն կամ մասնագիտորեն կարդալը դեռ չի նշանակում ընթերցել այն որպես Աստծո Խոսք: Երբ մեկն ընթերցում է այս Գիրքը որպես սիրո նամակ, այն ժամանակ է, որ կարդում է Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք»:

3. Հ. Հ. Ռոուլի *Աստվածաշնչի Արդիականությունը*, էջ 19 (H.H. Rowley in *The Relevance of the Bible*):

«Ոչ մի Աստվածաշնչյան լիարժեք գիտելիք չի կարող տիրել նրա բոլոր գանձերին: Այն չի հերքում նմանօրինակ գիտելիքները, քանի որ կարևոր են այն լիարժեք հասկանալու համար: Սակայն դա պետք է առաջնորդի այս գրքի հոգևոր գանձերի հոգևոր գիտությանը, եթե ուզում եք այն լիարժեք լինի: Իսկ այդ հոգևոր գիտության համար անհրաժեշտ է ավելին, քան ողջամտությունն է: Հոգևոր բաները հոգևորապես են քննվում և Աստվածաշունչն ուսումնասիրողը պետք է ունենա հոգևոր ընկալունակությամբ մոտեցում, Աստծուն գտնելու մեծ փափագ, որպեսզի կարողանա հանձնվել Նրան, եթե ուզում է հասնել գիտական ուսումնասիրություններից վեր՝ բոլոր գրքերից ամենահրաշալի Գրքի ավելի հարուստ ժառանգությանը»:

V. Այս մեկնաբանության գրքի մեթոդը

Այս *Մերտողության Ուղղեցույց Մեկնաբանության Գիրքը* նախատեսված է ձեր մեկնաբանական գործընթացին հետևյալ կերպ աջակցելու համար՝

1. Ամեն գիրք համառոտ ծանոթացնում է պատմական միջավայրի հետ: «Ընթերցանության երրորդ ցիկլը» վերջացնելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Ամեն գլխի սկզբում կան համատեքստային հասկացություններ: Սրանք կօգնեն ձեզ տեսնելու, թե ինչպես է կառուցված գրականական բաժինը:
3. Ամեն գլխի կամ հիմնական գրականական բաժնի սկզբում տրված են մի քանի պարբերության բաժանումներ արդի թարգմանություններից և դրանց պատկերավոր լուսաբանումները.

ա. Աստվածաշնչի Միացյալ Ընկերության Հունարեն տեքստը, չորրորդ խմբագրություն (UBS⁴)

բ. Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը, խմբագրված 1995 (NASB)

գ. Նոր Քինգ Չեյմս Տարբերակը (NKJV)

դ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV)

ե. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV)

զ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն և պետք է հիմնավորվեն ըստ համատեքստի: Իրարից տարբերվող թարգմանչական տեսություններ և աստվածաբանական տեսանկյուններ մի քանի թարգմանությունների հետ համեմատելով հնարավորություն ենք ունենում վերլուծելու բնագրի հեղինակի մտքերի ենթադրյալ կառուցվածքը: Ամեն պարբերություն ունի մեկ հիմնական ճշմարտություն: Չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել մի պարբերությունից պակաս հատված: Նաև հիշեք, որ ամեն պարբերություն կապված է նախորդ և հաջորդ պարբերության հետ: Այդ իսկ պատճառով այդքան կարևոր է ամբողջ գրքի պարբերությունների բաժանումը: Մենք պետք է կարողանանք հետևել բնագրի ներշնչված հեղինակի կողմից հաղորդած թեմայի տրամաբանական հաջորդականությանը:

4. Բոքի գրառումները հետևում են ըստ համարների մեկնաբանության մոտեցմանը: Սա մեզ ստիպում է հետևել բնագրի հեղինակի մտադրությանը: Այդ գրառումները տեղեկություններ են ապահովում մի քանի ոլորտներից.
 - ա. գրական համատեքստից
 - բ. պատմական, մշակութային հասկացություններից
 - գ. քերականական տեղեկություններից
 - դ. բառային սերտողություններից
 - ե. համապատասխան գուգահեռ հատվածներից
5. Մեկնաբանության ընթացքում որոշ տեղերում ՆԱՍՎ (NASV, թարմեցված 1995-ին) թարգմանությանը կիրառեն մի քանի այլ ժամանակակից թարգմանության տարբերակներ.
 - ա. Նոր Բինգ Ջեյմս Տարբերակը (NKJV), որը հետևում է “Textus Receptus”-ի տեքստային ձեռագրերին:
 - բ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV), որը բառ-առ-բառ վերանայում է Վերանայված Ստանդարտ Տարբերակի Եկեղեցիների Ազգային Խորհրդից:
 - գ. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV), որը Ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության համարժեք դինամիկ թարգմանությունն է:
 - դ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB), որը Ֆրանսիական Կաթոլիկ դինամիկ համարժեք թարգմանության վրա հիմնված Անգլերեն թարգմանությունն է:
6. Նրանց, ովքեր չեն կարդում հունարեն, անգլերեն թարգմանությունների համեմատությունները կօգնեն ճանաչելու տեքստում առկա խնդիրները.
 - ա. ձեռագրային փոփոխությունները
 - բ. բառի այլընտրանքային նշանակությունները
 - գ. քերականորեն բարդ տեքստերը և կառուցվածքը
 - դ. խրթին տեքստերը, թեև անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, այլ միայն թիրախավորում են տվյալ հատվածները ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրության համար
 - ե. Յուրաքանչյուր գլխի վերջում տրված են թեմատիկ քննարկումներ, որոնք փորձում են թիրախավորել այդ գլխի հիմնական մեկնաբանության թեմաները:

ԾՆՆԴՈՑ 1-11 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Ինչպե՞ս է Ծննդոց 1-11 կապված ժամանակակից արևմտյան գիտության հետ

1. լիովին թշնամաբար
2. լիարժեք համաձայնությամբ
3. նմանության եզրեր ունեն

Գիտությունը մեթոդիկայի ուսումնասիրություն է: Այն արդի ֆենոմեն է, սակայն միշտ փոփոխվում է նոր գիտության լույսի ներքո: Աստված որպես Արարիչ և Աստված որպես Փրկիչ միասին կապվում են «երկու գրքերի» միջոցով. բնությունը (հայտնությունը բնության միջոցով, տես՝ Սաղմ. 19:1-6) և Սուրբ Գիրքը (հատուկ հայտնությունը, տես՝ Սաղմ. 19:7-11): Երկուսն էլ Աստված է գրել: Դրանք իրարամերժ չեն:

Բ. Ինչպե՞ս է Ծննդոց 1-11 կապված ժամանակակից պատմության հետ:

1. Արևելյան և արևմտյան գրական ժանրերը տարբեր են: Ոչ թե ճիշտ կամ սխալ, կեղծ կամ անկեղծ, այլ տարբեր էր: Ծննդոց 1-11 նախապատմությունն է: Աստվածաբանորեն այն խիստ կարևոր է, սակայն ինչ-որ առումով քողարկված (համառոտ գրական ժանրը): Քողարկված գրական ժանրում, պատմական դրամայում, քողարկված ինչպես պատմության ավարտը (այսինքն՝ Հայտնությունը):
2. Քրիստոնեությունը, ինչպես Հուդայականությունը, պատմական հիմք ունեցող կրոն է: Այն կառուցվում կամ ձախողում է իր պատմական դեպքերի պատճառով: Սակայն, որոշ դեպքեր (այսինքն՝ Ծննդ. 1-11) մեր հասկացողությունից վեր են, հետևաբար դրանք հաղորդվում են մարդկանց հասկանալի կերպերով (այսինքն՝ հասանելի): Սա ընդհանրապես չի ազդում դրանց վստահելիության՝ հավաստիության վրա, այլ ընդգծում է դրանց աստվածաբանական նպատակը: Աստվածաշունչը նախընտրում է կենտրոնանալ ոչ թե ստեղծագործության վրա, այլ վերաստեղծման (փրկագնումը):
3. Ծննդոցը «պատմական» իրողությունների շրջանակում տրված շարք է: Մենք կարող ենք փաստագրել ակնհայտ կապեր գլուխ 12-ի հետ աշխարհիկ պատմության մեկնարկի (այսինքն՝ Nuzi and Mari Tablets): Սակայն, 1-3 գլուխները պատմական փաստից և որևէ ժանրային նմանությունից վեր է:

Գ. Ինչպե՞ս է Ծննդոց 1-11 կապված գրականության հետ:

1. Ըստ Միջագետքյան աղբյուրների գոյություն ունեն 1-2, 3 և 6-9 գլուխների միջև զուգահեռներ : Հանախ տերմինաբանությունը, մանրամասները և պատմության ընթացքը նույնն են: Սակայն, Աստվածաշնչի միաստվածությունը և մարդկության արժեքը բացառիկ են:
2. Աստվածաշնչին որպես գրականության վերաբերվելու մեջ առնվազն երկու վտանգներ են առկա՝
ա. Որպես գրականություն այն առասպելական է, կատարելապես ոչ պատմական:
բ. Որպես գրականություն այն բառացի է, ոչ թե փոխաբերական լեզվով, առանց արևելյան ժանրերի, դրամատիկ պարաբոլաձև դեպքերի:
Աստված Իրեն հայտնել է հատուկ ժամանակի և մշակույթի մեջ, գործածելով մարդկային լեզուն (այսինքն՝ փոխաբերություններ, նմանություններ և բացասումներ): Դրանք ճշմարիտ և վստահելի են, բայց ոչ սպառիչ:
3. Ստեղծագործությունը զարգացող հայտնության ճշմարտություն է: Ծննդոց 1-2 գլուխները հիմնարար են, սակայն Սաղմոսները և ՆԿ-ը նույնպես նշանակալի են հատուկ նպատակի համար: Երեք աղբյուրներից յուրաքանչյուրն էլ ավելացնում են ստեղծագործության նպատակի և մեթոդիկայի աստվածաբանական ըմբռնմանը:

Դ. Ինչպե՞ս ենք մեկնաբանում Ծննդոց 1-11 գլուխները:

1. Ինչպես ամեն ինչ սկսվեց և ինչպես է ամեն ինչ ավարտվելու՝ քողարկված են (Ծննդոց 1-11 և Հայտնություն, այսինքն՝ ապակու միջով մենք խամրած ենք տեսնում):
2. Աստծուն արձագանքելու՝ պատասխանելու և Աստվածաշունչը հասկանալու համար մենք ունենք անհրաժեշտ ամբողջ ճշմարտությունները: Սակայն մենք չունենք սպառիչ, գրական, լիարժեք փաստեր: Մենք ունենք աստվածաբանորեն հատընտիր և մեկնաբանված դեպքեր:
3. Մենք պետք է Ծննդոց 1-11 դիտարկենք՝
ա. գրական ժանրի միջոցով
բ. աստվածաբանական շեշտադրման միջոցով
գ. պատմական դեպքերի միջոցով
դ. ժամանակակից արևմտյան գիտության, մշակույթի, միտումների միջոցով

4. Ընկած մարդիկ բոլորն էլ կանգնում են Աստվածաշնչի առջև (այսինքն՝ Աստծո հայտնությունը) և դատվում են ըստ դրա: Այն մեր մտավոր կարողություններից վեր է, սակայն մենք պետք է կարողանանք ընկալել այն, որպեսզի ի վիճակի լինենք պատշաճ կերպով արձագանքել դրան: Հավատացյալները այն տարբեր կերպերով են մեկնաբանում (ոմանք շատ թույլ կերպով), սակայն բոլորն էլ պատասխանատու են իրենց հասկացած ճշմարտությունների համար: Այն հայտնում է Աստծուն. այն հայտնում է մարդու ապստամբությունը. այն հայտնում է աստվածային փրկագործությունը: Մեր հավերժությունն է կապված այս ճշմարտությունների հետ, ոչ թե Ծննդոց 1-11-ի արարչագործության և իրադարձությունների ինչպես և երբը: Դրանք առաջին հերթին Ու և ինչու են, որոնք իրապես շատ կարևոր են:

Աստված մեզ բոլորիս ողորմեա (ինչպես և անում է):

ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Եբրայերենում (այսինքն՝ Մագորեթիկ Տեքստը) այն հանդիսանում է գրքի առաջին բառը՝ *bereshith*, «սկզբում» կամ «սկզբնապես»:

Բ. Հունարեն Աստվածաշնչից (այսինքն՝ Սեպտուագինտայի թարգմանությունը) այն *Genesis* է, որը նշանակում է «սկիզբ» կամ «ծագում», որը վերցված է Ծննդոց 2:4ա-ից: Հնարավոր է սա է հանդիսանում հեղինակի բանալի «արտահայտությունը» կամ կոլոֆոնը, որպեսզի իրար կապակցի աստվածաբանական տարբեր կենսագրություններ, ինչպես անում էին բարեկոյան սեպագիր գրողները: Բանալի արտահայտությունը հանդիսանում է որպես ամփոփում և ոչ թե նախաբան:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Սա հանդիսանում է «Թորա» կամ «ուսմունքներ» կամ «Օրենք» կոչվող Եբրայերեն կանոնի առաջին բաժնի առաջին գիրքը:

Բ. Սեպտուագինտայում այս բաժինը կոչվում է Պենտատոնիկ /Հնգամաստյան/ (այսինքն՝ հինգ գալարները):

Գ. Երբեմն անգլերենում այն կոչվում է «Մովսեսի Հինգ Գրքերը»:

Դ. Ծննդոցից Երկրորդ Օրինաց գրքերը Մովսեսի կողմից գրի առնված (կամ խմբագրված) շարունակական դեպքեր են ստեղծագործությունից մինչև Մովսեսի ժամանակների վերաբերյալ:

III. ԺԱՆՐԸ – Ծննդոց գիրքը հիմնականում աստվածաբանական, պատմական պատմվածք է, սակայն այն նաև պարունակում է գրական ժանրի այլ տեսակներ.

Ա. Պատմական դրամա – օրինակներ՝ 1:1-3

Բ. Պոեզիա – օրինակներ՝ 2:23; 4:2; 8:22

Գ. Մարգարեություն – օրինակներ՝ 3:15; 49:1 (նաև պոետիկ)

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Աստվածաշունչն ինքը չի նշում հեղինակին (ինչպես և ՀԿ-յան շար գրքերի համար): Ծննդոցը չունի «ես» բաժիններ, ինչպես օրինակ Եզրապը, Նեեմիան կամ «մենք» բաժիններ, ինչպես Գործք Առաքելոցը: Վերջիվերջո հեղինակը Աստված է:

Բ. Հրեական ավանդույթը.

1. Հնագույն հրեա գրողները ասում են, որ Մովսեսն է այն գրել.

ա. Բեն Սիրաքի *Ժողովողը*, 24:23, գրված մոտ Բ. Ա. 185-ին

բ. *Բաբա Բայթա /Baba Bathra/* 14 Ե, Թալմուդի մի մասը

գ. Եզրապոսից Ալեքսանդրիացի Ֆիլոն՝ մի հրեա փիլիսոփա, որն ապրել է Բ. Ա. 20-ից մինչև մ. թ. 42թ.

դ. Փլավիոս Չոզենֆուսը՝ հրեա պատմաբան, որն ապրել է մ. թ. 37-70 թ.

2. Սա Մովսեսին տրված հայտնությունն էր

ա. Մովսեսին ասվում է գրել ժողովրդի համար.

(1) Ելից 17:14

- (2) Ելից 24:4,7
- (3) Ելից 34:27,28
- (4) Թվոց 33:2
- (5) 2 Օրինաց 31:9, 22, 24-26

բ. Աստծուն ասվում է, որ մարդկանց խոսի Մովսեսի միջոցով.

- (1) 2 Օրինաց 5:4-5, 22
- (2) 2 Օրինաց 6:1
- (3) 2 Օրինաց 10:1

գ. Մովսեսին ասվում է, որ ժողովրդին խոսի Թորայի խոսքերը.

- (1) 2 Օրինաց 1:1,3
- (2) 2 Օրինաց 5:1
- (3) 2 Օրինաց 27:1
- (4) 2 Օրինաց 29:2
- (5) 2 Օրինաց 31:1, 30
- (6) 2 Օրինաց 32:44
- (7) 2 Օրինաց 33:1

3. ՀԿ հեղինակները այն վերագրում են Մովսեսին.

- ա. Հեսու 8:31
- բ. 4 Թագավորաց 14:6
- գ. Եզրաս 6:18
- դ. Նեեմիա 8:1; 13:1-2
- ե. 2 Մնացորդաց 25:4; 34:12; 35:12
- զ. Դանիել 9:11
- է. Մադաբիա 4:4

Գ. Քրիստոնեական ավանդույթը

1. Թորայից բերված մեջբերումները Հիսուսը վերագրում է Մովսեսին.

- ա. Մատթեոս 8:4; 19:8
- բ. Մարկոս 1:44; 7:10; 10:5; 12:26
- գ. Դուկաս 5:14; 16:31; 20:37; 24:27,44
- դ. Հովհաննես 5:46-47; 7:19, 23

2. Թորայից բերված մեջբերումները ՆԿ-յան մյուս հեղինակներն էլ վերագրում են Մովսեսին.

- ա. Դուկաս 2:22
- բ. Գործք 3:22; 13:39; 15:1, 15-21; 26:22; 28:23
- գ. Հռոմեացիներին 10:5, 19
- դ. 1 Կորնթացիներին 9:9
- ե. 2 Կորնթացիներին 3:15
- զ. Եբրայեցիներին 10:28
- է. Հայտնություն 15:3

3. Վաղ Եկեղեցու շատ Հայրեր ընդունում էին Մոսեսի հեղինակ լինելը: Սակայն Իրենեոսը, Ալեքսանդրիացի Կլեմենտը, Օրիգենոսը և Տերտուլիանոսը բոլորն էլ կասկածի տակ էին դրել Ծննդոցի այդ պահին ունեցած կանոնի տեսքի հետ Մովսեսի առնչությունը (տես՝ Դ.2, էջ՝ 16):

Դ. Ժամանակակից գիտնականները

1. Անշուշտ կատարվել են խմբագրական որոշակի հավելումներ Թորային (հավանաբար, որպեսզի հնագույն գործը ավելի հասկանալի դարձնեն ժամանակակից ընթերցողի համար, որը հատկանշական էր եգիպտացի դպիրներին).

- ա. Ծննդոց 12:6; 13:7; 14:14; 21:34; 32:32; 36:31; 47:11
- բ. Ելից 11:3; 16:36
- գ. Թվոց 12:3; 13:22; 15:22-23; 21:14-15; 32:33
- դ. 2 Օրինաց 3:14; 34:6

ե. Հնագույն դպիրները ունեին գերազանց կրթություն և փորձ: Նրանց տեխնիկան սակայն տարբերվում էր մի երկրից մյուսը.

- (1) Միջագետքում, նրանք շատ զգույշ էին, որպեսզի ոչինչ չփոխեն, և նույնիսկ ստուգում էին իրենց աշխատանքների ստույգությունը: Ահա մի հնագույն Շումերական դպրության տողատակի նոթագրում մոտ Ք. Ա. 1400 թ-ից. «գործն ավարտված է սկզբից մինև վերջ, կատարված է կրկնօրինակը, ստուգված է, համեմատված և հաստատված ամեն մի նշանը»:
- (2) Եզիպտոսում նրանք ազատ ստուգում էին հնագույն տեքստերը, դրանք ժամանակակից ընթերցողների համար խմբագրելու նպատակով: Քումրանի դպիրները (այսինքն՝ Մեռյալ Ճովի Գալարների) հետևում էին այս մոտեցմանը:
2. 19-րդ դարի գիտնականները տեսություն կազմեցին, որ Թորան շարադրված փաստաթուղթ է վերցված շատ աղբյուրներից բավականին մեծ ժամանակահատվածում (Graff-Wellhausen): Այս տեսությունը հիմնված էր.
- ա. Աստծո տարբեր անունների հիման վրա
 - բ. տեքստերում առկա բացահայտ կասկածների վրա
 - գ. դեպքերի գրական ժանրերի վրա
 - դ. դեպքերի աստվածաբանության վրա
3. Ենթադրյալ աղբյուրները և տարեթվերը
- ա. J աղբյուրը (հարավային Իսրայելից YHWH անվան կիրառությունը)՝ Ք. Ա. 950թ.
 - բ. E աղբյուրը (հյուսիսային Իսրայելից *Elohim* /Էլոհիմ/ անվան կիրառությունը)՝ Ք. Ա. 850թ.
 - գ. JE աղբյուրը՝ Ք. Ա. 750 թ.
 - դ. D աղբյուրը («Օրենքի Գիրքը»՝ 4 Թագավորաց 22:8, որը գտնվեց Հովսիայի կատարած բարեփոխությունների ընթացքում, մինչ վերակառուցում էր Տաճարը, և ենթադրվում է, որ այն 2 Օրինաց գիրքն էր, որ գրվել էր Հովսիայի օրոք ապրող մի անհայտ քահանայի կողմից, որպեսզի օգնի իր բարեփոխումներին)՝ Ք. Ա. 621 թ:
 - ե. P աղբյուրը (քահանաների կողմից ՀԿ-ի արտագրումը՝ պատճենը, հատկապես ծեսերն ու դրանց ընթացակարգերը)՝ Ք. Ա. 400 թ:
 - զ. Ակնհայտ է, որ Թորայի մեջ կատարվել են խմբագրական ավելացումներ: Հրեաները հաստատում են դա.
 - (1) Քահանայապետը (կամ իր ընտանիքից մեկ ուրիշը) գրվելու ընթացքում
 - (2) Երեմիա Մարգարեն
 - (3) Եզրաս Դպիրը՝ 4 Եզրաս /անկանոն գրքերից/ ասում է, որ ինքն արտագրել է այն, քանի որ Ք. Ա. 586 թ-ի Երուսաղեմի անկման ժամանակ բնագրերը ոչնչացվել էին:
 - է. Սակայն J. E. D. P. տեսությունն ավելին է ասում մեր ժամանակակից գրական տեսությունների և կատեգորիաների մասին, քան Ռ. Կ. Հարրիսոնի *Հին Կտակարանի Ներածություն* գրքից /R. K. Harrison *Introduction to the Old Testament*, pp. 495-541 and *Tyndale's Commentaries*, "Leviticus" pp. 15-25/ Թորայի վկայությունը:
- ը. Եբրայերեն գրականությանը բնորոշ հատկությունները
- (1) Չուգագրությունները, ինչպես օրինակ Ծննդոց 1 և 2 գլուխները, տարածված են Եբրայերենում: Մովորաբար տրվում է ընդհանուր նկարագրություն, որին հետևում է մասնավոր դեպք (այսինքն՝ Տաս Պատվիրանները և Սրբարանի Օրենսգիրքը): Հնարավոր է սա եղել է մի միջոց, որով շեշտադրվել են ճշմարտությունները կամ օգնել պահելու բանավոր հիշատակը:
 - (2) Հնում ռաբբիներն ասում էին, որ Աստծո ամենատարածված երկու անունները ունեն աստվածաբանական նշանակություն.
 - (ա) ՅԱՀՎԵ՝ աստվածության ուխտի անունը, թե ինչպես է Նա կապված Իսրայելի հետ որպես Փրկիչ և Ազատագրող (տես՝ Սաղմոս 19:7-14; 103):
 - (բ) *Էլոհիմ* – Աստված որպես Արարիչ, Մատակարար և երկրի վրա գտնվող բոլորի կյանքի Պահապանը (տես՝ Սաղմ. 19:1-6; 104):
 - (գ) Մերձավոր Արևելքի մյուս հնագույն տեքստերը կիրառում են մի քանի անուններ, որոնք նկարագրում են իրենց բարձրյալ աստծուն (տես՝ Գլխն L. Արչերի *Աստվածաշնչյան Բարդոյթների Հանրագիտարան* /Gleason L. Archer *Encyclopedia of Bible Difficulties*, էջ՝ 68):
 - (3) Մերձավոր Արևելքում ոչ աստվածաշնչյան գրականության մեջ տարածված է օգտագործել զանազան ժանրեր և բառապաշար, որոնց կարելի է հանդիպել

համակցված գրական աշխատանքների մեջ (տես՝ Հին Կտակարանի Ներածություն Ռ. Կ. Հարիսոն /Introduction to the Old Testament/ էջ՝ 522-526):

- Ե. Հնագույն մերձարևելյան գրականությունից վկայությունը փաստում է, որ Մովսեսը օգտագործել է գրավոր սեպագիր փաստարկներ կամ միջագետքյան ոճով (նահապետական) բանավոր ավանդույթներ, որպեսզի գրի Ծննդոցը: Սա ընդհանրապես չի նշանակում ներշնչանքին լսելու ակնարկ, այլ հանդիսանում է փորձ բացատրելու Ծննդոց գրքի գրական ֆենոմենը (տես՝ Պ. Ջ. Ուայզմենի *Ծննդոցի վերաբերյալ Բաբելոնում Նոր Հայտնագործություններ* /P. J. Wiseman's *New Discoveries in Babylonia about Genesis*/): Ծննդոց 37-ից սկսած, Եգիպտական ոճի, ձևի և բառապաշարի նշանակալի ազդեցությունը կարծես թե մատնացույց է անում, որ Մովսեսը կիրառում էր կամ գրական աղբյուրներ կամ բանավոր ավանդույթներ թե՛ Եգիպտոսում և թե՛ Միջագետքում այդ օրերում ապրող Իսրայելացիներից: Մովսեսի պաշտոնական կրթությունը ամբողջովին եգիպտական էր: Հնգամատյանի ճշգրիտ գրականական ձևավորումը՝ կազմությունը անհայտ է: Ես հավատում եմ, որ Մովսեսն ինքն է հանդիսանում Հնգամատյանի մեծ մասի հավաքագրողն ու հեղինակը, թեև հնարավոր է, որ օգտագործել է դպիրներին և / կամ գրավոր ու բանավոր (նահապետական) ավանդույթները: Նրա գրվածքները հետագայում դպիրների կողմից սրբագրվել են: ՀԿ-ի այս առաջին մի քանի գրքերի պատմական լինելն ու հավաստիությունը լուսաբանվել են ժամանակակից երկրաբանության կողմից:
2. Մի այսպիսի նոր տեսություն կա, որ գոյություն ունեին դպիրներ (Իսրայելի տարբեր մասերում), որոնք միևնույն ժամանակ աշխատել են Հնգամատյանի տարբեր մասերի վրա Սամվել մարգարեի առաջնորդության ներքո (տես՝ 1 Թագ.10:25): Այս տեսությունը առաջին անգամ առաջարկվել է Ի. Ռոբերթսոնի *Հին Կտակարանի Խնդիրը* /E. Robertson *The Old Testament Problem*/ կողմից:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Ծննդոցը ընդգրկում է տիեզերքի ստեղծագործության ժամանակաշրջանից մինչև Աբրահամի ընտանիքը: Աբրահամի կյանքի տարեթվերը կարելի է գտնել այդ օրերի աշխարհիկ գրականության միջոցով: Մոտավոր տարեթիվը կլինի Ք. Ա. 2000 թ.՝ Ք. Ա. երկրորդ հազարամյակը: Սրա համար հիմք են հանդիսանում՝
1. ընտանիքի հայրը որպես ընտանիքի քահանա լինելու փաստը (ինչպես Հոբբ)
 2. ապրում էին վրանաբնակ՝ քոչվոր կյանքով, հետևելով իրենց հոտերին և նախիրներին
 3. Սեմական ժողովուրդների տեղաշարժը այս ժամանակաշրջանում
- Բ. Ծննդոց 1-11 սկզբնական իրադարձությունները իրական պատմական դեպքեր են (հավանաբար պատմական դրամա), սակայն ոչ թվագրելի ներկայիս հնարավոր գիտության կողմից.
1. Անձնապես ես ընդունում եմ, որ երկիրն ունի մի քանի միլիարդ տարվա հնություն (այսինքն՝ 14,6 միլիարդ տարի տիեզերքը և 4,6 միլիարդ տարի՝ երկիրը. տես՝ Հյու Ռոսսի *Ծննդոցի Հարցը և Ստեղծագործությունն ու Ժամանակը* /Hugh Ross' *The Genesis Question and Creation and Time*/):
 2. Սակայն, ես նաև հավատում եմ Ադամի և Եվայի հատուկ արարչագործությանը, որ այն տեղի է ունեցել շատ ավելի ուշ շրջանում: Ինձ թվում է, որ Ծննդոցը ներկայացված է «պատմական» ինչ-որ մի տեսակի մոտեցման ներսում, սակայն պատմական տեսանկյունը ՄԿՉԲԻ համար աղոտ է (այսինքն՝ Ծննդոց 1-3): Ադամի և Եվայի երեխաները սկսում են քաղաքակրթությունը Միջագետքում (այսինքն՝ գլուխ 4): Եթե պահպանենք այս մոտեցումը, ապա Ադամը ժամանակակից (*Homo sapien* – Հոմոսապիենս) և ոչ թե ավելի պրիմիտիվ *Homo erectus* է: Եթե այդպես է, ապա պետք է, որ լինի Էվոլուցիոն գարգացում *hominid* -ների մեջ (տես՝ *Թինդեյլ ՀԿ-յան Մեկնաբանություններ*, «Ծննդոց» Քիդների կողմից և *Ո՛վ էր Ադամը* Փազելյ Ռանա և Հյու Ռոսս /Tyndale OT Commentaries, “Genesis” by Kidner and Who Was Adam? by Fazale Rana and Hugh Ross/), ինչպես նաև ժամանակի մեջ ավելի ուշ շրջանում Աստծո կողմից հատուկ ստեղծագործություն: Ես այնքան էլ լիարժեք կերպով չեմ հարմարվում այս գաղափարի հետ, սակայն սա լավագույնն է, որ կարող եմ ներկայացնել ներկայումս աստվածաշնչյան և գիտական իմ գիտելիքների արդյունքում:

Գ. Ծննդոցն ուսումնասիրելիս պետք է հիշել, որ այն արձանագրվել է Մովսեսի կողմից, որն Աստծո ժողովրդին Եգիպտոսից դուրս էր հանում կա՛մ (1) Զ. Ա. 1445 թ-ին՝ 3 Թագ.6:1-ի հիման վրա, կա՛մ էլ (2) Զ. Ա. 1290 թ-ին՝ ժամանակակից երկրաբանության ապացույցի հիման վրա: Հետևաբար, կամ բանավոր ավանդույթի, անհայտ գրավոր աղբյուրների կամ ուղղակի աստվածային հայտնության միջոցով, Մովսեսը արձանագրում է, թե «ինչպես ամեն բան սկսվեց»՝ շեշտադրելով «ով» և «ինչու»-ն, և ոչ թե «ինչպես» և «երբ»-ը:

Դ. Ես այս մեկնաբանության գիրքը (Ծննդոց 1-11) գրեցի 2001 թ-ին: Ես մեծ պայքարների մեջ էի Ծննդոց Մեկի և իմ իսկ արևմտյան ժամանակակից մշակույթի միջև: Ջոն Հ. Ուոլթոնի *Ծննդոց Մեկի Կորստ Կոնսերվացիա* /John H. Walton, *The Lost World of Genesis One*, IVP (2009)/ նոր գիրքը ինձ օգնել է տեսնելու, թե ինչ մեծ ազդեցություն էր ինձ վրա թողել իմ իսկ շրջակա միջավայրը: Ես հավատում եմ, որ ճշգրիտ հերմենևտիկան սկսում է բնագրի հեղինակի մտադրությամբ, սակայն ինձ համար հստակ է, որ իմ հերմենևտիկ տեսությունն ավելի լավ էր, քան իմ գործնականը: Ուոլթոնի գրած այս գիրքը Ծննդոցի Մեկի վերաբերյալ ունեցած մտածելակերպի հարացույց փոփոխություն է ոչ թե տիեզերքի նյութական ծագումնաբանության հետ կապված, այլ ֆունցիայի՝ գործառնությունների ծագման: Այն իրոք բացում է աչքերդ: Այս գիրքը համոզել է ինձ մի նոր անկյունից դիտարկել այս կենսական կարևորության տեքստը, որը շրջանցում է գիտությունն ընդդեմ հավատքի, հին երկիրն ընդդեմ նոր երկրի, էվոլյուցիան ընդդեմ օրգանիզմների տեսակների ստեղծագործության շուրջ վիճաբանությունները: Խորհուրդ եմ տալիս կարդալ այս գիրքը:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Աստվածաշնչյան այլ գրքեր

1. Ստեղծագործություն – Սաղմոս 8; 19; 33; 50; 104; 148 և ՆԿ (տես՝ Հովհ. 1:3; 1 Կորնթ. 8:6; Կող. 1:16; Եբր. 1:2)
2. Աբրահամի ժամանակից մինչև Հոր

Բ. Հնագիտական աղբյուրները

1. Ծննդոց 1-11-ի մշակութային միջավայրին մեզ հայտնի ամենահին գրական գուգահեռը հանդիսանում է հյուսիսային Սիրիայից մոտ Զ. Ա. 2500 թ-ի Եբլայի սեպագիրը, որը գրվել է Աքքադերենով:
2. Ստեղծագործություն
 - ա. Ստեղծագործությանը վերաբերող ամենամոտ Միջագետքյան արձանագրությունը *Enuma Elish* գրությունն է, որը թվագրվում է ըստ (1) NIV Սերտոդոյան Աստվածաշնչի Զ. Ա. մոտ 1900-1700 թթ կամ (2) Ջոն Հ. Ուոլթոնի *Հնագույն Բարայերական Գրականությունը իր մշակութային Համատեքստում*, էջ՝ 21, թվագրվում է Զ. Ա. 1000 թ. Այն գտնվել է Նինվեում Աշուրբանիպալի գրադարանում և մյուս կրկնօրինակները գտնվել են մի քանի այլ տեղերում: Գոյություն ունեն յոթ սեպագիր արձանագրություններ՝ գրված արքադերենով, որոնք նկարագրում են ստեղծագործությունը Մարդուքի կողմից:
 - (1) Աստվածները, *Apsu* (թարմ ջուր՝ արական) և *Tiamat* (աղի ջուր՝ իգական) ունեին անկառավարելի, աղմկոտ երեխաներ: Այս երկու աստվածները փորձում էին լռեցնել ավելի փոքրիկ աստվածներին:
 - (2) *Ea* և *Damkina* -յի երեխաներից մեկը՝ Մարդուքը /*Marduk*/ (նորակերտ Բաբելոն քաղաքի գլխավոր աստվածը) հաղթում է *Tiamat* աստծուն: Նա երկիրն ու երկինքը ձևավորում է նրա մարմնից:
 - (3) *Ea*-ն ստեղծում է մարդկությանը պարտություն կրած մեկ այլ աստծուց՝ *Kingu*-ից, որը *Tiamat*-ի երկրորդ ամուսինն էր *Apsu*-ի մահից հետո: Մարդկությունը ծնվում է Զինգուի արյունից:
 - (4) Մարդուքը դարձավ Բաբելոնյան պանթեոնի գլխավորը:
 - բ. «Ստեղծագործության կնիքը» մի սեպագիր արձանագրություն է, որը մերկ տղամարդու և կնոջ պատկեր է պտղատու ծառի մոտ կանգնած, որի վրա գալարված է մի օձ, որ ուղղված է դեպի կնոջ ուսը, իբրև խոսում է նրա հետ:

Wheaton College -ի Հնագիտության պահպանողական Դասախոս Ալֆրեդ Ջ. Հոյերթն ասում է, որ այժմ այդ կնիքը մեկնաբանվում է իբրև անառակությանը վերաբերող պատկեր: Սա լավ օրինակ է այն բանի, թե ինչպես են ժամանակի միջով և տարբեր անհատների միջոցով տարբեր կերպ մեկնաբանվում անցյալի արտեֆակտները: Ապացույց հանդիսացող այս յուրահատուկ մասունքը պետք է վերագնահատվի:

3. Ստեղծագործությունը և Ջրհեղեղը – *The Atrahasis Epic* արձանագրում է ավելի փոքր աստվածների ասպտամբությունը ծանրաբեռնվածության և մարդկային յոթ գույգերի ստեղծագործության պատճառով (կավից, արյունից և թուրքից), որոնք նախատեսված էին իրականացնելու այս ավելի փոքր աստվածների պարտականությունները: Մարդիկ բնաջնջվեցին հետևյալ պատճառներով. (1) չափից ավելի բնակչություն լինելու և (2) աղմուկի: Մարդիկ թվաքանակով նվազեցին աղետի, երկու սովերի և վերջում մի ջրհեղեղի միջոցով, որը ծրագրված էր *Enlil* -ի կողմից: *Atrahasis* կառուցում է մի նավ և ներս բերում կենդանիներին, որպեսզի փրկի նրանց ջրհեղեղից: Այս նույն դեպքերը միևնույն հերթականությամբ կարելի է տեսնել Ծննդոց 1-11-ում: Սեպագիր այս արձանագրությունը թվագրվում է մոտավորապես նույն ժամանակները ինչ *Enuma Elish*-ը և Գիլգամեշի Էպոսը՝ մոտ Ք. Ա. 1900-1700 թթ.: Այս բոլորն էլ աքքադերենով են:
4. Նոյի Ջրհեղեղը
 - ա. Նիփուրից մի շումերական արձանագրություն, որ կոչվում է *Eridu Ճննդոց*, թվագրվող մոտ Ք. Ա. 1600 թ., պատմում է *Ziusudra*-ի և սպասվող ջրհեղեղի մասին:
 - (1) *Enka*, ջրի աստվածը, *Ziusudra*-ին զգուշացնում է գալիք ջրհեղեղի մասին:
 - (2) *Ziusudra*, արքայական քահանան, հավատում է այս հայտնությանը և կառուցում մի հսկա քառակուսի նավ և այնտեղ ամբարում ամեն տեսակ սերմերով:
 - (3) Ջրհեղեղը տևեց յոթն օր:
 - (4) *Ziusudra*-ն նավի վրա մի պատուհան բացեց և մի քանի թռչուններ արձակեց, որպեսզի տեսնի, թե արդյոք ցամաքը հայտնվել է, թե ոչ:
 - (5) Երբ նավից դուրս եկավ նա նաև զոհ մատուցեց ցուլ և ոչխարներ:
 - բ. Բաբելոնական Ջրհեղեղի պատմությունը շարադրվում է չորս շումերական տախտակների վրա, որոնք հայտնի են որպես *Գիլգամեշի Էպոս*, որը թվագրվում է մոտ Ք. Ա. 2500-2400 թթ., չնայած որ գրի առնված շարահյուսությունը սեպագիր աքքադերեն է և շատ ավելի ուշ թվագրության (Ք. Ա. 1900-1700 թթ.): Այն պատմում է ջրհեղեղից փրկվածի՝ *Utnapishtim*-ի մասին, որը պատմում է Գիլգամեշին՝ Ուրուքի թագավորին, թե ինչպես է նա փրկվել այդ մեծ ջրհեղեղից և թե ինչպես է նրան հավիտենական կյանք շնորհվել:
 - (1) *Ea* – ջրի աստվածը, զգուշացնում է գալիք ջրհեղեղի մասին և *Utnapishtim*-ին (*Ziusudra*-ի բաբելոնական տեսակը) կարգադրում, որ մի նավ կառուցի:
 - (2) *Utnapishtim*-ը և նրա ընտանիքը, ընտրված դեղաբույսերով հանդերձ, փրկվում են ջրհեղեղից:
 - (3) Ջրհեղեղը տևում է յոթն օր:
 - (4) Նավը հանգչում է հյուսիսային Պարսկաստանում՝ Նիսիր լեռան գագաթին:
 - (5) Նա 3 տարբեր թռչուններ է արձակում, որպեսզի ստուգի, թե արդյոք ցամաքն արդեն հայտնվել է:
5. Միջագետքյան գրականությունը, որը նկարագրում է մի շատ հին ջրհեղեղ, բոլորն էլ բխում են միևնույն աղբյուրից: Հաճախ անունները տարբերվում են, սակայն ընթացքը նույնն է: Օրինակներից մեկը, որ *Zivusudra*, *Atrahasis* և *Utnapishtim* բոլորն էլ ներկայացնում են միևնույն մարդ թագավորին:
6. Ծննդոցի սկզբնական դեպքերի պատմական գուգահեռները կարելի է բացատրել մարդկության նախասփյուռքի (Ծննդոց 1-11) գիտության և Աստծուն վերապրելու յույսի ներքո: Այս իրական պատմական կարևորագույն հիշողությունները մանրակրկիտ մշակվել և առասպելացվել են վերածվելով մեր ունեցած ջրհեղեղյան պատմությունները, որ ընդունված է ամբողջ աշխարհում: Այս նույնը կարելի է ասել ոչ միայն ստեղծագործության (Ծննդ. 1,2) և Ջրհեղեղի (Ծննդ. 6-9) մասին, այլ նաև մարդկային և հրեշտակային միավորման վերաբերյալ (Ծննդոց 6):
7. Նահապետների Օրերը (Միջին Բրոզե դարաշրջան)
 - ա. Մարի արձանագրությունները՝ օրենքների սեպագիրը (Ամոնագիների մշակույթ) և աքքադերենով անձնական տեքստերը՝ մոտ Ք. Ա. 1700 թ-ից:

- բ. Նուզի արձանագրությունները՝ որոշ ընտանիքների սեպագիր արխիվները (Horite or Hurrian culture) գրված արքադերենով, Նինվեից մոտ 100 մղոն դեպի հարավ-արևելք, մոտ Ք. Ա. 1500-1300 թթ.: Նրանք արձանագրում են ընտանեկան և առևտրային օրենքները: Ավելի շատ մասնավոր օրինակների համար տե՛ս Ջոն Հ. Ուոլթոնի *Հնագույն Իսրայելական Գրականությունը իր մշակութային Համատեքստում*, էջ՝ 52-58 /John H. Walton *Ancient Israelite Literature in its Cultural Context*/:
- գ. Alalak արձանագրությունները՝ սեպագիր տեքստեր Հյուսիսային Սիրիայից, մոտ Ք. Ա. 2000 թ.:
- դ. Ծննդոցում գտնվող որոշ անուններ արձանագրված են որպես տեղանուններ Մարի Արձանագրություններում՝ Սերուգ, Փեղեգ, Թարա և Նաքովր: Կան ընդհանուր աստվածաշնչյան այլ անուններ նույնպես՝ Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Լաբան և Հովսեփ: Սա ցույց է տալիս, որ աստվածաշնչյան անունները համընկնում են այս ժամանակի և տեղանքի հետ:
8. «Համեմատական պատմաբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Խեթագիների հետ միասին, հնագույն հրեաները ամենաճշգրիտ, օբյեկտիվ և պատասխանատու արձանագրողներն էին մերձավոր արևելյան պատմության մեջ»: - Ռ. Կ. Հարրիսոն, *Աստվածաշնչյան Քննադատություն*, էջ՝ 5 /R. K. Harrison *Biblical Criticism*/:
9. Ապացուցվել է, որ հնագիտությունը մեծապես նպաստում է Աստվածաշնչի պատմականությունը հաստատելու հարցում: Մակայն, զգուշավորության մի խոսքն էլ անհրաժեշտություն է: Հնագիտությունը բացարձակ վստահելի ուղեցույց չէ, քանի որ.
- ա. վաղ շրջանի պեղումների ժամանակ տեխնիկայի թերացումներ կային
 - բ. հայտնաբերված բրածոների տարբեր, շատ սուբյեկտիվ մեկնաբանություններ
 - գ. հնագույն Մերձավոր Արևելքի ժամանակագրական տարածայնությունները (չնայած դրանցից մեկը կազմվել է ծառի օղակների և կավե իրերի միջոցով):
- Գ. Եգիպտական ստեղծագործության պատմություններ կարելի է գտնել Ջոն Հ. Ուոլթոնի *Հնագույն Իսրայելական Գրականությունն իր մշակութային համատեքստում* /John H. Walton *Ancient Israelite Literature in Its Cultural Context* (Grand Rapids, MI: Zondervan, 1990) pp. 23-24, 32-34/:
1. Եգիպտական գրականության մեջ ստեղծագործությունը սկսում է ոչ կառուցվածքային, նախնադարյան, քառասյին ջրով: Ստեղծագործությունը դիտարկվում էր որպես կատարելագործվող կառուցվածք (բլուր) այդ ջրային քառսից դուրս:
 2. Մեմֆիսից եգիպտական գրականության մեջ ստեղծագործությունը ի հայտ է գալիս Ptah-ի արտաբերած՝ ասված խոսքի միջոցով:
 3. Եգիպտոսի յուրաքանչյուր մեծ քաղաք ուներ առանձին ավանդույթներ, որոնք շեշտադրում էին իրենց հովանավորյալ աստվածությունները:
- Դ. Ջոն Հ. Ուոլթոնի մի նոր գիրք *Ծննդոց Մեկի կորած աշխարհը*, /John H. Walton, *The Lost World of Genesis One, IVP, 2009*/ ցույց է տալիս ANE հավատամքի աստվածների և տիեզերքի միջև եղած կապը մի նոր լույսի մեջ: Նա պնդում է (և ես համաձայն եմ), որ հարցը նրանում չէ, թե ով ումից է արտագրել, այլ ամբողջ ANE-ի համընդհանուր մշակութային համաձայնությունը «բնականի» և «գերբնականի» միասնության հարցի շուրջ: Բոլոր մշակույթները ունեն այս ընդհանուր պատկերացումները: Իսրայելիներ բացառապես միաստվածության գաղափարի մեջ է, սակայն նույնպես կիսվում է այս մշակութային պատկերացումներով:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (ՀԱՄԱՏԵՔՍ)

- Ա. Մովսեսի կողմից «ծնունդները» (*toledoth*) խոսքի գործածության հիման վրա ուրվագիծը.
1. երկնքի և երկրի ծնունդները, 1:1-2:3
 2. մարդկության ծնունդները, 2:4-4:26
 3. Ադամի սերունդները, 5:1-6:8
 4. Նոյի սերունդները, 6:9-9:17
 5. Նոյի որդիների սերունդները, 10:1-11:9
 6. Մեմֆի սերունդները, 11:10-26
 7. Թարայի սերունդները (Աբրահամ), 11:27-25:11

8. Իսմայելի սերունդները, 25:12-18
9. Իսահակի սերունդները, 25:19-35:29
10. Եսավի սերունդները, 36:1-8
11. Եսավի որդիների սերունդները, 36:9-43
12. Հակոբի սերունդները, 37:1-50:26 (#1-11 ունի միջազգային գրականական հիմք, սակայն #12 ունի եզրայտական գրականական համ ու հոտ):

Բ. Աստվածաբանական ուրվագիծը.

1. մարդկության համար և մարդկության ստեղծագործությունը, 1-2
2. մարդկության և ստեղծագործության անկումը, 3
3. Անկման հետևանքները, 4-11
 - ա. Կայենի չար գործերը և նրա ընտանիքը
 - բ. Սեթի չար գործերը և նրա ընտանիքը
 - գ. բոլորի չար գործերը
 - դ. մեծ ջրհեղեղը
 - ե. չարը դեռ ներկա է Նոյի ընտանիքում էլ
 - զ. մարդկությունը դեռևս ապստամբության մեջ է. Բաբելոնի աշտարակը
 - է. մարդկության սփյուռքը Աստծո ձեռքով
4. Մի մարդ ամբողջ մարդկության համար (3:15), 12-50 (Հռոմ.5:12-21)
 - ա. Աբրահամ (12:1-3), 11:27:23-20
 - բ. Իսահակ, 24:1-26:35
 - գ. Հակոբ, 27:1-36:4
 - (1) Հուդա (Մեսիայի սերնդաբանության գիծը)
 - (2) Հովսեփ (հողատարածքի կրկնակի ժառանգություն), 37:1-50:26

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ինչպե՞ս սկսվեց ամեն ինչ

1. Ամեն ինչ սկսվեց Աստծո հետ (Ծննդոց 1-2): Աստվածաշնչյան աշխարհայացքը բազմաստվածությունը չէ, այլ միաստվածությունը: Այն չի կենտրոնանում ստեղծագործության «ինչպես»-ի վրա, այլ «ով»-ի: Այն հակիրճ է, սակայն իր ներկայացման մեջ այնքան հզոր: Աստվածաշնչի աստվածաբանությունը կատարելապես յուրահատուկ իր օրերի մեջ, չնայած որ որոշ խոսքեր, գործելակերպեր և թեմաներ կարելի է գտնել նաև միջազգային գրականության մեջ:
2. Աստված փոխհարաբերություն էր ուզում: Ստեղծագործությունը միայն մի բեմահարթակ էր Աստծո և մարդու փոխհարաբերության համար: Սա «ձեռակերտ մոլորակ» է (տես՝ Ս. Ս. Լյուիս):
3. Առանց Ծննդոց 1,2-4 և 11-12 գլուխների հնարավոր չէ հասկանալ Աստվածաշնչի մյուս մասը:
4. Մարդիկ պետք է հավատքով արձագանքեն Աստծո կամքը հասկանալուն (Ծննդ.15:6 և Հռոմ.4):

Բ. Ինչո՞ւ է աշխարհը այսքան չար և անարդար: Այն «շատ բարի» էր (1:31), սակայն Ադամն ու Եվան մեղանչեցին (տես՝ Ծննդ.3; Հռոմ.3:9-18,23; 5:17-21): Սարսափելի հետևանքները ակնհայտ են.

1. Կայենը սպանում է Աբելին (գլուխ 4)
2. Ղամեթի վրեժխնդրությունը (4:23)
3. ապօրինի միությունները (6:1-4)
4. մարդու ամբարշտությունը (6:5,11-12; 8:21)
5. Նոյի հարբեցողությունը (9)
6. Բաբելոնի աշտարակը (11)
7. Ուրի բազմաստվածությունը (11)

Գ. Ինչպե՞ս է Աստված ուղղելու այս ամենը.

1. Մեսիան գալու է ամբողջ մարդկության համար (3:15)
2. Աստված կանչում է մեկին, որպեսզի կանչի բոլորին (Ծննդ.12:1-3 և Ելից 19:5-6, տես՝ Հռոմ.5:12-21)

3. Աստված կամենում է աշխատել անկում ապրած մարդկության հետ (Ադամ, Եվա, Կայեն, Նոյ, Աբրահամ, հրեաներ և հեթանոսներ) և Իր շնորհքի միջոցով ապահովում է՝
 - ա. խոստումներ
 - բ. ուխտեր (անպայմանական և պայմանական)
 - գ. զոհ
 - դ. երկրպագություն

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՑԻԿԼ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Մեկ անգամ նստելով կարդացեք աստվածաշնչյան տվյալ գիրքը: Սահմանեք ամբողջ գրքի կենտրոնական թեման ձեր իսկ բառերով:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրական ժանրը

ԸՆԹԵՐՑԱՆՈՒՓՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՑԻԿԼ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Մեկ անգամ նստելով կարդացեք աստվածաշնչյան տվյալ գիրքը երկրորդ անգամ: Ընդգծեք հիմնական թեմաները և մի նախադասությամբ արտահայտեք թեման.

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. Եվ այլն

ԾՆՆԴՈՑ 1:1-2:3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ¹

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ստեղծագործություն	Ստեղծագործության պատմությունը	Ստեղծագործության պատմությունը	Ստեղծագործության պատմությունը	Աշխարհի արարումը
(1:1-2:3)	(1:2-2:7)	(1:1-2:4ա)	(1:1-2:4ա)	
1:1-5	1:1-5	1:1-5	1:1-5	1:1-2 1:3-5
1:6-8	1:6-8	1:6-8	1:6-8	1:6-8
1:9-13	1:9-13	1:9-13	1:9-13	1:9-10 1:11-13
1:14-19	1:14-19	1:14-19	1:14-19	1:14-19
1:20-23	1:20-23	1:20-23	1:20-23	1:20-23
1:24-25	1:24-25	1:24-25	1:24-25	1:24-25
1:26-31	1:26-28 (27)	1:26-31	1:26-2:4ա	1:26-27 1:28-31
Տղամարդու և կնոջ արարումը	1:29-31			
2:1-3	2:1-3 2:4-7	2:1-3 2:4ա		2:1-3 2:4ա

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզին յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո:

¹ Չնայած դրանք ներշնչված չեն, սակայն պարբերությունների բաժանումները բանալի են հասկանալու և հետևելու բնագրի հեղինակի նպատակին: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և դրել է պարբերություններ: Ամեն մի պարբերություն ունի հիմնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Ամեն մի տարբերակ տվյալ թեման մարմնավորում է առանձնահատուկ ձևով: Երբ տեքստը կարդում եք, հարցրեք, թե որ թարգմանությունն է հարմար տվյալ թեմայի ձեր ընկալմանն ու համարների բաժանումներին:

Ամեն գլխում առաջին հերթին պետք է կարդանք Աստվածաշունչը և փորձենք գտնել թեմաները, ապա համեմատենք մեր հասկացածը ժամանակակից տարբերակների հետ: Մենք կարող ենք իրոք հասկանալ Աստվածաշունչը միայն այն դեպքում, երբ հասկանանք հեղինակի նպատակը՝ հետևելով նրա տրամաբանությանն ու մատուցմանը: Միայն բնագրի հեղինակն է եղել ներշնչված. ընթերցողները իրավունք չունեն խոսքը փոխելու կամ ձևափոխելու: Աստվածաշնչի ընթերցողները պատասխանատվություն ունեն կիրառելու ներշնչված ճշմարտությունը իրենց առօրյայի և կյանքի համար:

Նկատեք, որ բոլոր տեխնիկական տերմիններն ու հապավումները մանրամասն բացատրվում են Հավելված Մեկ, Երկու, Երեք, Չորսում:

Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՄԿՉԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ա. Ծննդոց 1-11-ի ուսումնասիրությունը բարդ է, քանի որ.

1. մենք բոլորս էլ մեր սեփական մշակույթի և հարանվանական ուսմունքների ազդեցության տակ ենք
2. այսօր որոշ ճնշումներ գիտակցաբար և ենթագիտակցաբար ազդում են «սկզբի» մասին մեր ունեցած տեսակետի վրա
 - ա. ժամանակակից հնագիտությունը (միջազգային գուգահեռները)
 - բ. ժամանակակից գիտությունը (ներկայիս տեսությունները)
 - գ. մեկնաբանության պատմությունը
 - (1) Հուդայականությունը
 - (2) վաղ եկեղեցին
3. Աստվածաշնչի այս առաջին գրական բաժինը ներկայացված է որպես պատմություն, սակայն մի քանի բաներ զարմացնում են մեկնաբանին.
 - ա. Միջազգային գուգահեռները
 - բ. արևելյան գրական տեխնիկաները (ստեղծագործության երկու ակնհայտ պատմություններ)
 - գ. անսովոր դեպքեր
 - (1) կինը, որ ստեղծվեց «կողոսկրից»
 - (2) խոսող օձը
 - (3) մի ամբողջ տարի մի նավի վրա բոլոր կենդանիներից զույգերով
 - (4) հրեշտակների և մարդկության խառնուրդը
 - (5) մարդկանց երկարակեցությունը
 - դ. հիմնական հերոսների անունների հետ կապված մի քանի բառախաղեր (տես՝ Կ. 3)
4. Քրիստոնյաներին անհրաժեշտ է հիշեցնել, թե ինչպես է ՆԿ-ը վերամեկնաբանում Ծննդ. 1 և 2 գլուխները Քրիստոսի յույսի ներքո: Նա է Հոր գործակալը ստեղծագործության ժամանակ (տես՝ Հովհ. 1:3,10; 1 Կորնթ. 8:6; Եբր. 1:2), թե՛ տեսանելի և թե՛ անտեսանելի թագավորությունները (տես՝ Կող. 1:16): Այս նոր հայտնությունը ցույց է տալիս Ծննդ. 1-3 գլուխներում տառացիականության մեջ զգուշավորության կարիքը: Երրորդությունը ներգրավված է ստեղծագործության մեջ:
 - (1) Հայր Աստվածը Ծննդոց 1:1-ում
 - (2) Հոգի Աստվածը Ծննդոց 1:2-ում
 - (3) Որդի Աստվածը ՆԿ-ում զարգացող հայտնության միջոցովՍա կարող է բացատրել Ծննդոց 1:26; 5:1,3; 9:6-ի ՀՈԳՆԱԿԻՆԵՐԸ:

Բ. Ծննդոց 1-11 գիտական փաստաթուղթ չէ, այլ ինչ-որ առումով ժամանակակից գիտությունը զուգահեռվում է դրա ներկայացման հետ (ստեղծագործության կարգ ու կանոնը և երկրաբանական մակարդակները): Այն հակագիտական չէ, այլ կանխագիտական: Այն ճշմարտություն է ներկայացնում՝

1. երկրի տեսանկյունից (այս մոլորակի վրա ապրող մարդ հետազոտող)

2. երևութագիտական տեսանկյունից (այսինքն՝ հինգ զգայարանները. մարդ հետազոտողին իրերի բացահայտման կերպը)
Տարիներ ի վեր շատ մշակույթների համար այն գործում է որպես ճշմարտություն հայտնող: Այն ներկայացնում է ճշմարտությունը արդի գիտական մշակույթին, սակայն առանց դեպքերի մասնահատուկ բացատրությունների:

Գ. Այն զարմանալիորեն լակոնիկ է, գեղեցիկ կերպով նկարագրված և արտիստիկ կառուցվածքով:

1. բաժանված բաներ
2. զարգացող բաներ
3. քառսից ֆիզիկական մոլորակ, որը գեղուն է կյանքով

Դ. Գիրքը հասկանալու համար բանալին գտնվում է՝

1. իր ժանրի մեջ
2. իր իսկ օրերի հետ կապի մեջ (տես՝ Ջոն Հ. Ուոլթերի *Ծննդոց Մեկի Կորած Աշխարհը*)
3. իր կառուցվածքի մեջ
4. իր աստվածաբանական նպատակի մեջ

Մեկնաբանությունը պետք է հավասարակշռության մեջ պահի՝

1. համարների էզզեզետիկան
2. ամբողջ Սուրբ Գրքի համակարգված հասկացությունը
3. Ժանրային առանձնահատկությունը

Այն հայտնում է ֆիզիկական իրերի ծագումը («և այն բարի էր», տես՝ 1:31) և այս բաների ապականումը (տես՝ Գլուխ 3): Քրիստոսի կյանքը բազմաթիվ առումներով նոր ստեղծագործություն է և Հիսուսը նոր Ադամն է (տես՝ Հռոմ.5:12-21): Նոր դարաշրջանը կարող է վերջնականապես լինել Եդեմի պարտեզի վերականգնումը և Աստծո ու կենդանիների հետ իր մտերմիկ փոխհարաբերությունը (համեմատեք Ծննդ. 1-2-ը Հայտն. 21-22-ի հետ):

Ե. Այս գլխի մեծագույն ճշմարտությունը ինչպես կամ երբը չէ, այլ ով և ինչու:

2. Ծննդոցն արտացոլում է իրական գիտություն, սակայն ոչ սպառիչ: Այն մեզ է տրվել հնագույն (Միջագետքյան) մտածելակերպի սահմաններում, սակայն այն համարվում է անփոփոխ աստվածաբանական ճշմարտություն: Այն կապված է իր օրերի հետ, սակայն կատարելապես յուրահատուկ է: Այն խոսում է աննկարագրելի մասին, մինչդեռ խոսում է ճշմարտությունը: Հիմնականում այն աշխարհայացք է (ով և ինչու) և ոչ թե աշխարհի պատկեր (ինչպես և երբ):

Է. Առանց Ծննդոց 1-3-ի, Աստվածաշունչն անհասկանալի է: Նկատեք, թե ինչպես է պատմությունն արագ կերպով անցում կատարում (1) մեղքից փրկության և (2) մարդկությունից դեպի Իսրայելին: Ստեղծագործությունը ձևավորում է ինտեգրալ, սակայն փոխանցելով աշխարհի մասշտաբով փրկագործության նպատակով Աստծո կողմից Իսրայելի ընտրության պատմությունների մի մասնիկը (տես՝ Ծննդ. 3:15; 12:3; 22:18; Ելից 19:5-6 և Հովի. 3:16; Գործք 3:25; Գաղ. 3:8; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9):

Ը. Քո պատասխանն այս հարցին, թե «Ո՞րն է ներշնչանքի և հայտնության նպատակը», կազդի, թե ինչպես դու կնայես Ծննդոց 1-ին: Եթե դու նպատակը տեսնում ես որպես ստեղծագործության վերաբերյալ փաստերի հաղորդում՝ փոխանցում, դու այն կդիտարկես մի տեսքով (այսինքն՝ ազդարարման ճշմարտություններ): Եթե դու նայում ես դրան, որպես Աստծո, մարդկության և մեղքի վերաբերյալ ընդհանուր ճշմարտությունների փոխանցման, ապա հավանաբար դու կդիտարկես այն աստվածաբանորեն (այսինքն՝ որպես հարացույց, պարադիգմորեն): Սակայն եթե դիտարկում ես հիմնական ճշմարտությունը որպես Աստծո և մարդկության միջև փոխհարաբերության հաստատում, ապա այն կոչվում է գոյացապաշտական:

Թ. Ծննդոցի այս բաժինը անշուշտ աստվածաբանական է: Ինչպես Ելիցի պատուհանները ցույց տվեցին ՅԱՀՎԵի իշխանությունը Եգիպտոսի բնության աստվածների վրա, Ծննդոց 1,2 կարող է ցույց տալ ՅԱՀՎԵի իշխանությունը Միջագետքի տիեզերական աստվածների վրա: Հիմնական թեման Աստված է: Միայն Աստված է այդ արել, Իր սեփական նպատակների համար:

Ժ. Ես զարմանում եմ իմ իսկ անտեղյակության հարցում: Ես սոսկում եմ իմ սելիական պատմական, մշակութային և հարանվանական պայմանականությունից: Ինչպիսի մե՞ծ Աստծու ենք մենք ծառայում: Ի՞նչ փառահեղ Աստված է մեզ ձեռք մեկնել (նույնիսկ մեր ապստամբության մեջ): Աստվածաշունչը սիրո և գործության, շնորհքի և արդարության բալանսավորում է: Որքան շատ ենք իմանում այնքան ավելի ենք հասկանում, որ չգիտենք:

Ի. Ահա մի քանի օգտակար գրքերի հիմնական մոտեցումները.

1. Ծննդոց 1-2 մեկնաբանված արդի գիտության ճյուղերի հետ համատեղ.
 - ա. Բեռնարդ Ռեմի *Գիտության և Սուրբ Գրքի Զրիստոնեական Տեսանկյունը* /Bernard Ramm's *The Christian View of Science and Scripture*/ (գիտականորեն և աստվածաբանորեն հարուստ)
 - բ. Հյու Ռոսի *Ստեղծագործությունը և Ժամանակը* և *Ծննդոցի Հարցը* /Hugh Ross' *Creation and Time and The Genesis Question*/ (գիտականորեն հարուստ, սակայն աստվածաբանորեն թույլ)
 - գ. Հարի Փեո և Ջիմի Դեյվիսի *Գիտություն և հավատք. Ավետարանական երկխոսություն* /Harry Peo and Jimmy Davis' *Science and Faith: An Evangelical Dialog*/ (շատ օգտակար է)
 - դ. Դերել Ռ. Ֆոք, *Գիտության հետ խաղաղության մեջ. հավատքի և կենսաբանության աշխարհների միջև կապի հաստատում* /Darrel R. Falk, *Coming to Peace with Science: Bridging the Worlds Between Faith and Biology*/ (ավատեբանական մոտեցում էվոլուցիային)
 - ե. Ֆրենսիս Ս. Բոլինգ, *Աստծո Լեզուն* /Francis S. Collins, *The Language of God*/
 - զ. Ֆազալ Ռանա և Հյու Ռոսս, *Ո՞վ էր Ադամը* /Fazale Rana and Hugh Ross, *Who Was Adam?*/
2. Ծննդոց 1-2 մեկնաբանված հնագույն Մերձավոր Արևելքի զուգահեռներ հադիսացող ճյուղերի հետ համատեղ.
 - ա. Ռ. Կ. Հարրիսոնի *Հին Կտակարանի Ներածություն* և *Հին Կտակարանյան Ժամանակները* /R. K. Harrison's *Introduction to the Old Testament and Old Testament Times*/
 - բ. Ջոն Հ. Ուոլթոնի *Հնագույն Իսրայելական Գրականությունը իր մշակութային համատեքստում* /John H. Walton's *Ancient Israelite Literature in Its Cultural Context*/
 - գ. Կ. Ա. Բիչնի *Հնագույն Արևելք և Հին Կտակարան* /K. A. Kitchen's *Ancient Orient and Old Testament*/
 - դ. Էդվին Մ. Յամաուչի *Քարերը և Սուրբ Գրերը* /Edwin M. Yamauchi's *The Stones and the Scriptures*/
3. Ծննդոց 1-2 մեկնաբանված աստվածաբանության ճյուղերի հետ համատեղ՝ ԼաՍոր, Հուբբարդ և Բուշի *Հին Կտակարանի Ուսումնասիրություն* գրքից /LaSor, Hubbard and Bush's *Old Testament Survey*/
 - ա. «Գրական իմաստավորում կարելի է գտնել նաև կիարժվող անունների մեջ: Անձնավորության գործերի կամ դերի հետ իր անվան համապատասխանությունը մի քանի դեպքերում անկրկնելի են: Ադամ նշանակում է «մարդ» և Եվա՝ «նա, որ կյանք տվեց»: Իհարկե, երբ մի պատմության հեղինակ կարևորագույն հերոսներին անվանում է Մարդ և Կյանք, ապա դրանով ինչ-որ բան է հաղորդվում նպատակաուղղված տառացիության մակարդակի վերաբերյալ: Նմանօրինակ, Կայեն նշանակում է «դարբին (մետաղների)», Ենովք անվանումը կապ ունի «նվիրման, արբացման» հետ (4:17; 5:18), Հոբալը՝ տավիղի և փողի (4:21), մինչ Կայենը, որ դատասպարտվեց լինելու *nad*, «թափառական» գնում է ապրելու *Nod*-ի երկրում, մի անուն, որը հստակ կերպով ծագել է երբայերենի միևնույն արմատից, այսինքն՝ թափառականի երկիր: Սա նշանակում է, որ հեղինակը գրում է նկարչի, պատմիչի պես, որը կիրառում է գրական միջոցներ և այն վերածում արվեստի: Կարդացողը պետք է ջանա տարբերակել, թե ինչ նկատի ունի հեղինակը այսպիսի գրական միջոցով մեզ սովորեցնելիս» էջ՝ 72:
 - բ. Ծննդոց 1-11-ի աստվածաբանական ենթատեքստը.
«Ծննդ. 1-11-ի համար ենթատեքստը. Գլուխ 1-11-ի գրական միջոցն ու ժանրը ճանաչելը և դրանց գրական հիմքը նկատելը մարտահրավեր չի նետում իրականությանը, նկարագրված փաստերի «իրադարձություն լինելուն»: Մենք չպետք է այս պատմությունը համարենք որպես առասպել. ամեն դեպքում այն «պատմություն չէ» ականատեսի, օբյեկտիվ արձանագրության ժամանակակից տեսանկյունից, այլ փոխանցում է

աստվածաբանական ճշմարտություններ դեպքերի վերաբերյալ, որոնք նկարագրված են ընդարձակ սիմվոլիկ, պատկերավոր գրական ժանրի ներսում: Սա չի նշանակում, որ Ծննդոց 1-11 հաղորդում է պատմական կեղծիք: Այսպիսի եզրակացությունը ճիշտ կլիներ, եթե այն իր մեջ պարունակեր օբյեկտիվ նկարագրություններ: Արդեն մեր դիտարկած հստակ վկայությունը ցույց է տալիս, որ նպատակը այսպիսին չէր: Մյուս կողմից, այն տեսանկյունը, որ այս գլուխներում սովորեցրած ճշմարտությունները չունեն օբյեկտիվ հիմք, սխալ է: Դրանք հաստատում են հիմնավոր ճշմարտություններ. այն, որ ամեն բանի Աստված է ստեղծել. առաջին մարդու և կնոջ ստեղծման մեջ Նրա հատուկ միջամտությունը, մարդկային ռասայի միասնականությունը, արարված աշխարհի՝ ներառյալ մարդկության, մաքրամաքուր բարությունը, առաջին զույգի անհնազանդության միջոցով մեղքի մուտքը, Անկումից հետո ապականությունն ու վայրագ մեղքը: Բոլոր այս ճշմարտությունները փաստեր են և դրանց հավաստիությունը ենթադրում է փաստերի իրողությունը: Այլ կերպ ասած աստվածաշնչյան հեղինակը կիրառում է այսպիսի գրական ավանդույթներ, որպեսզի նկարագրի նախնադարի բացառիկ դեպքերը, որոնք չունեն ժամանակի պայմանականության, մարդկային պայմանականության, փորձառության վրա հիմնված պատմական նմանություն և ուստի հնարավոր է միայն խորհրդապատկերորեն նկարագրել: Այս նույն խնդիրը բարձրանում է վերջին ժամանակների համար. աստվածաշնչյան հեղինակը այնտեղ՝ Հայտնության գրքում, որդեգրում է էզոթերիկ՝ ծածուկ, պատկերավոր լեզու և կիրառում է վերջին ժամանակներին վերաբերող գրական հնարագիտություն» էջ՝ 74:

- գ. Եթե ճիշտ է այն, որ Ծննդոց 1-10-ում միայն մեկ լեզու էին խոսում (տես՝ Սամուել Նոյ Քրեմեր, *Լեզուների Բարեդոնը. Շումերական Տարբերակ*, «Ամերիկյան Արևելյան Հասարակություն, 88:108-11» /Samuel Noah Kramer, *The Babel of Tongues: A Sumerian Version*, “Journal of the American Oriental Society”/), ապա անհրաժեշտ է հստակ սահմանել, որ դա երբայերենը չի եղել: Հետևաբար երբայերեն բոլոր բառախաղերը Մովսեսի օրերից են կամ նահապետների բանավոր ավանդույթներից: Սա հաստատում է Ծննդ. 1-11-ի գրական խառնվածքը:
4. Ես կցանկանայի կատարել իմ անձնական մեկնաբանությունը: Ես սիրում և գնահատում եմ նրանց, ովքեր սիրում և գնահատում են Աստվածաշունչը: Ես այնքան երախտապարտ եմ այն մարդկանց համար, ովքեր Աստծո Խոսքի պատգամը ընդունում են որպես ներշնչված, հեղինակավոր պատգամ Միակ ճշմարիտ Աստծուց: Մենք բոլորս, որ ուսումնասիրում ենք Սուրբ Գիրքը, փորձում ենք երկրպագել և փառավորել Աստծուն մեր մտքերով (տես՝ Սատթ. 22:37): Այն փաստը, որ մենք որպես անհատ հավատացյալներ Աստվածաշնչին ցուցաբերում ենք տարբեր մոտեցումներ, անհավատության կամ ապստամբության ցուցանիշ չէ, այլ անկեղծ նվիրումի քայլ և այն հասկանալու փորձ, որպեսզի Աստծո ճշմարտությունը կարողանանք մարմնավորել՝ կիրառել մեր կյանքերում: Որքան շատ եմ ուսումնասիրում Ծննդոց 1-11 և ըստ այդմ Հայտնության գիրքը նույնպես, ես հասկանում եմ, որ այն ճիշտ է գրական առումով, բայց ոչ տառացիորեն: Աստվածաշունչը մեկնաբանելու բանալին տեքստի վրա անձնական փիլիսոփայական կամ հերմենևտիկ բանաձևեր կիրառելը չէ, այլ բնագրի հեղինակների սկզբնական մտադրությանը թույլ տալ, որ լիարժեք կերպով արտահայտվեն: Վերցնել գրական հատվածը և պահանջել, որ այն տառացիորեն ընդունվի, երբ տեքստն ինքնին հուշում է իր խորհրդապատկերավոր և այլաբանական լինելու մասին, այս դեպքում այն խաբում է իմ այն հակվածությանը, որ այն Աստծուց տրված պատգամ է: Ժանրը (գրական տեսակը) հանդիսանում է «ինչպես ամեն բան սկսվեց» և «ինչպես է ամեն բան ավարտվելու» աստվածաբանական հասկացության բանալին: Ես գնահատում եմ բոլոր այն մարդկանց անկեղծությունն ու նվիրումը, որոնք ինչ-որ պատճառով՝ սովորաբար բնավորության կամ մասնագիտական ձեռքբերումների, Աստվածաշունչը մեկնաբանում են ժամանակակից, տառացի, արևմտյան կատեգորիաների սահմաններում, երբ իրականում այն արևելյան հնագույն գիրք է: Այս ամենն ասում եմ որպես երախտագիտություն Աստծուն բոլոր այն մարդկանց համար, որոնց մոտեցումը Ծննդոց 1-11-ին այնպիսի նախադրյալներով է, որոնց հետ թեև անձամբ ես համաձայն չեմ, բայց գիտեմ, որ նրանք կօգնեն, կքաջալերեն մարդկանց սիրելու, վստահելու և կիրառելու Աստծո Գիրքը՝ Խոսքը իրենց կյանքերի համար: Այնուամենայնիվ և համաձայն չեմ, որ Ծննդոց 1-11-ի կամ Հայտնության գրքի հանդեպ պետք է տառացի մոտեցում ցուցաբերել, լինի դա

Ստեղծագործության Հետազոտության Ընկերությունը (այսինքն՝ երիտասարդ երկիր), թե Հյուսիսի Հայաստանի Պատնառները (այսինքն՝ հինավուրց երկիր): Աստվածաշնչի այս բաժինն ինձ համար շեշտադրում է ստեղծագործության «Ով» և «Ինչու» -ն, և ոչ թե «ինչպես» և «երբ»-ը: Ես ընդունում եմ արդի գիտության անկեղծությունը ստեղծագործության ֆիզիկական առանձնահատկությունները հետազոտելու հարցում: Ես մերժում եմ «բնականությունը» /նատուրալիզմ/ (այսինքն՝ կենսաբանական կյանքի բնական պրոցեսների պատահական զարգացումը՝ կատարելագործումը), սակայն անշուշտ այդ պրոցեսը դիտարկում եմ որպես մեր աշխարհի և տիեզերքի հավաստի և տեսանելի առանձնահատկություն: Կարծում եմ Աստված Ինքն է ուղղորդել և գործածել այդ ընթացքը: Ներկայիս իրականությունը իսկապես հասկանալու համար ինձ անհրաժեշտ է թե արդի գիտության տեսական օրինակները և թե՛ Ծննդոց 1-11-ի աստվածաբանական օրինակները: Ծննդոց 1-11-ը հանդիսանում է Աստվածաշնչի մյուս գրքերը հասկանալու համար աստվածաբանական անհրաժեշտություն, սակայն այն մի հնագույն, գրական, լակոնիկ, արտիստիկ, արևելյան ներկայացում է, և ոչ թե տառացի, ժամանակակից, արևմտյան ներկայացում:

Աստվածաշնչի տարբեր բաժիններ իհարկե հանդիսանում են պատմական իրողություններ: Կան տեղեր, որոնք անշուշտ պետք է տառացիորեն մեկնաբանվեն՝ ինչպես օրինակ Աբրահամի կանչը, Ելիցը, Հիսուսի կուսական ծնունդը, Գողգոթան, հարությունը. լինելու է երկրորդ գալուստ և հավիտենական թագավորություն: Հարցը կայանում է ժանրի մեջ և ոչ թե իրողության, հեղինակի նպատակի և ոչ թե մեկնաբանության մեջ անձնական նախասիրությունների: Թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ՝ սուտ (տես՝ Հռոմ.3:4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐԱԳՆԴԻ ՏԱՐԻՔԸ ԵՎ ՍՏԵՂԾՈՒՄԸ
SPECIAL TOPIC: THE AGE AND FORMATION OF THE EARTH

- I. Ուսումնասիրության այս ոլորտը կանխակալ է բոլոր այն հետևությունների պատճառով, որոնք պետք է կատարվեն նույնիսկ թեմայի շուրջ ռացիոնալ մտածելակերպ պահելով: Հետևությունները պետք է լինեն տիեզերագետների, երկրաբանների և դրանց հետ կապված գիտությունների կողմից արտահայտած տարբեր կարծիքների և աստվածաբանական հասկացողության ու մեկնաբանությունների համեմատության գնահատման կիզակետը:
- II. Գիտության ակնհայտ հետևությունները հետևյալն են՝
 - Ա. որ այսօր երկրի վրա արձանագրված և չափված փոփոխությունների տեմպերը (այսինքն՝ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական) հաստատուն են անցյալում (այսինքն՝ համօրինակություն՝ «ներկան անցյալի բանալին է»)
 - Բ. ռադիոմետրիկ տարեգրությունը (բացարձակ տարեգրություն կոչվող), որը հանդիսանում է երկրագունդը և տիեզերական իրադարձությունները տարեգրելու համար ժամանակագրական բանալի, մի քանի հետևությունների է հանգում.
 - 1. ժայռերի սկզբնական կազմավորումը (այսինքն՝ անհաստատ ատոմային տարրերի և արարիչ-արարված տարրերի կապը)
 - 2. այս տարրերի ճիշտ կես կյանքը
 - 3. ջերմաստիճանը նույնպես ազդում է որևէ օրինակի արարիչ-արարված տոկոսային հարաբերությունների վրա (այսինքն՝ կազմավորման ժամանակը և/կամ հրաբխային մագմային խուցերը)
 - 4. Ռադիոակտիվ էլեմենտների սկզբնաղբյուրը և ստեղծագործության ժամանակը հայտնի չեն: Ներկայիս տեսությունները սահմանում են, որ ավելի ծանր էլեմենտները ստեղծվել են թերմոատոմային փոխազդեցությունների միջոցով երկրորդ և երրորդ սերնդի աստղերի մեջ և տարածվել են գերաստղերի միջոցով:
 - Գ. որ երկրաբանության վեց ենթադրյալ հերթականությունները (որ կոչվում են հարաբերական ժամանակ) ազդում են հնէաբանության վրա.
 - 1. վերադրման կանոնը/օրենքը – նստվածքային ժայռերի անշարժ՝ անփոփոխ շարքը, վերնաշերտը ավելի երիտասարդ՝ նոր է և ներքին շերտը ավելի հին:

2. Սկզբնական հորիզոնական շերտի սկզբունքը – մնացորդային քարերի շերտերը նստվածքավորվել են գրեթե որպես հորիզոնական հարթավայր
3. Խաչաձև փոխկապակցության սկզբունքը – երբ քարերը կտրվածքներ ունեն կամ առանձնացված են տարեջրով, ապա դրանք պետք է որ ավելի հին լինեն, քան հենց ինքը տարեջրը
4. ներառման սկզբունքը – իրար հարակից գայռազանգվածներ, որի դեպքում սովորաբար ավելի ցած գտնվող բեկորները ներդրված են լինում վերի բեկորների մեջ, որը հանգեցնում է #1 արդյունքին:
5. փոխկապակցման սկզբունքը – միևնույն տեսքն ունեցող, սակայն տարբեր մասերից ժայռաբեկորներ պետք է համադրվեն, և երբ այն հնարավոր չի լինում կատարել, ապա միևնույն հանքանյութերը ցույց են տալիս կազմավորման միևնույն ժամանակը
6. հանքանյութերի՝ բրածոների հաջորդականության սկզբունքը – բրածո օրգանիզմները հաջորդում են իրար որոշակի և հատուկ հերթականությամբ՝
 - ա. լայնատարած հանքանյութեր
 - բ. երկրաբանական կարճատև ժամանակով սահմանափակված

III. Գիտնականների մի քանի մեկնություններ.

- Ա. Շատ գիտնականներ գիտակցում են, որ գիտությունը ուսումնասիրության մեթոդ է, որը փորձում է փոխկապակցել բոլոր հայտնի փաստերը և անոմալիաները՝ տարականոն երևույթները, դրանք դարձնելով փորձարկվող տեսություններ: Որոշ բաներ իրենց բնույթից ելնելով փորձարկելի չեն:
- Բ. Այս ոլորտում գիտական հետևությունների վերաբերյալ գիտնականների մի քանի մեկնություններ.
 1. «Վարդապետությունը (այսինքն՝ համօրինակությունը) չպետք է չափազանց տառացի ընդունել: Ասել, թե անցյալի երկրաբանական պրոցեսները նույնն են եղել ինչպես ներկայում կատարվողները, չի նշանակում, որ դրանք միշտ ունեցել են միևնույն հարաբերական կարևորությունը և ընթացել են ճիշտ նույն տեմպերով» (Tarbuck and Lutgens, *Earth Science*, 6th ed. p.262):
 2. «Կարևոր է գիտակցել, որ ճշգրիտ ռադիոմետրիկ ժամանակը հնարավոր է որոշել միայն այն դեպքում, երբ հանքանյութերը իրենց կազմավորման ընթացքում մնում են փակ համակարգի մեջ, այսինքն՝ ճշգրիտ ժամանակը հնարավոր չէ իմանալ, եթե ծնող /միգրոտոպ/ և դուստր /նոր տարր/ իզոտոպների հավելումներ կամ կորուստներ տեղի չեն ունեցել» (*Երկրագիտություն*, 6րդ խմբ. էջ՝ 276 /*Earth Science*/):
 3. «Մենք շտապում ենք շեշտադրել, որ այս միակերպությունը հետևություն է, որին մենք հանգում ենք բնության վերաբերյալ, ուստի և ավելի շուտ այն վարդապետություն է, քան տրամաբանորեն ապացուցված օրենք» (Դոթ և Բոլթեն, *Երկրի Էվոլյուցիա*, 4րդ խմբ. էջ՝ 44 /Dott and Balten, *Evolution of the Earth*/):
 4. «Նեխման գազային հաստատունը, որը հատկանշական է ռադիոակտիվ նեխման արժեքին և տիրում է իզոտոպի տվյալների և դրանց համապատասխան ռադիո իզոտոպիկ թվագրությունների վրա, իրականում ոչ ճիշտ են հայտնի: Արդյունքում, թվագրության մի քանի ամենամանրակրկիտ մեթոդների ճշգրտությունը, ինչպես օրինակ $^{40}\text{Ar}/^{39}\text{Ar}$ տեխնիկան, կարող է լինել մագնիտուդի աստիճան կամ ավելի վատ, քան դրանց ստուգությունն է» («*Ժամանակագրության առաջընթացն ու մարտահրավերները*» Ռեննե, Լյուդվիգ և Քարների կողմից *Գիտության Առաջընթաց*-ում (2000), 83 (1), 107 /"Progress and challenges in geochronology" by Renne, Ludwig and Karner in *Science Progress*/):
 5. Գիտության մեջ անուս մարդիկ չեն կարող հասկանալ, որ ցանկացած ռադիոմետրիկ ժամանակային մեթոդ կարող է միայն վստահելի լինել կես կյանքին մոտ տարիք ունեցող տարրերի նմուշների համար (Հյու Ռոս, *Հավատարմության Դատճաններ* օրաթերթ /Hugh Ross, *Reasons to Believe* newsletter/):

IV. Հետևությունները բացառիկ չեն գիտական հասարակության համար, սակայն ակնհայտորեն դրանք առկա են նաև կրոնական հասարակության մեջ

Ա. Մարդիկ ձգտում են միաբանության սկզբունքի կամ մի մեթոդի, որը կփոխկապակցի իրենց զգացական փորձառությունը և ապահովի զգացմունքային կայունություն: Գիտության մեջ այս միաբանող սկզբունքը դարձել է «Էվոյուցիան»:

1. Թեոդոսիոս Դոբժանսկի, «Փոխող մարդ», *Գիտություն*, 155, 409-415, «Էվոյուցիան մի գործընթաց է, որը անկենդանից կյանք է արտադրել, որը մարդուն ծնունդ է տվել կենդանիներից, և որը կարող է ապագայում շարունակել նոր արտառոց հայտնագործություններ անել»:
2. Բրեյն Ջ. Ոլթրոգ և Սանդրա Մ. Ոլթրոգ, *Էվոյուցիայի Սահմանումը*, էջ 104, /Brain J. Alters and Sandra M. Alters, *Defining Evolution*/, «Էվոյուցիան հանդիսանում է բոլոր կենսաբանական գիտությունների հիմնական համատեքստը... Էվոյուցիան բացատրական ձևաչափ է, միաբանող տեսություն: Այն անհրաժեշտություն է կենսաբանության ուսումնասիրության համար, ճիշտ ինչպես ատոմային տեսությունը քիմիական ուսումնասիրությունների համար»:

Բ. Շատ պահպանողական Քրիստոնյաների համար միաբանող տեսությունը (այսինքն՝ մեկնաբանությունը) դարձել է Ծննդոց 1-3 գլուխների տառացի մեկնությունը: Դա այդպես է երիտասարդ երկիր տեսությանը տառացի հավատացողների համար (*Creation Research Society* երկրին տալիս մոտ 10,000 տարվա վաղեմություն), հին երկիր տեսությանը տառացի հավատացողների համար (*Reasons to Believe* երկիրը գնահատում է ժամանակակից հնագիտության յույսի ներքո, մոտ 4,6 միլիարդ տարի): Սուրբ Գրքի մեկի մեկնաբանությունը վերածվում է մի ուսման, որի միջով բոլոր մյուսները դիտարկվում և գնահատվում են: Մեկը չի կարող կատարել սուբյեկտիվ եզրահանգում, քանի որ մարդկային գիտակցությունը գտնվում է կանխակալ ենթադրության մի որոշ մակարդակի վրա: Սակայն, մեկի կանխակալ ենթադրության էվոյուցիան կարևոր է իրենց «ճշմարտության» սահմանումների պատշաճ էվոյուցիայի համար:

Գ. Արմատական Քրիստոնեությունը փորձում է իրեն քողարկել «գիտական» փաստերի մեջ, երբ կենտրոնական խնդիրը հերմենևտիկ մեթոդաբանություն է: Սա չի նշանակում, որ «ժամանակակից էվոյուցիոն գիտությունը» կանխակալ ենթադրության չէ կամ որ դրա հետևությունները չեն ձևավորվում նախկինում ունեցած աշխարհայացքի միջոցով: Մենք պետք է զգույշ և վերլուծենք երկուսն էլ: Կարծես թե երկու կողմում էլ ապացույցներ կան: Ինքս ինձ պետք է հարց տամ, թե որ տեսակետին եմ ես բնականորեն, զգացմունքորեն, գիտելիքներով ավելի մոտ (այսինքն՝ ինքնաբավ հետևություն):

V. Անձնական եզրակացություն

Ա. Քանի որ ես աստվածաբան եմ և ոչ թե գիտնական, ինձ համար կարևոր էր ժամանակակից տեղեկատվական գիտություններից կարդալ և հավաքագրել որքան հնարավոր է շատ: Անձնապես ինձ չի քարոզվել «Էվոյուցիա», այլ «նատուրալիզմ» (Կառլ Սագանի կողմից արված այս հայտնի հայտարարությունը, «տիեզերքն այն է ինչ կար, ինչ կա և ինչ լինելու է»):

Ես հասկանում եմ, որ սա հակվածություն է, սակայն իմ միօրինակ տեսությունը գերբնականությունը և հատուկ ստեղծված լինելն է, թեև չեմ ուրանում կամ սարսափում էվոյուցիայից: Իմ հիմնական տեսակետն այն է, որ գոյություն ունի անձ հանդիսացող Աստված, Որը նախաձեռնել է և տիրում է բոլոր ընթացակարգերի վրա հատուկ նպատակով: Ինձ համար «խելացի նախագիծը» վեր է ավելում ողջամիտ տեսության (տես՝ Մ. Ջ. Բեեի *Դարվինի Սև Արկղը* և Ուիլյամ Ա. Դեմսկի, *Միայն Արարչագործություն*. *Գիտություն*, *Հախաք և Խելացի Նախագիծ* /M. J. Behe, *Darwin's Black Box* and William A. Demski, ed. *Mere Creation: Science, Faith and Intelligent Design*/): Էվոյուցիայի «անկանոնությունն» ու նատուրալիզմի «անգործակալությունն» է, որ ինձ անձնական ցավ է պատճառում և շփոթության մեջ գցում: Գրոցեսն ինքնին կյանքի ակնհայտ մասն է կազմում: Ես պետք է վստահ լինեմ, որ չեմ ողջունում այն ինչ հարմար է առանց էվոյուցիայի: Ես փորձել եմ առանձնացնել իմ հետևությունները.

1. Ծննդոց 1-3 (և այդ հարցի շուրջ նաև Հայտնության գրքի մեծ մասը), նպատակ չի հետապնդել իր բնագրի ներշնչված հեղինակի կողմից, որ տառացիորեն ընդունվի: «Ինչպե՞ս է ամեն բան սկսվել» և «Ինչպե՞ս է ամեն բան ավարտվելու» -ն քողարկված է (իսկ պատճառը անկում ապրած մարդկությունն է) գրական ժանրի մեջ:
2. Էվոյուցիան ակնհայտ է հստակ մակարդակներում («հորիզոնական էվոյուցիա», «միկրոէվոյուցիա», էվոյուցիա օրգանիզմների տեսակների մեջ), բայց ոչ թե

միատեսակության միակ գործոնը այս մոլորակի վրա կյանքի համար, և ոչ էլ տիեզերքի զարգացման համար: Այստեղ գոյություն ունի մի առեղծված: Ես ինքս հարմար եմ գտնում այն ինչ ասում է Աստվածաշունչը (այսինքն՝ հատուկ հայտնություն), «Ով» և «ինչու»-ի վերաբերյալ և բնության (այսինքն՝ բնական հայտնության), որն է ժամանակակից գիտական ուսումնասիրությունը, որն ինձ հայտնում է «ինչուն» և «երբը»՝ զարգացող մեթոդների և տեսությունների հիման վրա:

3. Նույնիսկ «թեիստական էվոլյուցիայի» առավելագույն իրողությունը չի կարող ինձ հարկադրել, որ մերժեմ իմ հավատքի հետևություններից որևէ մեկը: Տե՛ս Դերրել Ռ. Ֆոք, *Իտադադություն Գիտության հետ. կամուրջ դնելով հավատքի և կենսաբանության աշխարհների միջև* և Ֆրենսիս Կ. Քոլինզ, *Աստծո Լեզուն* /Darrel R. Falk, *Coming to Peace with Science: Bridging the Worlds Between Faith and Biology* and Francis S. Collins, *The Language of God*: Ես ունեմ հավատքի հետևություններ (ինչպես և դուք): Իմ աշխարհայացքը աստվածաշնչյան Քրիստոնեությունն է: Իմ աշխարհընկալումը աճող և փոփոխություն բերող հասկացություն է:

Բ. Երկրագնդի «իրական» տարիքը իմ աստվածաբանության մեջ խնդիր չէ, բացի.

1. Ակնհայտ «Մեծ Պայթյունի» գաղափարը մատերիայի տիեզերական կազմավորման հարցում, որի տիեզերքի մեկնարկի վերաբերյալ պնդումները սահմանափակում են ժամանակի անսահման լինելու հնարավորությունները էվոլյուցիոն զարգացման համար (այսինքն՝ նատուրալիզմը):

2. Հանքանյութերի՝ բրածոների ծագման և վախճանի վերաբերյալ արձանագրությունները կարող են վերաբերել «շարունակելի հաշվեկշռին», որը հաստատում է, որ էվոլյուցիայի հնարավորություն տրված է սպուրտերի մեջ (հավանաբար Աստծո կողմից շարունակվող ստեղծագործությունները) և ոչ թե պարտադիր կերպով ժամանակի ընթացքում միայն աստիճանաբար փոփոխությունը:

3. Հին երկրագունդ և վերջերս հատուկ կերպով ստեղծված մարդկություն տեսությունը կանխակալ ենթադրության ձևաչափ է, որը ես ողջունում էին, մինչև որ ավելի շատ բան հասկացա Աստվածաշնչի, հնետաբանության և ժամանակակից: Մրանց հերթականությունը ցույց է տալիս իմ նախընտրությունները (իսկ մենք բոլորս էլ ունենք):

4. Գիտությունը իմ թշնամին չէ, ոչ էլ փրկիչը: Այնքան հետաքրքիր է ապրել գիտության զարգացման մի այսպիսի հրաշալի դարաշրջանում: Եվ այնքան միսթարական է լինել հերմենևտիկապես տեղեկացված հավատացյալ: Հավատքի և պատճառների կամ Աստվածաշնչի և Գիտության ինտեգրումը արժանահավատության հետ միասին սրանչելի հնարավորություն է:

VI. Ներկայիս հետևությունները երկրագնդի տարիքի վերաբերյալ

Ա. Լուսնային քարերի և երկնաքարերի ռադիոմետրիկ ժամանակագրությունը համարժեք է 4,6 միլիարդ տարվա: Դրանք պարունակում են միևնույն տարրերը ինչ այս արեգակնային համակարգի մյուս մոլորակները, ուստի եկել են այն եզրակացության, որ մեր արևը և դրա հետ կապ ունեցող մոլորակները, գիսաստղերը, աստերոիդները ձևավորվել են միևնույն ժամանակ: Երկրագնդի ամենահին ժայռաբեկորները ռադիոմետրիկ հաշվավարկով թվագրվում են 3,8 միլիարդ տարի:

Բ. Առաջին մարդկային զույգի (*Հոմոսապիենսի* - *Homo sapiens*) գերբնական արարման տարեթիվը ավելի դժվար խնդիր է, սակայն այն գտնվում է տասնյակ հազարավոր տարիների շրջանակում, հավանաբար 40,000: Տե՛ս Ֆազալ Ռանա և Հյու Ռոսսի *Ո՞վ էր Ադամը* (Fazole Rana and Hugh Ross *Who was Adam?*):

Ժամանակը միայն մեր պես ժամանակագրական հաջորդիվ սանդղակի ներսում ստեղծվածներին համար է խնդիր: Ժամանակի ընթացքը՝ տևողությունը ոչ մի կերպ չի ազդում Աստծուն: Ես հավատում եմ, որ երկրագունդն իր միջավայրով ստեղծվել է ժամանակի ընթացքում հատուկ նպատակով, որպեսզի Աստծո համար մի «վայր» պատրաստվի Իր ստեղծագործության գլուխգործոցի հետ փոխհարաբերվելու՝ շփվելու համար, որին Նա ստեղծել է Իր պատկերով ու նմանությամբ: Այս հավատալիքների միակ աղբյուրը ներշնչված Աստվածաշունչն է: Ես հենվում եմ դրան և թույլ տալիս, որ ժամանակակից գիտությունը ավելացնի ֆիզիկական երևույթների հետ կապված Աստծո ստեղծարար գործունեության շուրջ իմ ունեցած հասկացողությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 1:1-5

¹Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: ²Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և անդունդի վրա խավար կար: Եվ Աստծո Հոգին շարժվում էր ջրերի երեսին: ³Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի», և լույս եղավ: ⁴Եվ Աստված տեսավ, որ լույսը բարի է, ու Աստված լույսը անջատեց խավարից: ⁵Եվ Աստված լույսը կոչեց Ցերեկ, իսկ խավարը կոչեց Գիշեր: Եվ երեկո ու առավոտ եղավ՝ առաջին օրը:

1:1 «Սկզբում» Այս գրքի երրայերեն անվանումը՝ վերնագիրը *Bereshith* (BDB 912) է: Մենք *Genesis- Ծննդոց* անվանումը ստացել ենք Մեպտուազինտայի թարգմանությունից: Սա պատմության մեկնարկն է, սակայն ոչ Աստծո գործունեության (տես՝ Մատթ.25:34; Հովհ.17:5,25; Եփես.1:4; Տիտոս 1:2; 2 Տիմ.1:9; 1 Պետ.1:19-20; Հայտն.13:8): Ռ. Կ. Հարիսոնն ասում է, որ այն պետք է թարգմանվեր «սկզբնական ձևով» (*Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 542, ծանոթագրություն 3 /*Introduction to the Old Testament R. K. Harrison*/): Ջոն Հ. Ուոլթոնի *Ծննդոցի Մեկի Կորած Աշխարհը* /*John H. Walton, The Lost World of Genesis One*/ գրքում ասվում է, որ այն ծանոթացնում է ժամանակի ընթացքի հետ (էջ՝ 45):

❖ **«Աստված»** *Elohim* (BDB 43) բառը հնագույն Մերձավոր Արևելքում հանդիսանում էր Աստծո ընդհանուր անվան՝ *El* (BDB 42) ՀՈԳՆԱԿԻ ձևը: Իսրայելի Աստծո մասին խոսելիս բայը սովորաբար (միայն 6 բացառությամբ) ԵՉԱԿԻ թվով է: Ռաբբիններն ասում են, որ այն խոսում է Աստծո մասին, որպես արարչի, հոգացողի և երկիր մոլորակի վրա բոլոր արարածներին կյանք տվողի (տես՝ Սաղմ.19:1-6; 104): Ուշադրություն դարձրեք, թե առաջին գլխում ինչքան հաճախ է այս բառը կիրառվում:

Ես հավատում եմ, որ այս համարն ունի անկախ ենթանախադասություն. Իբն Եզրասն ասում է, որ այն կախյալ նախադասություն է, համար 2-ի վրա շեշտադրությամբ, մինչ Ռաշին ասում է, որ համար 2-ը փակագծերում տրված միջանկյալ նախադասություն է և շեշտադրումն ընկած է համար 3-ի վրա: Նախախնամությանը հավատացող ժամանակակից մեկնաբաններն ասում են, որ համար 1-ը կախյալ ենթանախադասություն է, որպեսզի սատարեն նախկինում տեղի ունեցած անկման (բաց թողնված տեսություն) իրենց տեսությունը: Ուշադրություն դարձրեք, որ Աստծո ծագման վերաբերյալ ոչ մի բացատրության չկա: Այն հստակ հաստատում է, որ Աստված ստեղծեց մատերիան և ոչ թե փևավորեց գոյություն ունեցող մատերիայից (հունական տիեզերաբանություն): *Enuma Elish* -ում (բաբելոնական ստեղծագործության արձանագրություն), ինչպես որ հույներն են կարծում, Հոգին (որը բարին է) և մատերիան (որը չարն է) հավիտենական են: Աստվածաշունչը չի քննարկում կամ հայտնում Աստծո ծագումը: Նա մշտապես գոյություն է ունեցել (տես՝ Սաղմ.90:2): Սա անշուշտ առեղծվածային է: Մարդկությունը պարզապես չի կարող ըմբռնել Աստծո լիությունը:

Ենթանախադասությունների այս քննարկումը աստվածաբանորեն շատ կարևոր է: Ամերիկայի Հասարակություն Հրեական Խմբագրությունը թարգմանել է Ծննդոց 1:1-ը որպես ժամանակի նախադասություն, «Երբ Աստված սկսեց ստեղծել երկինքը և երկիրը՝ երկիրը լինելով անձև ու դատարկ...»: Այս թարգմանությունը պետք է որ ենթադրի, որ Աստված և մատերիան հունական տիեզերաբանության պես համահավիտենական են (տես՝ «Ստեղծագործություն և Տիեզերաբանություն» *Հուդայիկա Հանրագիտարանում*, հատոր 5, էջ՝ 1059): Ստեղծագործության վերաբերյալ Ծումերական արձանագրությունը՝ *Enuma Elish*-ը, սկսում է «երբ սկզբում...» խոսքով: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները, 2:4-ում:

❖ **«ստեղծեց»** *Bara* (տես՝ 1:1,21,27; 2:3,4) երրայերեն ԲԱՅՆ է (BDB 135, KB 153, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ), որը բացառապես գործածվում է Աստծո արարչագործության գործունեության համար: Դրա հիմնական նշանակությունն է «կտրելով ձևավորել՝ կազմավորել»: Աստված կամեցավ, որ ամեն ինչ Իր միջոցով կյանքի կոչվի՝ ստեղծվի: Սաղմոս 33:6,9; Եբր.11:3 և 2 Պետ.3:5 ներկայացնում են արարումը (տիեզերաբանություն) Աստծո արտաբերած՝ խոսված խոսքի միջոցով (*fiat*) ոչնչից (*ex nihilo*), չնայած որ երբեք չի ասվում, որ ջուրը ստեղծվեց (տես՝ Ծննդ.1:2): Հույն (գնոստիկ) և Միջագետքյան փիլիսոփաները շեշտադրում են հավիտենական մի դուալիզմ «հոգու» և «մատերիայի» միջև: Ինչ էլ որ *bara*-ն ենթադրի, այն մատնացույց է անում Աստծո գործն ու նպատակը:

Աստվածաշունչը պնդում է, որ ստեղծագործությունը մեկնարկային պահն է: Քսանմեկերորդ դարի գիտությունը կարող է սա սահմանել որպես «մեծ պայթյուն»: Նատուրալիզմը այժմ չի կարող պնդել

անսահմանափակ ետզարգացում ժամանակի մեջ: Սակայն, հավանական է, որ Ծննդոց 1-ը վերաբերում է ֆունկցիոնալ երկրագնդին, ոչ թե մատերիալի նյութական սկզբին (Ջոն Հ. Ուոլթոն, *Ծննդոց Մեկի Կորսած Աշխարհը* /John H. Walton *The Lost World of Genesis One*):

❖ **«Երկինքը /անգլ.՝ երկինքները/»** «Երկինքները» (BDB 1029) բառը կարելի է կիրառել մի քանի իմաստով՝ (1) երբ վերաբերում է երկրագնդի մթնոլորտին, ինչպես 8 և 20 համարներում, (2) երբ վերաբերում է ամբողջ տիեզերքին (այսինքն՝ ամբողջ նյութական իրականությանը), կամ (3) երբ վերաբերում է ամբողջ տեսանելի (նյութական) և անտեսանելի (հրեշտակները, երկինքը որպես Աստծո գահատեղի) ստեղծագործությանը: Եթե երրորդ տարբերակը ճիշտ է, ապա դրան համագոր հատվածը պետք է որ լինի Կող. 1:16-ը, եթե ոչ, ապա Ծննդոց 1-ը կենտրոնանում է միայն այս մոլորակի արարման վրա: Աստվածաշունչը շեշտադրում է գեոցենտրիկ՝ երկրակենտրոն նպատակը (այսինքն՝ ստեղծագործությունը որպես այս մոլորակի վրա մի հանդիսատես պետք է ուսումնասիրել այն): Ոմանք կարող են պնդել, թե Ծննդոց 1 նկատի ունի տիեզերքի ստեղծագործությունը (այսինքն՝ արևը, լուսինը, աստղերը և համաստեղությունները), մինչ Ծննդ.2-3 կենտրոնանում է այս մոլորակի և մարդկության արարչագործության վրա: Սա անշուշտ հնարավոր է, քանի որ 2-4 գլուխները ձևավորում են մի գրական բաժին: Երկուսում էլ (այսինքն՝ Ծննդ.1 և 2-4) ստեղծագործությունը գեոցենտրիկ է (այսինքն՝ երկրակենտրոն):

❖ **«Երկիրը»** Այս տերմինը (BDB 75) կարող է վերաբերել հատուկ ցամաքի, երկրի կամ ամբողջ մոլորակին: Ծննդոց 1-ը ինչպես հայտնի է գեոցենտրիկ է (տես՝ համար 15): Սա համընկնում է տվյալ գլխի աստվածաբանական նպատակի հետ և ոչ թե գիտության: Հիշե՛ք, որ Աստվածաշունչը գրվել է աստվածաբանական նպատակների բնութագրության լեզվով: Այն հակագիտական չէ, այլ նախագիտական:

1:2 «Երկիրը ... էր» Այս ԲԱՅԸ (BDB 224, KB 243, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կարող է միայն շատ հազվադեպ թարգմանվել «դարձավ»: Բերականորեն և համատեքստորեն ավելի նախընտրելի է «էր» բառը: Թույլ մի տվեք, որ ձեր (այսինքն՝ նախախնամությամբ Քրիստոսի Երկրորդ Գալստյանը հավատացողները) կանխակալ ենթադրությամբ աստվածաբանությունը երկու անկումների վերաբերյալ (թերի տեսությունը) ազդի տեքստի բացատրության վրա:

❖	
NASB	«անձև ու դատարկ»
NKJV	«առանց ձևի և դատարկ»
NRSV, NJB	«անձև դատարկություն»
TEV	«անձև ու ամայի»
NIV	«անձև ու դատարկ»
REV	«անձայրածիր ամայություն»
SEPT	«անտեսանելի և մերկ»
JPSOA	«անձև և դատարկ»

Այս երկու տերմինները գտնվում են BDB 1062, KB 1688-1690 և BDB 96, KB 111-ում: Արդյո՞ք սա ակնարկում է միայն ջուրը: Երկրագունդը անընդհատ (այսինքն՝ մի սկզբնական աշխարհամաս, որը կոչվում էր Պանգեա, դարձավ մի քանի աշխարհամաս) փոխում է իր ձևը (այսինքն՝ տեկտոնիկ թաղանթը՝ թիթեղը): Կրկին հարցը երկրագնդի տարիքն է: Այս երկու խոսքերը միասին հանդես են գալիս Երեմ.4:23-ում: Դրանք գործածվում են ստեղծագործության վերաբերյալ Շումերական և Բաբելոնյան արձանագրություններում, սակայն առասպելական նշանակությամբ: Ստեղծագործության այս սահմանումը ցույց է տալիս, որ Աստված գործածել է զարգացող մի գործընթաց այս բնակելի երկրագնդի համար (տես՝ Ես.45:18): Այս երկու բառերը նկարագրում են ոչ թե մատերիալի սկիզբը, այլ չկատարելագործված, ոչ ֆունկցիոնալ կարգուկանոնով համակարգ (Ջոն Հ. Ուոլթոն, *Ծննդոց Մեկի Կորսած Աշխարհը*, Ջոն Հ. Ուոլթոն, *Ծննդոց Մեկի Կորսած Աշխարհը*, էջ՝ 49): Այն դեռ պատրաստ չէ մարդկանց համար:

❖ **«խավար»** Այս տերմինը (BDB 365) չի ներկայացնում չարին, այլ սկզբնական քաոսը: Աստված համար 5-ում խավարին անուն է տալիս, ինչպես Նա արեց լույսի համար: Այս երկու տերմինները, չնայած հաճախ Աստվածաշնչում կիրառվում է մատնացույց անելու հոգևոր իրականություններ, այստեղ ներկայացնում են սկզբնական ֆիզիկական վիճակներ:

❖ **«անդունդը»** Եբրայերեն տերմինը *tehom* (BDB 1062 #3, KB 1690-91) է: Նմանատիպ, սակայն տարբեր, Սեմական արմատ է անձնավորվում որպես *Tiamat* Շումերական և Բաբելոնյան արարչագործական առասպելներում, ինչպես քառսի հրեշքը և աստվածների մայրը՝ Ասյուի կինը: Նա փորձում էր սպանել բոլոր ավելի փոքր աստվածներին, որոնք ծնվել էին իրենից: Մարդուքը սպանեց նրան: Իր մարմնից Մարդուքը կազմեց երկինքն ու երկիրը Բաբելոնական Ծննդոցում, որը կոչվում էր *Enuma Elish*: Եբրայեցիները հավատում էին, որ ջուրը ստեղծագործության մեկնարկային տարրն էր (տես՝ Սաղմ.24:1; 104:6; 2 Պետ.3:5): Երբեք չի ասվում, որ այն ստեղծվել է: Սակայն եբրայերեն տերմինը արական սեռի է և ոչ թե իգական և այն կապ չունի Տիամատի ստուգաբանության հետ:

ՀԿ-ում կան հատվածներ, որոնք նկարագրում են ՅԱՀՎԵին անձնավորված ջրային քառսի հետ ընդհարման մեջ (տես՝ Սաղմ.74:13-14; 89:9-10; 104:6-7; Ես.51:9-10): Սակայն սրանք միշտ պոետիկ, այլաբանական հատվածներ են: Ջուրը ստեղծագործության կարևոր մասն է կազմում (տես՝ 1:2բ, 6-7):

❖
NASB, NKJV, TEV, NIV **«Աստծո Հոգին»**
NRSV, JPSOA **«Աստծուց մի քամի»**
NJB **«աստվածային մի քամի»**
REB **«Աստծո հոգին»**
SEPT **«Աստծո մի շունչ»**

Եբրայերեն *ruach* (BDB 924) տերմինը և հունարեն *pneuma* (տես՝ Հովհ.3:5,8) տերմինը կարող է նշանակել «հոգի», «շունչ» կամ «քամի» (տես՝ Հովհ.3:5,8): Հոգին հաճախ է փոխկապված արարչագործության հետ (տես՝ Ծննդ.1:2; Հոր 26:13; Սաղմ.104:29-30; 147:14-18): ՀԿ-ը հստակի չի սահմանում Աստծո և Հոգու միջև եղած կապը: Հոր 28:26-28; Սաղմ.104:24 և Առակ.3:19; 8:22-23-ում Աստված գործածեց իմաստությունը (իգական սեռի գոյական) ամեն ինչ ստեղծելու համար: ՆԿ-ում ասվում է, որ Հիսուսը ստեղծագործության մեջ Աստծո նարտարապետն էր՝ գործակալը (տես՝ Հովհ.1:1-3; 1 Կորնթ.8:6; Կող.1:15-17; Եբր.1:2-3): Ինչպես փրկագործության մեջ, այնպես էլ ստեղծագործության, աստվածության բոլոր երեք անձերն էլ մասնակցում են: Ծննդոց 1-ն ինքնին չի շեշտադրում որևէ երկրորդ պատճառ:

❖
NASB, TEV **«շարժվում»**
NKJV, NIV **«սավառնում»**
NRSV **«փչեց»**
NJB **«փչում»**

Այս տերմինը (BDB 934, KB 1219, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ձևավորեց «թխսելու» կամ «ակտիվ սավառնելու» իմաստը (տես՝ JB): Սա մայր թռչնի բառն է (տես՝ Ելից 19:4; 2 Օր.32:11; Եսայի 31:5; 40:31; Ովս.3; 11:4): Այն կապ չունի Ֆյունիկյան տիեզերաբանության հետ, որը պնդում է, որ երկիրը ծննունդ է առել մի ձվից, այլ Աստծո գործող ծնողական հոգատարության համար փոխաբերություն է, ինչպես նաև Իր ստեղծագործության այս վաղ շրջանում զարգացման վերաբերյալ:

1:3 «Աստված ասաց» Սա արտաբերված խոսքի միջոցով ստեղծագործության աստվածաբանական հասկացությունն է, որտեղ կիրառված է լատիներեն *fiat* բառը (տես՝ 9,14,20,24,29; Սաղմ.33:6; 148:5; 2 Կորնթ.4:6; Եբր.11:3): Սա հաճախ նկարագրվում էր որպես «ոչնչից առաջացավ մատերիան» կիրառելով Աստծո հրամանը, լատիներենի *ex nihilo* արտահայտության գործածությամբ (տես՝ 2 Սակ.7:28): Սակայն հնարավոր է, որ Ծննդոց 1 մատերիայի սկզբնական ստեղծագործության մասին չէ, այլ գոյություն ունեցող մատերիայի կազմակերպման (տես՝ Ջոն Հ. Ուոլթոն, *Ծննդոց Մեկի Կորած Աշխարհը*, էջ 54 վերջը /John H. Walton, *The Lost World of Genesis One*):

- Արտաբերված՝ ասված խոսքի այս գործությունը կարելի է տեսնել նաև.
1. Նահապետական օրհնության մեջ
 2. Աստծո ինքնակատար փրկարար խոսքի մեջ, Եսայի 55:6-13, հուկ. համար 11
 3. Հիսուսը որպես Խոսք, Հովհ. 1:1-ում և
 4. Հիսուսը որպես վերադարձող, որի բերանից դուրս է գալիս երկայրի սուրը (տես՝ 2 Թեսաղ.2:8; Եբր.4:12; Հայտն.1:6; 2:12; 19:15,21): Սա ստեղծագործության դարձվածքաբանական կերպն է Աստծո կամքով մտքի և խոսքի միջոցով: Ինչ որ Աստված կամենում է, այն էլ իրականանում է:

❖ «Թող լինի» Սրանք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են (տես՝ հհ. 3,6 /երկու անգամ/, 9 /երկու անգամ իմաստով և ոչ թե ձևով/, 11, 14, 20 /երկու անգամ իմաստով և ոչ թե ձևով/, 22, 24, 26 /իմաստով և ոչ թե ձևով/):

1:4 «Աստված տեսավ, որ լույսը բարի է /էր/» (հհ. 4, 10, 12, 18, 21, 25, 31) Ամբողջ ստեղծագործությունը բարի էր (տես՝ 1:31): Աստծո բուն ստեղծագործության մեջ սկզբնապես չարը մաս չէր կազմում, այլ այն տեղի ունեցավ բարու ապականման պատճառով: «Բարին» այստեղ հավանաբար նշանակում է «նպատակին համապատասխանել» (տես՝ Եսայի 41:7) կամ «էապես անարատ» (BDB 373):

❖ «**Աստված անշատեց**» Այս ԲԱՅԸ (BDB 95, KB 110, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) հատկանշական է, թե ինչպես է Աստված զարգացնում Իր **ստեղծագործությունը**: Նա բաժանում է (KJV) և սկսում է նոր բաներ (տես՝ հհ. 4,6,7,14,18):

❖ «**լույս**» Հիշեք, որ դեռևս արև չկար: Չգուշացեք ժամանակի հաջորդականության հանդեպ դոգմատիկ վերաբերմունքից (այսինքն՝ 24 ժամում երկրագնդի մեկ պտույտը, որը իրականում հաստատուն չի եղել երկրագնդի պատմության ընթացքում):

Լույսը (BDB 21) կյանքի, մաքրության և նշարտության աստվածաշնչյան խորհուրդն է (տես՝ Հոր 33:30; Սաղմ.56:13; 112:4; Եսայի 58:8,10; 59:9; 60:1-3; Հովհ.1:5-9; 2 Կորնթ.4:6): Հայտն.22:5-ում տեսնում ենք լույսն առանց արևի: Նաև ուշադրություն դարձրեք, որ խավարը ստեղծվել (տես՝ Եսայի 45:7) և կոչվել է Աստծո կողմից (տես՝ հ. 5), որը ցույց է տալիս Իր վերահսկողությունը (տես՝ Սաղմ.74:16; 104:20-23; 139:12):

Ջոն Հ. Ուոլթոնը, *Ծննդոց Մեկի Կորստ Աշխարհը*, էջ՝ 55 /John H. Walton *The Lost World of Genesis One*, գրքում 4 և 5 համարների հիման վրա, պնդում է, որ սա նշանակում է «լույսի շրջան» և ոչ թե արևի ծագումը:

1:5 «Աստված կոչեց» (հհ. 8, 10) Այս անվանակոչումը ցույց է տալիս Աստծո սեփականատեր լինելն ու Նրա վերահսկողությունը:

❖ «**Եվ երեկո ու առավոտ եղավ**» Այս հերթականությունը կարող է արտացոլել խավարի գոյությունը նախքան կստեղծվել լույսը: Ռաբբիները մեկնաբանում են այս որպես օրը, որը որպես ժամանակի միավոր սկսում է երեկոյան: Սկզբում խավարն էր և հետո լույսը: Սա արտացոլվեց նաև Հիսուսի օրերում, երբ նոր օրը սկսվում էր իրիկնամուօթին՝ երեկոյան:

❖ «**ցերեկ**» Եբրայերեն տերմինը՝ *yom* (BDB 398) կարող է վերաբերել ժամանակահատվածի (տես՝ 2:4; 5:2; Հռոմ 1:1; Սաղմ.50:15; 90:4; Ժող.7:14; Ես.4:2; 11:2; Չաք.4:10), սակայն սովորաբար այն վերաբերում է 24 ժամյա օրվան (այսինքն՝ Ելից 20:9-10):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐ (YOM, BDB 398, KB 399)
SPECIAL TOPIC: DAY (YOM, BDB 398, KB 399)**

Yom (օր՝ Ծննդոց 1) տերմինի նշանակության տեսությունները, որ վերցված և որդեգրված են Դոկ. Ջոն Հարրիսի /Dr. John Harris/ (Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարանի Քրիստոնեական Դասընթացների Դպրոցի դեկան և ՀԿ-ի դասախոս) ՀԿ-ի Ուսումնասիրություն I նշումներից՝

1. Բառացի քսանչորս ժամյա տևողության տեսությունը
Սա անմիջական՝ ուղղակի մոտեցում է (տես՝ Ելից 20:9-11): Այս մոտեցման արդյունքում հարցեր են առաջանում.
 - ա. Ինչպե՞ս կարող էր լույս լինել առաջին օրը, երբ արևը մինչև չորրորդ օրը դեռ չէր ստեղծվել:
 - բ. Ինչպե՞ս էր հնարավոր մեկ օրից էլ քիչ ժամանակի մեջ բոլոր կենդանիներին (հատկապես նրանց, որոնք աշխարհի այլ վայրերին են բնորոշ) անուն դնել (տես՝ Ծննդ.2:19-20):
2. Օր - Հազարամյակ տեսությունը
Այս տեսությունը փորձում է ներդաշնակության մեջ բերել գիտությունը (հատկապես կենսաբանությունը) Սուրբ Գրքի հետ: Այս տեսությունն ասում է, որ «օրերը» «կենսաբանական դարաշրջաններ» էին իրենց տևողությամբ: Դրանց տևողությունը անհավասար է և

նրանք մոտեցնում են համաչափ երկրաբանության մեջ նկարագրված զանազան շերտերը: Գիտնականները հակված են համաձայնելու Ծննդոց 1-ի ընդհանուր զարգացումների հետ. գոյորշի և ջրային զանգված է նախորդել ցամաքի և ծովի բաժանմանը, նախքան երկրի վրա կիսայտնվեր կյանքը: Բուսական աշխարհը ստեղծվել է կենդանական աշխարհից առաջ, իսկ մարդը ներկայացրել է ամենավերջին և ամենաբարդ կյանքի տեսակը: Այս մոտեցումն ինքնին հարցեր է առաջ քաշում:

ա. Ինչպե՞ս են բույսերը գոյատևել «դարեր» շարունակ առանց արևի:

բ. Ինչպե՞ս էր բուսական աշխարհը վերապրում փոշոտումը, եթե «դարեր» անց նոր հայտնվեցին միջատները և թռչունները:

3. Իրար հաջորդող Հազարամյակ – Օր տեսությունը

Իրականում օրերը քսանչորս ժամ տևողությամբ են, սակայն յուրաքանչյուր օրը մյուսից բաժանվում է հազարամյակներով, որի ընթացքում այն ինչ ստեղծվել էր, զարգանում էր: Հարցեր են ծագում այսպիսի մոտեցումից.

ա. Միևնույն խնդիրներն են ծագում ինչպես և Օր- Հազարամյակ տեսության մեջ է:

բ. Արդյո՞ք տեքստը նշում է «օր» բառը, որպեսզի այն հասկացվի թե՛ քսանչորս ժամերը և թե՛ մի ամբողջ հազարամյակ:

4. Կատարելագործվող Արարչագործություն – Աղետ տեսությունը

Այս տեսությունը հետևյալ կերպ է բացատրվում. Ծննդոց 1:1-ի և 1:2-ի միջև գոյություն ունի մի անորոշ ժամանակահատված, որի ընթացքում երկրաբանական հազարամյակներ են անցել. այս ընթացքում, համաձայն հանաժողովի տված հերթականության ստեղծվել են նախապատմական արարածներ. մոտ 200,000 տարի առաջ մի գերբնական աղետ է տեղի ունեցել և բնաջնջել այս մոլորակի վրա գոյություն ունեցող կյանքի մեծ մասը և շատ կենդանիների վերացրել. դրանից հետո սկսել են Ծննդոց 1-ի օրերը: Այս օրերը ավելի շուտ վերաբերում են վերաստեղծմանը, քան թե սկզբնական արարչագործությանը:

5. Միայն Եղևմ տեսությունը

Ստեղծագործության պատմությունը վերաբերում է միայն Եղևմի Պարտեզի արարչագործությանն ու ֆիզիկական ասպեկտներին:

6. Ճեղքման տեսությունը

Ծննդոց 1:1-ի հիման վրա Աստված ստեղծեց կատարյալ աշխարհ: Ծննդոց 1:2-ի հիման վրա, Արյուսակը (Մատանան) դրվեց պատասխանատու այս աշխարհի վրա և ապստամբեց: Ապա Աստված դատեց Արյուսակին և աշխարհը՝ այն բնաջնջելով: Միլիոնավոր տարիներ շարունակ աշխարհը թողնվեց այդպես և երկրաբանական հազարամյակներն անցան: Ըստ Ծննդոց 1:3-2:3-ի Զ.Ա. 4004 թ-ին տեղի ունեցան վերաստեղծման վեց տառացի քսանչորս ժամյա օրերը: Եպիսկոպոս Աշերը (Bishop Ussher, մ. թ.1654) կիրառում էր Ծննդոց 5-ի և 11-ի սերնդաբանությունները, որպեսզի հաշվի և թվագրի մարդկության արարումը՝ Զ. Ա. 4004: Սակայն սերնդաբանությունները չեն ներկայացնում ժամանակագրական լիարժեք սանդղակները:

7. Սուրբ Շաբաթի Տեսությունը

Ծննդոց գրքի հեղինակը կիրառել է օրերի և մեկ շաբաթի հասկացությունը որպես բառացի միջոց արարչագործության մեջ Աստծո գործողությունների սուրբ ուղերձը ներկայացնելու համար: Այսպիսի կառուցվածքը յուսաբանում է Աստծո արարչագործության գեղեցկությունն ու համաչափությունը՝ ներդաշնակությունը:

8. Տիեզերական Տաճարի Հանդիսավոր Բացումը

Սա Ջոն Հ. Ուոլթոնի, *Ծննդոց Մեկի Կորած Աշխարհը*, (John H. Walton, *The Lost World of Genesis One*, IVP, 2009) գրքից վերջին տեսակետն է, որը վեց օրերը դիտարկում է որպես «ֆունկցիոնալ գոյաբանություն և ոչ թե նյութական գոյաբանություն»՝ օժտողգիա: Նրանք բնութագրում են Աստծուն որպես մարդկության բարօրության համար գործող տիեզերք ստեղծող կամ կարգադրող: Սա համապատասխանում է մյուս հնագույն տիեզերագիտություններին: Օրինակ, առաջին երեք օրերը ներկայացնում են Աստծուն որպես «եղանակները» (այսինքն՝ ժամանակը), «եղանակը» (այսինքն՝ բերքի համար) և «սնունդը» ապահովողի՝ ստեղծողի: «Բարի է» կրկնվող արտահայտությունը մատնանշում է ֆունկցիոնալ վիճակը:

Յորթերորդ օրը նկարագրում է Աստծուն Իր լիարժեք գործող և բնակեցված «տիեզերական տաճարը» մտնելիս, որպես դրա օրինական սեփականատեր, վերահսկող և տնօրինող: Ծննդոց 1-ը ոչ մի կապ չունի մատերիայի նյութական արարչագործության հետ, այլ այդ մատերիային հրամայելու հետ, որ դառնա Աստծո և մարդկության փոխհարաբերության համար գործնական մի վայր:

«Օրերը» դառնում են գրականական միջոց, որպեսզի հաղորդեն ANE-ի ընդհանուր համաձայնությունը, որ՝

ա. տարբերություն չկա «բնականի» և «գերբնականի» միջև:

բ. Աստված ներգրավված է մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտի մեջ: Նրա մեծ նպատակը՝ աշխարհայացքը չի եղել Իսրայելի բացառիկությունը, այլ հետևյալը՝

(1) նրա միաստվածությունը

(2) Ստեղծագործությունը մարդկության համար էր և ոչ թե աստվածների

(3) Իսրայելի պատմության մեջ չկա աստվածների միջև կամ աստվածների և մարդկանց միջև բախումներ

Նա ուրիշներից չի վերցրել իր արարչագործության պատմությունը, այլ կիսվել է իրենց ընդհանուր աշխարհայացքը:

«Օր» տերմինը սովորաբար վերաբերում է երկրագնդի պտույտի 24 ժամյա ցիկլին (այսինքն՝ Ելից 20:9-10), սակայն այն կարող է վերաբերել նաև ինչ-որ անորոշ ժամանակի (տես՝ Ծննդ.2:4; 5:2; Հռուբ 1:1; Սաղմ.50:15; 90:4; Ժող.7:14; Եսայի 4:2; 11:2; Չաք.4:10):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. 1:6-8

Վեց Աստված ասաց. «Ջրերի միջև հաստատություն թող լինի և անջատի ջրերը ջրերից»: Վեց Աստված արեց հաստատությունը, և հաստատության տակ եղած ջրերն անջատեց հաստատության վրա եղած ջրերից. ու այդպես եղավ: Վեց Աստված հաստատությունը Երկինք կոչեց, և երեկո ու առավոտ եղավ երկրորդ օրը:

1:6 Այս համարը ունի երկու *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ («Թող...»): «Լինել» բայից (BDB 224, KB 243): Միևնույն կառուցվածքը կարելի է տեսնել 14 և 22 համարներում:



NASB, NET, JPSOA
NKJV
NRSV, TEV
NJB

«տարածություն»
«հաստատություն»
«գմբեթ»
«կամար»

Այս տերմինը (BDB 956, KB 1290) կարող էր նշանակել «կազմել» կամ «տարածել» ինչպես Եսայի 42:5-ում: Սա վերաբերում է երկրագնդի մթնոլորտին (տես՝ 1:20), որը փոխաբերորեն է նկարագրված, որպես օդային կամար՝ գմբեթ կամ շրջած թաս երկրագնդի մակերևույթից վեր (տես՝ Եսայի 40:22):

❖ «ջրեր» Թարմ ջուրը և աղի ջուրը շատ կարևոր տարրեր են Աստվածաշնչից դուրս ստեղծագործության պատմություններում, սակայն Աստվածաշնչում դրանք վերահսկվում են Աստծո կողմից: Ծննդոց 1-ը

տարբերություն չի դնում քաղցրահամ կամ աղի ջրերի ստեղծագործության միջև: Մթնոլորտում գոյություն ունեցող ջուրը անջատվեց երկրագնդի վրա գոյություն ունեցող ջրից: Ծննդոց 1-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ Աստված մի քանի բան է անջատում՝ բաժանում, որպես մի գործընթաց բնակելի երկիր ստեղծելու համար (լույսը խավարից, վերի ջրերը վարի ջրերից, վարի ջրերը ցամաքից, արևի ժամերը լուսնի ժամերից):

❖ «անջատի ջրերը ջրերից» **Աստված** է վերահսկում քառասյին ջրերը (BDB 95, KB 110, *Hiphil* ԴԵՐԲԱՅ): Նա է դնում ջրերի վրա սահմաններ (տես՝ Հոր 38:8-11; Սաղմ.33:6-7; Եսայի 40:12):

1:7 «ու այդպես եղավ» Աստված ինչ կամեցավ կատարվեց և կատարվում է (տես՝ 1:9,11,15,24,30):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 1:9-13

⁹Եվ Աստված ասաց. «Երկնքի տակ եղած ջրերը թող մեկ տեղ հավաքվեն ու ցամաքը երևա», և այդպես եղավ: ¹⁰Եվ Աստված ցամաքը երկիր անվանեց ու ջրերի միատեղ հավաքը ճովեր կոչեց: Եվ Աստված տեսավ, որ բարի է: ¹¹Եվ Աստված ասաց. «Երկիրը թող կանաչ խոտ բուսցնի, սերմ տվող խոտ և երկրի վրա իր տեսակի պես պտուղ տվող պտղաբեր ծառ, որի սերմն իր մեջ է», ու այդպես եղավ: ¹²Ու երկիրը կանաչ խոտ, իր տեսակի պես սերմ ունեցող պտղաբեր ծառ բուսցրեց. և Աստված տեսավ, որ բարի է: ¹³Եվ երեկո ու առավոտ եղավ՝ երրորդ օրը:

1:9-10 Առաջին երկու ԲԱՅԵՐԸ (BDB 876, KB 1082 և BDB 906, KB 1157) երկուսն էլ *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են: Արդյո՞ք սա նկատի ունի մեկ մայրցամաք (այսինքն՝ Պանգեյան /միասնական գերմայրցամաքը/): Երկրագունդը շարունակ փոխում է իր տեսքը՝ ձևը (այսինքն՝ տեկտոնիկ գմբեթը): Հարցը դարձյալ երկրագնդի տարիքն է: Նաև ուշադրություն դարձրեք, որ Աստված վերահսկում է բոլոր բնական երևույթները: Գոյություն չունեն բնության աստվածներ:

1:9 «թող ... ցամաքը երևա» Սա նման է եգիպտական տիեզերաբանության սկզբնական սուրբ սարին: ՀՄԱ /Հնագույն Մերձավոր Արևելք/ այսպիսի ընդհանուր աշխարհայացք ունեցող մեկ այլ օրինակներից է մարդու կավից շինված լինելը: Այս գաղափարը տարածված է Միջագետքի, Եգիպտոսի և Իսրայելի արարչագործության վերաբերյալ արձանագրություններում:

1:11-12 Սրա նպատակը չէր լինելու ամբողջ բուսական աշխարհի ծագման տեխնիկական նկարագրությունը: Կարծես թե այն վերաբերում է երեք տեսակի բուսականության՝ խոտերին, հացահատիկային մշակաբույսերին և պտղատու ծառերին: Կենդանիները ուտելու էին առաջինը և երկրորդը, իսկ մարդիկ ուտելու էին երկրորդը և երրորդը: Աստված պատրաստում է երկիրը քայլ առ քայլ ինչպես բեմահարթակ կամ պլատֆորմ, որի վրա փոխհարաբերվելու և պաշտպանելու է Իր գլուխգործոցին՝ մարդկությանը:

Բուսական կյանքի զարգացման կարգին վերաբերող մի քանի ժամանակակից գիտական տեսություններ են եղել: Որոշ գիտնականներ պնդում էին հենց այս կարգը՝ հերթականությունը: Սակայն մենք պետք է զգույշ լինենք, քանի որ գիտական տեսությունները փոփոխվում են: Քրիստոնյաները Աստվածաշնչին չեն հավատում այն բանի համար, քանի որ գիտությունը և հնէաբանությունը հաստատում են մատերիան: Մենք հավատում ենք Աստվածաշնչին Քրիստոսի մեջ մեր գտած խաղաղության և Աստվածաշնչի իր մեջ ունեցած ներշնչանքի սահմանումների շնորհիվ:

1:11 «Երկիրը թող ... բուսցնի» Սա «բուսնել» բայի *Hiphel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ձևն է (BDB 205, KB 233):

❖ «**իր տեսակի պես**» Ստեղծագործությունը կազմակերպված է (տես՝ հհ. 12,21,24,25; 6:20; 7:14) այնպես, որ մեկ անգամ ստեղծվելով՝ բույսերը, կենդանիները և մարդիկ, կարող են վերարտադրվել, հարմարվել և այն էլ իրենց միջից: Աստված ստեղծել է կյանքը հարմարեցնելու համար՝ ադապտացնելու: Այս փուլում, էվոլյուցիան տարբերվող պայմաններում իհարկե տեղի է ունեցել ժամանակի ընթացքում (միկրո-էվոլյուցիա կամ հորիզոնական էվոլյուցիա):

Աստվածաբանության մեջ մի այսպիսի զարգացող հակում կա կատարելագործվող ստեղծագործության հանդեպ, որը ենթադրում է, որ հնարավոր է Աստված ստեղծել է մարդուն (1) փուլերով կամ (2) Ադամն ու Եվան ստեղծվել են ավելի ուշ փուլում՝ կատարելապես զարգացած (տես՝ Բեռնարդ Ռեմմի և Հյու Ռոսսի գրություններում):

Հակառակ Հնագույն Մերձավոր Արևելքի, որտեղ պտղաբերությունը երկրպագվում էր որպես գույք աստվածություն, սա ցույց է տալիս, որ կյանքի աղբյուրը Աստված է և ոչ թե սեռական ակտը: Այս ստեղծագործության պատմությունը շատ կերպերով նվազեցնում է հնագույն Մերձավոր Արևելքի աստվածներին (ջրի, լույսի, խավարի, երկնային էակների, բնության երևույթների և պտղաբերության աստվածների), երբ Ելիցի պատուհասները նվաստացրեցին Եգիպտոսում եղած աստվածներին: Միակ նախաձեռնողը միմիայն միակ Աստվածն է:

NASB (Թ-ԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ.

¹⁴Եվ Աստված ասաց. «Երկնքի հաստատության մեջ լուսատուներ թող լինեն, որպեսզի ցերեկը գիշերից բաժանեն և նշանների ու ժամանակների և օրերի ու տարիների համար լինեն: ¹⁵Ու երկնքի հաստատության մեջ լուսավորելու համար թող լինեն, որպեսզի երկրի վրա լույս տան»: Ու այդպես եղավ: ¹⁶Եվ Աստված երկու մեծ լուսատուներ արեց: Մեծ լուսատուին՝ ցերեկն իշխելու համար, իսկ փոքր լուսատուին՝ գիշերն իշխելու համար: Աստղերն էլ *արարեց*: ¹⁷Եվ Աստված երկնքի հաստատության մեջ դրեց նրանց, որպեսզի երկրի վրա լույս տան: ¹⁸Եվ ցերեկվա ու գիշերվա վրա իշխեն և լույսը խավարից բաժանեն: Եվ Աստված տեսավ, որ բարի է: ¹⁹Եվ երեկո ու առավոտ եղավ՝ չորրորդ օրը:

1:14 «նշանների ու ժամանակների և օրերի ու տարիների համար» Երկնային լուսատուները պետք է նշեին տոնական օրերը (տես՝ 18:14; Ղևտ.23; 2 Օր.31:10) և հանգստյան, աշխատանքի և երկրպագության՝ պաշտամունքի շրջանները՝ ցիկլերը (տես՝ Սաղմ.104:19-23): Արևը ստեղծվեց բաժանելու օրացույցը և յուրաքանչյուրը օրը ժամանակի սեզամետների, որպեսզի օգնի մարդկանց կատարելու իրենց բոլոր պարտականությունները (այսինքն՝ ֆիզիկական և հոգևոր):

1:16 «երկու մեծ լուսատուներ... Աստղերն էլ *արարեց*» Աստված է երկնային մարմինների Արարիչը (տես՝ Ես.40:26): Դրանք աստվածներ չեն, որոց պետք է երկրպագել (Միջագետքի ասոլային երկրպագությունը, տես՝ 2 Օր.4:19; Եզեկ.8:16), այլ ֆիզիկական ծառաներ՝ գործիքներ (տես՝ Սաղմ.19:1-6): Սա աստվածաբանական սահմանում է:

1:17-18 Համար 14-ին որպես հավելում Եբրայեցիներում գտնվող գուգահեռ կառուցվածքը ակնարկում է երեք նպատակները:

NASB (Թ-ԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 1:20-23

²⁰Եվ Աստված ասաց. «Ջրերն առատորեն կենդանության շունչ ունեցող շարժվող կենդանիներ թող արտադրեն, և թռչուններ թող թռչեն երկրի վրա՝ երկնքի բաց *հաստատության մեջ*»: ²¹Եվ Աստված ստեղծեց մեծամեծ կետերը և ամեն շարժվող, շնչավոր կենդանի, որոնց ջրերն առատորեն հանեցին իրենց տեսակի պես: Աստված տեսավ, որ բարի է: ²²Եվ Աստված օրհնեց նրանց՝ ասելով. «Աճեցե՛ք ու բազմացե՛ք և ծովերում եղած ջրերը լցրե՛ք. թռչուններն էլ թող երկրի վրա շատանան»: ²³«Եվ երեկո եղավ ու առավոտ եղավ՝ հինգերորդ օրը»:

1:20-23 Հանկարծ հայտնվում են անողնաշարավորները Քեմբրյան ժամանակաշրջանում և առատ բազմազանությամբ: Գոյություն չունի ֆիզիկական ապացույց այն բանի, որ դրանք աստիճանաբար են զարգացել:

«Վխտալ՝ գեռալ» (BDB 1056, KB 1655) և «թռչել» (BDB 733, KB 800) բայերը, որ գործածվում են համար 20-ում, երկուսն էլ ԱՆԿԱՏԱՐ են կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ:

1:20 «կենդանության շունչ» Այս նույն բառը, *nephesh* (BDB 659) կիրառվում է մարդկանց համար (տես՝ 2:7; Ղևտ.11:46; 24:18): Այն ներկայացնում է կյանքի ուժը (տես՝ Եզեկ.18:4) կապված այս այս մոլորակի հետ և կախված դրանից:

❖ **«թռչուններ»** Տառացի սա նշանակում է «թռչող բաներ» (BDB 733), քանի որ 2 Օր.14:19-20-ում այն կարող է նաև վերաբերել միջատներին:

1:21 «ստեղծեց» Սա *bara* (BDB 135, KB 153, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) տերմինն է ինչպես Ծննդ.1:1-ում: Այն ակնարկում է Աստծո կողմից ստեղծված լինելուն: «Մարդը և կենդանիները» «ստեղծվեցին» 1:24-25-ում, որը ենթադրում է, որ նրանք արարվեցին դրանից առաջ ստեղծված մատերիայից (այսինքն՝ հողից): Սակայն *bara* տերմինը օգտագործվում է «մարդու» համար 1:27-ում (երեք անգամ):

Այս հատուկ տերմինը կիրառվում է (1) տիեզերքի (կամ երկրի) համար՝ 1:1-ում; (2) ծովային կենդանիների համար՝ 1:21-ում; և (3) մարդկանց համար՝ 1:27-ում:



NASB, NRSV, TEV, NJB	«մեծամեծ ծովային հրեշները»
NKJV, NIV	«մեծամեծ ծովային արարածները»
LXX, KJV	«մեծամեծ կետերը»
JB	«մեծամեծ ծովային օձերը /վիշապները/»

Սա կարող է վերաբերել *leviathan* (BDB 1072, տես՝ Սաղմ.104:26; 148:7; Հոր 41:1): Երբեմն այս բառը համադրվում է Իսրայելի թշնամիների հետ. (1) Եգիպտոսի, Ես.51:9; Եզեկ.29:3; 32:2 (երբեմն վերաբերում է «Ռախաբին», տես՝ Սաղմ.89:10; Ես.51:9) և (2) Բաբելոնին, Երեմ.51:34: Հանախ այն համադրվում է տիեզերական, հոգևոր թշնամիների հետ՝ Հոր 7:12; Սաղմ.74:13; Ես.27:1: Քանանացիների պատմությունները ստեղծագործության վերաբերյալ սա դարձնում է որպես աստված, որը պատերազմում է Բահադի դեմ, սակայն Աստվածաշնչում այն համարվում է միակ և ճշմարիտ Աստծո բարի ստեղծագործություններից մեկը:

❖ **«թռչուններ»** Սրա մեջ մտնում են ամեն տեսակ թռչող կենդանի, թռչուններ և միջատներ (տես՝ 2 Օր. 14:19-20):

1:22 Ինչպես որ բույսերն էին ստեղծվել վերարտադրվելու կարողությամբ, այնպես էլ, կենդանիները: Աստված ուզում է, որ իր մոլորակը լցվի կյանքով (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ շարքերը, տես՝ 1:28; 9:1,7): Սա Բաբելոնի Աշտարակի (տես՝ Ծննդ.10-11) ապստամբության խնդիրներից մեկն էր (այսինքն՝ բաժանվելու և մոլորակը լցնելու դժկամությունը):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է գիտությունը կապված Աստվածաշնչի հետ:
2. Իրական հարցերը ստեղծագործության ՈՎ կամ ԻՆՉՈՒՄ են և ոչ թե ԻՆՉՊԵՍ և ԵՐԲը: Եթե այդպես է, ինչպե՞ս ապա պետք է մեկնաբանենք Ծննդոց 1-2:
3. Ինչպե՞ս Աստված ստեղծեց ֆիզիկական աշխարհը: Պե՞տք է արդյոք մենք առաջ տանենք *fiat, ex nihilo* եթե սա պոեզիա է:
4. Ինչո՞վ է Աստվածաշունչը նման կամ տարբեր ստեղծագործության վերաբերյալ մյուս արձանագրություններին:

ՄԻ ՔԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. *Սասարվող Առարկություններ* Ֆիլիպ Չոնսոնի կողմից /*Objectives Sustained* by Phillip Johnson/

Բ. *Դարվինիզմը փորձության մեջ* Ֆիլիպ Չոնսոնի կողմից /*Darwinism on Trial* by Phillip Johnson/

Գ. *Ստեղծագործություն և Ժամանակ* Հյու Ռոսսի կողմից /*Creation and Time* by Hugh Ross/

- Դ. *Արարիչը և Տիեզերքը* Հյու Ռոսսի կողմից /*The Creator and the Cosmos* by Hugh Ross/
- Ե. *Ծննդոցի Հարցը* Հյու Ռոսսի կողմից /*The Genesis Question* by Hugh Ross/
- Զ. *Գիտության և Սուրբ Գրքի Քրիստոնեական Տեսակետը* Բեռնարդ Ռեմի կողմից /*The Christian View of Science and Scripture* by Bernard Ramm/
- Է. *Գիտական Նախաձեռնություն և Քրիստոնեական Հավատք* Մելքոմ Ա. Ջիվես /*The Scientific Enterprise and Christian Faith* by Malcolm A. Jeeves/
- Ը. *Խաղաղություն Գիտության հետ* Դերրել Ռ. Ֆոքի կողմից /*Coming to Peace with Science* by Darrel R. Falk/
- Թ. *Աստծո Լեզուն* Ֆրենսիս Ս. Քոլլինզի կողմից /*The Language of God* by Francis S. Collins/
- Ժ. *Ո՞վ էր Ադամը* Փազալ Ռանա և Հյու Ռոսսի կողմից /*Who was Adam?* By Fazale Rana and Hugh Ross/

ԾՆՆԴՈՑ 1:24-2:3 ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Անցած երկու դարերում ՀԿ-յան գիտնականները հաճախ պնդել են, որ Ծննդոցը արձանագրում է երկու ստեղծագործության պատմություն տարբեր հեղինակների կողմից, Աստծո համար տարբեր անուններ կիրառելով: Սակայն՝
 1. Հնարավոր է սա հանդիսանում է բուն արևելյան գրական մի ձև ընդհանուր մի պատմության, որին հետևում են մի քանի մասնահատուկ պատմություններ
 2. Ծննդոց 1:1-2:3 հնարավոր է այս մոլորակի վրա ստեղծագործության պատմության ամփոփումն է և Ծննդ.2:4-25՝ առաջին մարդկային զույգի ստեղծագործության պատմության:
 3. Սա կարող է արտացոլել Աստծո բնավորության տարբեր գծերը (այսինքն՝ ռաբբիական)
 - ա. *Elohim* – բոլոր կյանք ունեցողների արարիչը, մատակարարը և պահապանը
 - բ. *YHWH* -Իսրայելի փրկիչը, ազատագրողը և ուխտի Աստվածը
- Բ. Թվում է թե դրվել են Աստծո կողմից ոչնչից ստեղծածների և ինչ-որ բանից ստեղծածների միջև տարբերություն: Օրինակ. Աստված ստեղծեց համար 21-ում, մինչև հ.20-ում ջուրը իրենից արտադրեց՝ տվեց, հ.25-ում Աստված ստեղծեց, մինչև հ.24-ում երկիրը տվեց: Օգոստինոսը նկատել է այս տարբերությունը և ստեղծագործության երկու գործառույթներ կանխադրել. (1) մատերիա և հոգևոր էակներ և (2) նրանց կազմակերպումը և բազմազանեցումը՝ դիվերսիֆիկացիան:
- Գ. Այս հատվածը հստակ սովորեցնում է, որ մարդիկ ցամաքային կենդանիների նման են. (1) երկուսն էլ ունեն *nephesh* – շունչ, 1:24 և 2:7, (2) երկուսն էլ ստեղծվել են վեցերորդ օրը, 1:31; (3) երկուսն էլ ստեղծվել են հողից, 2:19; (4) երկուսն էլ որպես սնունդ ուտում են բույսեր, 1:29-30; (5) երկուսն էլ սերունդ են տալիս: Սակայն մարդիկ նաև Աստծո նման են. (1) հատուկ ստեղծագործություն, 1:26; 2:7; (2) Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված. 1:26 և (3) ունեն իշխանություն, 1:26,28:
- Դ. Ծննդոց 1:26 «Եկեք...» (տես՝ 1:26; 3:22; 11:7; 19:24; Եսայի 6:8) խոսքը ամենաքննարկվածներից է: Մի քանի տեսություններ են առանձնացվում՝
 1. Մեծափառության հոգնակիությունը (սակայն չկան Աստվածաշնչի կամ ռաբբիական գրականության ավելի վաղ օրինակներում)
 2. Աստված խոսում է Իր մասին և երկնային հրեշտակախմբերի. 3 Թագ.22:19
 3. Մատնանշում է աստվածության հոգնակիությունը, և հետևաբար, նախանշում է Երրորդությունը, 3:22; 11:7; Եսայի 6:8; 61:14: Պետք է նշել, որ (ա) Էրոհիմ բառը ՀՈԳՆԱԿԻ է և (բ) աստվածային անձիք են նշվում Սաղմ.2:2; 110:1,4; Չաք.3:8-9,11-ում:

Ե. Պատկերի և նմանության վերաբերյալ տեսություններ.

1. Իրենետար և Տերտուղիանոսը.
 - ա. Պատկեր՝ մարդկության ֆիզիկական հատկությունները
 - բ. Նմանություն՝ մարդկության հոգևոր հատկությունները
2. Ալեքսանդրիացի Կլեմենտը, Օրիգենոսը, Աթանասիոսը, Հիլարին, Ամբրոսը, Օգոստինոսը և Դամասկոսի Հովհաննեսը.
 - ա. Պատկեր՝ մարդու ոչ ֆիզիկական հատկանիշները
 - բ. Նմանություն՝ մարդու այնպիսի հատկանիշներ, որոնք հնարավոր են զարգանալ, ինչպես օրինակ սրբությունը կամ բարոյականությունը, իսկ եթե չեն զարգանում, ապա կորում են:
3. Գիտնականներ (Թոմաս Աքինաս)
 - ա. Պատկերը՝ մարդկության ռացիոնալ կարողությունը և ազատությունը (բնական)
 - բ. Նմանություն՝ սկզբնական արդարությունը և գերբնական պարզևները, որոնք անկման ժամանակ մարդը կորցրեց
4. Ռեֆորմիստները.
 - ա. Բոլորն էլ հիմնականում հերքում էին այս տերմինների միջև տարբերությունը (Ծննդ.5:1; 9:6):
 - բ. Լյութերն ու Կալվինը երկուսն էլ այս գաղափարն էին արտահայտում, սակայն տարբեր տերմինների մեջ, սակայն հիմնականում միևնույն ճշմարտությունն արտահայտելով:
5. Ես կարծում եմ, որ դրանք վերաբերում են մեր (1) էությանը, (2) գիտակցությանը, (3) լեզվական հմտություններին, (4) կամքին, և/կամ (5) բարոյականությանը:

2. Հատուկ Թեմա. Բնական Ռեսուրսներ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
SPECIAL TOPIC: NATURAL RESOURCES

I. Ներածություն

Ա. Ամբողջ ստեղծագործությունը տեսարան կամ բեմահարթակ է մարդու հանդեպ Աստծո սիրո գործողությունների համար:

Բ. Այն բաժին ունի անկման մեջ (տես՝ Ծննդ.3:17; 6:1; Հռոմ.8:18-20): Նաև բաժին է ունենալու վերջնական փրկագործության մեջ (տես՝ Եսայի 11:6-9; Հռոմ.8:20-22):

Գ. Մեղավոր, անկում ապրած մարդկությունը գրավել է բնական միջավայրը իր եսակենտրոն նպատակներով: Հաջորդիվ տրված է *Ուեսթմինստրի Կանոնը* Էդվարդ Քարփենթրի կողմից գրված գրքից մի մեջբերում:

«... մարդու աննահանջ գրոհը, գլոբալ համատեքստում, իրեն շրջապատող տիեզերքի վրա՝ այսինքն Աստծո ստեղծագործության վրա, հարձակում է օդի՝ մթնոլորտի վրա, որը նա աղտոտում է, բնական ջրի աղբյուրների վրա, որը պղծում է, հողի վրա, որը թունավորում է, անտառների, որոնց հատում է, անգույթ ոչնչացման երակարատև հետևանքների հանդեպ անխոհեմ վարվելով: Այս հարձակումը մաս-մաս է և չհամաձայնեցված: Ծատ քիչ ուշադրություն է դարձվում բնության հավասարակշռմանը և արդյունքում քիչ պատասխանատվության զգացում այն բանի, թե ինչ է պարտք այս սերունդը հաջորդ սերնդին»:

Դ. ոչ միայն մենք ենք հնձում մեր մոլորակի աղտոտվածության և անխնա գործածության հետևանքները, այլ մեր սերունդները կհնձեն շատ ավելի դաժան, անդառնալի հետևանքներ:

II. Աստվածաշնչյան Նյութ

Ա. Հին Կտակարան

1. Ծննդոց 1-3
 - ա. Ստեղծագործությունը Աստծո կողմից արարված հատուկ վայր է մարդկության հետ փոխհարաբերվելու համար (տես՝ Ծննդ. 1:1-25):
 - բ. Ստեղծագործությունը բարի է (տես՝ Ծննդ. 1:4,10,12,18,21,25), այո՛, շատ բարի է (տես՝ Ծննդ. 1:31): Այն նախատեսված է Աստծո վկան լինելու (տես՝ Սաղմ. 19:1-16):
 - գ. Մարդկությունը ստեղծագործության պսակն է (տես՝ Ծննդ. 1:26-27):
 - դ. Մարդկությունը նախատեսված է իշխանություն գործադրելու համար (եբրայերեն «կոխկրտել»)՝ որպես Աստծո գործի տնտեսներ (տես՝ Ծննդ. 1:28-30; Սաղմ. 8:3-8; Եբր. 2:6-8): Աստված է ամբողջ ստեղծագործության Արարիչը, Պահապանը, Ազատ-

ագրողը, Տերը և Ինքն էլ մնում է (տես՝ Ելից 19:5; Հոբ 37-41; Սաղմ.24:1-2; 95:3-5; 102:25; 115:15; 121:2; 124:8; 134:3; 146:6; Ես.37:16):

ե. Մարդկության ստեղծագործության վրա տնտես լինելը կարող է երևալ Ծննդ.2:15-ում. «մշակի այն ու պահի» (տես՝ Գևտ.25:23; 1 Մնաց.29:14):

2. Աստված սիրում է ստեղծագործությունը, հատկապես կենդանիներին:

ա. Մովսիսական օրենքները կենդանիների հետ հատուկ վերաբերվելու մասին

բ. ՅԱՀՎԵՆ խաղում է Լևիթյանի հետ (տես՝ Սաղմ.104:26)

գ. Աստված հոգում է կենդանիների համար (տես՝ Հովնան 4:11)

դ. Բնության էսկատոլոգիական ներկայությունը (տես՝ Ես.11:6-9; Հայտ.21-22)

3. Բնությունը ինչ-որ չափով փառավորում է Աստծուն

ա. Սաղմոս 19:1-6

բ. Սաղմոս 29:1-9

գ. Հոբ 37-41

4. Բնությունը մի միջոց է, որով Աստված ցույց է տալիս Իր սերն ու հավատարմությունն ուխտի հանդեպ.

ա. 2 Օր.27-28; 3 Թագավորաց 17

բ. Բոլոր մարգարեների մեջ

Բ. Նոր Կտակարան

1. Աստված դիտարկվում է որպես Արարիչ: Կա միայն մեկ Արարիչ՝ Երրորդություն Աստվածը (Էլոհիմը՝ Ծննդ.1:1; Սուրբ Հոգին՝ Ծննդ.1:2; և Հիսուսը՝ ՆԿ-ը): Մնացյալը արարված են:

ա. Գործք 17:24

բ. Եբրայեցիներին 11:3

գ. Հայտնություն 4:11

2. Հիսուսը Աստծո գործակալը էր ստեղծագործության մեջ

ա. Հովհաննես 1:3,10

բ. 1 Կորնթ.8:6

գ. Կող.1:16

դ. Եբր.1:2

3. Հիսուսը անուղղակի կերպով Իր քարոզներում խոսում է բնության համար Աստծո հոգածության մասին.

ա. Մատթ.6:26,28-30, երկնքի թռչունները և դաշտի շուշանները

բ. Մատթ.10:29, ճնճողուկները

4. Պողոսը պնդում է, որ բոլոր մարդիկ պատասխանատու են ստեղծագործության մեջ Աստծո մասին իրենց գիտության համար (այսինքն՝ բնական հայտնություն, տես՝ Հռոմ.1:19-20; Հայտն.21-22):

III. Եզրահանգում

Ա. Մենք կապված ենք բնական օրենքների հետ

Բ. Մեղավոր մարդկությունը չարաշահել է Աստծո բնության պարզևը, ինչպես և Աստծուց տրված բոլոր մյուս բարի պարգևները:

Գ. Այս բնական կարգուկանոնը ժամանակավոր է: Այն անցնելու է (2 Պետ.3:7): Աստված մեր աշխարհը տանում է դեպի պատմական հանգուցալուծման: Մեղքը անցնելու է իր ընթացքը, բայց Աստված որոշել է դրա սահմանները: Ստեղծագործությունը փրկվելու է (տես՝ Հռոմ.8:18-25):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 1:24-25

²⁴Եվ Աստված ասաց. «Երկիրը թող շնչավոր կենդանիներ հանի՝ ըստ իր տեսակի, անասուններ, սողուններ ու երկրի գազաններ՝ ըստ իր տեսակի»: Եվ այդպես եղավ: ²⁵Եվ Աստված երկրի գազաններին իրենց տեսակի պես ու ընտանի անասուններին իրենց տեսակի պես ու զգեսնի բոլոր սողուններին իրենց տեսակի պես արեց: Աստված տեսավ, որ զու բարի է:

1:24 «Եվ Աստված ասաց» *Elohim* (BDB 43) բառը Աստծո համար հնագույն հոգնակի անունն է, որը գերակշռում է առաջին գլխում: Ստուգաբանությունը անհայտ է: Ռաբբիներն ասում են, որ այն մատնանշում է Աստծուն որպես երկիր մոլորակի վրա բոլոր կյանք ունեցողների Արարչի, մատակարարի և պահապանի: ՀՈԳՆԱԿԻՆ թվում է թե աստվածաբանորեն կարևոր է, երբ կապում ենք 1:26; 3:22; 11:7-ի հետ և «մեկ» բառի հոգնակիությունը, որը կարելի է գտնել միաստվածության հրաշալի աղոթքի մեջ (*Shema*)՝ 2 Օր.6:4-6: Երբ կիրառվում է Իսրայելի Աստծո համար, գրեթե միշտ այդ ԲԱՅԸ ԵՉԱԿԻ թվով է: *Elohim* տերմինը ՀԿ-ում կարող է վերաբերել (1) հրեշտակներին (տես՝ Սաղմ.8:5); (2) մարդ դատավորներին (տես՝ Դատ.21:6; 22:8,9; Սաղմ.82:1); կամ (3) այլ աստվածների (տես՝ Ելից 18:11; 20:3; 1 Թագ.4:8): Տես Հատուկ Թեմա. Աստվածության անունները 2:4-ում:

❖ **«Երկիրը թող ... հանի»** Սա *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆ է (BDB 422, KB 425): Ծննդոց 1-ում տարբերություն կա Աստծո խոսված խոսքի միջոցով ոչնչից ստեղծելու և Իր ստեղծածից վերարտադրելու միջև (այսինքն՝ աղապատացիա՝ հարմարեցում): Համեմատեք համար 20 և 21 և համար 24 և 25-ը:

❖ **«Հնչավոր կենդանիներ ըստ իր տեսակի»** 24-25 համարները նկարագրում են ցամաքային կենդանիներին, թե՛ մեծ և թե՛ փոքր, ընտանի և վայրի: Ուշադրություն դարձրեք, որ «կենդանի շունչ» տերմինը (BDB 659 և 311) հիմնված է *nephesh* տերմինի վրա, որը Ծննդ.2:7-ում մարդկանց համար կիրառվող բառն է: Ակնհայտ է, որ մարդկության բացառիկությունը չի արտահայտվում *nephesh* տերմինի մեջ, որը հաճախ հունարեն թարգմանվում է որպես «շունչ»:

❖ **«սողուններ»** Տառացի սա վերաբերում է «սահել» կամ «սողալ» (BDB 943): Սա միևնույն բառն է, որ կիրառվում է հ.21-ում, «որ շարժվում է, շարժվող»: Կարծես թե այն վերաբերում է բոլոր այն կենդանիներին, որոնք չեն քայլում իրենց ոտքերի վրա կամ ունեն այնպիսի կարճ ոտքեր, որոնք դրանք աննշարելի են:

❖ **«Եվ այդպես եղավ»** Աստծո ցանկությունները իրականացան: Տե՛ս գրառում 1:7-ը:

1:25 «Աստված տեսավ, որ դա բարի է» Աստծո ստեղծագործությունը բարի էր (BDB 373) և 1:31-ում հռչակվում է որ «շատ բարի» էր: Հնարավոր է սա երբայերեն մի դարձվածք է, որ նշանակում է հարմար էր առաջադրված նպատակի համար: Աստվածաբանորեն այն նաև կարող է խոսել Աստծո սկզբնական ստեղծագործության մեջ մեղքի բացակայության մասին: Մեղքը սպասամբության հետևանք է, ոչ թե ստեղծագործություն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 1:26-31
²⁶Եվ Աստված ասաց. «Եկե՛ք Մեր պատկերով մարդ արարենք, Մեր նմանությամբ. և թող նա իշխանություն ունենա ծովի ձկների ու երկնքի թռչունների և անասունների ու ամբողջ երկրի ու սողացող բոլոր սողունների վրա»: ²⁷Այսպես Աստված Իր պատկերով ստեղծեց մարդուն՝ Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրան: ²⁸Եվ Աստված օրհնեց նրանց և Աստված նրանց ասաց. «Աճեցե՛ք /պտղաբեր եղե՛ք/ ու բազմացե՛ք ու լցրե՛ք երկիրը և տիրեցե՛ք դրան ու ծովի ձկների ու երկնքի թռչունների ու երկրի վրա սողացող բոլոր կենդանիների վրա իշխեցե՛ք»: ²⁹Եվ Աստված ասաց. «Ահա՛ ձեզ տվեցի ամբողջ երկրի վրա եղած ամեն սերմ ունեցող խոտ ու ամեն ծառ, որի մեջ սերմ տվող ծառի պտուղ կա: Սրանք ձեզ սնունդ են լինելու: ³⁰Ու երկրի բոլոր գազաններին ու երկնքի բոլոր թռչուններին ու երկրի վրա կենդանության շունչ ունեցող բոլոր սողուններին՝ որպես կեր կանաչ խոտ տվեցի»: Ու այդպես եղավ: ³¹Եվ Աստված տեսավ ամեն բան, որ Ինքն արել էր, և ահա դա շատ լավ էր: Եվ երեկո ու առավոտ եղավ՝ վեցերորդ օրը:

1:26 «Եկե՛ք արարենք» Այս ԲԱՅԻ *Qal* (BDB 793, KB 889) ձևը ԱՆԿԱՏԱՐ է, սակայն կիրառված է ՀԱՎԱՔԱԿԱՆ իմաստով: Բազմաթիվ քննարկումներ են տեղի ունեցել «մեզ» /եկեք/ բառի ՀՈԳՆԱԿԻ լինելու շուրջ: Փիլոն և Էրենեգերն ասում են, որ այն «մեծափառության հոգնակին է», սակայն այս քերականական ձևը նախքան շատ ավելի ուշ Հրեական գրական պատմությունը դեռ չէր կիրառվում (NET Աստվածաշուրնն ասում է, որ այն ԲԱՅԵՐԻՆ չի վերաբերում, Եսայի 6:8), սակայն սա չի կարող ակնարկել, որ հրեշտակները ստեղծագործության մեջ ինչ-որ մաս էին կազմում, ոչ էլ այն, որ նրանք ունեին

աստվածային պատկեր: Մյուսները ենթադրում են, որ սա սկիզբ է դնում Աստծո Երրորդության գաղափարին:

Հետաքրքիր է այն փաստը, որ Միջագետքյան ստեղծագործության պատմություններում աստվածները (սովորաբար կապված առանձին քաղաքների հետ) միշտ իրար հետ մրցում էին, սակայն այստեղ ոչ միայն ակնհայտ է միաստվածությունը, այլ նույնիսկ մի քանի ՀՈԳՆԱԿԻ արտահայտություններում առկա է ներդաշնակություն և ոչ թե կամակոր անբավարարվածություն:

❖ **«մարդ»** Սա Եբրայերենի «Ադամ» բառն է (BDB 9), որը ակնհայտ բառախաղ է Եբրայերենի հող՝ գետին տերմինի՝ *adamah* հետ (տես՝ հ. 9): Այս տերմինը նաև կարող է ակնարկել «կարմրություն»: Շատ գիտնականներ հավատում են, որ սա վերաբերում է Տիգրիս, Եփրատ Գետերի ափին մարդկության կարմիր հողից կամ կավից շինվելու փաստին (տես՝ 2:7): Միայն Ծննդոցի այս բացման գլուխներում է կիրառվում եբրայերեն «Ադամ» տերմինը որպես հատուկ անուն: Մեպտուազինտան կիրառում է *anthropos* բառը այս տերմինը կիրառելու համար, որը մարդկանց և/կամ կանանց վերաբերող ընդհանուր տերմին է (տես՝ 5:2; 6:1,5-7; 9:56): Ավելի տարածված եբրայերեն տերմին մարդու կամ ամուսնու համար *ish* բառն է (BDB 35, *tes` 2:23*, ստուգաբանությունը անհայտ է) և *ishah* (BDB 61) կնոջ կամ տիկնոջ համար:

Այս հարցում իմ աստվածաբանական հասկացողությամբ շատ դժվար է Աստվածաշնչի առաջին գույզի ստեղծագործության պատմությունը կապել երկոտանի *Homo erectus* -ի մի քանի տեսակներից մնացած բրածոների հետ: Այս հինավուրց դամբարանային վայրերից մի քանիսը պարունակում են նաև թաղված առարկաներ, որոնք ակնհայտ ապացույց են ետշիրիմյան կյանքի հավատամքի: Ես չեմ վիրավորվում տեսակների մեջ էվոլյուցիայից: Եթե դա ճիշտ է, ապա Ադամն ու Եվան եղել են պրիմիտիվ մարդիկ և Ծննդոց 1-11 պատմական ժամանակային սանդղակը պետք է որ մեծ արագությամբ զարգացած լիներ:

Հավանաբար Աստված ստեղծեց Ադամին և Եվային ավելի ուշ ժամանակահատվածում (այսինքն՝ զարգացող արարման ընթացքում), դարձնելով նրանց «ժամանակակից» մարդիկ (*Homo sapiens*): Եթե այդպես է, ապա նրանց կապը Միջագետքի քաղաքակրթության հետ պահանջում էր հատուկ ստեղծագործություն՝ մշակույթի մեկնարկին մոտ ինչ-որ ժամանակ: Ես ուզում եմ ընդգծել, որ սա պարզապես մտահայեցողություն է ժամանակի այս հատվածի համար: Այնքան շատ բաներ կան, որ մերօրյա մարդիկ չգիտեն հնագույն անցյալի մասին: Դարձյալ, աստվածաբանորեն, «ով» և «ինչու»-ն և ոչ թե «ինչպես» կամ «երբ» հարցերն են ավելի կարևոր:

❖ **«Մեր պատկերով, ... Մեր նմանությամբ»** «Պատկեր» տերմինը կարելի է նաև գտնել 5:1, 9:6 համարներում: Այն հաճախ կիրառվում է ՀԿ-ում մատնանշելու կուռքերին (KB 1028 II): Դրա հիմնական ստուգաբանությունն է «հյուսել որոշակի կազմվածքով»: Շատ քննարկումներ են եղել մեկնաբանության պատմության մեջ պատկեր (BDB 853, KB 1028 #5) և նմանություն (BDB 198) բառերի ճշգրիտ նշանակությունը գտնելու համար: Դրան համագոր հունարեն տերմիններ կարելի է գտնել ՆԿ-ում, որոնք նկարագրում են մարդկությանը (տես՝ 1 Կորնթ. 11:7; Կող. 3:10; Եփես. 4:24; Հակ. 3:9): Իմ կարծիքով դրանք հոմանիշներ են և նկարագրում են մարդկության սովոր գանգվածի, որոնք ի գորու են հաղորդակցվել Աստծո հետ: Հիսուսի մարմնացումը ցույց է տալիս այն պոտենցիալը, որը մարդկությունը կարող էր ունենալ Ադամի մեջ և մի օր Հիսուս Քրիստոսի միջոցով կլինի այդպիսին: Տես *Ո՞վ էր Ադամը* Ֆազալ Ռանա և Հյու Ռոսսի /*Who was Jesus?* by Fazale Rana and Hugh Ross/ կողմից գրված գիրքը, էջ՝ 79:

❖ **«թող նա իշխանություն ունենա /անգլ.՝ թող իշխի/»** Տառացիորեն սա «ոտնակոխ անի» (BDB 853, KB 1190, *Qal ԱՆԿԱՏԱՐՆ* է կիրառված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով): Սա խիստ տերմին է, որն արտահայտում է մարդկության իշխանությունը բնության վրա (տես՝ Սաղմ. 8:5-8): Այս նույն գաղափարը կարելի է գտնել հ. 28-ում: Երկու տերմիններն էլ՝ «իշխել» հհ. 26 և 28-ում, և «տիրել» հ. 28-ում, ունեն միևնույն հիմնական ստուգաբանությունը, որը նշանակում է «տորոել վրան» կամ «ոտնատակ անել՝ կոխկրտել»: Չնայած որ այս ԲԱՅԵՐԸ բարդ են թվում, դրանք արտահայտում են Աստծո իշխանության պատկերը: Մարդկությունը ստեղծված երկրագնդի վրա իշխանություն ունի՝ Աստծո հետ իր ունեցած փոխհարաբերության շնորհիվ: Նրանք պետք է իշխեին՝ տիրեին որպես Նրա բնավորությամբ ստեղծված Նրա ներկայացուցիչները: Իշխանությունը աստվածաբանական խնդիրը չէ, այլ դրա գործադրման միջոցները, կերպերը (անձն իր համար, թե ուրիշների օգտի համար):

Ուշադրություն դարձրեք ՀՈԳՆԱԿԻՆ, որը ակնարկում է թե՛ տղամարդու և թե՛ կնոջ փոխադարձ իշխանությունը (տես՝ 5:23): Նաև նկատեք հ. 28-ի ՀՈԳՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ: Կնոջ հնազանդությունը միայն գալիս է գլուխ 3-ում մարդու Անկումից հետո: Իրական հարցն այն է, թե. «Արդյո՞ք հնազանդությունը մնում է Քրիստոսով նոր դարաշրջանի բացումից հետո»:

1:27 «Աստված ստեղծեց» Այս համարում *bara* (BDB 127) տերմինը կիրառվում է երեք անգամ (*Qal ԱՆԿԱՏԱՐ* ձևը, որին հաջորդում են երկու *Qal* ԿԱՏԱՐՅԱԼՆԵՐԸ), որը կատարում է ամփոփիչ սահմանման դեր, ինչպես նաև Աստծո կողմից մարդուն արու և էգ ստեղծելու հասկացությունը շեշտադրելու համար է: Սա NRSV, NJB թարգմանություններում տպագրված է որպես պոեմ՝ բանաստեղծություն և NIV-ում ընդունված է այն ծանոթագրության մեջ: Այս տերմինը կիրառվում է միայն ՀԿ-ում և այն էլ Աստծո արարելու վերաբերյալ:

❖ **«Իր պատկերով»** Չափազանց հետաքրքիր է, որ հ. 26-ի ՀՈԳՆԱԿԻՆ այժմ ԵԶԱԿԻ է: Սա պարունակում է Աստծո հոգնակիության և միևնույն ժամանակ մեկության առեղծվածը: Աստծո պատկերը (BDB 853) համահավասար է տղամարդկանց և կանանց մեջ:

❖ **«արու և էգ ստեղծեց նրանց»** Մեր սեռական առանձնահատկությունը կապված է այս մոլորակի կարիքների և միջավայրի հետ: Աստված շարունակում է բաժանել՝ անջատել (տես՝ գրառում 1:4): Նկատել այստեղ փոխադարձ կապը, 2:18-ում և 5:2-ում: Մեր աստվածային պատկերը թույլ է տալիս մեզ բացառիկ՝ յուրահատուկ կերպով հաղորդակցվելու Աստծո հետ:

1:28 «Աստված օրհնեց նրանց ... Աճեցե՛ք և բազմացե՛ք» Աստծո օրհնության մի մասը (BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) վերարտադրությունն էր՝ որդեճությունը (տես՝ 2 Օր.7:13): Այս օրհնությունը թե՛ կենդանիների (տես՝ հ. 22) և թե՛ մարդկանց (տես՝ հ. 28; 9:1,7) վրա էր: Միջազգետքյան ստեղծագործության վերաբերյալ պատմությունն արձանագրում է, որ խիտ բնակեցված մարդկության աղաղակը պատճառ հանդիսացավ, որ աստվածները բնաջնջեն մարդկությանը: Ծննդոցի պատմությունը քաջալերում է բնակչության ան: Չարմանալի է, որ ապստամբության առաջին գործերից մեկը (տես՝ Ծննդ.10-11) մարդկության դժկամությունն էր առանձնանալու և երկիրը լցնելու հարցում:

❖ **«հնազանդեցրե՛ք և տիրեցե՛ք /հայ.՝ տիրեցե՛ք/»** Եբրայերեն տեքստում կան երկու հրամայականներ, որոնք զուգահեռ են «աճեցեք և բազմացեք» հրամանին (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ երեք շարք): Սա դարձնում է թե՛ մարդու սեռական կյանքը և թե՛ նրա վերահսկողությունը Աստծո կամքը:

Երկու եբրայերեն տերմիններն էլ՝ «հնազանդեցնել» (BDB 461, KB 460) և «տիրել՝ իշխել» (BDB 921, KB 1190) կարող են ունենալ բացասական (այսինքն՝ դաժան տիրապետում՝ գերիշխում) նշանակություն: Տվյալ համատեքստը պետք է ինքը որոշի, թե արդյոք նշանակությունը բարորակ է, թե ագրեսիվ:

1:29 Բուսական աշխարհը բաժանված է երեք հիմնական խմբի: Սննդային շղթան սկսվում է բույսերի մեջ ֆոտոսինթեզով: Երկրի վրա ապրող բոլոր կենդանիները կախված են բուսական կյանքի հրաշքից: Այս համարում մարդկությանը տրվում է հացահատիկները և պտուղները՝ մրգերը, որպես իրենց կերակուր (տես՝ 2:16; 6:21), մինչ երրորդ խումբը՝ խոտաբույսերը, տրվում են կենդանիներին: Նախքան ջրհեղեղը մարդկանց չէր թույլատրվում ուտել մարմին՝ մսեղեն (տես՝ Ծննդ.9:3): Սա հնարավոր է կապված լինի այն փաստի հետ, որ այդ տարի հնարավոր չէր հունձը՝ բերքահավաք լինել: Աստվածաբանորեն անընդունելի է տիեզերական մասշտաբով դիտելի սննդակարգ սահմանել ըստ Ծննդոց 1-ի:

Նաև հնարավոր է, որ այս նկարագրությունը կապված է միայն Եդեմական Պարտեզի հետ: Մահը և մսակերները դիտարկվում են 500,000 տարի առաջ Քեմբրիան շերտերում ամենավաղ բրածոների հետ կապված, որտեղ առկա են կյանքի նշանների առատ բրածոներ:

1:30 «որպես կեր կանաչ խոտ տվեցի» Այս սահմանման էությունն այն է, որ բոլոր կենդանի էակները կախված են ֆոտոսինթեզի գործընթացից (այսինքն՝ սննդային շղթան):

1:31 «շատ լավ էր» Ստեղծագործության վերաբերյալ սա չափազանց կարևոր եզրահանգում է, քանի որ հետագայում հունական գնոստիկ մտածելակերպում ասվում է, որ մատերիան չար է և հոգին՝ բարի: Հունական այս համակարգում (ինչպես նաև Միջազգետքի տեքստերում) թե՛ մատերիան և թե՛ հոգին հավասար հավիտենական են, որը նրանց համար ծառայում է որպես երկրի վրա տիրող պրոբլեմների բացատրություն: Մակայն Եբրայերեն արձանագրությունը ամբողջովին այլ է: Միայն Աստված է հավիտենական և մատերիան ստեղծված է Իր նպատակի համար: Ոչ մի չար գոյություն չունեի Աստծո սկզբնական ստեղծագործության մեջ, այլ միայն «ազատություն»:

❖ «Եվ երեկո ու առավոտ եղավ վեցերորդ օրը» Կարևոր է նշել, որ ինչպես երրորդ օրը, այնպես էլ վեցերորդ օրը ունեին երկու ստեղծագործական գործողություն, ուստի վեց օրում կատարվել են ութ արարչագործական ակտեր: Ռաբբիները նոր օրը սկսում են իրիկնամուօթին, որը հիմնված է այս «երեկո և առավոտ» արտահայտության վրա:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 2:1-3

¹Այսպես կատարվեցին երկինքներն ու երկիրը և նրանց ամբողջ զորքը: ²Եվ Աստված յոթերորդ օրը ավարտեց Իր գործերը, որ արեց և յոթերորդ օրը հանգստացավ Իր բոլոր գործերից, որ Նա կատարեց: ³Եվ Աստված օրհնեց յոթերորդ օրը և սրբագործեց այն, որովհետև նրանում հանգստացավ Իր բոլոր գործերից, որ Աստված ստեղծեց ու արեց:

2:1 «Երկինքները» Այստեղ այս տերմինը (BDB 1029) վերաբերում է երկրի շուրջը գտնվող մթնոլորտին: Որոշ համատեքստերում այն վերաբերում է աստղազարդ երկնքին, որը վեր է մթնոլորտից:

❖ «**կատարվեցին ... երկիրը և նրանց ամբողջ զորքը**» Աստծո ֆիզիկական ստեղծագործությունը հասավ իր հասունությանը (BDB 477, KB 476, *Pual* ԱՆԿԱՏԱՐ, հ. 2): Այժմ այն պատրաստ էր մարդու բնակության համար: Ստեղծագործության յուրաքանչյուր փուլ ունի իրեն հատուկ բնակիչները (այսինքն՝ «զորքը» BDB 838): Սա մասնահատուկ չի վերաբերում հրեշտակների ստեղծագործությանը (եթե 1:1-ի մեջ այն չի ընդգրկվում): Այս տեքստն առնչվում է ֆիզիկական ստեղծագործության հետ:

«Չորքեր» երբայերեն տերմինը որոշ համատեքստերում վերաբերում է (1) Միջազգային կոապաշտությանը կապված երկնային լուսատուներին (այսինքն՝ արև, լուսին, մոլորակներ, համաստեղություններ, /տես՝ 2 Օր.4:19/) կամ (2) ՅԱՀՎԵի հրեշտակային զորքին (տես՝ Հեսու 5:14), սակայն այստեղ վերաբերում է ամեն տեսակի արարված կյանքի:

2:2 «Եվ Աստված յոթերորդ օրը ավարտեց Իր գործերը» Սա շատ մարդաբանական բնույթի է, բայց չի նշանակում, որ Աստված հոգնեց կամ մշտապես դադարեցրեց Իր ակտիվ ներգրավվածությունը ստեղծագործության և մարդկության կյանքում: Սա հիմնական օրինակ՝ նմուշ է մարդկության համար, որը կարիք ունի կանոնավոր հանգստի և երկրպագության:

❖ «**Նա/ հանգստացավ**» Սա միևնույն երբայերեն արմատն ունի ինչ «Շաբաթը» (BDB 991, KB 1407, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Ելից 20:11; 31:12-17): 2 Օրինաց 5:15-ը տալիս է մեկ այլ պատճառ Շաբաթի համար՝ սոցիոլոգիական նկատառումներով և ոչ թե աստվածաբանական, ինչպես Ելից 20:8-11-ը:

Այս տերմինը կիրառվում է մի քանի տարբեր կերպերով, մասնավորապես ՆԿ-յան Եբր.3:7-4:11 հատվածում և Սաղմ.95:7-11-ի մեկնաբանության մեջ: Եբրայեցիների գրքում այս «հանգիստ» տերմինը ակնարկում է թե՛ Շաբաթ օրվա հանգիստը՝ Ավետյաց Երկիրը և թե՛ Աստծո հետ հաղորդակցությունը (երկինքը): Աստված օրինակ է ծառայում Իր յուրահատուկ ստեղծագործության՝ մարդկության համար: Աստծո և մարդկության միջև կանոնավոր հաղորդակցությունը հաղիսանում է ստեղծագործության համար թեև չսահմանված, սակայն համատեքստորեն ամենակարևոր՝ կենտրոնական նպատակը:

❖ «**յոթերորդ օրը**» 1-6 օրերը սկսում են երեկոյից և ավարտվում առավոտով (տես՝ 1:31), սակայն յոթերորդ օրվա առավոտը երբեք չի նշվում: Հետևաբար, ռաբբիները և ինչպես նաև Եբրայեցիների ՆԿ-յան հեղինակը (3:7-4:11) օգտագործում են սա եզրակացնելու, որ Աստծո հանգիստը դեռևս սպասվում է (տես՝ Սաղմ.95:7-11):

2:3 «Եվ Աստված օրհնեց յոթերորդ օրը և սրբագործեց այն» «Սրբագործել» տերմինը նշանակում է «սուրբ դարձնել» (BDB 872, KB 1073, *Piel* ԱՆԿԱՏԱՐ): Այս տերմինը կիրառվում է ինչ-որ բան Աստծո հատուկ օգտագործման համար առանձնացնելու իմաստով: Ավելի վաղ Աստված հաստատեց մի հատուկ, կանոնավոր օր Իր և մարդկության հաղորդակցության համար: Սա չի նշանակում, որ բոլոր օրերն էլ Աստծուն չեն պատկանում, սակայն մի օրը հատկապես առանձնացված է հաղորդության, երկրպագության, փառաբանության և լիցքավորող հանգստի համար:

Յոթօրյա շաբաթի ծագումը թաքնված է անտիկ ժամանակներում և առեղծվածներում: Մենք կարող ենք տեսնել, թե ինչպես է ամիսը կապված լուսնային փուլերի հետ և թե ինչպես է տարին կապված եղանակային փոփոխությունների հետ, սակայն շաբաթը չունի ակնհայտ աղբյուր: Այնուամենայնիվ յուրաքանչյուր

հնագույն մշակույթ, որ ճանաչում ենք, կարծես թե իմացել է դրա մասին, երբ իրենց գրավոր մշակույթն սկսված է եղել:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐԱԿՈՒԹՅՈՒՆ SPECIAL TOPIC: WORSHIP

I. Ներածություն

Ա. Մի քանի կարևոր հարցեր

1. Ի՞նչ է երկրպագությունը
2. Ե՞րբ և ինչպե՞ս է այն սկսվել
3. Ո՞րն է դրա բովանդակությունը
4. Ովքե՞ր են մասնակիցները
5. Որտե՞ղ և ե՞րբ է այն կատարվում

Բ. Այս հարցերը կձևավորեն մեր ուսումնասիրության ուրվագիծը՝ կմախքը: Պետք է հիշել, որ այս հարցերը չունեն որոշակի պատասխաններ, այլ գոյություն ունեն սուրբգրային ենթադրություններ և պատմական զարգացումներ:

II. Ի՞նչ է երկրպագությունը

Ա. Անգլերեն բառը ծագել է Սաքսոնական “weorthscipe” /worship/ տերմինից, որը մատնանշում է մեկին, որն արժանի է պատվի և հարգանքի:

Բ. ՀԿ-յան հիմնական տերմիններն են.

1. *Abodah*, որը ծագել է եբրայերեն արմատից, որ նշանակում է «ծառայել» կամ «աշխատել» (BDB 715): Սովորաբար սա թարգմանվում է «Աստծուն ծառայություն»:
2. *Hishtahawah*, որը ծագել է եբրայերեն արմատից, որ նշանակում է «խոնարհվել» կամ «երեսնիվայր ընկնել՝ երկրպագել մեկի» (BDB 1005, տես՝ Ելից 4:31):

Գ. ՆԿ-յան հիմնական տերմինները հետևում են եբրայերեն տերմիններին.

1. *Abodah* տերմինի համար կիրառվում է *latreia*, որը վարձկան աշխատողի կամ ստրուկի սահմանումն է:
2. *Hishtahawah* տերմինի համար կիրառվում է *proskuneo*, որը նշանակում է «երկրպագել», «պաշտել»:

Դ. Նկատեք, որ գոյություն ունեն երկու ոլորտներ, որոնց վրա ազդում է երկրպագությունը:

1. հարգանքի մեր վերաբերմունքը
 2. ապրելակերպ հանդիսացող մեր գործողությունները
- Այս երկուսը պետք է միասին քայլեն, այլապես արդյունքում մեծ խնդիրներ ի հայտ կգան (տես՝ 2 Օր.11:13):

III. Ե՞րբ և ինչպե՞ս այն սկսվեց

Ա. ՀԿ-ը հատուկ կերպով չի նշում երկրպագության ծագումնաբանությունը, բայց Ծննդոցում կան մի քանի ակնարկներ.

1. Ծննդոց 2:1-3-ում Շաբաթի հաստատությունն Աստծո կողմից հետագայում կատարելագործվեց դառնալով շաբաթական երկրպագության հիմնական օր: Ծննդոցում սահմանվում է, որ Աստված դրեց մարդկության հանգստի և երկրպագության օրվա նախադեպը՝ նմուշը Իր գործողություններով և վերաբերմունքով այս ժամանակային շաբաթական կտրվածքով:
2. Ծննդոց 3:21-ում Աստծո կողմից անկում ապրած առաջին գույզի համար կենդանիներին սպանելը և նրանց համար հագուստներ պատրաստելը, որպեսզի գոյատևեն իրենց նոր մեղավոր միջավայրում, կարծես թե հարթակ է պատրաստում մարդկության կարիքների համար կենդանիների օգտագործմանը, որը հետագայում զարգանալու էր դառնալով զոհաբերության համակարգ:
3. Ծննդ.4:3-ի Կայենի և Աբելի զոհը կարծես թե սովորական կանոնավոր երևույթ էր և ոչ թե միանգամյա իրադարձություն: Մա պատվազրկող հատված չէ բանջարեղենի զոհերի

համար կամ որևէ կարգադրություն կենդանիների զոհերի համար, այլ վառ օրինակ Աստծո հանդեպ պատշաճ վերաբերմունքի՝ կեցվածքի համար: Այն չի արտահայտում Աստծո կողմից ընդունված կամ մերժված լինելու գաղափարը:

4. Մեթի աստվածահաճո Մեսիական տոհմանյուղը զարգանում է Ծննդոց 4:25-ում: Այն նշում է Աստծո ուխտի անուևը՝ ՅԱՀՎԵՆ համար 26-ում՝ ակնհայտ երկրպագության միջավայրում (այս հաստվածը պետք է համաձայնեցնել Ելից 6:3-ի հետ):
5. Ծննդոց 7:2-ում Նոյը տարբերակում է մտցնում մաքուր և անմաքուր կենդանիների միջև: Սա օրինակ է հանդիսանում Ծննդոց 8:20-21-ում իր կատարած զոհերի համար: Այստեղից տեսնում ենք ակնարկ, որ դեռևս վաղ ժամանակաշրջանում զոհաբերությունները լավ հաստատված էին:
6. Արրահամը քաջատեղյակ էր զոհաբերություններից, որը ակնհայտ է Ծննդոց 12:7,8; 13:18; 22:9-ից: Այն Աստծո ներկայությանն ու Նրա խոստումներին տված իր արձագանքն է ձևավորում: Ըստ երևույթին նրա սերունդները շարունակեցին այս նույն կերպով վարվել:
7. Հորի գիրքը նահապետական միջավայրում է (այսինքն՝ մ.թ.ա. 2000): Ինչպես երևում է Հոր 1:5-ից Նա ծանոթ էր զոհաբերությանը:
8. Աստվածաշնչյան նյութերը կարծես թե հստակեցնում են, որ զոհաբերությունը զարգացել է Աստծո հանդեպ մարդու կողմից տաժած հիացմունքի և հարգանքի արդյունքում և Աստծո կողմից հայտնված ծիսակարգերի միջոցով, թե ինչպես պետք է այդ ամենը արտահայտել:
ա. Տաս Պատվիրանները և Սրբության Օրենքները
բ. Խորանի Պաշտամունքը

IV. Ո՞րն է դրա բովանդակությունը

Ա. Ակնհայտ է, որ զոհաբերության մեջ կարևորագույն մաս է հանդիսանում մարդու վերաբերմունքը Աստծո հանդեպ (տես՝ Ծննդ.4:3): Այս անձնական տարրը միշտ էլ եղել է հայտնված աստվածաշնչյան հավատքի մի պլունը (տես՝ 2 Օր.6:4-9; 11:13; 30:6; Երեմ.31:31-34; Եզեկ. 36:26-27; Հռոմ.2:28-29; Գաղ.6:15):

Բ. Սակայն մարդու պատվելու վերաբերմունքը շատ շուտով կողավորվեց ծեսերի մեջ:

1. մաքրման ծեսեր (կապված մեղքի գիտակցման հետ)
2. ծառայության ծեսեր (տոներ, զոհեր, նվիրատվություններ, և այլն)
3. անձնական երկրպագության ծեսեր (հանրային և առանձին աղոթքներ և փառաբանություն)

Գ. Երբ քննարկվում է բովանդակության հարցը, կարևոր է ուշադրություն դարձնել հայտնության երեք աղբյուրների (տես՝ Երեմ.18:18):

1. Մովսեսը և պաշտամունքը (քահանաները)
2. Իմաստասիրական Գրականությունը
3. Մարգարեները

Մրանցից յուրաքանչյուրը ավելացրել է երկրպագության մասին մեր հասկացողությունը: Գրանք կենտրոնանում են երկրպագության հարատև և կենսական ասպեկտների վրա:

1. ձևը (Ելից-Թվոց)
2. ապրելակերպը (Մաղմ.40:1; Միք.6:6-8)
3. շարժառիթը (1 Թագ.15:22; Երեմ.7:22-26; Ովս.6:6)

Դ. Հիսուսը հետևում է երկրպագության ՀԿ-յան օրինակին: Նա երբեք չձաղրեց ՀԿ-ը (տես՝ Մատթ.5:17), սակայն մերժեց Բանավոր Ավանդույթները, քանի որ դրանք ձևավորվել էին առաջին դարում:

Ե. Վաղ եկեղեցին ինչ-որ ժամանակ շարունակեց Հուդայականության մեջ մնալ (այսինքն՝ մինչև ռաբբիական արթնությունը և մ.թ. 90թ-ի բարեկարգումները) և ապա սկսեց զարգացնել իր իսկ բացառիկությունը, սակայն հիմնականում ժողովարանային օրինակով: Հիսուսի, Նրա կյանքի, Նրա ուսմունքների, Նրա խաչելության և հարության վրա կենտրոնացումը գրավեց ՀԿ-յան պաշտամունքի տեղը: Զարոգությունը, մկրտությունը և Հաղորդությունը դարձան կարևորագույն գործառնությունները: Շաբաթը փոխարինվեց Տիրոջ Օրով՝ Կիրակիով:

V. Ովքե՞ր են մասնակիցները

- Ա. Հնագույն Մերձավոր Արևելքի նահապետական մշակույթը հարթակ է պատրաստում կյանքի բոլոր ոլորտներում, ինչպես նաև կրոնում, մարդու առաջնորդության դերի համար:
- Բ. Նահապետը գործում էր որպես իր ընտանիքի քահանա թե՛ գոհաբերության և թե՛ կրոնական կանոնների համար (Հոբ 1:5):
- Գ. Իսրայելի համար քահանան հանրոքեն էր իրականացնում կրոնական ծեսերը, պաշտամունքի համար պատշաճ միջավայրում, մինչև հայրն այս դիրքը պահում էր անձնական երկրպագության միջավայրում: Բաբելոնյան Գերության ժամանակ (Ք.Ա. 586 թ.) Ժողովարանը և ռաբբիները ձևավորեցին ուսուցման և երկրպագության կենտրոնական գրասենյակը: Մ.թ.70 թ-ին Տանարի կործանումից հետո, ռաբբիական Հուդայականությունը, որը ձևավորվել էր Փարիսեցիներից, դարձավ գերիշխող:
- Դ. Եկեղեցական միջավայրում նահապետական օրինակը պահպանվել է, սակայն դրան ավելացնելով կանանց հավասարության և պարզևներ ունենալու շեշտադրումը (տես՝ 1 Կորնթ.11:5; Գաղ.3:28; Գործք 21:9; Հռոմ.16:1; 2 Տիմ.3:11): Այս հավասարությունը երևում է Ծննդ.1:26-27; 2:18-ում: Այս հավասարությունը խաթարվել էր Ծննդոց 3-ի ապստամբության պատճառով, սակայն վերականգնվեց Քրիստոսի միջոցով:
Երեխաները մշտապես եղել են երկրպագության միջավայրին հաղորդակից իրենց ծնողների միջոցով, սակայն Աստվածաշունչը մեծահասակների վրա կենտրոնացող գիրք է:

VI. Որտե՞ղ և ե՞րբ է կատարվում երկրպագությունը

- Ա. Ծննդոցում մարդկությունը հետադարձում է այն վայրերը, որտեղ նրանք հանդիպեցին Աստծուն: Այս սրբավայրերը դարձան գոհասեղաններ: Հորդանան գետն անցնելուց հետո կազմավորվեցին մի քանի այլ սրբավայրեր (Գաղատա, Սյուրբեմ, Բեթել), սակայն Երուսաղեմը ընտրված է որպես Աստծո հատուկ բնակության վայր, կապված Ուխտի Տապանակի հետ (տես՝ 2 Օրինաց գիրքը):
- Բ. Գյուղատնտեսության հետ կապված ժամանակները միշտ առիթ են հանդիսացել մարդկանց արտահայտելու իրենց գոհությունն Աստծուն՝ Նրա հոգածության համար: Այլ հատուկ զգայական կարիքներն ինչպիսիք են ներված լինելը, ձևավորվեցին հատուկ պաշտամունքային օրերի (այսինքն՝ Ղևտ. 16; Քավության Օրը): Հուդայականությունը նշանակեց տոնական օրեր՝ Չատիկը, Պենտեկոստեն և Տաղավարահարացը (տես՝ Ղևտ.23): Նաև անձնական հատուկ հնարավորություններ ընձեռեց մարդկանց (տես՝ Եզեկ.18):
- Գ. Ժողովարանի կազմավորումը ապահովեց Ծաբաթ օրվա երկրպագության համար կարգականոն: Եկեղեցին փոխեց այն Տիրոջ Օրով (շաբաթվա առաջին օրը), ըստ երևույթին հարությունից հետո շարունակ Հիսուսի կողմից այդ օրերի երեկոյան ժամերին նրանց հայտնվելու պատճառով:
- Դ. Սկզբում վաղ եկեղեցին հավաքվում էր ամեն օր (Գործք 2:46), սակայն շուտով այն վերածվեց շաբաթվա օրերին առանձին երկրպագության համար հավաքների, իսկ միասնական պաշտամունքի համար՝ Կիրակի օրերին:

VII. Եզրակացություն

- Ա. Աստծուն երկրպագելը մարդկանց կողմից հայտնագործություն կամ հաստատություն չէ: Երկրպագությունը ներքին կարիք է:
- Բ. Երկրպագությունը պատասխան է Աստծո Էությանը և Քրիստոսի միջոցով մեզ համար Նրա կատարածներին:
- Գ. Երկրպագությունը ամբողջությամբ ներառում է տվյալ անձին: Այն թե՛ ձև է և թե՛ վերաբերմունք: Այն թե՛ հանրային է և թե՛ անհատական:
- Դ. Ճշմարիտ երկրպագությունը անձնական փոխհարաբերության արդյունք է:
- Ե. Երկրպագության շուրջ ՆԿ-յան ամենաօգտակար հատվածը հավանաբար Հովի. 4:19-26 է:

❖ «արեց» Սա տառացի նշանակում է «պատրաստել, անել»: Աստծո ստեղծարար գործերը շարունակվում են (BDB 793 I, KB 889, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ): Աստված ստեղծեց կենդանի օրգանիզմներ, որպեսզի զարգանան՝ ավելանան: «Աճեցե՛ք և բազմացե՛ք և լցրե՛ք երկիրը» կրկնվող արտահայտությունը արտացոլում է Աստծո նպատակն ու ծրագիրը: Աստված ստեղծեց կենդանի շունչ ունեցողների (ներառյալ մարդուն), որոնք իրենցից վերարտադրվում են իրենց տեսակի պես: Հենց այս գործողության արդյունքում ի հայտ են գալիս նոր տեսակները:

ԾՆՆԴՈՑ 2:4-25

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Տղամարդու և Կնոջ արարումը	(1:1-2:7)	Տղամարդու և Կնոջ արարումը	Եղեմի Պարտեզը	Դրախտը և ազատ կամքի Ստուգումը
2:4-9		2:4բ-9	2:4բ-6 2:7	2:4բ-7 2:8-9
	Կյանքը Աստծո Պարտեզում			
	2:8-9		2:8-9	2:8-9
2:10-14	2:10-14	2:10-14	2:10-14	2:10-14
2:15-17	2:15-17	2:15-17	2:15-17	2:15-17
2:18-25	2:18-25	2:18-25	2:18-20 2:21-24	2:18-23 (23)
(23)	(23)	(23)	(23) 2:25	2:24 2:25

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրով մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԻՄՔԸ

Ա. Ես անձնապես հերքում եմ Յ (ՅԱՀՎԵ), Է (Էլոհիմ), Օ (2 Օրինաց), Ք (Քահանաներ) քննադատության տեսությունը, որը հայտարարում է Հնգամատյանի ՀԿ-յան մի քանի գրքերի տարբեր հեղինակների մասին (տես՝ Ծննդոցի Ներածություն, Ժամանակակից Գիտնականները, Դ.): Այս թեմայի շուրջ ավելի տեղեկացված լինելու համար կարդացեք Ջոշ ՄակԴաուելի *Ավելի շատ վկայություն, որ դատավճիռ է պահանջում* /Josh MacDowell's *More Evidence that Demands a Verdict*/, Հ. Ս. Լեոպարդի *Ծննդոցի Բացատրություն*, հատ. 1, /H. C. Leupold's *Exposition of Genesis*, vol.1/:

- Բ. Ծննդոց 2:4-25-ը Ծննդոց 1:1-2:3-ի հատուկ աստվածաբանական վերլուծությունն է: Սա տարածված երբայերեն գրական տեխնիկա է: Աստվածաբանորեն գլուխ 2-ը հարթակ է պատրաստում գլուխ 3-ի համար:
- Գ. Ծննդոց 1:31 պակասում է մեր աշխարհի մեկնարկը՝ սկիզբը Աստծո նպատակով «բարությանը»; 2:1-3 պետք է լինեք գլուխ 1-ի հետ, քանի որ 1:1-2:3 մի ամբողջական գրական բաժին է:
- Դ. Աստվածաբանորեն 2:4-25 ավելի շատ կապ ունի գլուխ 3-ի հետ, քանի գլուխ 1-ի: Այն գրական հարթակ է պատրաստում Եվայի փորձության և մեղքի համար՝ ամբողջ մոլորակի համար դրա կործանարար հետևանքներով հանդերձ (տես՝ Հռոմ.5:12-21; 8:18-23):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵԶՍՏ. 2:4-9

⁴Սրանք են երկինքների ու երկրի ծնունդները նրանց ստեղծված ժամանակ. այն օրը, երբ Տեր Աստված երկիրն ու երկինքներն արարեց: ⁵Եվ դաշտի բոլոր բույսերը դեռևս երկրի վրա չկային, և դաշտի բոլոր խոտաբույսերը դեռևս չէին բուսել, որովհետև Տեր Աստված երկրի վրա անձրև չէր բերել, և մարդ չկար, որ հողը փորեր, ⁶այլ երկրից գոլորշի էր բարձրանում և ամբողջ հողի մակերևույթը ջրում: ⁷Եվ Տեր Աստված գետնի հողից շինեց մարդուն և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հողի դարձավ: ⁸Եվ Տեր Աստված արևեյան կողմում՝ Եդեմի մեջ, մի պարտեզ տնկեց և Իր շինած մարդուն դրեց այնտեղ: ⁹Եվ Տեր Աստված երկրից բուսցրեց բոլոր տեսակի ծառերը՝ աչքին հաճելի և ուտելու համար քաղցր, նաև պարտեզի մեջտեղում՝ կենաց ծառը, և բարին ու չարը գիտենալու ծառը:

2:4 «Սրանք են ... ծնունդները» Տառացի այն գրված է «սրանք են սերունդները» (BDB 41 ավելացրած 410): Այս արտահայտությունը հեղինակի կողմից Ծննդոցը գրական սեգմենտների բաժանելու կերպ է (տես՝ 5:1; 6:9; 10:1; 11:10,27; 25:12,19; 36:1,8; 37:2; այսինքն՝ սա հեղինակի կողմից իր գիրքը ուրվագծելու կերպ է): Որոշ գիտնականներ այն դիտարկում են որպես նոր բաժինը ներկայացանելու՝ ծանոթացնելու կերպ (այսինքն՝ Դերեկ Զիդները) մինչ մյուսները դիտարկում են այն որպես նախորդ բաժնի փակման ձև (այսինքն՝ Ռ. Կ. Հարրիսոնը և Փ. Չ. Ուայզմենը): Կարծես թե երկուսն էլ ճիշտ տարբերակներ են: Հնարավոր է, որ 1:1-2:3 գործ ունի տիեզերքի ստեղծագործության հետ և 2:4-15 կենտրոնանում է մարդկության ստեղծագործության վրա, որը համատեքստորեն կապված է գլուխ 3 և 4-ի հետ:

❖ **«օր»** Եբրայերեն *yom* (BDB 398) տերմինը սովորաբար կիրառվում էր ժամանակի 24 ժամյա տևողության համար: Սակայն որպես փոխարեքություն այն նաև կիրառվում էր ավելի երկար տևողության համար (տես՝ 2:4; 5:2; Հռոմ 1:1; Եսայի 2:11,12,17; 4:2; Սաղմ.90:4): Հավանաբար h.4ա ենթաբաժնի վերնագիրն է, իսկ 4բ սկսում է քննարկումը: Տե՛ս Հատուկ Թեմա 1:5-ում:

❖ **«Տեր Աստվածը»** Սա տառացի ՅԱՀՎԵ Էլոհիմն է, որը համադրում է Աստծո անուններից ամենաշատ տարածվածները: Այստեղ առաջին անգամ է, որ այս անունները գործածվում են միասին: Շատ ժամանակակից գիտնականներ ենթադրել են, որ Ծննդոց 1-ը և 2-ը ունեն երկու հեղինակներ՝ Աստծո այս անունները կիրառելու պատճառով: Սակայն, ռաբբիները պնդում են, որ դրանք վերաբերում են աստվածության բնավորությանը. (1) Էլոհիմը որպես այս մոլորակի վրա ամբողջ կյանքի արարիչը, հոգացողն ու պահապանը (տես՝ Սաղմ.19:1-6) և (2) ՅԱՀՎԵՆ՝ որպես փրկիչ, ազատագրող և ուխտի Աստված (տես՝ Սաղմ.19:7-14): Աստվածաբանորեն այն ակնարկում է միշտ ապրող՝ հավիտենական, միակ կենդանի Աստծուն: Հրեաները վախենում էին արտասանել այս սուրբ անունը, որպեսզի հանկարծ չխախտեն Աստծո անունը զուր տեղը բերանը չառնելու պատվիրանը: Հետևաբար նրանք փոխարինում էին եբրայերենի *Adon* (ամուսին, սեփականատեր, տեր) տերմինը ամեն անգամ, երբ բարձրաձայն կարդում էին տեքստը: Ահա թե ինչու է անգլերեն /հայերեն/ ՅԱՀՎԵ բառը թարգմանվում ՏԵՐ /LORD/:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ
SPECIAL TOPIC: THE NAMES FOR DEITY

Ա. El

1. Աստվածության համար սեռային հնագույն տերմինի բնագիր նշանակությունը անհայտ է, թեև շատ գիտնականներ համարում են, որ այն ծագել է արքադական «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» արմատից (տես՝ Ծննդ.17:1; Թվոց 23:19; 2 Օր.7:21; Սաղմ.50:1):
2. Քանանացիների պանթեոնում ամենաբարձր աստվածը *El* է (Ռաս Շամրայի տեքստերը):
3. Աստվածաշնչում *El* հաճախ բաղադրվում է այլ տերմինների հետ: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու միջոց:
 - ա. *El-Elyon* («Բարձրյալ Աստված» BDB 42 & 751 II), Ծննդ.14:18-22; 2 Օր.32:8; Եսայի 14:41
 - բ. *El-Roi* («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ հայտնում է Իրեն» BDB 42 & 909), Ծննդ.16:13
 - գ. *El-Shaddai* («Ամենակարող Աստված» կամ «բոլոր գթությունների Աստված» կամ «Լեռան Աստված» BDB 42 & 994), Ծննդ.17:1; 35:11; 43:14; 49:25; Ելից 6:3
 - դ. *El-Olam* («Հավիտենական Աստված» BDB 42 & 761), Ծննդ.21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տրված Աստծո խոստման հետ, 2 Թագ.7:13,16
 - ե. *El-Berit* («Ուխտի Աստված» BDB 42 & 136), Դատ.9:46
4. *El* հավասարեցվում է հետևյալ անունների հետ՝
 - ա. YHWH (ՅԱՀՎԵ) Սաղմ.85:8; Եսայի 42:5
 - բ. *Elohim* Ծննդ.46:3; Հոր 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»
 - գ. *Shaddai* Ծննդ.49:25
 - դ. «նախանձոտ» Ելից 34:14; 2 Օր.4:24; 5:9; 6:15
 - ե. «ողորմած» 2 Օր.4:31; Նեեմ.9:31
 - զ. «հզոր ու սհարկու» (մեծ ու սհեղ) 2 Օր.7:21; 10:17; Նեեմ.1:5; 9:32; Դան.9:4
 - է. «գիտություն» 1 Թագ.2:3
 - ը. «իմ ամուր սպաստարան» 2 Թագ.22:33
 - թ. «իմ վրեժխնդիր» 2 Թագ.22:48
 - ժ. «սուրբ» Եսայի 5:16
 - ի. «գորություն» Եսայի 10:21
 - լ. «իմ փրկություն» Եսայի 12:2
 - խ. «մեծ ու հզոր» Երեմ.32:18
 - ծ. «հատուցում» Երեմ.51:56
5. ՀԿ-ում Աստծո համար գրված բոլոր անունների համադրությունը գտնվում է Հեսու 22:22-ում (*El, Elohim, YHWH*, կրկնվող)

Բ. Elyon

1. Այս բառի հիմնական նշանակությունն է՝ «բարձր», «մեծարված» կամ «բարձրացված» (տես՝ Ծննդ.40:17; 3 Թագ.9:8; 4 Թագ.18:17; Նեեմ.3:25; Երեմ.20:2; 36:10; Սաղմ.18:13)
2. Այն կիրառվել է Աստծո մի քանի այլ անունների՝ տիտղոսների հետ զուգահեռ իմաստով՝
 - ա. *Elohim* (Էլոհիմ) – Սաղմ.47:1-2; 73:11; 107:11
 - բ. *YHWH* (ՅԱՀՎԵ) – Ծննդ.14:22; 2 Թագ.22:14
 - գ. *El-Shaddai* (Էլ-Շադայ) – Սաղմ.91:1,9
 - դ. *El* (Էլ) – Թվոց 24:16
 - ե. *Elah* (Էլահ) – հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7, կապված *illair* բառի հետ (արամերեն «Բարձրյալ Աստված») Դան.3:26; 4:2; 5:18,21
3. Այն հաճախ կիրառվել է ոչ իսրայելցիների կողմից.
 - ա. Մելքիսեդեկ, Ծննդ.14:18-22
 - բ. Բաղասամ, Թվոց 24:16
 - գ. Մովսեսը, ազգերի մասին 2 Օր.32:8-ում խոսելիս
 - դ. Դուկասի Ավետարանը ՆԿ-ում, գրված հեթանոսներին, այն նույնպես կիրառում է հունարեն *Hupsistos* բառի համարժեքը (տես՝ 1:32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)

Գ. Elohim (ՀՈԳՆԱԿԻ), Eloah (ԵՉԱԿԻ), հիմնականում կիրառված է պոեզիայի մեջ

1. Այս տերմինը ՀԿ-ից դուրս չեք գտնի
2. Այս բառը կարող է բնութագրել Իսրայելի Աստծուն կամ ազգերի աստվածներին (տես՝ Ելից 3:6; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստված էր (տես՝ Հեսու 24:2)
3. Այն կարող է վերաբերել իսրայելացի դատավորներին (տես՝ Ելից 21:6; Սաղմ.82:6)
4. *Elohim* տերմինը նաև կիրառվում էր այլ հոգևոր էակների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օր.32:8-ում (LXX); Սաղմ.8:5; Հոբ 1:6; 38:7
5. Աստվածաշնչում աստվածության համար սա առաջին անունը կամ տիտղոսն է (տես՝ Ծննդ.1:1): Այն կիրառված է առանձին մինչև Ծննդ.2:4, որտեղ համադրվում է YHWH-ի հետ: Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերում է Աստծուն որպես արարչի, պահապանի և այս երկրագնդի վրա կյանք պարզևողի (տես՝ Սաղմ.104):
 Այն *El* բառի հոմանիշն է (տես՝ 2 Օր.32:15-19): Նաև համարժեք իմաստն ունի YHWH-ի, ինչպես Սաղմ.14-ում (*Elohim*, հհ.1,2,5; YHWH, հհ. 2,6; նույնիսկ *Adon*, հ.4):
6. Չնայած այն ՀՈԳՆԱԿԻ թվով է և կիրառվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ բնութագրում է Իսրայելի Աստծուն, սակայն միաստվածությանը մատնանշելիս սովորաբար կիրառվում է ԵՉԱԿԻ թվով ԲԱՅԸ:
7. Տարօրինակ է, որ Իսրայելի միակ Աստծո ընդհանուր անունը ՀՈԳՆԱԿԻ է: Չնայած անհատականությանը, ահա այդ տեսությունները.
 - ա. Եբրայերենը ունի շատ ՀՈԳՆԱԿԻՆԵՐ, հաճախ կիրառվող շեշտադրության համար: Հետագայում եբրայերեն քերականական առանձնահատկությամբ այս թեմայի հետ սերտորեն կապ կունենա «մեծության հոգնակին», որտեղ ՀՈԳՆԱԿԻ կիրառվում է մեծացնելու տվյալ հասկացությունը:
 - բ. Սա կարող է վերաբերել հրեշտակային խորհրդին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որը կատարում է Նրա հրամանները (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):
 - գ. Նույնիսկ հնարավոր է, որ սա արտացոլում է ՆԿ-ի այն հայտնությունը, որ Աստված երեք անձ է մեկում: Ծննդ.1:1-ում Աստված արարում է, Ծննդ.1:2-ում՝ Հոգին շարժվում է, իսկ ՆԿ-ում՝ Հիսուսը Հայր Աստծո գործակալն է ստեղծագործության մեջ (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):

Դ. YHWH

1. Սա այն անունն է, որը պատկերում է աստվածությանը որպես ուխտ կապող Աստծո, փրկիչ Աստծո, ազատագրող Աստծո: Մարդիկ ուխտադրույթ են, սակայն Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տես՝ Սաղմ.103):
 Այս անունը առաջին անգամ նշվել է *Elohim* բառի հետ համադրված Ծննդ.2:4-ում: Ծննդոց 1-2-ում գոյություն չունեն արարչագործության երկու արձանագրություններ, այլ երկու շեշտադրումներ՝ (1) Աստված որպես տիեզերքի արարիչ (ֆիզիկական) և (2) Աստված որպես մարդկության հատուկ արարիչը: Ծննդոց 2:4-3:24-ը սկսում է մարդկությանը առանձնաշնորհված դիրքի և նպատակի հատուկ հայտնությամբ, ինչպես նաև մեղքի հիմնախնդրով և ապաստանբությամբ, որոնք միացան այս բացառիկ դիրքին:
2. Ծննդ.4:26-ում ասվում է «մարդիկ սկսեցին կանչել ՏԻՐՈՋ (YHWH) անունը»: Համենայն դեպս, Ելից 6:3 ակնարկում է, որ առաջին ուխտի մարդիկ (Նահապետները և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես Էլ-Շադայ (*El-Shaddai*): YHWH անունը բացատրվում է միայն մեկ անգամ՝ Ելից 3:13-16-ում, հատկապես հ.14: Այնուամենայնիվ Մովսեսի գրքերը հաճախ մեկնաբանում են բառերը հայտնի բառախաղերով և ոչ թե ըստ ստուգաբանության (տես՝ Ծննդ.17:5; 27:36; 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի տեսություններ այս անվան նշանակության հետ կապված (վերցված IDB, հատոր 2, էջ.՝ 409-11):
 - ա. Արաբերեն արմատից՝ «կրակոտ սեր ցուցաբերել»
 - բ. Արաբերեն արմատից՝ «փչել» (YHWH որպես փոթորկող Աստված)
 - գ. Ուզարտիկ (Քանանացիների) արմատից՝ «խոսել»
 - դ. Համաձայն Փյունիկյան մակագրության, ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «Մեկը, որ պահպանում է» կամ «Մեկը, որ հաստատում է»:
 - ե. Եբրայերեն *Qal* ձևից՝ «Նա, որ է» կամ, «Նա, որ ներկա է» (ապառնի իմաստով՝ «Նա որ կլինի»)
 - զ. Եբրայերեն *Hiphil* ձևից՝ «Նա, որ գոյի պատճառ է հանդիսանում»

- է. Երբայերեն «ապրել» արմատից (օր.՝ Ծննդ.3:21), որը նշանակում է «հավերժ ապրողը, միակ ապրողը»
- ը. Ելից 3:13-16 կոնտեքստից ԱՆԿԱՏԱՐ ժամանակով՝ մի մասը կիրառված ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակում, «Ես կշարունակեմ լինելու այն ինչ եղել եմ» կամ «Ես կշարունակեմ լինել այն ինչ միշտ եմ եղել» (տես՝ J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, p.67 /Ջ. Ուոշ Ուաթս, *Ճարտահյուսության Ուսումնասիրություն Հին Կտակարանում*, էջ 67):
- (1) *Yah* (օր.՝ Ալելու – յահ, BDB 219, տես՝ Ելից 15:2; 17:16; Սաղմ.89:8; 104:35)
- (2) *Yahu* (‘iah’ հայերեն՝ -իա, անունների վերջավորությունը, օր.՝ Եսայիա)
- (3) *Yo* (‘Jo’ հայերեն՝ Հո-, անունների սկզբնամասը, օր.՝ Հովել)
3. Ավելի ուշ հուդայականության մեջ ուխտի այս անունը դարձավ այնքան սուրբ (քառագիրը), որ հրեաները վախենում էին արտասանել այն, այլապես կխախտեին Ելից 20:7; 2 Օր.5:11; 6:13-ի պատվիրանը: Ուստի նրանք այս բառը փոխարինեցին երբայերեն «սեփականատեր», «տեր» «ամուսին» տերմիններով – *adon* կամ *adonai* (իմ տեր): Երբ ՀԿ-ի տեքստերը ընթերցելիս հասնում էին YHWH բառին նրանք արտասանում էին «տեր»: Այդ իսկ պատճառով YHWH բառը անգլերեն (հայերեն) թարգմանություններում գրված է ՏԵՐ:
4. Ինչպես *El*, YHWH բառերի հետ հաճախ համադրվում են այլ տերմիններ, որպեսզի շեշտադրվեն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի հատկություններ: Չնայած որ կան շատ հնարավոր համադրված տերմիններ, ահա դրանցից մի քանիսը.
- ա. YHWH – *Yireh* (YHWH Եհովա-Իրե՝ Եհովան կհոգա, BDB 217 & 906), Ծննդ.22:14
- բ. YHWH – *Rophekha* (YHWH Եհովա-Ռոֆեխա, Եհովան քո բժիշկն է, BDB 217 & 950, *Qal* ԴԵՐԲԱՅ), Ելից 15:26
- գ. YHWH – *Nissi* (YHWH Եհովա-Նիսի՝ Եհովան իմ դրոշն է, BDB 217 & 651), Ելից 17:15
- դ. YHWH – *Meqaddishkem* (YHWH Եհովա-Մեքադիշկեմ՝ Նա ով հազեցնում է քեզ, BDB 217 & 872, *Piel* ԴԵՐԲԱՅ), Ելից 31:13
- ե. YHWH – *Shalom* (YHWH Եհովա-Շալոմ՝ Եհովան իմ խաղաղությունը, BDB 217 & 1022), Դատ.6:24
- զ. YHWH – *Sabaoth* (YHWH Եհովա-Սաբաութ՝ զորքերի Եհովան, BDB 217 & 878), 1 Թագ.1:3, 11; 4:4; 15:2; հաճախ Սաբաբեններում
- է. YHWH – *Ro’I* (YHWH Եհովա-Ռոյ՝ Եհովան իմ հովիվը, BDB 217 & 944, *Qal* ԴԵՐԲԱՅ), Սաղմ.23:1
- ը. YHWH – *Sidqenu* (YHWH Եհովա-Սիդքենյու՝ Եհովան իմ արդարությունը, BDB 217 & 841), Երեմ.23:6
- թ. YHWH – *Shammah* (YHWH Եհովա-Շամմա՝ Եհովան այնտեղ է, BDB 217 & 1027), Եզեկ.48:35

❖ «**երկիրը և երկինքը**» Այս բառերի հերթականությունը պահպանվում է համար 1-ից, սակայն ինչու, անհայտ է:

2:5 «ղաշտի բույսերը» Սա վերաբերում է վայրի դաշտային բույսերին (տես՝ Ծննդ.21:15; Հոր 30:4,7):

❖ «**ղաշտի խոտաբույսերը**» Սա վերաբերում է մշակված, ընտանի բույսերին:

2:6 «գոլորշի» Սա (BDB 15, KB 11) Աքքադերեն տերմին է (1) ջրհեղեղի կամ (2) ստորերկրյա հոսող ջրերի՝ աղբյուրների համար: Հավանաբար սա նշանակում է, որ ոռոգումը տեղի էր ունենում հեղեղմամբ («բարձրանում էր», BDB 748, KB 828, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Արաբերեն համագորը մշուշն է, որը «շոգի» բառի բուն թարգմանությունն է: Մենք կարող ենք ասել «ծանր ցող»:

Դարձյալ սա կարող է արտացոլվել է միայն Եդեմի Պարտեզի միջավայրը: Երկրաբանությունը կարծես թե հաստատում է երկրի մակերևույթի վրա ջրի հինավուրց աղբյուրները, Ադամի ու Եվայի արարումից շատ ավելի շուտ:

2:7 «շինեց» Սա տառացի նշանակում է «կավով ծեփել» (BDB 427, KB 428, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Երեմ.18:6): Սա երրորդ տերմինն է, որ կիրառվում է նկարագրելու մարդու հետ կապված Աստծո ստեղծագործական գործունեությունը արարման ժամանակ («արարել» 1:26, BDB 793, KB 889, «ստեղծել»

1:27, BDB 135, KB 153, և «շինել» 2:7): ՆԿ-ը հայտնում է, որ Հիսուսն Աստծո գործակալն էր ստեղծագործության մեջ (տես՝ Հովհ.1:3; 1 Կորնթ.8:6; Կող.1:16; Եբր.1:2):

❖ **«գեանի հողից շինեց մարդուն»** Եբրայերենում մարդ տերմինը Adam է (BDB 9), որը նշանակում էր (1) «կարմիր» տերմինի հետ կապված բառախաղ (տես՝ Ելից 25:5; 28:17; Թվոց 19:2; Ես.63:2; Չար.1:8) կամ (2) «գետին/հող» (*adamah*, տես՝ հ. 6), հավանաբար ակնարկելով «կարմիր հողակոշտեր»: Սա արտացոլում է մարդկության խոնարհությունն ու տկարությունը: Այստեղ առկա է բարբառային լարվածություն մարդու մեխարված դիրքի (Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված) և ցած ու տկար վիճակի միջև: Կենդանիները նույնպես նման կերպ են ստեղծվում հ. 19-ում: Նաև հնարավոր է, որ դա վերաբերում է մարդկության հողից ստեղծվելուն՝ նրա ծագմանը (տես՝ Ծննդ.3:19; Սաղմ.103; Ժող.12:7): Սա մատնանշում է մարդկությանը որպես կավ և Աստծուն որպես՝ կավագործ (տես՝ Եսայի 29:16; 45:9; 64:8; Երեմ.18:6; Հռոմ.9:20-23):

❖ **«կենդանության /կյանքի/ շունչ փչեց»** «Փչեց» ԲԱՅԸ (BDB 655, KB 708) *Qal* ԱՆԿԱՏԱՐ է: «Շունչ» ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 675) ցույց է տալիս, որ Աստված հատուկ հոգ էր տանում մարդ արարածի համար: Սակայն, մարդիկ մոլորակի վրա դեռևս ֆիզիկապես գործում էին այնպես ինչպես բոլոր կենդանիները (այսինքն՝ շնչել, ուտել, արտաթորել և վերարտադրել): Մարդիկ յուրահատուկ կերպով կարող են հաղորդակցվել Աստծո հետ, մինչդեռ մենք խառնաշփոթ՝ բարդ կերպով կապված ենք այս մոլորակի հետ: Մեր էությունն ունի երկակի կերպարանք՝ հոգևոր և ֆիզիկական:

❖ **«մարդը կենդանի հոգի դարձավ»** Մարդիկ դառնում են *nephesh* (BDB 659, KB 711-713), սակայն նույնը լինում է կենդանիների հետ (տես՝ 1:24; 2:19): Մարդկության բացառիկությունը կայանում է Աստծո կողմից անձնապես մարդուն շինելու և շունչ փչելու մեջ: Մարդիկ չունեն հոգի, նրանք հոգի են: Մենք ֆիզիկականի և հոգևոր համակցություն ենք: Մենք միշտ ունենալու ենք մարմնավոր արտահայտումներ, բացի մահվան և հարության միջև ընկած միջանկյալ ժամանակահատվածից (տես՝ 1 Թեսաղ.4:13-15):

Արդյո՞ք Ադամը պրիմիտիվ՝ հասարակ մարդ էր, թե ժամանակակից մարդու պես: Ինչպե՞ս էր նա կապված անցյալի՝ անտիկ աշխարհի այլ ընտանիների հետ: Քարե դարի մարդիկ Կարմեդոս սարի վրա ներկա են եղել 200,000 տարի առաջ: Ե՞րբ է Ադամը ստեղծվել: Արդյո՞ք նա ստեղծագործության զարգացման ավարտն էր, թե հատուկ ստեղծագործության առաջնեկը:

2:8 «պարտեզ» Այս տերմինը (BDB 171) գործածված է ցանկապատված՝ փակ այգու իմաստով: Մեպտուազինտան այն թարգմանել է պարսկերենի «դրախտ» բառով:

❖ **«Եդենում»** Եբրայերեն *Eden* բառը նշանակում է «ուրախություն» կամ «ուրախ երկիր» (BDB 727 III, KB 792 II): Ուշադրություն դարձրեք, որ պարտեզը չի կոչվում Եդեն, այլ տեղակայված է Եդենում: Ըստ երևույթին սա մի աշխարհագրական տեղանքի, վայրի անուն է: Շումերական համագոր տերմինը կարող է նշանակել «բերրի հարթավայր»: Հ. 8, 10-14-ում տրված է շատ մանրակրկիտ նկարագրություն, որի նպատակն է փոխանցել դրա ճշգրիտ տեղանքը, սակայն իրականում դրա աշխարհագրական վայրն անհայտ է: Շատ մեկնաբաններ այն տեղակայում են (1) ժամանակակից Տիգրիս և Եփրատ գետերի ակունքներում կամ (2) այս գետերը սնուցող ջրամբարի մոտ:

Սակայն տրված բոլոր գետերի անունները չեն համապատասխանում արդի աշխարհագրությանը: Երկրագնդի որքան մասն է ենթարկվել փոփոխության ջրհեղեղից հետո, հայտնի չէ: Միջագետքյան և աստվածաշնչյան պատմությունների նմանությունները տրամաբանորեն պարտեզի տեղանքը տալիս են Միջագետքի տարածքում, սակայն սա միայն շահարկում : Տես *Ո՞վ էր Ադամը* Ֆազալ Ռանա և Հյու Ռոսսի կողմից, էջ՝ 46 /*Who was Adam?* by Fazale Rana and Hugh Ross/:

2:9 «կենաց ծառը ... բարու և չարի գիտության ծառը» Այս վերջին ենթանախադասությունը հնարավոր է փակագծերում է եղել (տես՝ NET Աստվածաշունչ, էջ՝ 7): Ծննդոց 3:3 ակնարկում է, որ եղել է միայն մեկ ծառ, մինչ 3:22-ը մատնանշում է երկու ծառ: Բարու և չարի գիտության ծառը հնագույն Մերձավոր Արևելքի գրականության մեջ համագոր չունի: Այս ծառը կախարդական չէր, սակայն կարծես թե մարդկությանն առաջարկում էր իրենց Արարչից անկախ լինելու գաղափարը կամ առնվազն խոստանում էր, որ նրանք պետք է Աստծուն հավասար կամ գոնե Նրա հետ մրցակցելու նկատառումով գիտություն և հասկացողություն ձեռք բերեն: Սա է մեղքի էությունը: Նաև հնարավոր է, որ այն առաջարկեց Եվային

Աղամի վրա գերիշխելու մի ճանապարհ, որը բռնություն էր նրանց ունեցած սկզբնական փոխադարձ հավասարության հանդեպ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 2:10-14

¹⁰Եվ մի գետ էր դուրս գալիս Եդեմից պարտեզը ջրելու համար և այնտեղից բաժանվում ու չորս ճյուղ էր դառնում: ¹¹Մեկի անունը Փիսոն է, սա հոսում է Եփիլայի ամբողջ երկրով, որտեղ որ ոսկի կա... ¹²և այն երկրի ոսկին ազնիվ է. այնտեղ են սուտակը և գահանակը: ¹³Եվ երկրորդ գետի անունը Գեհոն է. սա հոսում է Քուշի ամբողջ երկրով մեկ: ¹⁴Եվ երրորդ գետի անունը Տիգրիս է. սա հոսում է դեպի Ասորեստանի արևելյան կողմը: Եվ չորրորդ գետը Եփրատն է:

2:10 «գետեր» Սրանք «վտակներ» էին (BDB 625):

2:11 «Փիսոն» Տառացի սա «քուշ» է (BDB 810): Սա հնարավոր է վերաբերում է հարավային Միջագետքում գտնվող «Փիսանու» կոչվող հնագույն ջրուղուն կամ ջրանցքին:

❖ **«հոսել /անգլ.՝ հոսել շուրջբոլորը/»** Սա տառացի նշանակում է «միջով փչել» (BDB 685, KB 738, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ):

❖ **«Եփիլա»** Տառացի սա նշանակում է «ավազոտ երկիր» (BDB 296): Սա այն չո, որ գտնվում է Եգիպտոսում, այլ կապված է 10:7-ի Քուշի հետ: Այս տերմինը կրկին գործածվում է 10:29-ում Արաբիայում մի ավազոտ երկրի համար:

2:12 «քարախունկ /գահանակ/» Հնարավոր է սա բուրավետ ծառի խեժ է (BDB 95): Այս և հաջորդ տերմինների նշանակություններն անհայտ են: Ոմանք առաջարկում են, որ սա պետք է թարգմանվեր «մարգարիտներ» (տես՝ Հելլեն Սփյուռեղ և Ջեյմս Մոֆֆաթի թարգմանությունը):

❖ **«սուտակ»** Թանկագին քարերի՝ ոսկեղենի բոլոր հնագույն տերմինները շատ անհայտ են (BDB 995): Քարը Քահանայապետի լանջապանակի վրա գտնվող տասներկու քարերից մեկն է (տես՝ Ելից 28:9): Եդեմի քարերը կիրառված են փոխաբերորեն Եզեկիել 28:13-ում:

2:13 «Գիհոն» Տառացի սա նշանակում է «պղպջակ» (BDB 161): Սա կարող է վերաբերել Միջագետքում գտնվող «Գուհանա» կոչվող մի հնագույն ջրուղու կամ ջրանցքի:

❖ **«Քուշ»** Այս տերմինը ՀԿ-ում կիրառված է երեք կերպերով. (1) այստեղ և 10:6-ում, որը վերաբերում է Տիգրիսի Հարթավայրից դեպի արևելք գտնվող Քասսաթներիին, (2) Ամբ.3:8; 2 Մնաց.14:9; 16:8; 21:16, և վերաբերում է հյուսիսային Արաբիային, և (3) սովորաբար կիրառվում է Հյուսիսային Աֆրիկայում Եթովպիայի կամ Նուբիայի վերաբերյալ (BDB 468):

2:14 «Տիգրիս» Սա տառացի «Հիդեկեղ» է (BDB 293):

❖
NASB, NKJV, NRSV, TEV **«Ասորեստան»**
NJB **«Աշուր»**
JPSOA, NIV **«Ասուր»**

Այս տերմինը (BDB 78) վերաբերում է (1) ժողովրդի (օր.՝ Թվոց 24:22, 24; Ովս.12:2; 14:4) կամ (2) երկրի (տես՝ Ծննդ.2:14; 10:11; Ովս.5:13; 7:11; 8:9; 9:3; 10:6): Այս համատեքստում #2 լավագույն տարբերակն է:

❖ **«Եփրատ»** Տառացի սա «փրատ» է: Հանախ կոչվում է «Մեծ Գետ» (տես՝ Ծննդ.15:18; 3 Թագ. 4:21,24):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 2:15-17

¹⁵Եվ Տեր Աստված առավ մարդուն ու դրեց Եդեմի պարտեզում, որ նա մշակի այն ու պահի: ¹⁶Եվ Տեր Աստված մարդուն պատվիրեց՝ ասելով. «Պարտեզի բոլոր ծառերից կարող ես ազատորեն

ուտել, ¹⁷բայց բարու ու չարի գիտության ծառից չուտե՛ս, որովհետև դրանից կերածդ օրը անպայման կմեռնես»:

2:15 «մշակի այն ու պահի» Նախքան անկումը աշխատանքը մարդկության առաջադրանքն էր և ոչ թե մեղքի հետևանքը: «Մշակել» տերմինը նշանակում է «ծառայել» (BDB 712, KB 773, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ), մինչ «պահել» տերմինը՝ «պաշտպանել» (BDB 1036, KB 1581, մեկ այլ *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ): Սա մարդու իշխանության պատասխանատվության մի մասն է կազմում: Մենք պետք է լինենք այս մոլորակի բնական ռեսուրսների տնտեսները և ոչ թե շահագործողները՝ ապականողները:

Շումերական և Բաբելոնյան առասպելներում մարդկությունը միշտ ներկայացվում է որպես աստվածներին ծառայելու համար ստեղծված արարածներ, իսկ Աստվածաշնչում Ադամն ու Եվան ստեղծվել են Աստծո պատկերով, որպեսզի իշխեն՝ տիրեն ստեղծագործության վրա: Սա միակ գործն էր, որ հանձնարարվել էր նրանց անել և այն ոչ մի կապ չուներ Աստծո կարիքների հետ:

2:16 «Պարտեզի բոլոր ծառերից կարող ես ազատորեն ուտել» Սա միևնույն արմատի *Qal* անորոշ բացարձակ ՀԱՄԱԴՐՎԱԾ ձևն է *Qal* ԱՆԿԱՏԱՐ ձևի հետ (BDB 37, KB 40), կիրառված շեշտադրության համար: Աստծո հրամանը ծանր չէր: Աստված ստուգում էր (տես՝ Ծննդ.22:1; Ելից 15:22-25; 16:4; 20:20; 2 Օր.8:2,16; 13:3; Դատ.2:22; 2 Մնաց.32:31) Իր ստեղծագործության գլուխգործոցի հավատարմությունն ու հնազանդությունը:

2:17 «բարու և չարի գիտության խառը» Սա կախարդական ծառ չէր: Այն մարդու ուղեղը խթանելու համար իր պտղի մեջ ինչ-որ գաղտնի օրգանական բաղադրիչներ չէր պարունակում: Այն հնազանդության և վստահության ստուգման համար էր:

Ուշադրություն դարձրեք, որ ծառը իր մեջ կրում էր թե՛ առավելություններ և թե՛ թուլություններ: Հրաշալի է տեսնել, թե մարդկությունը այս մոլորակի ֆիզիկական ռեսուրսներից ինչեր է կարողացել ստանալ՝ արտադրել: Մարդը զարմանահրաշ ստեղծագործություն է, թե՛ բարու և թե՛ չարի մեծ պոտենցիալով: Գիտությունը պատասխանատվություն է պահանջում:

❖ **«չար»** Սա եբրայերեն *ra* տերմինն է, որը նշանակում է «ջարդել» կամ «ավերել» (BDB 948): Այն համադրում է գործողությունն ու դրա հետևանքները (տես՝ Ռոբերտ Բ. Գրդլսթոունի *Հին Կտակարանի Հոմանիշներ*, էջ՝ 80 /Robert B. Girdlestone *The Synonyms of the Old Testament*):

❖ **«օրը»** Քանի որ Ադամն ու Եվան պտուղն ուտելուց հետո շարունակում էին ապրել, այստեղ «օր» բառի կիրառությունը վերաբերում է ինչ-որ ժամանակահատվածի և ոչ թե 24 ժամի (BDB 398):

- ❖
- NASB **«անպայման կմեռնես»**
- NKJV **«անշուշտ կմեռնես»**
- NRSV **«կմեռնես»**
- TEV **«կմեռնես նույն օրը»**
- NJB **«կդատապարտվեք մահվան»**

Սա ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ և ՀԱՄԱՆՄԱՆ ՀԱՅՑԱԿԱՆ Է՝ «մեռնել մեռնելու համար» (BDB 559, KB 562), որը շեշտադրում ցույց տալու համար եբրայերեն քերականական ձև է: Նույնը հ. 16-ում է: Այսպիսի կազմությունը կրում է մի քանի հնարավոր թարգմանություններ (տես՝ *Հին Կտակարանի Քսանվեց Թարգմանություններ* գիրքը): Ակնհայտ է, որ այստեղ մահը վերաբերում է հոգևոր մահվան (տես՝ Եփես.2:1), որի արդյունքում տեղի է ունենում ֆիզիկական մահ (տես՝ Ծննդ.5): Աստվածաշնչում մահվան երեք փուլեր են նկարագրվում. (1) հոգևոր մահ (տես՝ 2:17; 3:1-7; Եսայի 59:2; Հռոմ.5:12-21; 7:10-11; Եփես.2:1,5; Կող.2:13ա, Հակ.1:15); (2) ֆիզիկական մահ (տես՝ Ծննդ.5) և (3) հավիտենական մահ, որը կոչվում է «երկրորդ մահ» (տես՝ Հայտն.2:11; 20:6,14; 21:8): Իրական նշանակությամբ սա բոլոր երեքին էլ վերաբերվում է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 2:18-25
¹⁸Եվ Տեր Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը մենակ լինի. մի օգնական շինեմ նրան հարմար»:
¹⁹Եվ Տեր Աստված հողից շինեց դաշտի բոլոր կենդանիները և երկնքի բոլոր թռչունները և բերեց

Աղամի մոտ, որ տեսնի, թե նրանց ինչ անուններ կտա. և ինչ անունով որ Աղամը կոչեց ամեն մի կենդանի արարածի, դա էլ նրա անունը եղավ: ²⁰Եվ Աղամը բոլոր անասուններին ու երկնքի թռչուններին և դաշտի բոլոր կենդանիներին անուններ դրեց, բայց Աղամին՝ իրեն հարմար մի օգնական չգտնվեց: ²¹Եվ Տեր Աստված մի խորը քուն բերեց Աղամի վրա, և նա քնեց. և նրա կողի ոսկրերից մեկը վերցրեց և դրա տեղը մտով լցրեց. ²²և այն կողի ոսկորից, որ Տեր Աստված մարդուց վերցրել էր, մի կին շինեց և նրան բերեց մարդու մոտ: ²³Եվ Աղամն ասաց. «Սա հիմա ոսկոր է իմ ոսկորից և մարմին է իմ մարմնից. սրան Կին կկոչեն, որովհետև սա մարդուց վերցվեց: ²⁴Սրա համար մարդ կթողնի իր հորն ու մորը և կհարի իր կնոջը և մեկ մարմին կլինեն»: ²⁵Եվ նրանք երկուսով մերկ էին՝ մարդը և իր կինը, և չէին ամաչում:

2:18 «լավ չէ, որ մարդը մենակ լինի» ՀԿ-ի այս բացման գլուխներում սա յան միակ տեղն է, որտեղ կիրառվում է «լավ չէ»: Աստված մեզ ստեղծել է, որ ինչ-որ մեկի կարիքն ունենանք, նույնիսկ Նրա հետ փոխհարաբերությունից դուրս: Մարդը չէր կարող ստեղծագործության վրա իշխելու իր դերը առանց կնոջ ընկերակցության կատարել, ոչ էլ կարող էր բազմանալու և երկիրը լցնելու հրամանը կատարել:



**NASB
NKJV
NRSV
TEV
NJB**

**«նրան հարմար մի օգնական»
«նրան համապատասխան մի օգնական»
«որպես նրան ընկերակցող մի օգնական»
«մի հարմար ընկերակից նրան օգնելու համար»
«մի օգնական»**

Սա նշանակում է՝ «մեկը, որ լրացնում է» (BDB 740 I, KB 811 I): NET Աստվածաշունչն ունի «անհրաժեշտ՝ կարևոր ընկերակից» (էջ՝ 8): Այս տերմինը հաճախ գործածվում է նկարագրելու Աստծո օգնությունը (տես՝ Ելից 18:4; 2 Օր.33:4,7,29; Սաղմ.33:20; 115:9-11; 121:2; 124:8; 146:5): Նկատել տղամարդու և կնոջ միջև փոխադարձ կապը ինչպես 1:26-27-ում և 1:28-ի ՀՈԳՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ: Հնագանդությունը չեկավ նախքան Անկումը (տես՝ 3:16): Կնոջ ստեղծագործության այս յուրահատուկ պատմությունը բացառիկ է հնագույն Մերձավոր Արևելքի գրականության մեջ:

Մի հետաքրքիր բառային ուսումնասիրություն կա *Աստվածաշնչի Խոյթին Խոսքերը*, էջ՝ 92-94 /*The Hard Sayings of the Bible*, Walter Kaiser/ գրքում, որտեղ Ուոլթը Կայզերը պնդում է «մարդուն համապատասխան /կամ մարդուն հավասար/գործություն (կամ ուժ)»:

2:19 «Աստված շինեց բոլոր գազանները /դաշտի բոլոր կենդանիները/» Ոմանք այս հատվածը վերցրել են պնդելու, որ Աստված կենդանիներին շինեց Աղամի ստեղծագործությունից հետո, որի պատճառով էլ այն անվանում են երկրորդ ստեղծագործության պատմություն (տես՝ Ծննդ.2:4-25): ԲԱՅԸ (BDB 427, KB 428, *Qal ԱՆԿԱՏԱՐ*) կարող է թարգմանվել «ձևավորեց» (տես՝ NIV): Եբրայերեն ԲԱՅԵՐԻ մեջ ժամանակային տարրը համատեքստորեն է որոշվում:

Դուկ. Ռիչ Չոնսոնը՝ Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարանի Կրոնի դասախոս, այս մեկնաբանության վերանայման մեջ մի այսպիսի մեկնություն է կատարում.

«Փոխարկելի բացականչականով ԱՆԿԱՏԱՐԻ իմաստը, որ ունենք այս բայի դեպքում, պարզ ներկա ժամանակն է: Այսպես է Եբրայերենը կառուցում դեպքերի հաջորդականությունը: Այսպիսի բայերի շարքը պատմում է դեպքերն իրենց տեղի ունեցածի հերթականությամբ: Դուք այստեղ առնչվում եք թարգմանության վրա ազդող մեկնաբանների ենթադրությունների հետ: Այստեղ այն հանդիսանում է NIV Աստվածաշնչի թարգմանիչների ենթադրություն, որ նրանց ուղղորդել է սխալ թարգմանելու տվյալ համարը, ինչպես նաև 2:8-ը. «Տեր Աստված մի պարտեզ էր տնկել...»: NIV թարգմանիչները ենթադրել են, որ այս գլուխը պետք է համապատասխանի գլուխ մեկի հետ և եբրայերեն պատմություն կարդալու կանոնները խախտել են, որպեսզի հարմարեցնեն իրենց այդ ենթադրությանը: Կարևոր հարցն այն է, թե որտեղից է նրանց այդ ենթադրությունը: Այս բայը թարգմանվում է որպես պարզ անցյալ KJV, ASV, ERV, RSV, NRSV, NASB, ESV, NEB, REB և NET, Young-ի Տառացի թարգմանության, Հրեական Տպագրություն Ընկերության, TANAKH, New American Bible և New Jerusalem Bible թարգմանությունների կողմից: NIV տարբերակը ամենատար-օրինակն է»:

❖ **«տեսնի, թե նրանց ինչ անուններ կտա»** «Անուններ տալ/կոչել» ԲԱՅԸ (BDB 894, KB 1128) հհ. 19 և 20-ում երեք անգամ գործածվում է: Եբրայեցիների համար անունները շատ կարևոր էին: Սա ցույց է տալիս մարդկության իշխանությունը և տիրակալությունը կենդանիների վրա:

Արդյո՞ք սա վերաբերում է (1) աշխարհում գտնվող բոլոր բազմատեսակ կենդանիներին, (2) կենդանիների սկզբնական տեսակներին, թե (3) Միջագետքի կենդանիներին:

2:21 Այս համարը ամրագրում է տղամարդու և կնոջ՝ Ադամի և Եվայի միջև յուրահատուկ կապը (տես՝ հ. 23): Այն կարող է լինել երբայերեն դարձվածք մտերմության և ինտիմ կյանքի համար: «Կող» բառի Երբայերեն տերմինը մեկ այլ տեղ թարգմանվում է որպես «կողմ» (BDB 854, KB 1030 D):

Հետաքրքիր է, որ իր *Հին Կտակարանի Ներածություն* գրքում, էջ՝ 555-556, Ռ. Կ. Հարրիսոնը /R. K. Harrison *Introduction to the Old Testament*/ պնդում է, որ «կող» բառի երբայերեն տերմինը այստեղ նշանակում է «անձի մի առանձնահատկություն», որը կարող էր ձևավորել Ադամի հետ նմանություն, որն էլ իր հերթին ստեղծվել էր Աստծո պատկերով ու նմանությամբ, ինչը նույնպես ներառում է անձի էության առանձնահատկությունները:

Նաև հետաքրքիր է, որ «կողը» հանդիսանում է Շումերական ստեղծագործության վերաբերյալ պատմության մեջ կնոջ արարման մի մասը. *enki-ից ծագեց nin-ti-ն* (տես՝ Դ. Ջ. Ուայզմենի *Աստվածաշնչյան Հնետաբանության Լուսաբանություններ* /D. J. Wiseman's *Illustrations from Biblical Archaeology*): Այս համատեքստում կող բառի համար Շումերական տերմինը (այսինքն՝ *ti*) նաև նշանակում է «կենդանացնել»:

Եվան լինելու էր բոլոր մարդկանց մայրը (տես՝ 3:20): Պետք է հիշել, որ Մովսեսը այս գլուխները գրում է (խմբագրում կամ հավաքագրում) շատ ավելի ուշ ժամանակ: Սրանք Երբայերեն բառախաղեր են, սակայն Երբայերենը այն օրիգինալ բուն լեզուն չէր, որ գործածվում էր:

2:22 «**նրան բերեց մարդու մոտ**» Ռաբբիներն ասում են, որ Աստված գործեց որպես հարսնատու:

2:23 «**Կին ... Մարդ/Տղամարդ**» Այս համարը պոետիկ է: Տառացի սա *Ishah* (BDB 35)... *ish* (BDB 35) է, ակնհայտ հանգերով խաղ (հատկապես՝ «նրա՝ կնոջ անունը *Ishah*»): Ադամը նաև Եվային անուն է տալիս (կամ առնվազն նկարագրում է իր հետ Եվայի նմանությունները): Ստուգաբանությունն անհայտ է: Սովորաբար *adam* վերաբերում է մարդուն և *ish* բառը հատուկ անհատի:

2:24 «**կթողնի իր հորն ու մորը**» Այս ԲԱՅԸ (BDB 736, KB 806) *Qal* ԱՆԿԱՏԱՐ է, հավանաբար կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Ընտանիքի կարևորությունը պատճառ է, որ այս մեկնաբանությունը ևս մեկ անգամ կարդացվի այս վաղ շարժանի պատմության մեջ: Մովսեսն իր օրերի համար արտացոլումն էր այս երևույթի և ընտանիքի կարևորությունը որպես մեկ միավոր մեծ՝ ընդարձակ ընտանիքի մեջ, մերօրյա իրականություն է: Ամուսնությունը առաջնային է խնամիական կապերից էլ:

❖	
NASB	«հարել»
NKJV	«միացած»
NRSV	«կառչում է»
TEV	«միանում է»
NJB	«կցվում է»

Հավատարմության, նույնիսկ մտերմության այս Երբայերեն դարձվածքը (BDB 179, KB 209, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Հռոմ. 1:14; Մատթ. 19:5-6; Եփես. 5:31):

❖ «**մեկ մարմին**» Սա ցույց է տալիս ամուսնացած զույգի փոխհարաբերության առաջնայնությունը և կատարյալ միությունը: «Մեկ» բառի ԵԶԱԿԻ ձևը խոսում է երկու անձերի միավորման մասին:

2:25 «**երկուսով մերկ էին ... և չէին ամաչում**» Սա պետք է լիներ գլուխ 3-ի հետ: Այս արտահայտության ակնարկն այն է, որ Ադամը ոչինչ չունեիր իրենից, իր կողակցից, իր Աստծուց թաքցնելու (BDB 101, KB 161, *Hithpolel* ԱՆԿԱՏԱՐ): Հետևաբար սա անմեղության մի դարձվածք է: Ամեն ինչ շուտով փոխվելու էր:

Այն փաստը, որ կինը և տղամարդը մերկ էին (BDB 736, ԱԾԱԿԱՆ) ակնարկում է մի շատ վերահսկելի միջավայր: Սա կարող է նաև արտահայտել այն տեսակետը, որ Եդենի Պարտեզը պաշտպանության ներքո էր և հետագայում, հատուկ ստեղծագործություն էր և տարբերվում էր մոլորակի մնացած վայրերից (այսինքն՝ զարգացող ստեղծագործություն):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտոդոսիան մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ծննդոց 1-ում արդյո՞ք կա տարբերություն Աստծո ստեղծածի և այն բաների միջև, որոնք Նա վերարտադրեց ստեղծածներից: Եթե այդպես է, ի՞նչ է դա ակնարկում:
2. Ինչպե՞ս է մարդը նման կենդանիներին: Ինչպե՞ս է մարդը նման Աստծուն:
3. Արդյո՞ք կանայք Աստծո պատկերով են ստեղծված, թե միայն Ադամի պատկերով:
4. Ի՞նչ է ակնարկում այն խոսքը, որ մարդը պետք է հնազանդեցնի և իշխի արարչագործությանը:
5. Ինչպե՞ս է «Աճեցե՛ք և բազմացե՛ք» արտահայտությունը կապված բնակչության տարածման հետ:
6. Արդյո՞ք Աստծո կամքն է, որ մարդը լինի բուսակեր:
7. Համաձայն Ծննդոց 2:2,3-ի արդյո՞ք սխալ է, որ մարդն Աստծուն շաբաթ օրվա փոխարեն կիրակի օրը երկրպագի:
8. Ինչո՞ւ են գլուխ 1 և 2 այսքան նման, մինչդեռ տարբեր:
9. Ինչո՞ւ է Ադամ բառը թարգմանվում թե՛ որպես հատուկ և թե՛ որպես հասարակ անուն:
10. Ինչո՞ւ է Եդեմի աշխարհագրական վայրը այսքան մանրակրկիտ նկարագրվում:
11. Անվանեք մահվան երեք աստվածաբանական տեսակները:
12. Ի՞նչ է ասում համար 18-ը մեր մասին որպես սեռական էակների:
13. Արդյո՞ք «օգնական» բառը ակնարկում է փոխադարձ ընկերակցություն:

ԾՆՆԴՈՑ 3:1-24

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Կայենն ու Աբելը	Փորձությունը և Մարդու Անկումը	Փորձության պատմությունը	Մարդու Անհնազանդությունը	Անկումը
3:1-7	3:1-8	3:1-7	3:1 3:2-3 3:4-5 3:6-7	3:1-7
3:8-19	3:9-19	3:8-19	3:8-9 3:10 3:11 3:12 3:13ա 3:13բ	3:8-13
(14-16)	(14-16)	(14-16)	Աստված Դատավճիռ է կայացնում	
(17b-19)	(17b-19)	(17b-19)	3:14-15	3:14-16 (14-16)
3:20-21	3:20-21	3:20-21	3:20-21	3:17-19 (17-19) 3:20-24
3:22-24		3:22-24	Ադամն ու Եվան վտարվում են Եդեմի Պարտեզից	
		3:22-24	3:22-24	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԸ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրով մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Ծննդոց 3-ը մեր աշխարհում առկա տառապանքն ու չարի հիմնախնդիրը հասկանալու համար առանցքային է: Չարմանալի է, որ ռաբբիներն այս տեքստը չեն գործածում չարի, մեղքի և մարդու ապստամբության շուրջ իրենց քննարկումների մեջ:
- Բ. Մարդուն սիրող, նրա համար հոգացող, նրա հետ հաղորդակցվող Աստծո դեմ մարդկության հոժարական ապստամբությունը ազդեցին ոչ միայն նրանց կրոնական կյանքի վրա, այլ նաև հենց իրենց անձի, ընտանեկան կյանքի և աշխարհի վրա:
Ուշադրություն դարձրեք այն մեծ գնին, որ Աստված անձնապես վճարեց, որպեսզի մարդկությունը գործադրի իր ազատությունը: Մարդու ապստամբության պատճառով Աստծո ուրախությունը և ստեղծագործության համար/հետ Նրա սկզբնական նպատակը արմատապես ազդեցության ենթարկվեցին (բայց ոչ մշտապես): Եթե ընդունենք Աստծո բարությունն ու Նրա սիրառատ հոգածությունը, մարդկության ապստամբությունը (և հավանաբար հրեշտակների) դիտարկվում է որպես անարգանք և եսակենտրոնություն: Աստծո շարունակական սերը և փրկության խոստումը (տես՝ 3:15) նաև դառնում է ավելի արմատական հաշվի առնելով Նրա գթառատ բնավորությունը:
- Գ. Չնայած որ այս գլուխն ունի ընդհանուր մոտիվներ այլ հնագույն Մերձավոր Արևելյան տեքստերի հետ, դրա ներկայացման ձևը մոնոթեիստիկ է և ոչ թե դուալիստիկ:

ՄԵՂՔԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Աստվածաշնչյան նյութը
1. Իմ աստվածաշնչյան ենթադրությունն է, որ Սատանայի ստեղծագործական նպատակն է եղել (1) Աստվածանանաչ արարածներին առաջարկել մի տարբերակ, որը նրանց կտանի անկախության և ապա դատապարտության, Հոր 1-2; Չաք. 3 կամ (2) Ծննդոց 3-ը կանխավ ենթադրում է Աստծո ստեղծագործության մեջ հրեշտակների ապստամբություն կամ առնվազն հրեշտակների խմբի կողմից մարդկության մոտ Աստծո մասին ակնհայտ գրպարտություն:
 2. Մարդկության կյանքը խաթարվեց՝ ազդեցության ենթարկվեց փորձության միջոցով
 3. Աստվածաշունչը մասնավորապես չի քննարկում «չարի» ծագումը կամ նպատակը:
 - ա. Հետագայի մի քանի հրեական գրություններ պնդում են, որ մեղքը սկիզբ է առել Ծննդ.3-ից (Սատանայի մեջ և ապա՝ մարդկության)
 - բ. Այլ Հրեական միջաստվածաշնչյան գրություններ պնդում են, որ մեղքը սկսել է Ծննդոց 6-ից («Աստծո որդիների» տեքստից)
 - գ. Հիսուսի օրերից հետո սուտ վարդապետները Հուդայականությունը հունական մտածելակերպի հետ միավորեցին և պնդում էին, որ չարը ներհատուկ էր ֆիզիկական մատերիային (այսինքն՝ Հույն գնոստիկ մտածելակերպը, տես՝ Կող.; Եփես.; 1 Տիմ.; 2 Տիմ. և Տիտոս գրքերը):
 4. Պարզ է, որ չարը նպատակ ունի, այլապես այն գոյություն չէր ունենա: Չնայած դրան գոյություն ունի ակնհայտ չարի և Սատանայի գործելակերպի ուժգնացում ՀԿ-ից մինչև ՆԿ-յան ժամանակաշրջան (տես՝ ՀԿ-ի *Աստվածաբանությունը* Ա. Բ. Դեյվիդսոնի կողմից /*The Theology of the OT* by A. B. Davidson, pp. 300-306/): ՀԿ-ում Սատանան Աստծո թշնամին չէ (հավանաբար բացի այս գլխից), այլ միշտ եղել է մարդկության թշնամին: Ռաբբիներն ասում են, որ չարը նախանձում էր մարդկությանը նրանց հանդեպ Աստծո ցուցաբերած սիրո և հոգատարության համար:
 5. Աղամի մեղքը ազդեցություն թողեց ամբողջ ստեղծագործության վրա (այսինքն՝ այն ինչ Եբրայերենում անվանում են փոխկապակցվածության հասկացողություն, տես՝ Ծննդ.3:14-24; Հռոմ.5:12-21; 8:18-23):
- Բ. Պատմական-աստվածաբանական զարգացումը (վերցված Համակարգված Աստվածաբանություն Լ. Բերխովի կողմից /*Systematic Theology* by L. Berkhof/):

1. Ռաբբիները չեն ընդունում առաջին մեղք ասվածը և նախընտրում են երկու մտադրության համար (բարին ընդդեմ չարի): ՀԿ-ը չի քննարկում Ծննդոց 3-ն ամբողջությամբ (ոչ էլ ռաբբիները):
2. Իրեննուսը (մ. թ. 130 – 202թթ.) եկեղեցու առաջին հայրերից էր, որ քննարկեց Ադամի մեղքը և դրա հետևանքները: Ադամի մեղքի պատճառով մարդկության անկման այս տեսակետը դարձավ գերակշիռ Արևմտյան Եկեղեցում (Օգոստինոս): Ըստ երևույթին այն կիրառվում էր գրոստիցիզմի դեմ պայքարելու համար, որը պնդում էր, որ չարի խնդիրը հենց մատերիայի մեջ է:
3. Օրիգանուսը (մ.թ. 182-251) հավաստիացնում էր, որ ամեն մարդ անցյալ կյանքում (Պլատոնական) հոժարակամ մեղք է գործել:
4. Երրորդ և չորրորդ դարերի Հույն հայրերը (Արևելյան Եկեղեցին) այլևս չէին շեշտադրում Ադամի դերը՝ մասնակցությունը, մեր աշխարհում տիրող չարի հիմնահարցում: Սա կատարելագործվելով վերածվեց Պելագիանիզմի (մի անգլիացի վանականի անունով), որը հերքում էր ընդհանրապես այս ամեն ինչի միջև եղած կապը:
5. Լատինացի հայրերը (այսինքն՝ արևմտյան եկեղեցին), հետևելով Օգոստինոսին, ավելի էին ընդգծում Ադամի դերը մեր աշխարհում առկա չարի, մեղքի և տառապանքի հիմնախնդրում:
6. Բողոքական Բարեկարգման ընթացքում գլխավոր բարեկարգիչները հետևեցին Օգոստինոսին, մինչ Արմենիուսը դոգմատիկ Կալվինիզմի հանդեպ ձևավորեց սեմի-Պելագիան արձագանք՝ պատասխան:
7. Փիլիսոփաներն ու աստվածաբանները պնդում էին մեղքի մասին մի քանի տեսություններ.
 - ա. Կանոնը՝ ինչ-որ անհայտ, անբացատրելի բան գերզգայուն սֆերայում
 - բ. Լիբնից՝ նյութական տիեզերքին ներհատուկ սահմանափակումների պատճառով
 - գ. Շելյոմարչեր՝ մարդու զգայուն բնավորության պատճառով
 - դ. Ռիտչլ՝ մարդու տգիտության պատճառով
 - ե. Բարտ՝ նախասահմանության առեղծվածը բովանդակող
 - զ. Ուայթհեդ՝ մեղքը ներհատուկ է այս աշխարհի համակարգին: Այն գործում է թե՛ Աստծուն և թե՛ մարդուն կատարելագործելու համար
8. Աստվածաշնչի բուն էությունը մեղքից ու չարից մարդկության փրկագնումն է, որը մարդասեր Աստվածն Ինքն է կերտել Քրիստոսի միջոցով: Մեղքի ծագումը երբեք չի քննարկվում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԿՄԱՆ ՇՈՒԲՁ ԵՎ-ՅԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ
SPECIAL TOPIC: NEW TESTAMENT THEOLOGICAL DEVELOPMENT ON THE FALL

1. Ինչպես որ հստակ արտահայտված է Հռոմ.5:12-21-ում Պողոսի քննարկման մեջ, Անկումն ազդեցություն թողեց ամբողջ մարդկության կյանքի վրա:

Հռոմեացիների 5:12-21-ը մի քննարկում է Հիսուսի մասին, որպես երկրորդ Ադամ (տես՝ 1 Կորնթ.15:21-22, 45-49; Փիլ.2:6-8): Այն հատուկ շեշտադրում է անհատական մեղքի և հավաքական հանցանքի աստվածաբանական գաղափարը: Ադամի մեջ մարդկության (և ստեղծագործության) անկման Պողոսի տված զարգացումները բացառիկ են և տարբերվում են ռաբբիներից, մինչդեռ հավաքականի շուրջ նրա տեսակետը շատ ավելի ընդհանրություններ ունի ռաբբիական ուսմունքի հետ: Այն ցույց էր տալիս ներշնչանքի ներքո Պողոսի կարողությունը կիրառելու կամ լրացնելու այն ճշմարտությունները, որոնք սովորել էր Երուսաղեմում Գամաղիելի ձեռքի տակ ուսանելիս (տես՝ Գործք 22:3):

Ծննդոց 3-ից սկզբնական մեղքի վարդապետությունը ձևավորվել է Օգոստինոսի և Կալվինի կողմից: Այն պնդում է, որ մարդիկ ծնվում են մեղավոր: Հաճախ Սաղմ.51:5; 58:3 և Հոբ 15:14; 25:4 կիրառվում են որպես ՀԿ տեքստային ապացույց: Այն փոխադարձ աստվածաբանական դիրքորոշումը, որ մարդիկ բարոյապես և հոգեպես պատասխանատու են իրենց ընտրությունների՝ որոշումների և ճակատագրի համար, առաջինը ձևավորվեց ռաբբիների կողմից և ապա եկեղեցում Պելագիոսի և Արմենիոսի կողմից: Որոշ ապացույցներ կան իրենց տեսակետի շուրջ 2 Օր.1:39; Ես.7:15 և Հովնան 4:11; Հովհ.9:41; 15:22,24; Գործք 17:30; Հռոմ.4:15-ում: Այս աստվածաբանական դիրքորոշման էությունը կլինի այն, որ երեխաները անմեղ են մինչև իրենց բարոյական պատասխանատվության տարիքը (ըստ ռաբբիների տղաների համար 13 տարեկան հասակն է,

իսկ աղջիկների համար՝ 12 տարեկանը): Գոյություն ունի միջանկյալ դիրքորոշում, որտեղ թե՛ բնածին մեղքի չար հակվածությունը և թե՛ բարոյական պատասխանատվության տարիքը չիշտ են: Չարը ոչ միայն հավաքական է, այլ անձի չարության և մեղքի մեջ ձևավորումը (առանց Աստծո կյանքը): Մարդկության ամբարշտությունը չէ խնդիրը (տես՝ Ծննդ.6:5,11-12, 13; Հռոմ.3:9-18,23), այլ երբը, ծննդյամբ, թե՛ հետագա կյանքի ընթացքում:

2. «Նոր երկինք և ներ երկիր»-ը դառնում է ՆԿ-յան էսկատոլոգիական թեման.

«Նոր երկինք և նոր երկիր»: Հունարեն այս «նոր» տերմինը՝ *kainos*, շեշտադրում է որակ և ոչ թե ժամանակագրություն (տես՝ 2:17; 3:12; 5:9; 14:3; 21:1,2,5): Վերստեղծված երկիրը ՀԿ-յան թեմա էր (տես՝ Ես.11:6-9; 65:17; 66:22; Հռոմ.8:18-25; 2 Պետ.3:10,12): Բոլոր հավատացյալները այս նոր Թագավորության քաղաքացիներն են (տես՝ Փիլ.3:20; Եփես.2:19; Եբր.12:23) և կազմում են այս նոր ստեղծագործության մի մասը (տես՝ 2 Կորնթ.5:17; Գաղ.6:15; Եփես.4:24): Չուզահեռ աստվածաբանական հասկացությունը կլինի Եբր.11:10,16; 12:22; 13:14-ի «Աստծո քաղաքը, որ մարդու ձեռագործ չէ»:

Նոր ստեղծագործությունը լինելու է սկզբնական ստեղծագործության նման: Երկինքը լինելու է Եդեմի վերականգնված Պարտեզը: Աստված, մարդիկ, կենդանիները և ամբողջ բնության արարածները հաղորդակցության և կրկին ցնծության մեջ են լինելու: Աստվածաշունչը սկսում է մի պարտեզում Աստծո, մարդկանց և կենդանիների կատարյալ փոխհարաբերությամբ (տես՝ Ծննդոց 1-2): Աստվածաշունչը ավարտվում է պարտեզի միջավայրում Աստծո և մարդկանց փոխհարաբերությամբ (տես՝ Հայտն.21-22) և կենդանիների վերաբերյալ մարգարեական ենթատեքստով (տես՝ Ես.11:6-8; 65:25): Հավատացյալները չեն գնալու երկինք. նոր Երուսաղեմն է երկնքից վար իջնելու (տես՝ Հայտն.21:2) և հանգչելու վերաստեղծված և մաքրված երկրի վրա: Աստված և մարդիկ դարձյալ միասին են լինելու (տես՝ Ծննդ.3:15; Ես.7:14՝ 8:8,10; Հայտն.21:3):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 3:1-7

¹Արդ, օձն ավելի խորամանկ էր, քան դաշտի բոլոր գազանները, որ Տեր Աստվածն ստեղծել էր. և կնոջն ասաց. «Հիրավի՞ Աստված ասաց, որ Պարտեզի ոչ մի ծառից չուտեք»: ²Եվ կինն ասաց օձին. «Պարտեզի ծառերի պտղից կարող ենք ուտել. ³բայց այն ծառի պտղից, որ պարտեզի մեջտեղում է, Աստված ասաց. «Մի՛ կերեք դրանից, և դրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»: ⁴Եվ օձն ասաց կնոջը. «Ամենևին էլ չեք մեռնի: ⁵Այլ Աստված գիտի, որ այն օրը, որ դրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և Աստծո պես կլինեք՝ բարին ու չարն իմացող»: ⁶Եվ երբ կինը տեսավ, որ ծառը լավն էր որպես ուտելիք և թե հաճելի էր աչքերին, և ծառը ցանկալի է իմաստուն դարձնելու համար, առավ նրա պտղից ու կերավ, և իր հետ իր ամուսնուն էլ տվեց, և նա էլ կերավ: ⁷Եվ նրանց երկուսի աչքերը բացվեցին, և հասկացան, որ մերկ են. և թզենու տերևները կարեցին ու իրենց համար ծածկոցներ շինեցին:

3:1 «Արդ» Սա ժամանակին վերաբերող բառ չէ, այլ պարզապես գրական տեխնիկա ներկայացնելու ստեղծագործության դրամայում մի նոր փուլ: Մենք չգիտենք, թե նախքան այս դեպքը կպատահեր ինչքան ժամանակ էին Ադամն ու Աստված միասին կամ ինչքան ժամանակ էին Ադամը, Եվան ու Աստված միասին:

❖ **«օձը»** Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման: Գիլգամեշի Էպիկականում նույնպես օձը թշնամի է (տես՝ 11:287-289), որը հափշտակում է այն բույսը, որ հավիտենական կյանք է տալիս:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՉԸ SPECIAL TOPIC: THE SERPENT

Ա. «Օձ» տերմինը *Nachash* (BDB 638) է: Այն ունի մի քանի հնարավոր ստուգաբանություն.

1. *Kal Stem* – «Ֆշշացնել»
2. *Piel Stem* – «շշնջալ» ինչպես անում են կախարհության կամ հմայության ժամանակ
3. 4:22-ից – «փայլել»՝ հավանաբար կապված «բրոնզե» տերմինի հետ

4. Արաբերեն «սողալ» արմատից

Բ. Այստեղ ունենք հստակ հատված, որը նկարագրում է ինչ-որ մի օձ կամ անձնավորված էություն:

Գ. Օձի տառացիությունը պաշտպանվում է հետևյալ կերպ.

1. Այն թվարկված է պարզապես որպես դաշտի գազաններից մեկը, որին Աստված էր ստեղծել:
2. 3:14-ում տրված է նրա պատիժը որպես տառացի կենդանու:
3. Այն հատուկ կերպով ակնարկվում է ՆԿ-ում՝ 2 Կորնթ. 11:3 և 1 Տիմ. 2:13-14:

Դ. Օձը մասնավորապես անձնավորվում է որպես Սատանան հետևյալ գրքերում՝

1. Միջ-կտակարանային «Իմաստասիրություն» գրքում՝ 2:23-24. «Քանի որ Աստված մարդուն ստեղծել է անմահ լինելու... այնուամենայնիվ, Սատանայի նախանձի պառնառով մահն աշխարհ եկավ»:
2. Իրենեոս (մոտ մ. թ. 130-202):
3. Հայտնություն 12:9; 20:2
4. Այս անձնավորումը բացակայում է հենց ՀԿ-ից, քանի որ չի քննարկում Ծննդոց 3-ի ոչ մի հատվածը: Այն նույնիսկ չի նշվում կամ մեկնաբանվում ՀԿ-յան որևէ գրքում:

Ե. Ինչո՞ւ հենց Սատանայի անունը չի տրվում: Այս տեքստի շեշտադրումը մարդկության պատասխանատվության վրա է, և ոչ թե գերբնական փորձության: Հռոմեացիների 1-3-ում որտեղ մարդու մեղսալիությունն է ներկայացվում և 4-8 գլուխներում, որտեղ նշվում են դրա հետևանքները, Սատանան երբեք չի նշվում:

❖ **«խորամանկ»** Գոյություն ունեն այս տերմինի (BDB 791, KB 886) հետ կապված երկու հավանական բառախաղ (այս տերմինը 2:25-ի «մերկ» բառին շատ նման է հնչում). (1) «խորամանկ» կամ «իմաստուն» և (2) «խորագետ» (օր.՝ Առակ. 1:4; 8:5,12; 12:16,23; 13:16; 14:8,15; 22:3; 27:12): Կարծես թե սա այնքան էլ բացասական տերմին չէ, որ կիրառվել է օձի համար, այլ պարզապես նրա բնավորության ճանաչողության համար է (տես՝ Մատթ. 10:16): Հավանաբար այս իսկ պատճառով է չարը ընտրել մարմնավորվել այս գազանի տեսքով:

❖ **«քան դաշտի բոլոր գազանները»** Սա ցույց է տալիս, որ օձը բազմաթիվ արարված կենդանիներից մեկն էր:

❖ **«Տեր Աստվածը»** Առաջին «Տեր» տերմինը Աստծո ուխտի անունն է՝ ՅԱՀՎԵ, եբրայերենի «լինել» բայից (տես՝ Ելից 3:14): Երկրորդ «Աստված» տերմինը Եբրայերենի *Elohim* տերմինն է, որը Մերձավոր Արևելքում ընդհանուր Աստված՝ *El* բառի համար օգտագործվող տերմինի հոգնակի թիվն է: Ռաբբիներն ասում են, որ ՅԱՀՎԵ անունը Աստծո ուխտի գթառատության՝ ողորմության համար է կիրառվում, մինչ *Էլոհիմը*՝ Աստծո արարիչ լինելու համար: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները 2:4-ում:

❖ **«և /նա/ ասաց»** Շատ ենթադրություններ են եղել արիեստական օձի հետ կապված (ուշադրություն դարձրեք անձնական դերանունին): Մենք չգիտենք նախքան անկումը ինչպես է եղել մարդկանց և կենդանիների միջև կապը, չնայած պետք է որ ընկերաբար լիներ: Մակայն ենթադրում են, որ խոսքը մարդկության մեջ Աստծո պատկերի մի մասն է կազմում և հիմա էլ է, հետևաբար կենդանիների համար նորմալ երևույթ չէ: Այս նույն հաղորդակցությունը վերականգնվելու է էսկատոլոգիական միջավայրում ապագայում (տես՝ Ես. 11:6-11): Ես ենթադրում են, որ օձին մարմնավորում էր Սատանան և հետևաբար դա նրա ձայնն էր լսվում: Աստվածաբանորեն զարմանալին այն է, որ Եվան չէր զարմացել:

❖ **«կինը»** Մեկնաբանների շրջանում շատ ենթադրություններ են եղել այն մասին, թե ինչու էր Եվան առանց Ադամի, չնայած որ Սատանայի կողմից կիրառված բայերը ՀՈԳՆԱԿԻ են: 3:6-ում այն վերաբերում է Ադամին, որը հնարավոր է երկխոսության ընթացքում միանում է նրանց: Ոմանք պնդում են, որ այն սիմվոլիկ է նրա /կնոջ/ ինքնզնահատական փնտրելուն: Ուրիշները հավատում են, որ Սատանան փորձեց նրան, քանի որ նա ուղղակիորեն չէր լսել Աստծո կարգադրությունները (տես՝ 2:16-17): Այս բոլոր ենթադրություններ են:

❖ «Հիրավի՞ Աստված ասաց» Ռաբբիներն ասում են, որ Սատանան չէր կարող կիրառել ՅԱՀՎԵ տերմինը, քանի որ նա ծանոթ չէր Աստծո նորմությանը: Սակայն կարծես թե Աստվածաշնչում Սատանայի անձի մեջ առկա է ամբարշտության սաստկացումը (տես՝ Հին Կտակարանի Աստվածաբանությունը Ա. Բ. Դեյվիդսոնի կողմից, էջ՝ 300-306 /*The Theology of the Old Testament by A. B. Davidson*/):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐ
SPECIAL TOPIC: PERSONAL EVIL

Այս թեման բարդ համարելու համար կան մի քանի պատճառներ.

1. ՀԿ-ը հայտնում է ոչ թե բարու դիտարկում, այլ ՅԱՀՎԵի մի ծառայի, որը մարդկությանը առաջարկում է երկրնորանք, ինչպես նաև մեղադրում է մարդկությանը անարդարության մեջ: Կա միայն մեկ Աստված (մոնոթեիզմ՝ միաստվածություն), մեկ իշխանություն, ՀԿ-ում միայն մեկ պատճառ՝ ՅԱՀՎԵն:
2. Աստծո դիտարկում թշնամու հասկացությունը ձևավորվել է միջաստվածաշնչյան (անկանոն) գրականության մեջ՝ պարսկական դուալիստիկ կրոնի (*Չրադաշտակախություն*) ազդեցության ներքո: Սա էլ իր հերթին մեծապես ազդեցություն է թողել ռաբբիական Հուդայականության և Էսսենների համայնքի վրա (այսինքն՝ Մեռյալ Ծովի Գալարները):
3. ՆԿ-ը զարգացնում է ՀԿ-ի թեմաները ամբողջական, սակայն ընտրված կատեգորիաներում:
 Եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ըստ աստվածաշնչյան պատկերացումների՝ տեսանկյան, (յուրաքանչյուր գիրքը կամ հեղինակը կամ ժանրը առանձին ուսումնասիրելով և ուրվագծելով), ապա ի հայտ են գալիս չարի վերաբերյալ տարբեր տեսանկյուններ:

Սակայն եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ոչ սուրբգրային մոտեցմամբ կամ աշխարհի ու արևելյան կրոնների հավելյալ աստվածաշնչյան մոտեցմամբ, ապա ՆԿ-ի հիմնական զարգացումները այս թեմայի շուրջ ստվերվում են պարսկական դուալիզմով և Հունա-հռոմեական սպիրիտիզմով:

Եթե ինչ-որ մեկը գիտակցաբար վստահում է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը, ապա ՆԿ-ի զարգացումները պետք է դիտարկվեն որպես պրոգրեսիվ՝ զարգացող հայտնություն: Քրիստոնյաները պետք է գուշանան հրեական ժողովրդական բանահյուսությունից՝ ֆոլկլորից կամ արևմտյան գրականությունից (Գանթե, Միլթոն), որպեսզի դրանք չխառնվեն այս հասկացության զարգացմանը: Իհարկե որոշակի առեղծված և անորոշություն կա այս բնագավառում հայտնության մեջ: Աստված ընտրել է չհայտնել չարի հետ կապված ամեն ինչ՝ դրա ծագումը, զարգացումը, նպատակը, սակայն հայտնել է դրա պարտությունը:

ՀԿ-ում «աստանա» կամ «գրպարտող» (BDB 966) տերմինը կարող է առնչվել երեք տարբեր խմբերի հետ:

1. մարդ գրպարտողներ՝ մեղադրողներ (տես՝ 1 Թագ.29:4; 2 Թագ.19:22; 3 Թագ.11:14,20,29; Սաղմ.109:6)
2. հրեշտակ գրպարտողներ (տես՝ Թվոց 22:22-23; Հոր 1-2; Չաք.3:1)
3. դիվական գրպարտողներ (տես՝ 1 Մնաց.21:1; 3 Թագ.22:21; Չաք.13:2)

Միայն հետագայում միջաստվածաշնչյան ժամանակաշրջանում է, որ Ծննդոց 3-ի օձը նույնացվում է Սատանայի հետ (տես՝ *Իմաստասիրության Գիրք* 2:23-24; 2 *Ենովք* 31:3), և նույնիսկ հետագայում սա դառնում է ռաբբիների կողմից նախընտրելի տարբերակ (տես՝ *Սոթ.*9բ և *Մին.*29): Ծննդոց 6-ի „Աստծո որդիները,, դառնում են հրեշտակներ *1 Ենովք* 54:6-ում: Ես սա նշում եմ ոչ թե հաստատելու դրա աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու դրա զարգացումը: ՆԿ-ում այս ՀԿ-յան գործերը բնորոշ էին հրեշտակներին, որոնք մարմնավորում էին չարին (տես՝ 2 Կորնթ.11:3; Հայտն.12:9):

Մարմնավորված չարի ծագումը՝ սկիզբը ՀԿ-ից դժվար է կամ անհնար է (կախված ձեր տեսակետից) սահմանել: Սրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ միաստվածությունն է (տես՝ 3 Թագ.22:20-22; Ժող.7:14; Ես.45:7; Ամովս 3:6): Ամեն ինչի պատճառահետևանքային դրսևորումները վերագրված են ՅԱՀՎԵին՝ ցույց տալու Նրա յուրահատկությունը և առաջնահերթությունը (տես՝ Ես.43:11; 44:6,8,24; 45:5-6,14,18,21,22):

Տեղեկությունների համար հասանելի աղբյուրներն են՝ (1) Հոր 1-2, որտեղ Սատանան „Աստծո որդիներից,, մեկն է (այսինքն՝ հրեշտակներից) կամ (2) Ես.14 և Եզեկ.28, որտեղ մերձարևելյան հպարտ թագավորները (Բաբելոնի և Տիվրոսի) կիրառվում են յուսաբանելու Սատանայի հպարտությունը (տես՝

1 Տիմ.3:6): Այս մոտեցման մեջ ինպես երևում է ներգրավված են զգացմունքներ: Եզեկիելը կիրառում է Եդեմի Պարտեզի խորհրդապատկերները ոչ միայն Տիվրոսի թագավորի համար որպես Սատանան (տես՝ Եզեկ.28:12-16), այլ նաև Եզիպտոսի թագավորի համար՝ որպես Բարու և Չարի Գիտության ծառը (Եզեկիել 31): Սակայն Եսայի 14՝ մասնավորապես 12-14 համարները, կարծես թե նկարագրում է հպարտության պատճառով հրեշտակների մի ապստամբություն: Եթե Աստված ուզեր մեզ հայտնել Սատանայի ծագումն ու նրա բնավորությունը, սա շատ անսովոր կերպ և տեղ կլիներ դրա համար: Մենք պետք է զգուշանանք սիստեմատիկ աստվածաբանության միտումից, որը վերցնում է փոքր, երկիմաստ՝ կասկածելի հատվածներ տարբեր կտակարաններից, հեղինակներից, գրքերից և ժանրերից և դրանք համադրում որպես մեկ աստվածային գլուխկոտրուկի մասնիկներ:

Ես համամիտ եմ Ալբերտ Էդերշեյմի հետ (Albert Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah*, Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները, հատ.2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական Հուդայականությունը մեծապես ազդվել է պարսկական դուալիզմի և դիվական խորհրդածումների կողմից: Այս բնագավառում ռաբբիները չեն կարող հանդիսանալ ճշմարտության լավագույն աղբյուրը: Հիսուսը արմատապես առանձնանում է՝ տարբերվում է, այս բնագավառում Մինագոգների մատուցած ուսմունքից: Ես կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ հրեշտակապետ թշնամու այս հասկացությունը զարգացել է Իրանական դուալիզմի երկու բարձրագույն աստվածներից՝ Ահկիմանից և Օրմազայից (Ahkiman, Ormazda), և ապա ռաբբիների կողմից կատարելագործվել որպես աստվածաշնչյան ՅԱՀՎԵԻ և Սատանայի դուալիզմի:

Անկասկած ՆԿ-ում առկա է աճող՝ առաջադիմական հայտնություն չարի մարմնավորման վերաբերյալ, բայց ոչ այնքան մանրակրկիտ ինչպես ռաբբիների մոտ: Այս տարբերության լավ օրինակներից է «երկնքում պատերազմը»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, սակայն դրանց մանրամասները տրված չեն: Անգամ այն ինչ տրված է, քողարկված է ապոկալիպտիկ ժանրով (տես՝ Հայտն.12:4,7, 12-13): Չնայած որ Սատանան պարտության մատնվեց Հիսուսի կողմից և զգվեց երկիր, նա դեռևս գործում է որպես ՅԱՀՎԵԻ ծառա (տես՝ Մատթ.4:1; Դուկ.22:31-32; 1 Կորն.5:5; 1 Տիմ.1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրությունը այս հարցում: Փորձության ու չարիքի անձնական գործությունը առկա է, բայց ամեն դեպքում կա միայն մեկ Աստված և միևնույն է մենք ենք պատասխանատու մեր որոշումների՝ ընտրությունների համար: Գոյություն ունի հոգևոր պայքար, թե՛ փրկությունից առաջ և թե՛ հետո: Հաղթություն կարելի է միայն ունենալ և մնալ դրա մեջ Երրորդության Աստծո օգնությամբ: Չարը արդեն պարտված է և բնաջնջվելու է:

❖ «**Պարտեզի ոչ մի ծառից չուտեք**» Եբրայերեն այս արտահայտությունը շատ յուրահատուկ է, սակայն կարծես թե այն կապված է հաստատուելու հետ՝ հավաստիացման, և ոչ թե հարցի: Օձը պարզապես կնոջ հետ երկխոսություն է սկսում կապված Աստծո կողմից պարտեզի մեջտեղում գտնվող ծառից պտղից ուտելու արգելքի մասին խոսելով:

3:2 Եվան ասում է Աստծո հոգածության մասին, որ սնունդի համար տվել էր պարտեզի մյուս բոլոր ծառերը (տես՝ 2:16): Սակայն օձը սա մի կողմ է դնում, կենտրոնանալով Աստծո արգելքի վրա՝ բարու և չարի գիտության ծառի:

3:3 «բայց այն ծառի պտղից, որ պարտեզի մեջտեղում է» Ծննդոց 2:9-ից իմանում ենք, որ պարտեզի մեջտեղում երկու ծառ կար՝ կենաց ծառը, և բարու և չարի գիտության ծառը: Ըստ երևույթին ինչ-որ ճիշտ ժամանակի այս երկու ծառերի պտուղներն էլ տրվելու էին մարդկանց ուտելու համար, սակայն մարդկության անհամբեր ինքնահաստատումը Աստծո ծրագրից այն դուրս հանեց (որքան հակասական է Հիսուսի արձագանքը Փիլ.2:6-11-ում): Կենաց ծառը տարածված է բոլոր հնագույն Մերձարևելյան պատմություններում, սակայն բարու և չարի գիտության ծառը հատուկ է միայն Աստվախաշնչին: Այս պտղի մեջ ոչ մի կախարդական բան չկար: Դա մի միջոց էր, որն Աստված կիրառում էր, ոչ մի առանձնահատուկ ֆիզիկական որակ այդ պտղի մեջ ինքնին չկար, որ այն դարձներ նշանակալի:

❖ «**որ չնեռներ**» Այս տերմինը (BDB 559, KB 502) հհ.3 և 4-ում կիրառվում է երեք անգամ: Հայտնի չէ, թե Եվան հասկացավ մահվան վերաբերյալ, քանի որ կենդանիներից դեռ ոչ մեկն էլ չէր մահացել: Սակայն հնարավոր է սա ինչ-որ առումով կապված էր տղամարդու և կնոջ հետ: Աստվածաշունչը խոսում է երեք տեսակ մահվան մասին. (1) հոգևոր մահը, որ տեղի ունեցավ Ծննդոց 3-ում; Եսայի 59:2; Հռոմ.7:10-11;

Եփես.2:1; Հակ.1:15; (2) ֆիզիկական մահը, որը եղավ Ծննդոց 5-ի արդյունքը և (3) հավիտենական մահը, որպես մարդու կամակոր, ապստամբ սրտի հետևանք (տես՝ Հայտն.2:11; 20:6,14; 21:8):

3:4 «Եվ օձն ասաց կնոջը. «Ամենևին էլ չեք մեռնի» Սա ԱՆՈՐՈՇ ԲԱՑԱՐՉԱԿ և *Qal* ԱՆԿԱՏԱՐ է, որը ծագել է միևնույն արմատից (BDB 559, KB 562), կիրառված է շեշտադրության համար: Սատանան առաջին հերթին հարձակվեց Աստծո ճշմարտացիության վրա, այժմ էլ հարձակվում է Աստծո Խոսքի ճշմարտության վրա: Իսկ հ. 5-ում նա հարձակվելու է մարդկանց հանդեպ Աստծո ունեցած բարյացակամության և բարության վրա: Այս նախադասության Եբրայերեն տարբերակը խիստ ուժգնացված՝ ինտենսիվացված կազմությամբ է: Սատանան ուրանում է Աստծո հայտարարությունը:

3:5 «Այլ Աստված գիտի, որ այն օրը, որ դուք դրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն» Սատանայի ասածի մեջ որոշակի սահմանափակ ճշմարտություն կար, սակայն դա այն ողբերգական կես ճշմարտությունն էր (տես՝ Տիտոս 1:15): Կարծես թե այստեղ ունենք թարգմանչի կողմից կիրառած «օր» բառի գրական փոխաբերական իմաստը, որի նշանակությունն է «երբ որ»: Եբրայերեն արտահայտությունը բառացի տրված է «որ երբ»: «Կբացվեն» ԲԱՅԸ (BDB 824, KB 959, *Niphal* ԿԱՏԱՐՅԱԼ, տես՝ հ. 7) ակնարկում է մի գործողություն, հավանաբար ծառի կամ չարի գործության:

❖ **«Աստծո պես կլինեք»** Այստեղ Աստծո համար կիրառվում է *Elyhhu* տերմինը: Տե՛ս Հատուկ Թեմա 2:4-ում: Այս համատեքստում այն կիրառվում է հենց Աստծո համար և այսպես են շատ թարգմանություններ մեկնաբանում այս արտահայտությունը: Սակայն, այս տերմինը նաև կարող է կիրառվել հրեշտակների համար (տես՝ Սաղմ.8:5,6; 82:1,6 [մեջբերված Եբր.2:7-ում]; 97:7), այն կարող է կիրառվել «հոգևոր էակի» համար (տես՝ 1 Թագ.28:13) և այն կարող է կիրառվել Իսրայելի դատավորների համար (տես՝ Ելից 21:6; 22:8-9): Կարծես թե ավելի տրամաբանական է, որ այն խոստում է հրեշտակների պես լինելու՝ այն հոգևոր էակների, որոնք Աստծո ներկայության մեջ են կամ էլ հավանաբար երկնային խորհրդի պես (տես՝ 3:22): Հեզնականն այն է, որ մարդիկ փորձում էին Աստծուց ճանկել այն, ինչ արդեն իսկ իրենց էր պատկանում: Մարդկությունը շատ ավելի բարձր կարգավիճակում է, քան հրեշտակները (տես՝ Եբր.1:14; 2:14-16; 1 Կորնթ.6:3):

3:6 «Եվ երբ կինը տեսավ, որ ծառը լավն էր որպես ուտելիք և թե հաճելի էր աչքերին, և ծառը ցանկալի է իմաստուն դարձնելու համար» Այստեղ տեսնում ենք փորձությունից մինչև գործնական մեղանշումը եռապատիկ զարգացում: Ռաբբիներն ասում են, որ աչքերն ու ականջները հոգու պատուհաններն են և ինչ որ ներս ենք թողնում այնտեղից, այն էլ աճում է մեր սրտում, մինչև որ իրականացվում է ճակատագրական գործը:

❖ **«և իր հետ իր ամուսնուն էլ տվեց, և նա էլ կերավ»** Շատ ենթադրություններ են եղել այս համարի շուրջ: Ռաբբիները պնդում են, որ Ադամը կերավ, որպեսզի իր կնոջից զատված ջինի: Այս նույնը պնդում է նաև Միլթոնը իր *Կորստ Դրախտ* գրքում /*Milton Paradise Lost*/: Սակայն համատեքստից կարծես թե երևում է, որ Եվան ստիպեց Ադամին այնպես, ինչպես օձը ստիպեց Եվային, իր աչքի առջև ունենալով նաև այն փորձառությունը՝ փաստը, որ ինքը կերավ և չմահացավ: Ռաբբիները նույնիսկ պնդում են, որ օձը գործածեց մի այսպիսի գործելակերպ Եվայի հետ, որ նրան ստիպեց դիպչել պտղին և ասաց, «Տե՛ս, դու չմահացար»: Հավանաբար նա Ադամին ասաց. «Տե՛ս, ես մեռած չեմ»:

3:7 «և հասկացան, որ մերկ են» Շատ մեկնաբաններ սա գործածել են պնդելով փորձությանը հատուկ սեռական բնույթը (տես՝ 2 Կորնթ.11:3, «օձը հրապուրեց /հայ.՝ խաբեց/ Եվային»): Ռաբբիները նույնիսկ ասում են, որ օձը Եվային սեռական բնույթի հրապուրեց, սակայն սա կարծես թե տեքստի մեջ ներմուծած ընթերցանության հակավածություն է: Նրանց նոր իմացությունը՝ գիտելիքը այն օրհնությունը չէր, որ նրանց խաբեությամբ խոստացել էր օձը (տես՝ Տիտոս 1:15):

❖ **«թզեցնու տերևները կարեցին»** Ավանդական դիրքորոշումը, որ Եվան մի խնձոր կերավ, շատ կասկածելի է: Ռաբբիներն ասում են, որ նա կերավ թուզ հենց այն ծառից, որից հետո տերևներով իրենց համար հանդերձներ կարեցին: Սակայն «պտուղը» կարող էր լինել արմավ /խուրմա/ կամ ինչ-որ մի ուրիշ պտուղ. մենք պարզապես չգիտենք: Պտղի տեսակը այնքան էլ կարևոր չէ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 3:8-13

8Եվ Տեր Աստծո ձայնը լսեցին, որ օրվա զով պահին պարտեզում զբոսնում էր. և Ադամ ու իր կինը թաքնվեցին Տեր Աստծո ներկայությունից պարտեզի ծառերի մեջ: **9**Եվ Տեր Աստվածը կանչեց Ադամին և նրան ասաց. «Ո՛ւր ես դու»: **10**Եվ նա ասաց. «Քո ձայնը պարտեզում լսեցի և վախեցա, որովհետև մերկ էի ու թաքնվեցի»: **11**Եվ ասաց. «Ո՛վ ասաց քեզ, թե դու մերկ ես. արդյոք այն ծառից, որից քեզ պատվիրել էի չուտել, կերել՞ ես»: **12**Եվ մարդն ասաց. «Այն կինը, որ ինձ հետ լինելու տվեցիր, նա տվեց ինձ այդ ծառից, և ես կերա»: **13**Եվ Տեր Աստվածն ասաց կնոջը. «Այդ ի՞նչ ես արել»: Եվ կինն ասաց. «Օձն ինձ խաբեց, և ես կերա»:

3:8 «Տեր Աստծո ձայնը լսեցին, որ ... պարտեզում զբոսնում էր» King James թարգմանությունը տալիս է ինչպես հայերենում՝ «Տեր Աստծո ձայնը», սակայն Եբրայերեն բառը ակնարկում է Նրա քայլերու ձայնը (BDB 229, KB 246, *Hithpael* ԴԵՐԲԱՅ): Եբրայերենի կազմությունը և համատեքստը կարծես թե ակնարկում են, որ սա կրկնվող՝ կանոնավոր կերպով կատարվող գործողություն էր, որտեղ Աստված և առաջին զույգը հանդիպում էին հաղորդակցվելու համար: Սա շատ մարդաբանական՝ անտրոպոմորֆիկ արտահայտություն է Աստծո վերաբերյալ, որը հոգևոր էակ է և մարմին չունի: Ոմանք այսպիսի կանխավարկած են առաջադրում, որ Աստված Իրեն մարմնավորել է մարդկային կերպարանքով, որպեսզի կարողանա առաջին զույգի հետ հաղորդակցվել, շփվել: Հնարավոր է սա ճիշտ լինի, սակայն Եբրոդոլոգիայի միակ անձը, որն ունի մարմնեղեն էություն՝ Որդին է: Ոմանք ենթադրություններ են անում, որ համաձայն ՆԿ-յան այն պնդման, որ ստեղծագործությունը եղել է Որդու գործադրությամբ՝ Նրա միջոցով (տես՝ Հովհ. 1:3,10; 1 Կորնթ. 8:6; Կող. 1:16; Եբր. 1:2), և որ հաճախ են տեղի ունեցել Աստծո մարմնավորում՝ մարդեղացում (այսինքն՝ Տիրոջ Հրեշտակը, օր.՝ Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31:11,15; 48:15-16; Ելից 3:2,4՝ 13:21; 14:19) սա կարող է վերաբերել Քրիստոսի նախա-մարմնավորմանը:

❖ **«օրվա զով պահին»** Եբրայերեն արտահայտությունը կապ ունի քամի տերմինի հետ (BDB 398): Այն արտահայտում է զով գեփյուռի իմաստ, որը կարող է լինել առավոտյան կամ երեկոյան:

❖ **«Ադամն ու իր կինը թաքնվեցին Տեր Աստծո ներկայությունից»** Այս ԲԱՅԸ (BDB 285, KB 284) *Hithpael* ԱՆԿԱՏԱՐՆ է: Մեղքի ողբերգությունը կարող է արդեն երևալ Աստծո և Իր ստեղծագործության միջև զգացական ինչպես նաև ֆիզիկական բաժանման մեջ (տես՝ Մաղմ. 139; Հայտն. 6:16):

3:9 «Ո՛ւր ես դու» Ըստ երևույթին սա այն չէ, որ Աստված տեղեկանալ էր ուզում, այլ այս հարցը տալով ուզում էր, որ նրանք գիտակցեին, թե ինչ են արել (տես՝ հ. 11): ՀԿ-ում այսպիսի հոնտորական հարցերը գործածվել են հաստատելու Աստծո բնավորության մեջ այն զարգացող առանձնահատկությունը՝ կողմը, որ կոչվում է «Բաց Թեիզմ» (այսինքն՝ Քլարք Փինոքի *Անենաշարժուն Շարժիչ ուժը* /Clarq Pennock *The Most Moved Mover*):

3:10 «վախեցա, որովհետև մերկ էի» Ինչպիսի՞ ողբերգություն: Ադամը վախենում է սիրող Աստծուց, որը ստեղծել էր իրեն և ուզում էր ճանաչել նրան: Չարի արագ զարգացումները կարող է հստակ երևալ այստեղ, երբ մարդը շարունակում է թաքնվել Աստծուց, իրենից, իր ընտանիքից և բնական ընթացքից՝ կարգուկանոնից: Այն փաստը, որ նա մերկ էր պարզապես իրական խնդրի ծածկոց էր, որը Աստծո կամքի դեմ գիտակցաբար ապստամբություն էր:

3:12 «Մարդն ասաց» Այստեղ մենք ունենք շեշտադրում այն փաստի վրա, որ Ադամը պատասխանատու է, նույնիսկ եթե փորձում էր մեղադրել Եվային, անգամ հենց Աստծուն: Նույնիսկ բազմաթիվ արդարացումների մեջ, մեղադրելով կամ Եվային կամ էլ Աստծուն, մարդը պատասխանատու է իր սեփական արարքների՝ գործողությունների համար: Փլիթ Ուիլսոնի աստվածաբանությունը, «Չարը ստիպեց ինձ անել» ոչ այլ ինչ է, քան «Մշակութային միջավայրը ինձ ստիպեց անել»-ու արդարացում կամ «Ի ծնե նախատրամադրվածությունը ինձ ստիպեց անել»-ու արդարացում, և այլն:

3:13 «Օձն ինձ խաբեց, և ես կերա» Եվան անմիջապես սովորեց Ադամից և նա էլ սկսեց արդարացումներ գտնել: «Խաբեց» տերմինը կարծես թե նշանակում է «մոռանալ տվեց» (BDB 674, KB 728, *Hiphil* ԿԱՏԱՐՅԱԼ): Այն կարող է լինել օձի քամահրանքի նմանաձայնություն (այսինքն՝ *hissi' ani*): ՆԿ-ը Եվայի գործողությունները նշում է 2 Կորնթ. 11:3 և 1 Տիմ. 2:14-ում:

ԾՆՆԴՈՑ 3:14-24 ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Այս հատվածը, ինչպես 3:1-12-ը, շատ կարևոր դեր է խաղում մեր աշխարհում մեղքի, հիվանդության, ցավի, անարդարության և չարի ներկայիս իրավիճակը հասկանալու մեջ: Սա այն աշխարհը չէ, որն Աստված մտադիր էր ունենալ:
- Բ. Այս հատվածը, հատկապես հ. 15-ը, մեզ տալիս է առաջին խոսքը այն մասին, թե ինչ է լինելու մեր աշխարհի հետ Աստծո կողմից փրկարար միջամտության շնորհիվ: Այն Աստծո փրկության հրաշալի խոստումն է մեղքի անկում ապրած, ապստամբ մարդկությանը և այն տեղի է ունենալու «կնոջ» միջոցով:
- Գ. Աստծո անձի և խոսքի դեմ ապստամբության հետևանքները հստակ նկարագրված են: Սատանան ակնհայտ երևում է, որ խաբերա է և մեղքը իր լիարժեք ընթացքն է ստացել Ադամի ու Եվայի և իրենց զավակների կանքում:
- Դ. Տղամարդու և կնոջ միջև փոխհարաբերությունը հստակ ուրվագծվում են հ. 16-ում (տես՝ 2 Տիմ.2:9-15; Եփես.5:22; Կող.3:18; 1 Պետ.3:1): Մեր աշխարհում տիրող ճնշող կապերը՝ հարաբերությունները արդյունքն են առաջին, գիտակցաբար կատարված ապստամբության: Եթե ՀԿ-ում պատճառահետևանքային կապ եք փնտրում, ապա սա լավ օրինակ է: Սակայն, նրանք նաև ազդեցության ենթարկվեցին Քրիստոսի մեջ Աստծո շնորհի միջոցով (տես՝ 1 Կորնթ.11:11; Գաղ.3:28):
- Ե. Ռաբբիները մերժում են սկզբնական մեղքը և առաջադրում են երկու «yetzer»-ները (մտադրությունները): Սակայն կարծես թե գոյություն ունի ՀԿ-ի կողմից հաստատում այն բանի, որ Ադամը առաջին մեղք գործողն է եղել՝ Հոր 14:4; 15:14; 25:4; Սաղմ.51:5 և ՆԿ-յան դասական հատվածը՝ Հռոմ.5:12-21:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 3:14-19

¹⁴Եվ Տեր Աստվածն ասաց օձին. «Քանի որ այս բանն արեցիր, դու անիծյալ լինես բոլոր անասուններից և դաշտի բոլոր կենդանիներից. փորիդ վրա գնաս և հող ուտես կյանքիդ բոլոր օրերում: ¹⁵Եվ ես թշնամություն եմ դնելու քո և կնոջ միջև և քո սերնդի ու նրա սերնդի միջև. նա քո գլուխն է ջախջախելու, իսկ դու նրա գարշապարն ես ճզմելու»: ¹⁶Կնոջը Նա ասաց. «Խիստ շատացնելու եմ քո ցավերն ու հղիությունը, ցավով ես զավակ ծնելու, և քո ցանկությունը դեպի քո ամուսինն է լինելու, և նա իշխելու է քո վրա»: ¹⁷Եվ Ադամին ասաց. «Քանի որ դու լսեցիր քո կնոջ խոսքին և կերար այն ծառից, որի համար քեզ պատվիրել էի՝ ասելով. «Դրանից չուտես», անիծյալ է երկիրը քո պատճառով, նրանից նեղությամբ ես ուտելու քո կյանքի բոլոր օրերում. ¹⁸փուշ ու տատասկ է այն բուսցնելու քեզ համար, և դաշտի խոտն ես ուտելու: ¹⁹Երեսիդ քրտինքով ես հաց ուտելու, մինչև որ ետ դառնաս դեպի երկիր, քանի որ նրանից էիր վերցված. քանի որ հող ես, ու դեպի հողը պիտի դառնաս»:

3:14 «Տեր Աստվածը» Սա ՀԿ-ում Աստծո համար կիրառվող երկու հիմնական բառերի համադրությունն է՝ ՅԱՀՎԵ և ԷԼՈՀԻՄ: Տես գրառում 2:4:

❖ **«ասաց օձին»** Աստված օձին հարցեր չի տալիս այնպես, ինչպես արեց Ադամի և Եվայի հետ: Օձը պատժված է որպես չարի գործիք հանդիսացողը:

❖ **«անիծյալ լինես բոլոր անասուններից»** ԲԱՅԸ (BDB 76, KB 91) *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է: Սա չի ակնարկում, որ բոլոր անասունները (ավելի լայն իմաստով, քան կովերը, հավանաբար ցամաքային կենդանիները) արդեն անիծված էին: «Ավելի /անզերեհում/» կարող է նշանակել «բոլոր անասունների մեջ»: Ռաբբիներն ասում են, որ սա վերաբերում է անասունների հղիության շրջանին ի հակադրություն օձի, որը ըստ Թալմուդի յոթ տարի է:

❖ **«փորիդ վրա գնաս»** Ցանկացած բան, որ սողում էր փորի վրա, հրեաների կողմից համարվում էր անմաքուր (տես՝ Ղևտ.11:42): Ռաբբիներն ասում են, որ Աստված կտրեց օձի ոտքերը, որպեսզի նա

ստիպված լինի սողալ, սակայն հնարավոր է սա նման է Ծննդոց 9:13-ի ծիածանի նշանին, որը հավանաբար միշտ էլ գոյություն է ունեցել, սակայն այժմ յուրացնում է ևս մի նշանակություն, երբ գործածվում է Աստծո կողմից և այն էլ հատուկ նպատակով:

❖ **«և հող ուտես»** Այս խոսքը մեջբերված է Եսայի 65:25-ում: Կարծես թե տառացիորեն օձին անիծելու պահ է եղել Աստծո կողմից: Այս արտահայտությունը կարող է փոխաբերական լինել Աստվածաշնչում, որը նշանակում է պարտություն կամ ամոթ (տես՝ Մաղմ.79:9; Եսայի 49:23; Միքիա 7:17): Այս համարի երկու ԱՆԿԱՏԱՐՆԵՐՆ էլ գործածված են որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ:

3:15 «և Ես թշնամություն եմ դնելու» Թշնամությունը (BDB 33) մի բառ է, որ կիրառվում մարդկանց միջև եղած այդ երևույթի համար: Սա կարծես թե այն անցումն է, որտեղ Աստծո դատաստանը ուղղված է Սատանային, և ոչ թե հենց բուն օձին (տես՝ Հայտն.12:9; 20:2): Տե՛ս Վերն Ս. Փոյթրեսի «Մեր քերականական-պատմական մեկնաբանության պատկերացումները գնահատող Աստծո ներկայությունը. Ծննդոց 3:15-ը որպես փորձառական դեպք» /Vern S. Poythress “*The Presence of God Qualifying our Notions of Grammatical-historical Interpretation: Genesis 3:15 as a Test Case*” JETS, vol. 50.1, pp.87-103/):

❖ **«քո և կնոջ միջև և քո սերնդի ու նրա սերնդի միջև»** Ծառ քննարկումներ են տեղի ունեցել մեկնաբանների միջև այս համարի շուրջ: Ավելի ընդարձակ կանոնական համատեքստում կարծես թե այն վերաբերում է չարի՝ Սատանայի (տես՝ Մատթ.13:38; Հովի.8:44) և Մեսիայի (տես՝ Իրենեոս) երեխաներին (այսինքն՝ «Մերմ», BDB 282): Բայց քանի որ հաջորդ համարը օգտագործում է «նա» և «դու» ԵԶԱԿԻ թվով դերանունները, կարծես թե այն վերաբերում է Աստծո և Սատանայի միջև եղած լարվածությանը, խորհրդապատկերված եկող Մեսիայի փրկագործության մեջ (տես՝ Իրենեոս): Ակնհայտ է, որ Ադամն ու Եվան չհասկացան սրա ճյուղավորումը՝ ընթացքը, և ոչ էլ հավանաբար Մովսեսը հասկացավ, չնայած որ նա 2 Օր.18:18-ում ընդունում է, որ իրենց ավելի մեծ մի մարգարե է գալու: Կարծում են, որ դա հավանավար ակնարկում է Մեսիայի կուսական ծնունդը, չնայած որ այն սկզբնապես անհայտ է եղել բնագրի մարդ հեղինակին, սակայն հայտնի է եղել աստվածային հեղինակին (Սուրբ Հոգուն): Ինչպես որ մարդկությունը մեղքի մեջ ընկավ կնոջ իմպուլսիվության պատճառով, այնպես էլ փրկվելու է կնոջ հնազանդության միջոցով՝ Մեսիայի ծննդյան համար Սուրբ հոգով գերբնական հղանալու միջոցով (տես՝ Եսայի 7:14; Մատթ.1:18-25; Դուկ.1:26-38; տե՛ս *Աստվածաշնչյան Մարգարեության Ուղեցույց*, էջ՝ 78 և 80): Վուլգատտան փոխում է «նա» արական դերանունը հաջորդ արտահայտության մեջ «նա» իգական դերանվամբ, որը ընդհանրապես չի համապատասխանում, սակայն այն կարող է որսալ դրա ավելի լիարժեք նշանակության էությունը: Քանի որ այս մարգարեությունը ամբողջովին չէր հասկացվում մինչև որ իրականացավ դրա պատմական դեպքը Հիսուսի կուսական ծննդամբ, նույնը կարելի է ասել Ծննդոց 1 և 2 գլուխների մեկնաբանության համար: Պատմությունը բացահայտում է հայտնության հավաստիությունը, երբ մեր երկրագնդի գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս Աստծո ստեղծագործությունների անհասկանալի բաներն ու դրանց փոխկապակցվածությունները: Չկան հակասություններ, պարզապես մարդկության կողմից անհրաժեշտ է Աստծո գործերը հասկանալու համար ավելի լիարժեք գիտություն:

❖
NASB **«Նա քո գլխից է ջախջախելու»**
NKJV **«Նա քո գլուխն է ջախջախելու»**
NRSV **«նա քո գլուխն է հարվածելու»**
TEV **«Նրա սերունդը փշրելու է քո գլուխը»**
NJB **«այն ջախջախելու է քո գլուխը»**
«Չախջախել» տերմինը կարող է նշանակել «փշրել», «սխկել», «քերելով հանել», «աղալ» կամ «հարվածել» (BDB 1003, Kb 1446, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, երկու անգամ կիրառված, տե՛ս՝ Հոբ 9:17): Ուշադրություն դարձրեք ԵԶԱԿԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՎԱՆԸ (տես՝ Հռոմ.16:20): Պայքարը ի վերջո տեղի է ունենալու անհատների միջև:

❖
NASB **«իսկ դու նրա գարշապարից ես ճգմելու»**
NKJV **«իսկ դու նրա գարշապարն ես ճգմելու»**
NRSV **«իսկ դու նրա գարշապարն ես հարվածելու»**
TEV **«իսկ դու նրա սերնդի գարծապարն ես խայթելու»**

Միևնույն ԲԱՅԸ (BDB 1003, KB 1446, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կիրառվում է երկուսի համար էլ, սակայն ակնհայտ է, որ Սաստանային բաժին է ընկնում գործարքի վատթարագույն բաժինը: Կարծես թե սա վերաբերում է խաչելությանը, երբ դիտարկում ենք ըստ ՆԿ-յան տեսանկյան:

3:16 «Կնոջը Նա ասաց» Կարծես թե այստեղ առկա են չորս հիմնական տարրեր. (1) ծննդաբերության ծավերի ավելացում (միևնույն ԲԱՅԻ *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԲԱՑԱՐՁԱԿ և *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, BDB 915, KB 176), (2) մեծացնելու համար շատ երեխաները; (3) երեխաներին մեծացնելու հետ կապված պրոբլեմներ, և (4) ամուսնու իշխելը: Մենք կարող ենք տեսնել, որ սրանք կապված են Եվայի ապստամբության հետ. (ա) նա ուզում էր լինել անկախ, սակայն այժմ ամբողջովին կախված է իր ամուսնուց (և ոչ թե Աստծուց), (բ) նա արգելված պտղի մեջ փնտրում էր ուրախություն և վայելք, բայց այժմ իր կյանքի նորմալ իրավիճակներում ունենալու է ցավ: Ակնհայտ է, որ ՆԿ-ը սա դիտարկում է որպես տղամարդու և կնոջ միջև խաթարված փոխհարաբերությունների աստվախաբանական նշանակություն (տես՝ 1 Տիմ.2:9-15): Մենք պետք է հավասարակշռության բերենք Քրիստոսի մեջ մեր էության՝ 1 Կորնթ.11:11; Գաղ.3:28 և Ադամի շնորհիվ նրա մեջ մեր էության միջև՝ Եփես.5:22; Կող.3:18; 1 Պետ.3:1:

Այս հաստատումը Եբրայերեն տեքստում որոշակի շփոթմունք կա: «Որդեծնություն» տերմինն այստեղ հեզված է այլ կերպ: Եբրայերեն բաղաձայնները կարող են նշանակել «սպասումով պառկած», որը վերաբերում է երեխաների՝ սերունդների դեմ չար փորձությանը (տես՝ *Աստվածաշնչի խորթին խոսքերը*, *Hard Sayings of the Bible*, էջ՝ 90-99):

❖ **«և քո ցանկությունը դեպի քո ամուսինն է լինելու»** Այստեղ Եբրայերեն բառը թարգմանված է «ցանկություն» կամ «փափագ» (BDB 1003, KB 1801): Ուղղթ-Քայգրը պնդում է, որ այն կարող է նշանակել «դառնալ՝ շրջվել», հավանաբար «իշխելու» իմաստով (տես՝ Ծննդ.4:7): Եվան շրջվեց՝ ետ դարձավ ՅԱՀՎԵից: Նրա պատիժը եղավ մշտապես իր ամուսնուն դառնալը, որը հաճախ առիթից օգտվում է (տես՝ *Աստվածաշնչի Խորթին Խոսքերը* /*The Hard Sayings of the Bible*/, IVP, էջ՝ 97-98):

❖ **«նա իշխելու է քո վրա»** ԲԱՅԸ (BDB 605, KB 647) *Qal* ԱՆԿԱՏԱՐ է: Սա կարծես թե անկման հետևանքն է, և Աստված մեզ օգնական, տղամարդկանց մեղսալի բնությունը հասել է իր ծայրահեղությանը: Իսանդը, բռնաբարությունը, ամուսնալուծությունը և անաստված գերիշխանությունն են բնութագրում մարդկության սեռական մղումները: Մենք դարձել ենք կենդանիների պես, միայն թե սեռական ցանկությանն ավելացրած էգոիզմի խնդիրը:

3:17 «Քանի որ դու լսեցիր քո կնոջ խոսքին /անգլ.՝ ձայնին/» Ադամը պետք է հետևեր Աստծո խոսքին, սակայն նա հետևեց իր կնոջ խոսքին և խախտեց Աստծո հատուկ կարգադրությունը (տես՝ 2:15-17):

❖ **«անիծյալ է երկիրը քո պատճառով»** ԲԱՅԸ (BDB 76, KB 91, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) նշանակում է օրհնված լինելու հակառակը: Հողը այլևս հեշտությամբ և առատ պտուղ չի տալու: Ներկայիս հողը այն չէ, ինչ Աստված էր նախատեսել: Այստեղ «Ադամ» (*Adam*, BDB 9) և «հող» (*adamah*, BDB 9) բառերի միջև բառախաղ կա: Երկուսն էլ ունեն միևնույն արմատը: Մենք կարող ենք տեսնել մարդկության և բնության մեղքի մեջ ընկնելու հետևանքները Հռոմ.8:18-23-ում:

Նաև կարծիքներ են եղել, որ սա ազդել է Եդեմի Պարտեզից դուրս բնության իրավիճակի վրա: Իրենց ապստամբությունից հետո Ադամն ու Եվան վտարվում են Աստծո հատուկ պատրաստած տեղանքից աշխարհում որսալու, պայքարելու տեղանքը:

❖ **«նեղությամբ ես ուտելու քո կյանքի բոլոր օրերում»** Ադամին նախքան Անկումը առաջադրանք էր տրվել պարտեզին պահպանություն անելու (տես՝ 2:15), որը նրա իշխանության նշանն էր, սակայն հիմա առաջադրանքը տանջալի էր, անդադրում, պարտադիր և անվերջ (այսինքն՝ «քրտնաջան աշխատանք» BDB 781): Եվ անգամ մարդու այդքան շատ չարչարվելուց հետո էլ հողը շատ քիչ էր բերք տալու (տես՝ հ. 18): Ուշադրություն դարձրեք «ուտել» ԲԱՅԸ (BDB 37, KB 46) քանի անգամ է նշվում այս բացման գլուխներում (տես՝ 2:16,17; 3:1,2,3,6,11,12,13,14,17 /երկու անգամ/, 18,19,22): Այն վերաբերում է թե՛ առատությանը և թե՛ անեծքին:

3:19 «մինչև որ ետ դառնաս դեպի Երկիր, քանի որ նրանից էիր վերցված» Սա ուղղակի կապ է Ադամի անկման, հոգևոր մահվան (գլուխ 3) և ֆիզիկական մահվան միջև (գլուխ 5): Աստված վստահելի է: Նա ասաց, որ կմահանան ի վերջո և նրանք մահացան:

❖ «հող ես» (Տե՛ս Ծննդ.2:7):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 3:20-21

²⁰Եվ Ադամն իր կնոջ անունը Եվա դրեց, քանի որ նա բոլոր կենդանիների մայրն էր: ²¹Նաև Տեր Աստված Ադամի ու նրա կնոջ համար կաշվե հանդերձանք շինեց և հագցրեց նրանց:

3:20 «Եվ Ադամն իր կնոջ անունը Եվա դրեց, քանի որ նա բոլոր կենդանիների մայրն էր» Կնոջ վրա ամուսնու իշխանությունը այժմ խորհրդապատկերվում է նրան անուն տալով: Ստուգաբանորեն, «Եվա» (*hawwa*) և «կենդանի /ողջ/» (*haya*) բառերը շատ նման են և սա հավանաբար տարածված Եբրայերեն բառախաղ էր: Ադամ, Եվա, Կայեն-Նոդ այս բառախաղերը ցույց են տալիս այս հին պատմությունների գրական բնույթը՝ էությունը: Հեզնական է, որ նա կոչվել է «Եվա», որը նշանակում է «կենդանի՝ կյանք», երբ կյանքի փոխարեն նա մահ բերեց:

3:21 Տարօրինակ է, որ մարդկանց անհրաժեշտ էր այս հանդերձանքը, եթե կլիմայական և/կամ այլ ռադիկալ փոփոխություններ չէին սպասվում մարդկությանը Եդեմական պարտեզից դուրս: Այս առաջին մահը, որը կատարվեց Աստծո կողմից մարդկության կարիքի համար, հստակ ցույց է տալիս Աստծո հոգատարությունը և մատակարարումը, ինչպես նաև դատաստանի և հետևանքների իրողությունը: Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈՒ ԱՍՏՎԱԾ ԱԴԱՄԻՆ ԵՎ ԵՎԱՅԻՆ ԿԵՆԴԱՆՈՒ ԿԱԾՎԵ ՀԱԳՈՒՄՏՆԵՐ ՀԱԳՑՐԵՑ
SPECIAL TOPIC: WHY GOD CLOTHED ADAM AND EVE WITH ANIMAL SKINS**

- Ա. Եդեմի պարտեզից դուրս դաժան կյանքի համար պատրաստելու
- Բ. Նրանց մերկության զգացողության ամոթը ծածկելու համար
- Գ. Ցույց տալու մարդկանց, որ օրինավոր է կենդանիներին իրենց կարիքների համար օգտագործելը
- Դ. Ցույց տալու մարդկանց հոգալու (տերևները) և Աստծո հոգալու (կաշվո հագուստներ) միջև տարբերությունը
- Ե. Նրանց իրենց իսկ սպասվող մահվան մասին հիշեցնելու համար (տես՝ Ծննդոց 5)
- Զ. Որպես խորհրդապատկեր այն արդարության, որը մեզ հագցնելու էր Զրիստոսը որպես նոր հագուստ (տես՝ Հռոմ.13:14; Գաղ.3:27; Եփես.4:24; Կող.3:8,10,12,14; հակ.1:21; 1 Պետ.2:1):
- Է. Ցույց տալու Աստծո մարդկության համար ունեցած սերն ու հոգատարությունը, որը շարունակվում էր նույնիսկ անկումից հետո էլ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 3:22-24

²²Եվ Տեր Աստված ասաց. «Ահա Ադամը դարձավ ինչպես մեզնից մեկը, որ բարին ու չարը գիտենա, և հիմա միգուցե իր ձեռքը մեկնի և Կենաց Ծառից էլ վերցնի և ուտի ու հավիտյան ապրի»: **²³Այդ պատճառով Տեր Աստված հանեց նրանց Եդեմի պարտեզից, որ գետինը մշակի, որտեղից որ վերցված էր: ²⁴Այսպես Նա արտաքսեց մարդուն. ու Եդեմի պարտեզի արևելյան կողմում դրեց քերովբեներին, և դեպի բոլոր կողմերը շրջվող բոցեղեն սուրը՝ կենաց ծառի ճանապարհը պահելու համար:**

3:22 «Ահա Ադամը դարձավ ինչպես Մեզնից մեկը» Շատ քննարկումներ են եղել Ծննդոցի այս ՀՈԳՆԱԿԻների շուրջ (տես՝ 1:26; 3:22; 11:7): Համար 22-ը սկսում է ԵԶԱԿԻ թվով և շարունակվում դառնալով ՀՈԳՆԱԿԻ: Եթե մենք թույլ տանք, որ Սուրբ Գիրքը ինքն իրեն մեկնաբանի, ապա ակնհայտ է, որ սա վերաբերում է Երրորդության Աստծուն, և ոչ թե Եբրայերենի քերականական ձևին, որը կոչվում է մեծափառության /որպես հարգանքի նշան/ հոգնակի: Սակայն, այն կարող է վերաբերել (1) հրեշտակային կարգին (տես՝ 3 Թագ.22:19), (2) Սաղմ.110:1-ում երկու աստվածային անձերին, կամ նույնիսկ (3) Տիրոջ հրեշտակ անունով ճանաչված աստվածության անձնավորումը, որի բազմաթիվ օրինակներից մեկը կարող էր վերցնել այրվող մորենու օրինակը Ելից 3:2,4-ից:

❖ **«կենաց ծառը»** Մենք ավելի շուտ նշեցինք, որ կենաց ծառը տարածված է Մերձավոր Արևելքի ստեղծագործության տեքստերից շատերում: Այստեղ մարդիկ վտարվում են ոչ թե աստվածների նախանձի պատճառով, այլ քանի որ մարդկության համար այն կարող էր անեծք դառնալ իր այդ ընկած վիճակում հավիտենապես ապրելը:

❖ **«հավիտյան ապրի»** Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ‘OLAM (ՀԱՎԻՏՅԱՆ)
SPECIAL TOPIC: ‘OLAM (FORVER)**

Սա ամենատարածված (ավելի քան 400 անգամ գործածված) տերմինն *‘olam* (BDB 761, KB 798) է: Այն գործածվում է ժամանակի տևողության համար մի քանի տարբեր նշանակությամբ, որոնցից յուրաքանչյուրը պետք է կապված լինի տվյալ երևույթի, առարկայի բնույթին, որի հետ առնչվում է:

Ա. Անցյալ ժամանակում (միայն օրինակներ)

1. «անցյալի հերոսներ», Ծննդ.6:4
2. «սարեր և բլուրներ», Ծննդ.49:21
3. «անցյալի՝ հին սերունդներ», 2 Օր.32:7
4. «նախահայր», Հեսու 24:2
5. «հին օրեր», Եսայի 51:9

Բ. Ամբողջ կյանքում շարունակվող (միայն օրինակներ)

1. «հավիտյան քեզ հավատա» (այսինքն՝ Մովսեսը), Ելից 19:9
2. «հավիտյան ստրուկ», 2 Օր.15:17; 1 Թագ.27:12
3. «քո բոլոր օրերը». 2 Օր.23:6
4. Սամվելը «հավիտյան այստեղ մնա», 1 Թագ.1:22
5. Թագավորը «հավիտյան ապրած կենա», 3 Թագ.1:21; Կենեմ.2:3; Սաղմ.21:4
6. «հավիտյան Տիրոջը օրինի», Սաղմ.115:18; 145:1-2
7. «հավիտյան հղի» /այլաբանորեն/, Երեմ.20:17
8. Հավանաբար Առակ.10:25

Գ. Անընդհատ գոյությունը (սակայն ակնհայտ սահմանափակումներով)

1. մարդիկ հավիտյան ապրեն, Ծննդ.3:22
2. երկիրը, Սաղմ.78:69; 104:5; 148:6; Ժող.1:4 /տես՝ 2 Պետ.3:10/
3. Ահարոնի քահանայությունը, Ելից 29:9; 40:15 /տես՝ 1 Թագ.2:30/
4. Շաբաթը. Ելից 31:16-17
5. Տոնական օրերը, Ելից 12:14,17,24; Ղևտ.16:29,31,34; 23:14,21,41
6. Թվատություն, Ծննդ.17:13 /տես՝ Հռոմ.2:28-28/
7. Ավետյաց երկիրը, Ծննդ.13:15; 17:18; 48:4; Ելից 32:13 /տես՝ Գերությունները/
8. Ավերված քաղաքները, Ես.25:2; 32:14; 34:10

Դ. Պայմանական Ուխտերը

1. Աբրահամի հետ, Ծննդ.17:7,8,13,19
2. Իսրայելի հետ, 2 Օր.5:29; 12:28
3. Դավթի հետ, 2 Թագ.7:13,16,25,29; Սաղմ.89:2,4
4. Իսրայելի հետ, Դատ.2:1 (տես՝ Գաղ.3)

Ե. Անպայմանական Ուխտերը

1. Նոյի հետ, Ծննդ.9:12,16
2. Նոր Ուխտը, Ես.55:3; Երեմ.32:40; 50:5 (այսինքն՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-30)

Չ. Աստված Ինքը

1. Նրա գոյությունը, Ծննդ.21:33; 2 Օր.32:40; Սաղմ.90:20; 93:2; Ես.40:28; Դան.12:7
2. Նրա անունը, Ելից 3:15; Սաղմ.135:13
3. Նրա տիրակալությունը, Ելից.15:18; Սաղմ.45:6; 66:7; Երեմ.10:10; Միք.4:7
4. Նրա Խոսքը, Սաղմ.119:89,160; Ես.40:8; 59:21
5. Նրա գթառատությունը, Սաղմ.25:6; 89:2; 103:17; 118:1-4,29; Երեմ.33:1

Է. Նրա Մեսիան

1. Նրա անունը, Սաղմ.72:17,19
2. Հավիտյան օրհնյալ, Սաղմ.45:2,17; 89:52
3. Իշխանությունը, Սաղմ.89:36,37; Ես.9:7
4. Քահան, Սաղմ.110:4
5. Նախագոյությունը, Միք.5:2

Ը. Նոր Դարաշրջանի կյանքը

1. հավիտենական կյանք, Դան.12:2
2. հավիտենական տանջանք, Դան.12:2
3. այլևս ոչ մի արցունք, Ես.65:19 (Հայտն.21:4)
4. ոչ մի արև, Ես.60:19-20 (Հայտն.21:23)

Ուշադրություն դարձրեք, թե քանի անգլերեն բառ է կիրառվում NIV թարգմանության մեջ այս Եբրայերեն բառը թարգմանելիս՝

1. հավիտյան
2. հին, հնուց
3. հավիտենական
4. հավերժ
5. մնայուն
6. մշտական
7. կենաց
8. շարունակ
9. կանոնավոր
10. մշատապես
11. ցանկացած ժամանակ
12. հինավուրց, հին ժամանակների
13. անվերջանալի
14. հավիտյանս հավիտենից
15. մինչև վերջ
16. երկար ժամանակ
17. շատ վաղուց

3:23 «այդ պատճառով Տեր Աստված հանեց նրան Եղեմի պարտեզից» Սա շատ խիստ ԲԱՅԻ ձև է (BDB 1081, KB 1511, *Piel* ԱՆԿԱՏԱԲ), որն ունի բացասական նշանակություն: 2 Օրինաց 21:14-ում այն վերաբերում է ամուսնալուծությանը, իսկ 3 Թագ.9:7-ում՝ Իսրայել ազգին սպասվող դատաստանին:

3:24 «քերովբեներ» Սրանք թևավոր հրեշտակային արարածներ են (BDB 500), որոնք պահպանում էին Աստծո պարտեզը, որպեսզի մարդուն դուրս պահեն այնտեղից: Հետագայում նրանք հայտնվում են խորանում՝ տանարում: Այն փաստը, որ պարտեզը պահպանվում էր, ցույց է տալիս, որ այն հատուկ վայր էր, պաշտպանված միջավայր, որը այժմ արգելված էր մարդկանց համար: Տե՛ս ստորև տրված հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔԵՐՈՎՐԵՆԵՐ
SPECIAL TOPIC: CHERUBIM

Ա. Հրեշտակային էակների մի քանի տեսակներից մեկը: Այս հատուկ տեսակը պահպանում էր սուրբ վայրերը (տես՝ Ելից 25:18-22; 3 Թագ. 8:6-7):

Բ. Ստուգաբանությունը հայտնի չէ.

1. Աստծո և մարդու միջև արքադերենի «բարեխոս» կամ «միջնորդ» բառից:
2. Եբրայերենից սա հավանաբար բառախաղ է «կառք /chariot/» և «հրեշտակ, քերովրե /cherub/» բառերի (տես՝ Եզեկ. 1; 10)
3. Ոմանք ասում են դա նշանակում է «հրաշափառ, պայծառ արտաքին՝ տեսք»

Գ. Ֆիզիկական տեսքը. Աստվածաշնչում իրարից տարբերվող նկարագրությունների և հնագույն Մերձավոր Արևելքում գտնված տարբեր կենդանակերպ-մարդկանց պատկերների պատճառով սա դժվար է հաստատելը: Ոմանք կապում են նրանց.

1. Միջագետքի թևավոր ցուլի հետ
2. Եգիպտոսի թևավոր արծվառնուծների հետ, որոնք կոչվում են «գրիֆներ»
3. Տիվրոսի թագավորի գահատեղի Քերամում՝ թևավոր արարածների հետ
4. Եգիպտոսի Մֆինբսի և նմանատիպ պատկերների հետ, որոնք գտնվել են Աքար Թագավորի Սամարիայի փղոսկրե պալատում

Դ. Ֆիզիկական նկարագրությունը

1. Քերովրեն Մերովրեին իրենց տեսքով կապված լինելու հատվածը՝ Եսայի 6 գլուխ:
2. Նրանց տարբեր կերպարանքների օրինակներ՝

ա. Դեմքերի քանակը

- 1) Երկու՝ Եզեկ. 41:18
- 2) Չորս՝ Եզեկ. 1:6,10; 10:14,16,21,22
- 3) Մեկ՝ Հայտն. 4:7

բ. Թևերի քանակը՝

- 1) Երկու՝ 3 Թագ. 6:24
- 2) Չորս՝ Եզեկ. 1:6,11; 2:23; 10:7,8-21
- 3) Վեց (Եսայի 6:2-ի Մերովրեի պես)՝ Հայտն. 4:8

3. Այլ կերպարանքներ.

ա. Մարդու ձեռքեր՝ Եզեկ. 1:8; 10:8,21

բ. Ոտքեր

- 1) Ուղիղ՝ առանց ծնկի. Եզեկ. 1:7
- 2) Հորթի ոտքեր՝ Եզեկ. 1:7

4. Ֆրավիուս Չոզեֆուսը ընդունում է, որ ոչ ոք չգիտի թե ինչպիսին են քերովրեները (տես՝ *Հրեաների Հնությունները*, VIII:3:3):

Ե. Աստվածաշնչյան վայրերը և նպատակները.

1. Կենաց ծառի պահապանները, Ծննդ. 3:24 (հավանաբար փոխաբերորեն կիրառված Սատանայի համար Եզեկ. 28:14,16)

2. Խորանի պահապանը

ա. Ուխտի Տապանակի վրա՝ Ելից 25:18-20; Թվոց 7:89; 1 Թագ. 4:4

բ. Վարագույրի և ծածկոցի վրա պատկերված՝ Ելից 26:1,31; 36:8,35

3. Սողոմոնի Տաճարի պահապանը

ա. Սրբության Սրբոցում երկու մեծ փորագրված Քերովրեները՝ 3 Թագ. 6:23-28; 8:6-7; 2 Մնաց. 3:10-14; 5:7-9

բ. Ներքին սրբարանի պատերի վրա՝ 3 Թագ. 6:29,35; 2 Մնաց. 3:7

գ. Մաքրման թաշտերին միացված պանելների վրա՝ 3 Թագ. 7:27-39

4. Եզեկիելի Տաճարի Պահապանը

ա. Պատերի և դռների վրա փորագրված՝ Եզեկ. 41:18-20,25

5. Աստվածության փոխադրամիջոցի հետ կապված.

ա. հավանաբար քանու համար փոխաբերություն՝ 2 Թագ. 22:11; Սաղմ. 18:10; 104:3-4; Ես. 19:1

բ. Աստծո գահի պահապանը՝ Սաղմ. 80:1; 99:1; Ես. 37:16

- գ. Աստծո շարժական գահի կառքի պահապանը՝ Եզեկ.1:4-28; 10:3-22; 1 Մնաց.28:18
6. Հերովդեսի Տանարը
ա. Նկարված պատերի վրա (այսինքն՝ պահապան, տես՝ Թալմուդ “Yoma” 54ա)
7. Հայտնության գահի տեսարանը (այսինքն՝ պահապան, տես՝ Հայտն.4-5):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս այլաբանությունն է, առասպել, թե պատմական իրադարձություն:
2. Արդյո՞ք օձը հենց օձ էր և արդյո՞ք նա խոսեց:
3. Արդյո՞ք օձը չարի ազդեցության և իշխանության ներքո էր: Եթե այդպես է, ապա ինչպե՞ս:
4. Աստված գիտե՞ր, թե Ադամն ու Եվան ինչ էին անելու: Եթե այդպես է, ինչո՞ւ Նա թույլ տվեց դա:
5. Քո սեփական տերմիններով նկարագրիր օձի կողմից մարդկանց փորձելու զարգացումների աստիճանը և Աստծո դեմ ուղղված հատուկ մեղադրանքները:
6. Որպես հոգևոր էակ ինչպե՞ս կարող է Աստված մարմին ունենալ:
7. Արդյո՞ք գլուխ 3-ը բացատրում է մեր աշխարհում առկա չարի ներկայության և մարդկանց սրտերում մեղքի ներկայության մասին:
8. Արդյո՞ք օձը ծառայում է որպես Աստծո ծառա, որպեսզի փորձի մարդկանց, թե նա արդեն Աստծո դեմ ապստամբ է (տես՝ Հոր 1-2 և Չաբ.3):
9. Ինչո՞ւ Աստված պատժեց մի կենդանու, որը պարզապես գործածվեց Սատանայի կողմից:
10. Արդյո՞ք համար 15-ը եկող Մեսիայի մասին ակնարկ է, թե պարզապես կանանց և օձերի միջև վախի ակնարկ:
11. Ակնհայտ է, որ մեր ժամանակակից հասարակությունը, որն ընդգծում է տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը, մերժում է համար 16-ը որպես տիեզերական սկզբունք: Ինչո՞ւ եք դուք հավատում, որ այս համարը հարմար է կամ հարմար չէ մեր օրերում էլ:
12. Արդյո՞ք համար 20-ը Ադամի կողմից ապաշխարության քայլ էր, թե հոժարակամ հաստատություն, որ ինքն ու Եվան կարող են դա ինքնուրույն անել:
13. Բացատրեք համար 22-ում Աստծո մասին ՀՈԳՆԱԿԻՆԵՐԻ կիրառությունը: Արդյո՞ք սա Երրորդության վարդապետության վերաբերյալ նախատիպար է, թե ուրիշ մի բան: Ինչո՞ւ և ինչու ոչ:

ԾՆՆԴՈՑ 4:1-26

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Կայեն և Աբել	Կայենը սպանում է Աբելին	Կայեն, Աբել և Սեթ	Կայեն և Աբել	Կայեն և Աբել
4:1-8	4:1-8	4:1-7 4:8-16	4:1-7 4:8	4:1-8
4:9-15	4:9-15		4:9ա 4:9բ 4:10-12 4:13-14 4:15-16	4:9-16
4:16	Կայենի ընտանիքը 4:16-18		Կայենի սերունդները	
4:17-22		4:17-22	4:17-22	4:17-22
4:23-24	4:19-24	4:23-24	4:23-24	4:23-24
(23-24)	(23-24) Նոր Որդի	(23-24)	(23-24) Սեթ և Ենոք	(23-24) Սեթը և իր սերունդները
4:25-26	4:25-26	4:25-26	4:25-26	4:25-26

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Շատ մեկնաբաններ հաստատում են, որ 4:1-24 համարները նկարագրում են Կայենի ապստամբ սերմի՝ սերնդի զարգացումները, մինչ 4:25-5:32-ը նկարագրում են Սեթի աստվածավախ սերնդի զարգացումները: Չնայած որ այսպիսի մոտեցումը շատ օգտակար է այս գլուխները դիտարկելիս, սակայն այն ամբողջովին տրոհվում է 6:5-6, 11-12,13 գլուխներում նկարագրված ամբողջ մարդկության չարության մեջ:
- Բ. Շատերն են պնդում, որ գլուխ 4-ը արևմտյան սերնդաբանության մանրամասնություն չէ, այլ արևելյան Եբրայական սերնդաբանություն, որը պարզապես հասնում է երկարակեցության ամենաբարձր աստիճանին: Եթե Ճննդոց 4-ի ժամանակները՝ տարիները հաշվարկեք, ապա այն մեկը մյուսին ընդգրկող տարեթվեր կստացվեն, որոնց տևողությունը կստացվի մոտ 2000 տարի: Հետևաբար ես հավատում եմ, որ նրանք ներկայացուցչական օրինակներ են կամ սիմվոլիկ թվեր (ինչպես Մատթեոսի և Ղուկասի մեջ Հիսուսի մասին տրված թվերը), և ոչ թե սպառիչ սերնդաբանություններ:
- Գ. Գլուխ 5-ը նկարագրվում է արպես մահվան գլուխ, սակայն 21-24 համարները պարունակում են մարդկության փրկության սքանչելի հույս՝ Ենովքի փոխադրման պատմությամբ: Միևնույն տերմինները կիրառվում են Եդիայի համար 4 Թագ.2:3,5,9,10:
- Դ. Ճննդոց 3:8-11:9 հայտնում է մեղքի սարսափելի հետևանքները, որոնք շարունակվում էին սերնդեսերունդ:
- Ե. Կայենի ժառանգները չեն փաստագրվում ինչպես Սեփինը (այսինքն՝ ոչ թվագրություններ են տրված, ոչ էլ նրանց տարիքները): Կայենի տոհմաճյուղը ջրհեղեղի ժամանակ ամբողջովին վերանում է: Հավանաբար այն բանի համար, թե ում հետ նա ամուսնացավ: Ոչ բոլոր երկոտանի, գործիք պատրաստող, մեծ գանգ ունեցող արարածներն էին Աստծո պատկերով ստեղծված:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 4:1-8

¹Եվ Ադամը գիտեցավ իր կնոջը՝ Եվային, և նա հղիացավ և ծնեց Կայենին. և ասաց. «Մարդ ստացա Տիրոջից»: ²Եվ հաջորդ անգամ ծնեց նրա եղբորը՝ Աբելին. և Աբելը ոչխարների հովիվ էր, իսկ Կայենը հողագործ էր: ³Եվ եղավ, որ օրեր անցան, Կայենը գետնի պտղից Տիրոջն ընծա մատուցեց: ⁴Եվ Աբելն էլ մատուցեց իր հոտի անդրանիկներից՝ նրանցից պարարտներին: Եվ Տերը հարգեց Աբելին ու նրա ընծան, ⁵բայց Կայենին ու նրա ընծան չհարգեց: Եվ Կայենը շատ զայրացավ և երեսը մռայլվեց: ⁶Եվ Տերը Կայենին ասաց. «Ինչո՞ւ ես բարկացել և ինչո՞ւ ես երեսդ կախել: ⁷Եթե բարին անես, չե՞ս ընդունվի. բայց եթե բարին չես անում, մեղքը դռան մոտ պառկած է, և նա քեզ է ցանկանում. բայց դու պետք է իշխես նրա վրա»: ⁸Եվ Կայենն իր Աբել եղբոր հետ խոսեց և եղավ, որ երբ նրանք դաշտում էին, Կայենը վեր կացավ իր եղբայր Աբելի դեմ և սպանեց նրան:

4:1 «Ադամը /մարդը/ գիտեցավ /կենակցեց/ իր կնոջը՝ Եվային» Տառացի գրված է՝ «Ադամը գիտեցավ Եվային»: Եբրայերեն «գիտենալ» տերմինը խոսում է ինտիմ անձնական փոխհարաբերության մասին (BDB 393, KB 390, *Qal* ՎԱՂԱԿԱՍԱՐ, տես՝ Երեմ.1:5): Արդյոք սա Ադամի և Եվայի միջև եղած առաջին սեռական կապն էր, թե ոչ, չի նշվում: Աստվածաշունչը լռում է այն մասին, թե քանի երեխա ունեին նրանք և երբ ունեցան նրանց: Մենք միայն գիտենք երեք զավակների մասին, որոնք անվանապես նշված են Սուրբ Գրքում: Շատ կարևոր է ՆԿ-յան Աստծուն «ճանաչելի» բառի մեկնաբանությունը, որը ցույց է տալիս, որ այն ոչ միայն փաստագրական բովանդակություն ունի, այլ նաև շեշտադրված է անձնական փոխհարաբերությունը: Հիմնականում մարդկության պատասխանն Աստծուն ընդգրկում է՝ (1) ճշմարտություններ, որոնց պետք է հավատալ, (2) անձ, որին պետք է ընդունել, և (3) պատշաճ ապրելակերպ: Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման.

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԻՏԵՆԱԿ (որպես օրինակ հիմնականում կիրառելով 2 Օրինացը)
SPECIAL TOPIC: KNOW (using mostly Deuteronomy as a paradigm)**

Եբրայերեն «գիտենալ» (BDB 393) բառը ունի *Qal* -ի մի քանի իմաստ (իմաստային դաշտը):

1. Հասկանալ բարին և չաւը՝ Ծննդ. 3:22; 2 Օր. 1:39; Ես. 7:14-15; Հովնան 4:11
2. Իմանալ հասկանալով՝ 2 Օր. 9:2,3,6; 18:21
3. Իմանալ փորձառարար՝ 2 Օր. 3:19; 4:35; 8:2,3,5; 11:2; 20:20; 31:13; Հեսու 23:14
4. Մտածել, քննարկել՝ 2 Օր. 4:39; 11:2; 29:16
5. Անձնապես ճանաչել
 - ա. մարդու՝ Ծննդ. 29:5; Ելից 1:8; 2 օր. 22:2; 28:35,36; 33:9
 - բ. աստծու՝ 2 Օր. 11:28; 13:2,6,13; 28:64; 29:26; 32:17
 - ՅԱՀՎԵԻՆ՝ 2 Օր. 4:35,39; 7:9; 29:6; Ես. 1:3; 56:10-11
 - գ. սեռապես՝ Իսննդ. 4:1,17,25; 24:16; 38:26
6. Մովորած արհեստ կամ գիտություն՝ Ես. 29:11,12; Ամովս 5:16
7. Իմաստուն լինել՝ 2 Օր. 29:4; Առակ. 1:2; 4:1; Ես. 29:24
8. Աստծո գիտությունը՝
 - ա. Մովսեսի՝ 2 Օր. 34:10
 - բ. Իսրայելի՝ 2 Օր. 31:21,27,29

❖ «**Կայեն**» «Կայեն» անունը (*qayin*, BDB 884 III, KB 1097 և BDB 888-89) ձայնախաղ է Եբրայերենի «ստացված» բառի (*qaniti*): Կարծես թե այն հաստատում է, որ կայենը ՅԱՀՎԵԻ օգնությամբ տրված հատուկ պարգև էր (հավանաբար նույնիսկ որպես 3:15-ի իրականացում):

❖ «**մարդ-երեխա Տիրոջ օգնությամբ /հայ.՝ մարդ ստացա Տիրոջից/**» «Մարդ-երեխա» թարգմանությունը կարծես թե ինչ-որ շեշտադրում է կատարում: Ոմանք պնդում են, որ Եվան նախկինում ունեցել էր աղջիկներ և որ այս մեկը նրա առաջին արու զավակն էր, սակայն սա միայն ենթադրություն է: Համար 1-ի վերջին արտահայտությունը՝ «Տիրոջ օգնությամբ /կամ՝ Տիրոջից/» (BDB 86) ակնարկում է, որ սա Եվայի կողմից կատարած հավատքի դավանություն էր՝ հիմնված Ծննդ. 3:15-ի վրա: Սա ՅԱՀՎԵ անվան առանձին կիրառության առաջին դեպքն է: Հաջորդ դեպքը, երբ այն հայտնվում է առանձին կիրառությամբ, Մեթի առհմաձառի կողմից երկրպագության մեջ է՝ 4:26-ում:

4:2 «Եվ հաջորդ անգամ ծնեց նրա եղբորը՝ Աբելին» Ռաբբիներն ասում են, քանի «Ադամը գիտեցավ Եվային» արտահայտությունը բացակայում է համար 2-ում, ուրեմն Աբելն ու Կայենը երկվորյակներ էին, սակայն սա խիստ բացառվում է:

❖ «**Աբել**» Եբրայերեն այս տերմինը նշանակում է «շունչ», «գոլորշի» կամ «ունայնություն» (BDB 211 II, տես՝ Ժող. 1:2): Այս անվան հետ կապված երեք հնարավոր ակնարկներ կան՝ (1) սա կարող է արտացոլել (ա) Եվայի հուսահատությունը իր մեղսալի վիճակի համար կամ (բ) նրա կյանքի կարճ լինելու վերաբերյալ կանխատու; (2) հնարավոր կապ Աքքադերենի «որդի» բառի հետ (*ibil*); և (3) ոմանք էլ պնդում են, որ դա կապված է «տկարություն» բառի հետ Եվայի շատ երեխաներ ունենալու անեծքի հուսահատության պատճառով (տես՝ Ծննդոց 3:16):

4:3 «Կայենը գետնի պտղից Տիրոջն ընծա մատուցեց» Ուշադրություն դարձրեք, որ Կայենը առաջինն էր, որ Տիրոջը ընծա մատուցեց (BDB 97, KB 112, *Hiphil* ԱՆԿԱՏԱԲ): Էսայես ոչ մի ստորադաս՝ թերարժեք բան չկա հացահատկի ընծայի մեջ ի հակադրություն կենդանու ընծայի: Կարևորությունը ընծան մատուցողի հավատքի մեջ է, ոչ թե հենց ընծայի: Հավանաբար նրանք այդ ընծաները բերեցին Եդեմի պարտեզի դարպասների մոտ:

4:4 «Եվ Աբելն էլ մատուցեց իր հոտի անդրանիկներից» Բանալի բառը կարծես թե «անդրանիկներ» տերմինն է (BDB 114): Կայենը բերեց հողից ստացված իր պտուղներից, իսկ Աբելը իր հոտի լավագույններից, որը հավատքի և հարգանքի վերաբերմունք էր ցուցաբերում: Սակայն պետք է հիշել, որ

տեքստն ինքնին բազմիմաստ և համառոտ է: Մենք պետք է զգույշ լինենք այս առաջին պատմությունները ընթերցելիս չափից ավելի բաներ նկատելու մեջ:

❖	
NASB	«և նրանց պարարտ բաժիններից»
NKJV	«և նրանց պարարտները»
NRSV	«նրանց պարարտ բաժինները»
TEV	«դրա լավագույն մասերը»
NJB	«և դրանց ճարպից որոշ մաս»
SEPT	«անգամ դրանց ամենապարարտներից»
JPSOA	«հատընտիրները»
NET	«նույնիսկ դրանցից ամենապարարտները»

Ըստ երևույթին այստեղ և հետագա Հուդայականության մեջ, աղիքները և ճարպը առնչվում էին այն բանի հետ, թե զոհասեղանին ինչեր էին մատուցվում. (1) դրանք դիտարկվում ին որպես զգացմունքների դաշտ կամ (2) ճարպը դիտարկվում էր որպես բարգավաճման և առողջության սիմվոլ:

SEPT, JPSOA և NET թարգմանություններն /ինպես նաև հայերենը/ այս արտահայտությունը չեն ներկայացնում որպես զոհասեղանին մատուցվող աղիքների ճարպ, այլ որպես հոտի լավագույնները՝ պարարտները: Սա ավելի լավ է համապատասխանում համատեքստին:

❖ **«և Տերը հարգեց Աբելին ու նրա ընծան»** Տառացի սա նշանակում է «նայեց վրան»՝ դրական իմաստով (BDB 1043, KB 1609, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ TEV և NJB): Թե ինչպես, անհայտ է, չնայած որ բազմաթիվ ենթադրություններ են եղել: Այնհայտ է, որ Աստված մեկի հաշվով արտահայտեց Իր ուրախությունը, սիկ մյուսին՝ Իր տհաճությունը: Թե ժամանակակից և թե՛ հին դարերի մեկնաբանների կողմից նշվել է, որ Աստված առաջին հերթին ընդունեց Աբելին և հետո նրա ընծան: Միշտ էլ հերթականությունն այսպիսին է (տես՝ Եբր. 11:4): Կայենի հետ կապված խնդիրը նրա վերաբերմունքն էր: Հնարավոր է, որ Աստված ցոփկց է տալիս Իր ամենակալությունը սիրելով ավելի փոքրին և ոչ թե մեծին: Սա կարելի է տեսնել ամբողջ Ծննդոցի մեջ:

4:5 «Կայենը շատ զայրացավ» Եբրայերեն բառերը շատ շեշտակի են այստեղ, որոնք նկարագրում են Կայենի զգացմունքները (BDB 354, KB 351, *Qal* ԱՆԿԱՏԱՐ ավելացրած «շատ» ՄԱԿԲԱՅԸ, BDB 547): Նկատել, որ նա բարկացած է Աստծո վրա, սակայն իր բարկությունը թափելու է եղբոր վրա: Այստեղ համատեքստը շեշտադրում է երկրպագության մեջ բարկությունը: Հավանաբար նա տխրել էր, քանի որ ինքն առաջինը մատուցեց ընծան, սակայն Աբելինը ընդունվեց, իսկ իրենը՝ ոչ:

❖ **«երեսը մռայլվեց»** Այստեղ համար 5-ում և 6-ում «մռայլվել» բառի (BDB 656, KB 709) և համար 7-ում «քո երեսը չի բարձրանա» /հայերենում՝ չես ընդունվի/ արտահայտության մեջ բառախաղ կա: «Բարձրանա» տերմինը կարող է նշանակել «ընդունվել» (BDB 669, KB 724, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, տես՝ NKJV, NRSV, TEV):

4:6 «Ինչո՞ւ ես բարկացել» Այստեղ դարձյալ Աստված մի քանի հացեր է ուղղում մարդուն և դա ոչ թե տեղեկության համար, այլ որպեսզի մարդուն օգնի հասկանալու իր եփական սզգացմունքներն ու շարժառիթները (տես՝ հ. 9 և 3:9,11,13):

4:7 «մեղքը դռան մոտ պառկած է» Այս համարում մեղքը անձնավորվում է որպես վայրի կենդանի, որը ցանկանում է ոչնչացնել (տես՝ 1 Պետ.5:8): Գոյություն ունի հավանական կապ Աքքադերենի «պառկած» բառի հետ, որը կիրառվում էր դիվականի համար (BDB 918, KB 1181, *Qal* ԴԵՐԲԱՅ): Սա ցույց է տալիս մեր աշխարհում մեղքի իրական բնույթը:

❖ **«և նա քեզ է ցանկանում»** Միևնույն «ցանկություն» տերմինը (BDB 1003, KB 1802) կիրառվում է Ծննդ.3:16-ում: Այն ցույց է տալիս, որ չարի նպատակը մեր կործանումն է (այսինքն՝ «վերահսկել» և «իշխել»):

❖ **«բայց դու պետք է իշխես նրա վրա»** ԲԱՅԸ (BDB 605, KB 647) *Qal* ԱՆԿԱՏԱՐ է: Սա ցույց է տալիս, որ մենք տիկնիկներ չենք չարի ձեռքերում, այլ Աստծո օգնությամբ կարողություն ունենք նրան

հակառակվելու, (տես՝ Եփես.6:13; Հակ.4:7; 1 Պետ.5:9), ապաշխարելու և վերականգնվելու համար: Կայենը կապված չէր Ադամի մեղքով (տես՝ Եզեկ.18:2-4): Մեր վրա ներգործում է Ադամի և Եվայի ապստամբությունը, սակայն մենք պատասխանատու ենք մեր սեփական որոշումների՝ ընտրությունների համար:

4:8 «Եվ Կայենն իր Աբել եղբոր հետ խոսեց» Այս արտահայտության շուրջ տեղի են ունեցել շատ քննարկումներ: Ոմանք ասում են, որ Կայենը Աբելին պատմեց, թե Աստված ինչ ասեց իրեն համար 6 և 7-ում: Ուրիշներն էլ պնդում են, Սամարացիների Հնգամատյանի, Մեպտուագինտայի, Սիրիակի, Վուլգատտայի և RSV թարգմանությունների հետ միասին, որ Կայենը խորամանկությամբ նրան տարավ դաշտ, որպեսզի այնտեղ նրան սպանի (այսինքն՝ կանխագիտակցված՝ նախապես ծրագրած սպանություն):

❖ **«Կայենը վեր կացավ իր եղբայր Աբելի դեմ»** Գլուխ 3-ը շեշտադրում է գերբնական փորձություն. գլուխ 4-ը՝ մարդկության մեջ Ադամական ընկած՝ մեղսալից բնության զարգացումները: Այստեղ փորձիչ չկա, միայն լրից ծաղկած մեղք՝ Ադամի և Եվայի մեղքից ծնված, և որը տարածվում է նրանց բոլոր սերունդների վրա (տես՝ Հռոմ.8:9-18, 23; 1 Հովհ.3:12): «Վեր կացավ» (BDB 877, KB 1086, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) և «սպանեց» (BDB 246, KB 255, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) ԲԱՅԵՐԸ արտահայտում են անող՝ զարգացող բռնություն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 4:9-15
⁹Եվ Տերն ասաց Կայենին. «Ո՛ր է քո եղբայր Աբելը»: Եվ նա ասաց. «Չգիտեմ. մի՞թե ես եղբորս պահապանն եմ»: **¹⁰Եվ Նա ասաց. «Ի՞նչ ես արել. քո եղբոր արյան ձայնը գետնից աղաղակում է Ինձ:** **¹¹Եվ հիմա դու անիծյալ ես այն երկրից, որ իր բերանը բացեց եղբորդ արյունը քո ձեռքից ընդունելու. ¹²Երբ հողը մշակես, նա այլևս իր գորությունը չի տա քեզ. երկրի վրա աստանդական ու թափառական պիտի լինես»:** **¹³Եվ Կայենն ասաց Տիրոջը. «Իմ պատիժն ավելի մեծ է, քան ես կարող եմ կրել:** **¹⁴Իհա ինձ այսօր երկրի վրայից արտաքսեցիր, և Քո երեսից պիտի թաքնվեմ ու երկրի վրա աստանդական ու թափառական պիտի լինեմ, և կլինի այնպես, որ ամեն ինձ գտնող ինձ կսպանի»:** **¹⁵Եվ Տերն ասաց նրան. «Ուրեմն ով որ Կայենին սպանի, նրանից յոթնապատիկ վրեժ առնվի»:** Եվ Տերը մի նշան դրեց Կայենի վրա, որ ամեն ոք, որ նրան գտնի, չսպանի նրան:

4:9 «մի՞թե ես եղբորս պահապանն եմ» Կայենի մեծագույն խնդիրը նրա անզոջում սիրտն էր: «Պահապան» տերմինը կարող է նշանակել «հովիվ» (BDB 1036, KB 1581, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ), որը կարող է լինել Աբելի զբաղմունքի՝ գործի հետ կապված բառախաղ (տես՝ համար 2):

4:10 «քո եղբոր արյան ձայնը գետնից աղաղակում է Ինձ» Այս բառահայտությունը շատ կարևոր է («աղաղակում» BDB 858, KB 1042, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ): Եբրայեցիների համար կյանքի ուժը արյան մեջ է (տես՝ Ղևտ.17:11; Հայտն.6:9,10): «Արյուն» բառը ՀՈԳՆԱԿԻ է Եբրայերենում: Ռաշին ասում է, որ ՀՈԳՆԱԿԻՆ վերաբերում է Աբելին և նրա պոտենցիալ սերնդին: ՀՈԳՆԱԿԻՆ նաև ցույց է տալիս շեշտակիություն:

4:11 «հիմա դու անիծյալ ես այն երկրից» Մա մարդու վրա խոսված առաջին ուղղակի անեծքն է: Ադամի մեղքի պատճառով հողը անիծվեց: Նշանակալի է, որ Կայենը լինելով հողագործ, այլևս չէր կարող զբաղվել իր գործով: Նա վտարվում է դեպի անապատ, որը դևերի բնակատեղի է և դրա հետ միաժամանակ հողագործության համար հարմարություններից զուրկ վայր:

4:12 «նա այլևս իր գորությունը չի տա քեզ» Սա *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ձևն է (BDB 414, KB 418): Շատ մեկնաբաններ պնդում են, որ հենց այս պատճառով էր, որ Կայենի սերունդները ձևավորեցին քաղաքային կյանքը ի հակադրություն գյուղականի (տես՝ հհ. 16-24):

❖ **«աստանդական ու թափառական պիտի լինես»** Այս նմանատիպ հնչողությամբ երկու տերմինները (BDB 631, KB 681 և BDB 626, KB 678, տես՝ հ. 14) նկարագրում են Կայենի քոչվոր կյանքը: Դրանք բառախաղեր են Նոդ երկրի անվան հետ կապված (BDB 627 II): Այս բառախաղերը արտահայտում են այս առաջին գլուխների գրական կառուցվածք՝ ձևավորումը:

4:13 «Իմ պատիժն ավելի մեծ է, քան ես կարող եմ կրել» Կայենը չի զոջում իր արարքի համար, այլ զոջում է դրա հետևանքների համար:

4:14 «ինձ այսօր երկրի վրայից արտաքսեցիր» Սա Կայենի մեղքի տեղանքային հետևանքն է, մինչդեռ հաջորդ արտահայտությունը՝ «Քո երեսից պիտի թաքնվեմ», Կայենի մեղքի հոգևոր հետևանքն է (տես՝ 3:8):

❖ **«ամեն ինձ գտնող ինձ կսպանի»** Կայենը վախենում էր իր սեփական կյանքի համար: Ռաբբիներն ասում են, որ նա վախենում էր կենդանիներից: Սակայն կարծես թե համատեքստն ակնարկում է, որ իր բարեկամները, որ Աբելի արյան վրիժառուները պետք է որ լինեին, նրան կսպանեն: Սա կարող է ակնարկել այն, որ Ադամն ու Եվան ունեին շատ երեխաներ, որոնց անունները տրված չեն:

Քինդերի *Թինդեյլի Ծննդոցի Մեկնաբանություն* /Kinder's *The Tyndale Commentary on Genesis*/ և Բեռնարդ Ռեմմի *Քրիստոնյայի Գիտության և Մուրբգրային Տեսակետը* /Bernard Ramm's *The Christian's View of Science and Scripture*/ մարդաբանության վերաբերյալ քննարկման գրքում կա մի հետաքրքիր քննարկում մյուս նախապատմական հումանոիդների հետ Ադամի և Եվայի կապի վերաբերյալ: Այս համարն ակնարկում է շատ այլ ռացիոնալ արարածների: Հնագույն Մերձավոր Արևելքում հումանոիդների և նրանց այդտեղ բնակվելու տարեթվերի հետ կապված քննարկման համար տես Ռ. Ք. Հարրիսոնի *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 147-163 և *Ո՞վ էր Ադամը* Փազալ Ռանա և Հյու Ռոսս /R. K. Harrison's *Introduction to the Old Testament and Fazale Rana and Hugh Ross Who was Adam?*:/

Եթե Կայենը ամուսնացած լիներ ոչ հոմոսապիենսի հետ՝ առանց Աստծո Հոգու, ապա Ծննդոց 6:1-4 կլինի Աստծո յորահատուկ մարդկային ստեղծագործության և երկոտանի կենդանիների հետ խառնուրդ, մարդկանց և հրեշտակների խառնուրդի փոխարեն:

4:15 «նրանից յոթնապատիկ վրեժ առնվի» «Յոթնապատիկ» տերմինը կարծես թե նշանակում է կատարյալ վրեժխնդրություն (BDB 988): Ըստ երևույթին որպես մեղքի նույնիսկ ավելի հոգետանջ նշան Աստված Կայենին ողջ թողեց: Ռաբբիներն ասում են, որ Աստված վրեժխնդրություն էր առնելու նրանից յոթ սերունդ հետո, որը լինելու էր Ղամեքը: Գոյություն ունի ռաբբիական մի լեգենդ, որի համաձայն համար 23-ը վերաբերում է Ղամեքին և նրա որդուն՝ Թորել-Կայենին, որը պատահաբար սպանում է Կայենին:

❖ **«մի նշան դրեց Կայենի վրա»** Սա կամ նշան էր (BDB 16, «դրոշմ») (1) Աստծո ողորմության՝ դատաստանի մեջ, կամ էլ (2) ժամանակի ընթացքում Աստված Իր դատը պաշտպանելու: Ռաբբիներն ասում են, որ Աստված կենդանի մի եղջյուր դրեց Կայենի գլխի մեջտեղում: Սակայն, սա ավելի հավանական է, որ եղել է ճակատի վրա դրված մի դրոշմ (տես՝ Եզեկ.9:4,6):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 4:16

¹⁶Եվ Կայենը Տիրոջ ներկայությունից հեռացավ ու Նայիդ երկրում բնակվեց՝ Եդեմի արևելքում:

4:16 «Եվ Կայենը Տիրոջ ներկայությունից հեռացավ» Սա կարծես թե ֆիզիկական հետևանքն է, որը մարմնավորում է Կայենի հոգևոր վիճակը («հեռացավ», BDB 422, KB 425, *Qal* ԱՆԿԱՏԱԲ): 16-24 համարները իրականում ցույց են տալիս, թե ինչպես է լքված մարդկությունը սկսում աշխարհիկ համակարգ մտնել առանց Աստծո: Այս հակա-ՅԱՀՎԵ աշխարհի համակարգը կարելի է տեսնել Դանիելի տեսիլքների թագավորություններում: Այն մարմնավորվում է Հայտնության գրքի Բաբելոնի մեծ պոռնիկի կերպարում և Հովհաննեսի կողմից կիրառված «աշխարհ» տերմինի մեջ:

❖ **«Նայիդ երկրում»** «Նայիդ»-ը Եբրայերեն տերմին է «թափառել» կամ «թափառականների երկիր» բառերի համար (BDB 627 II): Սա Կայենի անվան հետ կապված ակնհայտ բառախաղ է: Մենք չգիտենք, թե որտեղ է գտնվում այս տեղանքը, սակայն հայտնի է, որ այն Եդեմից դեպի ավելի արևելք է, քան որտեղ Ադամն ու Եվան գնացին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 4:17-22

¹⁷Եվ Կայենը գիտեցավ իր կնոջը. և նա հղիացավ ու ծնեց Ենոքին. և մի քաղաք կառուցեց ու այդ քաղաքի անունն իր որդու անունով Ենոքը դրեց: ¹⁸Եվ Ենոքը ծնեց Գայիրադին, և Գայիրադը ծնեց Մայիելին, և Մայիելը ծնեց Մաթուսայելին և Մաթուսայելը ծնեց Ղամեքին: ¹⁹Եվ Ղամեքը երկու կին առավ՝ մեկի անունը Ադդա, իսկ երկրորդի անունը Սեղա էր: ²⁰Եվ Ադդան ծնեց Հոբելին, որ դարձավ վրանաբնակների ու խաշնարածների հայրը: ²¹Եվ նրա եղբոր անունը Հոբալ էր, որ դարձավ բոլոր քնարահարների ու տավառահարների հայրը: ²²Եվ Սեղան էլ ծնեց Թորել-Կայենին,

որ պղնձից ու երկաթից ամեն տեսակ գործիք էր պատրաստում. և Թորել-Կայենի քույրն էր Նաաման:

4:17 «Կայենը գիտեցավ իր կնոջը» Ո՛ւմ հետ նա ամուսնացավ: Շատ պահպանողական գիտնականներ ենթադրում են, որ նա ամուսնացավ իր քույրերից մեկի հետ, սակայն այս մասին Աստվածաշունչը ոչինչ չի ասում: Ծննդոց 5:4-ն ասում է, որ Ադամը և Եվան ունեին ուրիշ աղջիկներ ու տղաներ նույնպես: Հարց է առաջանում, թե ովքեր էին պարտեզից դուրս գտնվող այն մարդիկ, որոնցից վախենում էր Կայենը (տե՛ս 4:14 գրառումը):

❖ **«և նա հղիացավ ու ծնեց Ենովքին»** Այս անունների բոլոր ստուգաբանությունները շատ կասկածելի են: Ենովք անունը կարող է նշանակել «սկսնակ» կամ «նախաձեռնող» (BDB 335): Գլուխ 5-ում կա ակնհայտ նմանություններ Սեթի երեխաների ցանկի և Կայենի երեխաների ցանկի միջև (օր.՝ Ենովք և Ղամեք): Այս ստուգաբանական նմանությունների ճշգրիտ պատճառը անհայտ է, սակայն այն ցույց է տալիս (1) որ երկու ընտանիքներն ունեին սոցիալական շատ կապեր, կամ (2) այս երկու Ենովքների հոգևոր տարբերությունները:

Նաև նկատեք, որ Կայենի տոհմաճյուղի կյանքերի տևողությունները տրված չեն: Սա կարող է ակնարկել, որ Սեթի տոհմաճյուղի երկարակյաց տարիքները խորհրդապատկերում են նորոգություն կամ փառք (ինչպես տաս Ծումերական թագավորների ցանկի, որոնք երկարակյաց էին թե՛ ջրհեղեղից առաջ և թե՛ հետո: Կյանքի տևողությունը ջրհեղեղից հետո կրճատվեց, սակայն նույնիսկ մեր օրերի ստանդարտների համաձայն դեռևս երկար էին):

❖ **«մի քաղաք կառուցեց»** Սա կարծես թե ուղղակի արհամարհանք էր Աստծո այն հրամանին, որ նա թափառական էր լինելու (տե՛ս հհ. 12,14): Այլոք սա տեսնում են որպես Կայենի վախի օրինակ, որ ինչ-որ մեկը իրեն չսպանի. հետևաբար նա կառուցեց իրեն և իր ընտանիքին պաշտպանելու համար ամրոց (նման Բաբելոնի Աշտարակի շինության նպատակին):

4:18 «Եվ Ենոքը ծնեց Գայիրադին» Այս տերմինի հավանական ստուգաբանություններն են՝ (1) քաղաքի զարդ, (2) քաղաքացի, կամ (3) արագոտն (BDB 747):

❖ **«Մայիեք»** Այս տերմինի հավանական ստուգաբանություններն են՝ (1) «Աստված է կյանք պարգևողը», (2) «Աստված է կյանքի աղբյուր տվողը», (3) «Աստծո սիրահար», կամ (4) «Աստծուց ստեղծված» (BDB 562):

❖ **«Մաթուսայեք»** Այս տերմինի հավանական ստուգաբանություններն են՝ (1) «Աստծո Մարդ», (2) «ուժեղ երիտասարդություն» կամ (3) «թագավոր» (BDB 607):

4:19 «Ղամեքը երկու կին առավ» Սա բազմակնության առաջին դեպքն է և այն մեկնարկում է Կայենի մեղավոր տոհմաձառից: Ղամեք անունը անհայտ ծագում ունի (BDB 541):

❖ **«Ադդա ... Սեղա»** Այս երկու կանանց անունները բառախաղ են ֆիզիկական գեղեցկության տերմինների շուրջ: Ռաբբիներն ասում են, որ նրա կանանցից մեկը երեխաներ ծնելու համար էին, իսկ մյուսը նրա հաճույքների տիկինն էր: «Ադդա» անունը կարող է նշանակել «զարդ» կամ «առավոտ» (BDB 725), մինչ «Սեղա» անունը կարծես թե նշանակում է «սովեր» կամ «թաքստոց», «դողանջ» կամ «երաժշտություն նվագող» (BDB 853):

4:20 «Հորելին, որ դարձավ վրանաբնակների և խաշնարածների հայրը» Այս տերմինը կարծես թե նշանակում է «աստանդական» (BDB 385 II), որը նկարագրում է ըստ երևույթին այն քոչվոր կյանքը, որը ձևավորվել էր:

4:21 «Հորալ... բոլոր քնարահարների և տավղահարների հայրը» Ոմանք պնդում են, որ նրա անունը նշանակում է «ձայն»: Սա երաժշտական հմտությունների հստակ պարզակների մեկնարկն է: Եզեկիել 18:13-ում երաժշտությունը կապված է չարի հետ: Ինչպես Աստծո բոլոր պարզակները, այն կարող է խեղաթուրվել: Այս ցեղախումբը ոչ միայն ստեղծեց լարային գործիքները, այլ նաև փչելու՝ փողային գործիքները:

4:22 «Թորել-Կայենին, որ պղնձից ու երկաթից ամեն տեսակ գործիք էր պատրաստում» Այս մարդը (BDB 1063) առաջինն էր, որ պատերազմի համար զենքեր պատրաստեց: Հնարավոր է, որ 21-22 հհ-ում նշված երեք ազգերը անվանվել են իրենց գրադմունքները՝ գործերը արտացոլելու նպատակով:

❖ **«Նաամա»** Այս անունը նշանակում է «հանելի» կամ «գեղեցիկ» (BDB 6531): Ռաբբիներն ասում են, որ նա ամուսնացավ Նոյի հետ, սակայն սա խիստ անհավանական է:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 4:23-24

²³Եվ Ղամբն իր կանանց՝ Ադդային ու Սելլային ասաց. «Լսեցե՛ք ձայնս, ո՛վ Ղամբի կանայք, ակա՛նջ դրեք իմ խոսքին, քանի որ մի մարդ եմ սպանել ինձ վերք հասցնելու ու մի երիտասարդ ինձ վնաս հասցնելու համար: ²⁴Եթե Կայենի վրեժը յոթնապատիկ առնվի, ապա ճշմարտապես Ղամբինը՝ յոթանասուն ու յոթ անգամ»:

4:23 «Ղամբն իր կանանց ասաց» Սա Աստվածաշնչում կիրառված առաջին պոետիկ արձանագրությունն է (ՀԿ-ի մոտ 40%-ը պոետիկ գրվածքներ են): Քերականորեն այն կապված է համար 22-ի հետ: Ռաբբիական լեզենդն ասում է, որ նրա երկու կանայք լքեցին նրան, քանի որ նա պատահմամբ որսի ժամանակ սպանում է Կայենին և նաև իր որդուն՝ Թորել-Կայենին: Սա բավականին երևակայական կարծիք է: Իրականում սա շեշտադրում է մեղքի այն աստիճան գարգացումը, որ Ղամբը պարծենում էր իր վրեժխնդրության խստությամբ: Ումանք պնդում են, որ նա բարձրացրել է Թորել-Կայենի առաջին պատերազմական զենքը և կատարել այս ռիթմիկ գլուխ գովանքը: Մեկնաբանների շրջանում եղել են շատ քննարկումներ ժամանակի տարրի շուրջ (անցյալ, ապառնի): Շատերը ենթադրում են, որ դրանք վերաբերում են ապագայում կատարվելիք դեպքերի, և ոչ թե ինչ-որ դեպքի, որ արդեն իսկ կատարվել է:

4:24 «յոթնապատիկ» Սա ցույց է տալիս Ղամբի վրեժը (տես՝ 4:15): Որոշ մեկնաբաններ հակադրություն են տեսնում ներման մասին այս և Հիսուսի ասած խոսքերի միջև, որ արձանագրված է Մատթեոս 18:21,22:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 4:25-26

²⁵Եվ Ադամը դարձյալ գիտեցավ իր կնոջը, և նա մի որդի ծնեց և նրա անունը Սեթ դրեց, որովհետև ասաց. «Աստված ինձ մի ուրիշ սերունդ տվեց Աբելի փոխարեն, որին սպանեց Կայենը»:
²⁶Եվ Սեթին էլ մի որդի ծնվեց, և նրան Ենովս անվանեց. այն ժամանակ մարդիկ սկսեցին կանչել Տիրոջ անունը:

4:25-26 Համաձայն համատեքստի սա պետք է լիներ գլուխ 5-ի հետ: Գլուխների և համարների բաժանումները ո՛չ Եբրայերեն ՀԿ-ի և ո՛չ էլ հունարեն ՆԿ-ի բնագիր տեքստի մաս չէին կազմում:

4:25 Սա ևս մեկ բառախաղ է Եբրայերեն «նշանակված» (*shat*, BDB 1011, KB 1483, *Qal* ՎԱՂԱԿԱՍԱՐ) տերմինի և Սեթ (*shet*, BDB 1011 I) անվան միջև: Ծննդոց 1-11 գլուխներում շարունակ անունների հետ կապված գրական (ձայնային) բառախաղերը արտահայտում են գրքի գրական տեսակը:

4:26 «նրան Ենովս անվանեց» Սա եբրայերեն «մարդ» (BDB 60) բառի տերմիններից մեկն է, որը Ադամ բառի հոմանիշն է (տես՝ Հոր 25:6; Սաղմ. 8:4; 96:3; 144:3; Ես. 51:12; 56:2):

❖ **«Այն ժամանակ մարդիկ սկսեցին կանչել Տիրոջ անունը»** Սա կարծես թե ակնարկում է կանոնավոր հանրային երկրպագությանը, քանի որ նշվում է ՅԱՀՎԵ աստվածային ուխտի անունը: Շատերը հակասություն են տեսնում այս և Ելից 6:3 համարների միջև: Հավանաբար նախքան Մովսեսի ժամանակները մարդիկ կիրառում էին ՅԱՀՎԵ անունը առանց հասկանալու այս անվան լիարժեք նշանակությունը: Սա սկիզբն է Մեսիական տոհմաձագի (տես՝ Դուլ. 3:38):

ԾՆՆԴՈՑ 5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աղամի ժառանգները	Աղամի ընտանիքը	Աղամից մինչև Նոյ սերունդները	Աղամի ժառանգները	Ջրհեղեղից առաջ նահապետները
5:1-2	5:1-5	5:1-2	5:1-5	5:1-2
5:3-5		5:3-5		5:3-5
5:6-8	5:6-8	5:6-8	5:6-8	5:6-8
5:9-11	5:9-11	5:9-11	5:9-11	5:9-11
5:12-14	5:12-14	5:12-14	5:12-14	5:12-14
5:15-17	5:15-17	5:15-17	5:15-17	5:15-17
5:18-20	5:18-20	5:18-20	5:18-20	5:18-20
5:21-24	5:21-24	5:21-24	5:21-24	5:21-24
5:25-27	5:25-27	5:25-27	5:25-27	5:25-27
5:28-31	5:28-31	5:28-31	5:28-31	5:28-31
5:32	5:32	5:32	5:32	5:32

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԸ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրը մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզինքն յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:1-2

¹Սա է Ադամի ծննդոց գիրքը: Այն օրը, երբ Աստված ստեղծեց մարդուն, Աստծո պատկերով արեց նրան. ²արու և էգ ստեղծեց նրանց և Ադամ անվանեց նրանց այն օրը, որ նրանց ստեղծեց:

5:1 «Ծննդոց գիրքը /սերնդաբանությունը/» Այս տերմինը (BDB 410) Ծննդոցում տասն անգամ կրկնվում է (տես՝ 2:4; 5:1; 6:9; 10:1; 11:10,27; 25:12,19; 36:1; 37:2): Սա կարծես թե ակնարկում է գրված փաստաթուղթ (հավանաբար կավե տախտակներ կամ կաշվե գալարներ՝ մագաղաթներ): Հնագույն Միջագետքյան սեպագիր տախտակներում մի որևէ տերմին կամ արտահայտություն էր կիրառվում մի քանի կավե տախտակներ իրար որպես մի ամբողջական գրական բաժին (այսինքն՝ վերջնապատկերը) կապելու համար: Ես հավատում եմ, որ Մովսեսը կիրառել է (1) բանավոր ավանդույթները, 40421 Նահապետներից մնացած գրավոր աղբյուրներ, (3) ուղիղ հայտնություն Հնգամատյանը գրելու համար:

Ծննդոցում այս արտահայտությունը շատ անգամ է կրկնվում: Այն միշտ եզրափակում է համատեքստը: Այն գործում է որպես փակման գրական նշան:

❖ **«Այն օրը, երբ Աստված ստեղծեց մարդուն»** Հնարավոր է սա սկսում է մեկ այլ առանձին սեպագիր քարե արձանագրություն, քանի որ ամփոփում է Ծննդոց 1-2 գլուխները:

5:2 «Ադամ /մարդ/ անվանեց նրանց» Ուշադրություն դարձրեք, որ սա ադամի ընդհանրական իմաստով կիրառություն է, ինչպես հ. 3-ն էլ հատուկ կիրառությունը: Այս ընդհանրական կիրառությունը հավասարության ևս մեկ հաստատում է, ինչպես 1:26-27-ը:

❖ **«այն օրը»** Այս «օր» բառի կիրառությունը քսանչորս ժամյա տևողությունը չէ, այլ ժամանակաշրջան կամ դարաշրջան: Այս բառի նույնպիսի կիրառություն կարելի է տեսնել Ծննդ.2:4, Սաղմ.90:4: Տե՛ս Հատուկ Թեմա 1:5-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:3-5

³Եվ Ադամը հարյուր երեսուն տարի ապրեց և իր նմանությամբ, իր պատկերի պես որդի ծնեց և նրան Սեթ անվանեց: ⁴Եվ Ադամի օրերը, Սեթին ծնելուց հետո ութ հարյուր տարի էին և տղաներ ու աղջիկներ ծնեց: ⁵Եվ Ադամի ապրած բոլոր օրերն ինը հարյուր երեսուն տարի եղան, և մեռավ:

5:3 «Ադամը... իր նմանությամբ, իր պատկերի պես որդի ծնեց /անգլ.՝ որդու հայր դարձավ/» Այս արտահայտության երկու հավանական մեկնաբանություն կա. (1) ինչպես մյուս երկրավոր կենդանիները, Ադամը իր տեսակի պես ժառանգ տվեց (տես՝ 1:11) կամ (2) սա ցույց է տալիս, որ Աստծո պատկերը նույնիսկ անկումից հետո դեռևս շարունակում է մնալ մարդու մեջ:

5:5 «Ադամի ապրած բոլոր օրերն ինը հարյուր երեսուն տարի եղան» Ծատ քննարկումներ են եղել մարդկային կյանքի տևողության հարցի շուրջ մեծ ջրհեղեղից առաջ և անմիջապես հետո (այսինքն՝ անդրջրհեղեղյան շրջանը): Ոմանք պնդում են, որ (1) այն այլաբանորեն է; (2) նրանք այլ կերպ են հաշվարկում տարիները; (3) մեղքը պարզապես երկիր չէր ներթափնցել այնպես ինչպես այժմ՝ մեր օրերում, կամ (4) մեծ թվերը սովորաբար ցույց են տալիս նախորդ առաջնորդների հանդեպ ունեցած հարգանք ու պատիվ, ինչպես Շումերական տասն անտիկ թագավորների ցանկն է: Այդ ցանկում ջրհեղեղից առաջ թագավորներն ապրում էին շատ ավելի երկար, քան ջրհեղեղից հետո ապրած թագավորները, շատ նման Աստվածաշնչում տրված սերնդաբանություններին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:6-8

⁶Եվ Սեթը հարյուր հինգ տարի ապրեց և ծնեց Ենոփսին: ⁷Եվ Սեթը Ենոփսին ծնելուց հետո ութ հարյուր յոթ տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց: ⁸Եվ Սեթի բոլոր օրերն ինը հարյուր տասներկու տարի եղան, և մեռավ:

Սա վերաբերում է ավելի շուտ տրված 4:26-ին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:9-11

⁹Եվ Ենովար իննսուն տարի ապրեց և Կայնանին ծնեց: ¹⁰Եվ Ենովար Կայնանին ծնելուց հետո ութ հարյուր տասնհինգ տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց: ¹¹Եվ Ենովար բոլոր օրերն ինը հարյուր հինգ տարի եղան, և մեռավ:

5:10 «Կայնան» Սա կարող է նշանակել. (1) «սեփականատեր», (2) «երեխա», (3) «արարված», (4) «երիտասարդ», կամ (5) «գեղարդավոր» (BDB 884): Պարզ է, որ այսքան շատ տարբերակների դեպքում (ինչպես որ սովորաբար լինում է), մենք պարզապես չգիտենք դրա նշանակությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:12-14

¹²Եվ Կայնանը յոթանասուն տարի ապրեց և ծնեց Մադադիելին: ¹³Եվ Կայնանը Մադադիելին ծնելուց հետո ութ հարյուր քառասուն տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց: ¹⁴Եվ Կայնանի բոլոր օրերն ինը հարյուր տասը տարի եղան, և մեռավ:

Ակնհայտ է, որ սրանք զուգահեռվող կամ ստանդարտացված գրական սահմանումներ են:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:15-17

¹⁵Եվ Մադադիելը վաթսուներկու տարի ապրեց և ծնեց Հարեդին: ¹⁶Եվ Մադադիելը Հարեդին ծնելուց հետո ութ հարյուր երեսուն տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց: ¹⁷Եվ Մադադիելի բոլոր օրերը ութ հարյուր իննսուներկու տարի եղան, ու մեռավ:

5:15 «Մադադիել» Սա նշանակում է «Աստծո փառք» (BDB 239):

❖ **«Հարեդ»** Սա նշանակում է «իջնել՝ վայրէջք» (BDB 434):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:18-20

¹⁸Եվ Հարեդը հարյուր վաթսուներկու տարի ապրեց և ծնեց Ենովքին: ¹⁹Եվ Հարեդը Ենովքին ծնելուց հետո ութ հարյուր տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց: ²⁰Եվ հարեդի բոլոր օրերն ինը հարյուր վաթսուներկու տարի եղան, և մեռավ:

5:18 «Ենովք» Սա կարող է նշանակել (1) «սկսնակ», (2) «նվիրված» կամ (3) «նախաձեռնող» (BDB 335): Տե՛ս 4:17բ-ի գրառումը Կայենի տոհմաճյուղի (այսինքն՝ գլուխ 4) և Սեթի տոհմաճյուղի (այսինքն՝ գլուխ 5) անունների միջև եղած նմանությունների համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:21-24

²¹Եվ Ենովքը վաթսուներկու տարի ապրեց և ծնեց Մաթուսաղային: ²²Եվ Ենովքն Աստծո հետ քայլեց Մաթուսաղային ծնելուց հետո երեք հարյուր տարի և տղաներ ու աղջիկներ ծնեց: ²³Եվ Ենովքի բոլոր օրերը երեք հարյուր վաթսուներկու տարի եղան: ²⁴Եվ Ենովքն Աստծո հետ քայլեց և չէր գտնվում, որովհետև Աստված առավ նրան:

5:21 «Մաթուսաղա» Սա նշանակում է կամ (1) «նիզակավոր մարդ» կամ (2) «զենքեր ունեցող մարդ» (BDB 607): Ասում են, որ նա ապրել է Աստվածաշնչի բոլոր մարդկանցից ավելի երկար, սակայն այս փաստի համար ոչ մի պատճառ կամ շեշտադրում տրված չէ: Ռաբբիներն ասում են, որ ջրհեղեղը եկավ այն օրը, երբ Մաթուսաղան մահացավ:

5:22 «Ենովքն Աստծո հետ քայլեց» Եբրայերեն տերմինը (BDB 229, KB 246) *Hithpael* արմատն ունի, որը մատնանշում է գրեթե «իրար հետ ապրելու» աստիճան մտերմիկ փոխհարաբերություն: Ինչպես որ բոլոր այս հին եբրայերեն անունների հետ է, մենք պարզապես վստահ չենք դրանց ճշգրիտ նշանակության հարցում (BDB 335): Եբրայեցիների 11:5 նկարագրում է Ենովքի հավատքով քայլելը: Միակ մյուս անձնավորությունը, որի համար կիրառվում է այս արտահայտությունը, դա Նոյն է, 6:9 համարում:

5:24 «որովհետև Աստված առավ նրան» Այս նույն բառերը (BDB 542, KB 534, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) գործածվում են նկարագրելու Եդիային՝ 4 Թագ.2:3,5,9,10-ում: Սա ակնարկում է առանց ֆիզիկական մահ ճաշակելու Աստծո ներկայության մեջ փոխադրում: Աստծո հետ Ենովքի փոխհարաբերությունը արդյունքում վերածվեց անձնական մտերմիկ հաղորդակցության: Մի գլխում, որը հագեցած է «և նա մեռավ» արտահայտությամբ, սա մի թարմացնող հույսի օրինակ է (1) Աստծո սիրո համար և (2) բոլոր նրանց համար, ովքեր վատահում են Նրան:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:25-27
²⁵Եվ Մաթուսաղան հարյուր ութսունյոթ տարի ապրեց և ծնեց Ղամեքին. ²⁶և Մաթուսաղան Ղամեքին ծնելուց հետո յոթ հարյուր ութսուներկու տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց: ²⁷Եվ Մաթուսաղայի բոլոր օրերն ինը հարյուր վաթսունինը տարի եղան, և մեռավ:

5:26 «Ղամեք» Այս անունը հավանաբար նշանակում է (1) «գորավոր», (2) «երիտասարդություն», (3) «պատերազմող» կամ (4) «հաղթող» (BDB 541): KB նշում է արաբերեն մի արմատ, որը նշանակում է «շատ գորավոր մարդ»: Այս անունը նաև առկա է Կայենի տոհմանդյուղի մեջ (տես՝ 4:18): Սա ակնարկում է (1) որ անունը տարածված էր կամ (2) այս երկու սերնդաբանությունների մեջ ինչ-որ կապ կա:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:28-31
²⁸Եվ Ղամեքը հարյուր ութսուներկու տարի ապրեց և մի որդի ծնեց, ²⁹և նրա անունը Նոյ դրեց՝ ասելով. «Սա մեզ կհանգստացնի մեր գործերից և մեր ձեռքի ցավերից՝ այն երկրի պատճառով, որին Տերն անիծեց»: ³⁰Եվ Ղամեքը Նոյին ծնելուց հետո հինգ հարյուր իննսունհինգ տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց: ³¹Եվ Ղամեքի բոլոր օրերը յոթ հարյուր յոթանասունյոթ տարի եղան, և մեռավ:

5:28 Ինչպիսի հակադրություններ են երկու Ղամեքները: Մեկը պարծենում է իր դաժան վրեժխնդրությամբ (Կայենի ճյուղը), իսկ մյուսը՝ Աստծո ողորմության հույսով է լցված (Մեթի ճյուղը):

5:28 «Նոյ ... կհանգստացնի» Սա ավելի տարածված և ոչ թե բանասիրական ստուգաբանությունն է «հանգստություն» տերմինի (BDB 629): Կարծես թե սա արտահայտում է Ղամեքի հավատքը, որ Նոյի միջոցով Ծննդոց 3:17-ի անեծքի կարևորագույն հետադարձումն է տեղի ունենալու: Սա Ղամեքի հավատքի դավանությունն է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:32
³²Եվ Նոյը հինգ հարյուր տարեկան եղավ, և Նոյը ծնեց Սեմին, Քամին ու Հաբեթին:

5:32 «Սեմ» Այս տերմինը կարող է նշանակել «համբավ» կամ «անուն» (BDB 1028):

- ❖ «**Քամ**» Այս տերմինը կարող է նշանակել «տաք լինել» կամ «մուգ լինել» (BDB 325):
- ❖ «**Հաբեթ**» Այս տերմինը կարող է նշանակել «գեղեցկություն» կամ «տարածվել» (BDB 834):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ աստվածաբանական կապ կա Ծննդոց 4 և 5-ի միջև:
2. Ինչո՞ւ է Կայենի սերնդաբանությունը զարգանում և ապա ամբողջովին անհետանում Սուրբ Գրքից:
3. Ինչո՞ւ են Կայենի և Մեթի ցեղերի անունները այդքան նման:
4. Ի՞նչ պատահեց Ենովքի հետ:

ԾՆՆԴՈՑ 6:1-22

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Մարդկության ապականումը	Մարդու ամբարշտությունը և դատաստանը	Հսկաների ծնունդը	Մարդկային ամբարշտությունը	Աստծո որդիները և կանայք
6:1-4	6:1-4	6:1-4	6:1-4	6:1-4
		Մեծ Ջրհեղեղը (6:5-8:22)		Մարդկության ապականումը
6:5-8	6:5-8	6:5-8	6:5-8	6:5-8
	Նոյը հաճեցնում է Աստծուն		Նոյը	
6:9-10	6:9-10	6:9-10	6:9-12	6:9ա 6:9բ-12
6:11-12	6:11-13	6:11-22		Պատրաստություններ ջրհեղեղի համար (6:13-7:16)
6:13-22	Տապանը պատրաստ է 6:14-21 6:22		6:13-22	6:13-16 6:17-22

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԸ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրով մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. 6:1-4

¹Եվ եղավ, երբ մարդիկ սկսեցին բազմանալ Երկրի վրա և աղջիկներ ունեցան, ²Աստծո որդիները, տեսնելով մարդկանց աղջիկներին, որ գեղեցիկ էին, իրենց համար կին էին առնում նրանց, որոնց ընտրում էին: ³Եվ Տերն ասաց. «Իմ Հոգին մարդու հետ միշտ չի մարտնչելու, քանի որ նա նաև մարմին է, թող նրա օրերը հարյուր քսան տարի լինեն»: ⁴Հսկաներ կային այն օրերում Երկրի վրա. և դրանից հետո էլ, երբ Աստծո որդիները մարդկանց դուստրերին էին մերձենում, և նրանք իրենց համար *երեխաներ* էին բերում, սրանք հզոր մարդիկ *դարձան*, որոնք հնուց ի վեր անվանի էին:

6:1 «մարդիկ» Սա այս տերմինի ընդհանրական կիրառությունն է (տես՝ 5:2): Եթե հ. 2-ում այն կիրառվում է նույնպես ընդհանրական իմաստով, որը հավանական է թվում, ապա հրեշտակների տեսությունը ամրապնդվում է:

❖ **«աղջիկներ ունեցած /նրանց ծնվեցին/»** Սա չի ակնարկում, որ նրանք աղջիկների առաջին ծնունդներն էին (տես՝ 5:4), այլ մարդկային ռասայի տարածման ընդհանուր սահմանում (BDB 408, KB 411, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ):

6:2 «Աստծո որդիները » Տե՛ս վարը տրված Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. «Աստծո որդիները» Ծննդոց 6-ում SPECIAL TOPIC: “the sons of God” in Genesis 6

Ա. Մեծ հակասություն կա «Աստծո որդիներ» արտահայտության նշանակության շուրջ: Եղել են երեք հիմնական մեկնաբանություններ.

1. Արտահայտությունը վերաբերում է Սեթի աստվածավախ տոհմաձառին (տես՝ Ծննդոց 5, տե՛ս 4:14-ի գրառումը)
2. Արտահայտությունը վերաբերում է հրեշտակային էակների մի խմբի
3. Արտահայտությունը վերաբերում է թագավորների կամ հսկաների կամ Կայենի տոհմաձառին (տես՝ Ծննդոց 4)

Բ. Սեթի տոհմաձառին վերաբերելու ապացույցներ՝

1. Ծննդոց 4 և 5-ի անմիջական գրական համատեքստը ցույց է տալիս Կայենի ապստամբ տոհմաձառի և Սեթի ընտրյալ տոհմաձառի զարգացումները: Հետևաբար համատեքստային ապացույցը կարծես թե հավանություն է տալիս Սեթի աստվածավախ տոհմաձառին
2. Ռաբբիներն այս հատվածը հասկանալու հարցում տարաձայնություններ ունեն: Ոմանք պնդում են, որ այն վերաբերում է Սեթին (սակայն շատերը՝ հրեշտակներին):
3. «Աստծո որդիներ» հոգնակի արտահայտությունը, չնայած շատ հաճախ կիրառվում էր հրեշտակային էակների համար, երբեմն էլ վերաբերում էր մարդկանց՝
 - ա. 2 Օր.14:1՝ «ՅԱՀՎԵ քո Աստծո որդիները»
 - բ. 2 Օր.32:5՝ «Նրա որդիները»
 - գ. Ելից 22:8-9; 21:6 (հավանաբար Ղևտացի դատավոր)
 - դ. Սաղմոս 73:15՝ «Քո որդիները»
 - ե. Ովսեա 1:10՝ «Կենդանի Աստծո որդիները»

Գ. Հրեշտակային էակներին վերաբերելու ապացույցներ՝

1. Սա համարվել է այս հատվածի ամենատարածված ավանդական ըմբռնումը: Ծննդոցի ավելի լայն համատեքստը կարող էր պաշտպանել այս տեսակետը որպես գերբնական չարի մեկ այլ օրինակի, որը փորձում է խեղաթուրել մարդկության համար Աստծո կամքը (ռաբբիները ասում են՝ «նախանձից ելնելով»)
2. ՀԿ-ում հոգնակի արտահայտությունը («Աստծո որդիները») չափազանց շատ է կիրառվում հրեշտակների համար

- ա. Հոր 1:6
- բ. Հոր 2:1
- գ. Հոր 38:7
- դ. Մաղմոս 29:1
- ե. Մաղմոս 89:6,7
- զ. Դանիել 89:6

3. Անկանոն 1 Ենովքի գիրքը (տես՝ 1 Ենովք 6:1-8:8; 12:4-6; 19:1-3; 21:1-10) և Հորեյանը (տես՝ Հոր 5:1), որոնք շատ տարածված էին ՆԿ-յան հավատացյալների ժամանակաշրջանում, Մեռյալ Ծովի Գալարներից *Ծննդոցի Անվալեր Գրքերի* հետ միասին, մեկնաբանում է որպես ապստամբ հրեշտակներ
4. Վեցերորդ գլխի անմիջական համատեքստը ակնարկում է, որ «հզոր մարդիկ, որոնք հնուց ի վեր անվանի էին» ծնվեցին ստեղծագործության այս անկանոն խառնուրդից:
5. Մեպտուազինտան այս «Աստծո որդիներ» արտահայտությունը թարգմանում է որպես «Աստծո հրեշտակներ»
6. 1 Ենովքի գիրքը նույնիսկ պնդում է, որ Նոյի ջրհեղեղը եղավ, որպեսզի ոչնչացնի այս հրեշտակ-մարդ միությունը, որը թշնամություն էր ՅԱՀՎԵԻ և ստեղծագործության համար Նրա ունեցած ծրագրի հանդեպ (տես՝ 1 Ենովք 7:1; 15:1; 86:1)
7. Ուզարտական գրականության մեջ «Աստծո որդիներ» արտահայտությունը վերաբերում է պանթեոնի անդամներին (այսինքն՝ ավելի ստորադաս հոգևոր էակներին)

Դ. Կայենի տոհմաձառի թագավորներին կամ հսկաներին վերաբերող արտահայտության համար ապացույց

1. Գոյություն ունեն մի քանի հնագույն թարգմանություններ, որանք պաշտպանում են այս տեսակետը
 - ա. Օնկելոսի Թարգումը (մ. թ. երկրորդ դար) թարգմանում է «Աստծո որդիներ» արտահայտությունը որպես «ազնվականների որդիները»
 - բ. ՀԿ-ի հունարեն Սիմաչուսի (մ. թ. երկրորդ դար) թարգմանությունը այս արտահայտությունը թարգմանում է որպես «թագավորների որդիները»
 - գ. «Էլոհիմ» տերմինը կիրառվում է իսրայելացի առաջնորդների համար (տես՝ Ելից 21:6; 22:8; Մաղմ.82:1,6), NIV և NET Աստվածաշնչերում:
 - դ. Ծննդոց 6:4-ում *Nephilim*-ը /հսկաներ/ կապված է *Gibborim*-ի հետ, որը նշանակում է «քաջասիրտ, զորավոր, հարուստ կամ իշխանություն ունեցող հզոր մարդիկ»
 - ե. այս մեկնաբանությունը և դրա ապացույցը վերցված է Աստվածաշնչի խրթին խոսքերը գրքից, էջ՝ 106-108:

Ե. Երկու կիրառությունների պաշտպանության համար պատմական ապացույցներ

1. Արտահայտությունը վերաբերում է Մեթի սերնդակիցներին՝

ա. Ալեքսանդրիացի Կիրիլ	ե. Կավլին
բ. Թեոդոռեթ	զ. Կայլ
գ. Օգոստինոս	է. Գլիսոն Արչեր
դ. Ջերոմ	զ. Ուոթս
2. Արտահայտությունը վերաբերում է հրեշտակներին՝

ա. Մեպտուազինտայի գրողները	է. Տերտուղիանոս	իւ. Օլֆորդ
բ. Ֆիլո	ը. Օրիգենոս	ծ. Ուեսթերմեն
գ. Չոզեֆոս (<i>Հնություններ</i> 1:3:1)	թ. Լյութեր	կ. Ուենհեն
դ. Չապթին Սարտիրոսը	ժ. Էուսիդ	հ. NET Աստվածաշունչ
ե. Իրենեոս	ի. Դելից	
զ. Ալեքսանդրիացի Կլեմենտը	լ. Հենգստներեզ	

Զ. Ինչպե՞ս են Ծննդոց 6:4-ի հսկաները կապված «Աստծո որդիների» հետ և Ծննդոց 6:1-2-ի «մարդկանց դուստրերի» հետ: Ուշադրություն դարձրեք հետևյալ տեսություններին.

1. Նրանք հրեշտակների և մարդկային կանանց միջև եղած միության արդյունքում ծնված հսկաներն են (տես՝ Թվոց 13:33):

2. Նրանք ընդհանրապես իրար հետ կապ չունեն: Նրանք պարզապես նշված են որպես Ծննդոց 6:1-2-ի օրերի դեպքերի ժամանակ և դրանցից հետո երկրի վրա գոյություն ունեցողներ:
3. Ռ. Կ. Հարրիսոնը *Հին Կտակարանի Ներածություն* /R. K. Harrison *Introduction to the Old Testament*/, էջ՝ 557-ում տալիս է հետևյալ գաղտնի մեջբերումը՝ «ամբողջովին կորցնելու անգնահատելի մարդաբանական նկարագրությունները *Homo sapiens*-ի և այս հատվածում նկարագրված նախքան Ադամը եղած տեսակների հետ փոխհարաբերության մեջ, և որոնք էլ պարտավոր են այն գիտնականներին, որոնք զինված հետևում են իրենց»:

Սրանից կարող եմ ենթադրել, որ նա այս երկու խմբերին դիտարկում է որպես հումանոիդների երկու տարբեր խմբերի ներկայացուցիչների: Սրանից կարելի է ենթադրել, որ Ադամն ու Եվան հետագա հատուկ ստեղծագործություն են, բայց նաև *Homo erectus*-ի էվոլյուցիոն զարգացում:

- Է. Ազնիվ կլինի իմ կողմից վերջում եզրափակել այս հակասական տեքստի վերաբերյալ իմ հասկացողությամբ: Առաջին հերթին, թույլ տվեք մեզ բոլորիս հիշեցնել, որ Ծննդոցի այս տեքստը շատ համառոտ և բազմանշանակ է: Մովսեսի առաջին լսարանը հնարավոր է ունեցել են հավելյալ պատմական աղբյուր կամ Մովսեսը օգտագործել է բանավոր կամ գրավոր ավանդույթ՝ Նահապետական ժամանակաշրջանից, որն ինքն էլ լիովին չէր հասկանում: Այս հարցը ճակատագրական կարևորության աստվածաբանական թեմա չէ: Հաճախ մեզ հետաքրքրում են այնպիսի բաներ, որոնց մասին Մուրր Գիրքը միայն ակնարկում է, սակայն դրանք բազմանշանակ են: Մեծ դժբախտություն կլիներ, եթե այս և նմանատիպ աստվածաշնչյան հատվածների տեղեկության հիման վրա կառուցվեր մանրակրկիտ աստվածաբանություն: Եթե մեզ անհրաժեշտ լիներ այս տեղեկությունը, ապա Աստված այն մեզ կհասցներ ավելի հստակ և մանրամասն կերպով: Ես անձնապես հավատում եմ, որ նրանք եղել են հրեշտակներ և մարդիկ, քանի որ.

1. Բովանդակությունը, չնայած որ միանշանակ չէ, սակայն «Աստծո որդիներ» արտահայտությունը ՀԿ-ում վերաբերում է հրեշտակներին
2. Սեպտուագինտան (Ալեքսանդրիական) «Աստծո որդիներ» արտահայտությունը թարգմանում է (Ք.Ա. առաջին դարի վերջ) որպես «Աստծո հրեշտակներ»:
3. 1 Ենովք անկանոն հայտնության գիրքը (հավանաբար գրված մոտ Ք.Ա. 200թ-ին) հատուկ նշում է, որ այն վերաբերում է հրեշտակներին (տես՝ 6-7 գլուխները):
4. 2 Պետրոս 2-ի և Հուդայի գրքում մեղանշած և իրենց բնակության հատուկ վայրը չպահած հրեշտակների միջև աստվածաբանական կապի պատճառով

Ես գիտեմ, որ ոմանց համար սա թվում է հակասելի Մատթեոս 22:30-ին, սակայն այս հատուկ հրեշտակները ո՛չ երկնքում էին գտնվում և ո՛չ էլ երկրի վրա, այլ մի հատուկ բանտում (*Տարտարոս*):

5. Կարծում եմ պատճառներից մեկը, որ Ծննդոց 1-11-ի շատ դեպքեր կարելի է գտնել այլ մշակույթների մեջ նույնպես (այսինքն՝ նմանատիպ պատմություններ արարչագործության, ջրհեղեղի, հրեշտակների, որոնք կանանց են առնում) այն է, որ այս շրջանում բոլոր մարդիկ միասին էին և ունեին որոշակի գիտելիքներ ՅԱՀՎԵԻ վերաբերյալ, բայց Բաբելոնի աշտարակաշինությունից հետո, երբ նրանք սփռվեցին, այս գիտությունը ապականվեց և վերածվեց բազմաստվածության մոդելի:

Այս բանի լավագույն օրինակներից է հունական առասպելները, որտեղ կես-մարդ, կես գերմարդ հսկաները, որոնք կոչվում էին Տիտաններ, բանտարկվում են *Տարտարոսում*, հենց այն նույն անուռով կոչված վայրում, որի մասին Աստվածաշնչում միայն մեկ անգամ է նշված (տես՝ 2 Պետրոս 2), և այն հրեշտակների պահման համար է, որոնք չպահեցին իրենց հատուկ բնակատեղին: Ռաբբիական աստվածաբանության մեջ Դժողքում կա արդարների համար բաժին (դրախտ) և ամբարիշտների համար բաժին (*Տարտարոս*):

❖ «մարդկանց աղջիկներին, որ գեղեցիկ էին» «Գեղեցիկ» տերմինը տառացի նշանակում է «լավ» կամ «ազնիվ» (BDB 373): Սա գլուխ 1-ից (հատկապես՝ 1:31) կարևոր աստվածաբանական հասկացություն է եղել: Այն ինչ Աստված տեսավ որպես բարի՝ լավ, այժմ Նա տեսնում է որպես չար (տես՝ հհ. 5-6):

❖ «իրենց համար կին էին առնում նրանց, որոնց ընտրում էին» Առաջին արտահայտությունը ակնարկում է ամուսնություն, որը հակառակ կլիներ այն տեսակետին, որ նրանք հրեշտակներ էին (BDB 542, KB 534, *Qal* ԱՆԿԱՏԱԲ): Սակայն երկրորդ արտահայտությունը ակնարկում է այն փաստը, որ նրանք

առնում էին նախկինում ամուսնացած կամ դեռ չամուսնացած կանանց, ում որ ցանկանում էին (BDB 103, 119, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Սրանից կարելի է ենթադրել, որ նրանք (1) հրեշտակներ էին կամ (2) Կայենի տոհմաձառից հզոր մարդ առաջնորդներ (այսինքն՝ հսկաներ), որոնք բազմակնություն էին գործադրում:

6:3 «Իմ Հոգին մարդու հետ միշտ /անգլ.՝ հավիտյան/ չի մարտնչելու» «Մարտնչել՝ պայքարել» տերմինը կարող է թարգմանվել «մնալ» (BDB 192, KB 220, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ NRSV «բնակվել»): Սա կան վերաբերում է (1) Աստծո համբերությանը (այսինքն՝ Նա հետաձգեց ջրհեղեղը մինչ որ տապանի շինությունը ավարտվեց, տես՝ 1 Պետ.3:20) կամ (2) մարդկու կյանքի տևողության նվազմանը:

Ի՞նչ կապ ունի 6:3-ը 6:2-ի և 6:4-ի հետ: Ճատ դժվար է հետևել բնագրի հեղինակի մտադրությանը այս համատեքստի միջոցով: Հավանաբար չնայած որ մարդիկ խառնվել էին հրեշտակների հետ, նրանք պետք է մեռնեին: Ինչպես որ Եվան «տեսավ» և «վերցրեց», այնպես էլ հիմա «Աստծո որդիները» «տեսան» և վերցրեցին, որը ակնարկում է նմանատիպ ապստամբություն (այսինքն՝ հավիտենական կյանք կամ անկախություն կորզելը):

❖ **«քանի որ նա նաև մարմին է»** Սա կարծես թե ծանրություն է ավելացնում այն մեկնաբանությանը, որ այն մարդիկ, որոնց մասին խոսվում է այս հատվածում, հրեշտակներ են ի հակադրություն մահկանացու մարդկանց: Աստվածաշնչի Այսօրվա Անգլերեն Տարբերակը (Today's English Version - TEV) թարգմանում է «նրանք մահկանացու են»:

❖ **«թող նրա օրերը հարյուր քսան տարի լինեն»** Սա կարծես թե ակնարկում է շնորհի մի ժամանակահատված (տես՝ 2 Պետ.2:5), որտեղ ասվում է, որ Նոյը քարոզեց այս միջանկյալ տարիներին, հետևաբար այն վերաբերում է ջրհեղեղը սկսվելուց առաջ ընկած ժամանակահատվածին: Հնարավոր է այն նաև մատնանշում էր ջրհեղեղից հետո մարդու կյանքի տևողության նվազեցումը:

6:4 «Հսկաներ /անգլ.՝ Nephilim/» Սա ակնարկում է «ընկածներին» (Եբրայերեն *naphal* բառից, BDB 658, KB 709): Ինձ թվում է, որ դա հսկաներ բառի համանուն բառն է (տես՝ Թվոց 13:33; նաև 2 Օր.2:10-11; 9:2; և Սեպտուագինտա, Վուլգատտա ու Փեշիտտա թարգմանությունները): Սակայն այլ մեկնաբաններ, ինչպիսիք են Մարթին Լյութերը և Հ. Ս. Լեոպոլդը պնդում են, որ այս տերմինը պետք է թարգմանվեր «տիրաններ», որը ենթադրում է Կայենի տոհմաձառից հզոր թագավորներ, որոնք ունեին մեծ հարեմներ:

Չ. Ուոշ Ուոթսը *Հին Կտակարանի Ուսուցում /J. Wash Watts Old Testament Teaching/*, էջ՝ 28-30, գրքում ասում է, որ «Նեֆիլիմ բառը վերաբերում է Նոյին և իր ընտանիքին, որպես մարդկանց, որոնք իրենց առանձնացրին Կայենի և Սեթի տոհմաձառերից, որոնք իրար մեջ ամուսնանում էին: Այս մեկնաբանության մեջ Նեֆիլիմը «Միակ ճշմարիտ Աստծո» որդիներն են» (տես՝ «Աստվածը» 5:22,24; 6:9): Տե՛ս վարը տրված Հատուկ Թեման:

<p>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐՁՐԱՀԱՍԱԿ, ՀՉՈՐ ՉԻՆՎՈՐՆԵՐ ԿԱՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ SPECIAL TOPIC: TERMS USED FOR TALL/POWERFULL WARRIORS OR PEOPLE GROUPS</p> <p>Այս հսկա, բարձրահասակ, հզոր մարդիկ ունեն մի քանի անվանումներ՝</p> <ol style="list-style-type: none">1. <i>Nephilim</i> (BDB 658)՝ Ծննդ.6:4; Թվոց 13:332. <i>Rephaim</i> (կամ BDB 952 կամ էլ BDB 952 II)՝ Ծննդ.14:5; 2 Օր.2:11,20; 3:11,13; Հեսու. 12:4; 13:12; 2 Թագ.21:16,18,20,22:1; 1 Մնաց.20:4,6,83. <i>Zamzumin</i> (BDB 273), <i>zuzim</i> (BDB 265)՝ Ծննդ.14:5; 2 Օր.2:204. <i>Emim</i> (Ենակի որդիները, BDB 7781)՝ Թվոց 13:33; 2 Օր.1:28; 2:10-11,21; 9:2; Հեսու. 11:21-22; 14:12,15
--

❖ **«կային այն օրերում երկրի վրա»** Նրանք, ովքեր հավատում են, որ հրեշտակները բնակվում էին մարդկային կանանց հետ միասին, կիրառում են հ. 4-ի երկրորդ մասը, ցույց տալու, որ հսկաները ծնվեցին այս կապից: Սակայն, մյուսները կիրառում են հ. 4-ի առաջին մասը, պնդելու, որ հսկաները այդ ժամանակ արդեն իսկ երկրի վրա էին:

1 Ենովքի անկանոն հայտնության գիրքը պնդում է, որ այս հսկաները արդյունքն էին մարդկային և հրեշտակային կապի և որ ստեղծագործության մեջ տիրող կարգուկանոնը խաթարելը պատճառ եղավ, որ Աստված ուղարկեց ջրհեղեղը: 1 Ենովքի գիրքը նաև պնդում է, որ այս հսկաները, ովքեր կորցրեցին իրենց ֆիզիկական մարմինները ջրհեղեղի ժամանակ, այն դեպքերն են, որոնք փնտրում են մարդկային մարմիններ վերաբնակվելու համար, իրենց եսասեր նպատակներն իրականացնելու:



NASB, NKJV «**հզոր մարդիկ**»
NRSV, NJB «**հերոսները**»
TEV «**մեծ հերոսները**»

Սա Եբրայերեն *gibbor* (BDB 150) տերմինն է, որը նշանակում է հատուկ հզորացած անձ, կենդանի կամ առարկա: Այն կիրառվում է (1) Նեբրովթի համար՝ Ծննդ.10:8-9; (2) տիրանների համար՝ Սաղմ.52:1; Եզեկ.32:27; և (3) հրեշտակների համար՝ Սաղմ.104:20 (նաև Գոհության Օրհներգ 8:11 և 20:34-ում՝ Մեռյալ Ծովի Գալարներից):



NASB, NKJV, NJB, NIV «**անվանի մարդիկ**»
NRSV «**անվանի զինվորներ**»
TEV «**հայտնի մարդիկ**»

Առաջին թարգմանությունը ամենաժամանակակից Անգլերեն Աստվածաշնչերի, ինչպես նաև Մեպտու-ազինտայի ներկայացրած մեկնաբանությունն է: Սակայն տառացի սա նշանակում է «անուն ունեցող մարդիկ» (BDB 1027): Սրա արդյունքում երեք տեսություններ ծնվեցին՝

- (1) Այն վերաբերում է Մեթի աստվածավախ տոհմաձառին, որը երկրպագում էր ՅԱՀՎԵԻՆ (այսինքն՝ Աստծո անվանը, տես՝ Ջ. Ուոշ Ուոթս)
- (2) Այն վերաբերում է Նեֆիլիմին՝ հսկաներին, որպես հրեշտակների և մարդկանց հզոր սերնդի (այսինքն՝ հսկաներին, տես՝ TEV)
- (3) Այն վերաբերում է անաստված Կայենի տոհմաձառի թագավորներին, որոնք տիրաններ էին՝ հսկաներ (տես՝ NRSV), նրանք շատ կանանց էին առնում իրենց համար որպես կին (այսինքն՝ արքայական բազմակնություն, տես՝ NJB)

Սա շատ հակիրճ և բազմանշանակ պարբերություն է: Դրա հիմնական էությունը ստեղծագործության շարունակական և ավելի թեժացող ամբարշտությունն է, որը հարթակ է պատրաստում Աստծո դատաստանի համար: Սակայն ամբարշտությունը շարունակվում է նույնիսկ Նոյի և նրա ընտանիքի կյանքում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 6:5-8
5Եվ Աստված տեսավ, որ մեծ է մարդկանց չարությունը երկրի վրա, և նրանց սրտի խորհուրդների բոլոր գաղափարները չար էին ամեն օր, **6**այն ժամանակ Տերը գղջաց, որ մարդ ստեղծեց երկրի վրա և տրտմեց Իր սրտում: **7**Եվ Տեր Աստվածն ասաց. «Երկրի երեսից ջնջելու եմ մարդուն, որին ստեղծեցի՝ մարդուց մինչև անասունը, մինչև սողունը և մինչև երկնքի թռչունը, որովհետև գղջում եմ, որ նրանց ստեղծել եմ»: **8**Բայց Նոյը Տիրոջ աչքում շնորհ գտավ:

6:5 «Եվ Աստված տեսավ, որ մեծ է մարդկանց չարությունը /ամբարշտությունը/» Սուրբ Գրքի այս բաժինը շեշտադրում է մարդու սրտում չարության զարգացումը (BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Ծննդ.6:11-12,13բ; 8:21; Սաղմ.14:3; 51:5), որը հանդիսանում է Ծննդ.1:31-ում ստեղծագործության բարության ուղղակի պարադոքսը:

❖ «**և նրանց սրտի խորհուրդների բոլոր գաղափարները չար էին ամեն օր**» Ադամի և Եվայի մեղքի անկման հետևանքները ստացել էին տիեզերական մասշտաբներ: Բոլորը, բացի վեց մարդուց, չարի կողմից անհուսության աստիճան ազդեցության ներքո էին: Նրանք գիշեր ու զօր ապրում էին միայն չարը մտածելով: «Չար խորհուրդների» գաղափարը (*ysr*, BDB 428) դառնում է մարդու բարոյական բնավորության ռաբբիական հասկացությունը: Նրանք մարդկանց դիտարկում են որպես երկու խորհուրդներից մեկը (չարը կամ բարին) գործադրողներ: Այս հայտնի առածը՝ «ամեն մարդու սրտում կամ մի սև և մի սպիտակ շուն. որին որ շատ կերակրես, այն էլ ամենամեծը կլինի» (վերաշարադրված) նկարագրում է **մարդկությանը**: Մարդու մասին այս տեսակետը պաշտպանվում է 4:7 համարի միջոցով: Հրեա աստվածաբանները որպես

այս աշխարհում չարի աղբյուր չեն շեշտադրում Ծննդոց 3-ը, այլ Ծննդոց 6-ը: Երեխաները ծնվելիս չար չեն, քանի որ բարոյական պատասխանատվությունը գալիս է միայն գիտելիքի՝ գիտակցության միջոցով (*bar mitzvah, bat mitzvah*): Չարի բաղկացուցիչները մեր ընտրություններն են՝ որոշումները:

6:6 «Տերը զոջաց... տրտմեց Իր սրտում» Սրանք մարդաբանական արտահայտություններ են: Առաջինը մեկնաբանվում է «Տերը հոգոց հանեց» (BDB 636, KB 688, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ): Երկրորդը մեկնաբանվում է «Տերը իր սրտում տրտմեց» (BDB 780, KB 864, *Hithpaal* ԱՆԿԱՏԱՐ): Սրանք Եբրայերեն ցայտուն արտահայտություններ են (տես՝ 34:7; 45:5; 1 թագ.2:33; 20:34; 2 Թագ.19:2; Սաղմ.78:40; 1 Թագ.15:11; 2 Թագ.24:16; Երեմ.18:7,8; 26:13,19; Հովնան 3:10): Սակայն կան այլ հատվածներ, որոնք պնդում են, որ Աստված երբեք չի զոջում կամ մտափոխվում (տես՝ Թվոց 23:19; 1 Թագ.15:29; Երեմ.4:28; Սաղմ.132:11): Սա այն լարվածությունն է, որ միշտ տեղի է տալիս, երբ փորձում ենք Աստծուն նկարագրել մարդկային տերմիններով: Աստված մարդ չէ, սակայն միակ տերմինները որ մենք ունենք Նրան կամ Նրա զգացմունքները նկարագրելու համար, դրանք մարդկային տերմիններն են: Պետք է հաստատել, որ Աստված դյուրափոփոխ չէ: Նա հաստատուն և համբերատար է մարդկության համար Իր փրկագործության նպատակի մեջ, սակայն մեղքից ապաշխարելու հարցում մարդու արձագանքը հաճախ է որոշում Աստծո գործողությունները հատուկ իրավիճակներում (տես՝ Սաղմ.106:45; Հովնան):

Աստվածաբանորեն Աստված է, որ փոխում է և ոչ թե մարդը: Աստված է ընտրել մեղավոր մարդու հետ գործ ունենալ: Նրա նպատակը նույնն է՝ արդար ժողովուրդ, որը կարտացոլի Իր բնավորությունը: Սա կիրականանա միայն նոր սրտով, նոր ուխտի միջոցով (տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:26-38): Աստված դատաստանից առավել նախընտրում է շնորհքը:

6:7 «Երկրի երեսից ջնջելու են մարդուն, որին ստեղծեցի» «Ջնջել» տերմինը նշանակում է «վանալ տանել /քշել տանել/» (BDB 562, KB 567, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, այսինքն՝ ջրհեղեղը): Կենդանիները տառապում են մարդկության մեղքի պատճառով (տես՝ Հռոմ.8:19-22): Ձկները ներառված չէին այս դատաստանի մեջ: Այս դատաստանը հիմնված չէր աստվածների կամակոր ցանկության հիման վրա, ինչպես սովորաբար հանդիպում ենք Միջագետքի պատմություններում, այլ մարդկության բարոյական չարության: Այս չարությունը նույնիսկ մնում է արդար Նոյի ընտանիքում (տես՝ 8:21-22), սակայն Աստծո շնորհքը որոշեց ծածկել՝ քողարկել մարդու չարությունը, մինչև Քրիստոսը կգա (տես՝ Գաղ.3):

6:8 «Տիրոջ աչքում» Սա Աստծուն մարդաբանական տերմիններով նկարագրելու մեկ այլ օրինակ է: Նա աչքեր չունի, Նա հոգի է: Սա Աստծո ամենագիտության համար կիրառվող փոխաբերություն է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 6:9-10

⁹Այս է Նոյի ծննդաբանությունը: Նոյը մի արդար ու կատարյալ մարդ էր իր սերնդում. և Նոյն Աստծո հետ քայլեց: ¹⁰Նոյը երեք որդի ծնեց՝ Սեմը, Բամը և Հաբեթը:

6:9 «Նոյը մի արդար ու կատարյալ մարդ էր իր սերնդում» Այս երկու նկարագրող տերմինները շատ կարևոր են: Առաջինն ակնարկում է, որ Նոյը համապատասխանում էր Աստծո կամքի վերաբերյալ իր հասկացողության չափանիծին: Տե՛ս Հատուկ Թեմա. Արդարություն: Երկրորդը (BDB 1070) ակնարկում է, որ նա ուներ Աստծո հանդեպ կատարյալ սիրտ (օր.՝ 7:1; Սաղմ.18:23): Երկրորդ տերմինը հետագայում կիրառվում էր անարատ գոհերի համար: Այս երկու տերմինները չեն ակնարկում Նոյի անմեղությունը, ինչպես 9:21 է ցույց տալիս:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: RIGHTEOUSNESS**

«Արդարությունը» կենսականորեն կարևոր մի այնպիսի թեմա է, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր ուսանող այս թեմայի շուրջ պետք է կատարի անձնական մանրակրկիտ սերտոգոյություն:

ՀԿ-ում Աստծո բնավորությունը նկարագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար» (BDB 841): Այս Միջագետքի /մեսոպոտամիան/ տերմինը ծագել է գետի եղեգից, որը գործածվում էր որպես շինարարական գործիք՝ ստուգելու պատերի և ցանկապատերի հորիզոնական հարթության ճշգրտությունը: Աստված ընտրեց այս տերմինը փոխաբերական իմաստով՝ Իր սեփական էությունը բնութագրելու

համար: Նա ուղիղ է, Ում միջոցով կարելի է բոլոր բաները չափել: Այս հասկացությունը հաստատում է Աստծո արդարությունը, ինչպես նաև դատաստանի մեջ Նրա արդարացիությունը՝ շիտակությունը:

Մարդը Աստծո պատկերով ստեղծվեց (տես՝ Ծննդ.1:26-27; 5:1,3; 9:6): Մարդկությունը ստեղծվեց Աստծո հետ փոխհարաբերվելու համար: Ամբողջ արարչագործությունը Աստծո և մարդկության շփման համար հանդիսանում է բեմ կամ հետին տեսարան՝ ֆոն: Աստված կամենում էր, որ Իր գլուխգործոցը՝ մարդը, ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և լինի Իր նման: Մարդու ազնվությունը փորձվեց՝ ստուգվեց (տես՝ Ծննդ.3:15) և առաջին գույգը ձախողեց այս ստուգարքը: Արդյունքում Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունը խզվեց (տես՝ Ծննդոց 3; Հռոմ. 5:12-21):

Աստված խոստացավ վերականգնել և վերսկսել այդ փոխհարաբերությունը (տես՝ Ծննդ.3:15): Նա իրականացրեց այն Իր կամքով, Իր իսկ Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել այդ ճեղքումը (տես՝ Հռոմ.1:18-3:20):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար եղավ ուխտի գաղափարը՝ հիմնված Իր հրավերի և մարդու գղջացող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա: Անկման պատճառով, մարդիկ անկարող էին նույնիսկ ճիշտ գործողությունների համար (տես՝ Հռոմ.3:21-31; Գաղատացիների 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը վերցնե՝ Իր ձեռքը, որպեսզի վերականգնե ուխտադրույթ մարդկանց: Նա դա արեց՝

1. մարդկությանը հռչակելով արդար՝ Քրիստոսի գործի շնորհիվ (դատական արդարություն):
2. մարդկությանը ձրի արդարություն տալով՝ Քրիստոսի գործի շնորհիվ (վերագրված արդարություն):
3. ապահովելով Սուրբ Հոգու բնակությունը մեր մեջ, որը մարդու մեջ արդարության պտուղն է տալիս (այսինքն՝ Քրիստոսակերպությունը՝ Աստծո պատկերի վերականգնումը):
4. վերականգնելով Եղեմի Պարտեզում ունեցած փոխհարաբերությունը

Այնուամենայնիվ, Աստված պահանջում է կտակին՝ ուխտին համապատասխան արձագանք: Աստված դնում է օրենքները (այսինքն՝ ձրիաբար տալիս է) և ապահովում, իսկ մարդիկ պետք է պատասխանեն և շարունակեն պատասխանել՝

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդության ապրելակերպով
4. հարատևությամբ

Հետևաբար, արդարությունը Աստծո և Իր արարչագործության գլուխործոցի միջև եղած ուխտի, փոխադարձ գործողություն է: Աստծո բնավորության, Քրիստոսի կատարած գործի և Սուրբ Հոգուց տված կարողության հիման վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձնապես և հարատևորեն ճիշտ կերպով արձագանքի: Այս հասկացությունը կոչվում է «հավատքով արդարացում»: Այն արձարձվում է Ավետարաններում, սակայն ոչ այս տերմինաբանությամբ: Հիմնականում այն սահմանվում է Պողոսի կողմից, որը հարյուր անգամից ավելի գործածում է հունարեն «արդարություն» տերմինը իր բազմաթիվ տարբերակներով:

Պողոսը, որպես ուսյալ ռաբբի, գործածում է *dikaioisunē* տերմինը Սեպտուագինտայում կիրառվող եբրայերենի *SDQ* տերմինի միևնույն իմաստով, և ոչ թե հունական գրականությունից: Հունական գրականության մեջ այս տերմինը կապված է այն անձնավորության հետ, որը հարմարվում է Աստվածության և հասարակության սպասումներին՝ ակնկալիքներին: Եբրայերենում այս տերմինը մշտապես հանդիպում ենք ուխտի հետ առնչվող տերմինների գործածությամբ: ՅԱՀՎԵՆ արդար, բարեհամբույր, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը: Փրկված մարդը դառնում է մի նոր արարած: Նոր արարած լինելը պատճառ է հանդիսանում աստվածահանճ նոր ապրելակերպի համար (արդարացման վերաբերյալ Հռոմեական Կաթոլիկության տված կարևորությունը): Զանի որ Իսրայելը աստվածապետություն էր, գոյություն չունե՞ր հստակ սահմանազատում աշխարհիկի (հասարակական նորմերի) և հոգևորի (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունը արտահայտվում է եբրայերեն և հունարեն տերմինների միջոցով, որոնք թարգմանվում են անգլերենում որպես «արդարացիություն» (հասարակության հետ առնչվող) և «արդարություն» (կրոնի հետ առնչվող):

Հիսուսի Ավետարանը (բարի լուրը) այն է, որ անկում ապրած մարդկությունը Աստծո հետ փոխհարաբերության մեջ վերականգնված է: Մա ի կատար ածվեց Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով. Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով. և Սուրբ Հոգու մեզ հետամուտ լինելու և ավետարանին մոտեցնելու միջոցով: Արդարացումը Աստծո կողմից մեզ տրված ձրի պարգև է, սակայն դրա արդյունքը պետք է լինի աստվածապաշտությունը (սա Օգոստինոսի տեսակետն է, որը

ներկայացնում է Ռեֆորմացիայի կողմից ավետարանի ձրի լինելու կարևորումը և Հռոմի Կաթոլիկների կողմից՝ սիրո և հավատարմության փոխված կյանքի կարևորումը): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն» տերմինը ՕԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ հոլով է (այսինքն՝ մեղավոր մարդկության Աստծուն ընդունելի դարձնելու գործողությունը /վերջնական արդարացում/), մինչ Կաթոլիկների համար այն ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ հոլով է, որը ավելի Աստծո նման դառնալու գործընթաց է /փորձառական պրոգրեսիվ արդարացում/: Իրականում իհարկե դրանք երկուսը միասին են:

Իմ կարծիքով ամբողջ Սուրբ Գիրքը, սկսած Ծննդ.4-Հայտն.20 Աստծո Եղեմի պարտեզում ունեցած փոխհարաբերության վերականգնման արձանագրություն է: Աստվածաշունչը սկսվում է Աստված և մարդ փոխհարաբերությամբ՝ սկզբնական միջավայրում (տես՝ Ծննդոց 1-2) և վերջանում է միևնույն միջավայրով (տես՝ Հայտնություն 21-22): Աստծո պատկերն ու նպատակը վերականգնվելու է:

Վերը նշված քննարկումները փաստագրելու համար նկատի ունեցեք հետևյալ ՆԿ-յան հատվածները, որոնք լուսաբանում են այս տերմինի Հունարեն բառախումբը.

1. Աստված արդար է (հաճախ առնչվող Աստծո դատավոր լինելու հետ)
 - ա. Հռոմեացիս 3:26
 - բ. 2 Թեսաղոնիկեցիս 1:5-6
 - գ. 2 Տիմոթեոս 4:8
 - դ. Հայտնություն 16:5
2. Հիսուսն արդար է.
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի անունը)
 - բ. Մատթեոս 27:19
 - գ. 1 Հովհաննես 2:1,29; 3:7
3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարություն է.
 - ա. Ղևտացիների 19:2
 - բ. Մատթեոս 5:48 (տես՝ 5:17-20)
4. Աստծո միջոցները արդարությունն իրականացնելու և ապահովելու համար.
 - ա. Հռոմեացիներին 3:21-31
 - բ. Հռոմեացիներին 4
 - գ. Հռոմեացիներին 5:6-11
 - դ. Գաղատացիներին 3:6-14
 - ե. Աստուց տրված՝
 - 1) Հռոմեացիներին 3:24; 6:23
 - 2) 1 Կորնթացիներին 1:30
 - 3) Եփեսացիներին 2:8-9
 - զ. Հավատքով ընդունված՝
 - 1) Հռոմեացիներին 1:17; 3:22,26; 4:3,5,13; 9:30; 10:4,6,10
 - 2) 2 Կորնթացիներին 5:21
 - է. Որդու գործերի միջոցով՝
 - 1) Հռոմեացիներին 5:21
 - 2) 2 Կորնթացիներին 5:21
 - 3) Փիլիպեցիներին 2:6-11
5. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն՝
 - ա. Մատթեոս 5:3-48; 7:24-27
 - բ. Հռոմեացիներին 2:13; 5:1-5; 6:1-23
 - գ. Եփեսացիներին 1:4; 2:10
 - դ. 1 Տիմոթեոս 6:11
 - ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16
 - զ. Հովհաննես 3:7
 - է. 1 Պետրոս 2:24
6. Աստծո կամքն է, որ արդարությամբ դատի աշխարհը՝
 - ա. Գործք 17:31
 - բ. 2 Տիմոթեոս 4:8

Արդարությունը Աստծուն է բնորոշ, որը ձրիաբար տրվել է մեղավոր մարդկությանը Քրիստոսի միջոցով: Այն՝

1. Աստծո պատվեր է

2. Աստծո պարզև է
3. Քրիստոսի գործն է
4. ապրելակերպ է

Սակայն այն նաև իրենից ներկայացնում է արդար դառնալու գործընթաց, որին պետք է հարատևությամբ և վճռականությամբ հետամուտ լինել, և որը իրականում կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ փոխհարաբերությունը վերականգնված է փրկությամբ, սակայն զարգանում է մեր ամբողջ կյանքի ընթացքում, որպեսզի դառնա մահվան կամ *Parousia*-ի հետ դեմադեմ իրադարձություն:

Այս քննարկումն ամփոփելու համար ահա մի լավ մեջբերում: Այն վերցված է *Պողոսի Բառարանը և Նրա Նամակները* IVP գրքից:

«Կավվինը, ավելի քան Լյութերը, շեշտադրում է Աստծո արդարության ռացիոնալ ասպեկտը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության վերաբերյալ կարծես թե պարունակում է արդարացման ասպեկտը: Կավվինը շեշտադրում է Աստծո արդարության մեզ փոխանցելու կամ հաղորդելու զարմանահրաշ բնույթը» (էջ 834):

Ինձ համար Աստծո հետ հավատացյալի փոխհարաբերությունը ունի երեք կետ.

- Ա. Ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցու և Կավվինի շեշտադրումը)
- Բ. Ավետարանը ճշմարտությունն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
- Գ. Ավետարանը փոխված կյանքն է (Կաթոլիկների շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճիշտ են և պետք է միավորվեն առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան Քրիստոնեության համար: Եթե դրանցից որևէ մեկը գերազնահատվի կամ թերազնահատվի, ապա խնդիրներ կառաջանան:

- Մենք պետք է չհուսի՛ն ողջունենք:
- Մենք պետք է հավատանք Ավետարանին:
- Մենք պետք է հետամուտ լինենք Քրիստոսակերպությանը:

❖ «Նոյն Աստծո հետ քայլեց» Այս (BDB 229, KB 246, *Hithpael* ՎԱՂԱԿԱՏԱԲ) շատ նման է 5:21-22 արտահայտությանը (*Hothispael* ԱՆԿԱՏԱԲ), որտեղ այն կիրառվում է Ենովքի համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 6:11-12

¹¹Երկիրն Աստծո առջև ապականվել էր, և Երկիրը վայրագությամբ էր լցվել: ¹²Եվ Աստված նայեց Երկրին, և ահա այն ապականված էր, որովհետև ամեն մարմին ապականել էր իր ճանապարհը Երկրի վրա:

6:11-12 Մարդու և կենդանիների համար Աստծո կամքն էր, որ նրանք լցնեին երկիրը, սակայն մեղքը բռնությամբ և չարությամբ լցրեց (BDB 569, KB 583, *Niphal* ԱՆԿԱՏԱԲ) երկիրը (տես՝ հ. 13; Սաղմ. 14:1-3; Հռոմ. 3:10-18): Այլևս Ծննդ. 1:31-ի «շատ բարի» խոսքը չի տեղին նկարագրություն չէր իրականության համար: Սա այն աշխարհը չէր, որն Աստված մտադիր էր ունենալ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 6:13-22

¹³Եվ Աստված ասաց Նոյին. «Եկել է բոլոր մարմինների վերջն Իմ առաջ, որովհետև Երկիրը նրանց պատճառով վայրագությամբ է լցվել, և ահա ես նրանց կործանելու եմ Երկրի հետ: ¹⁴Արդ դու քեզ համար խեժաբեր փայտից մի տապան շինիր և այն ներսից ու դրսից կուլարով ձեփի՛ր: ¹⁵Եվ այսպես պետք է շինես. այդ տապանի երկարությունը երեք հարյուր կանգուն, լայնությունը հիստուն կանգուն և բարձրությունը երեսուն կանգուն: ¹⁶Տապանին լուսամուտ կշինես և վերևից մի կանգուն կանես այն. և տապանի դուռը կողքից կդնես՝ ներքնատնով, միջնատնով և վերնատնով կշինես այն: ¹⁷Եվ ես, ահա ես Երկրի վրա ջրհեղեղ եմ բերելու՝ ոչնչացնելու համար բոլոր այն մարմինները, որոնց վրա կենդանության շունչ կա. երկնքի տակ և Երկրի վրա ինչ որ կա մեռնելու է: ¹⁸Բայց Իմ ուխտը կհաստատեմ քեզ հետ, և տապանը կմտնես՝ դու և քո որդիները և կինդ ու որդիներիդ կանայք քեզ հետ: ¹⁹Եվ բոլոր կենդանիներից, ամեն մարմնից երկու-երկու հատ՝ ամեն մեկից տապանը կբերես, որ քեզ հետ կենդանի մնան՝ արու և էգ լինեն: ²⁰Թռչուններից՝ իրենց տեսակի պես, Երկրի բոլոր անասուններից իրենց տեսակի պես, Երկրի բոլոր սողուններից՝ իրենց տեսակի պես. երկու-երկու հատ բոլորից քեզ մոտ գան, որ կենդանի մնան: ²¹Եվ դու քեզ համար

6:14 «քեզ համար մի տապան շինիր» ԲԱՅԸ (BDB 793 I, KB 889) *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Հնարավոր է, որ սա եգիպտական փոխառական բառ է «սնդուկ» կամ «արկղ» բառի համար (BDB 1061): Այս տերմինի միակ մյուս գործածությունը հանդիպում ենք այն գամբյուղի համար, որի մեջ դնում են մանուկ Մովսեսին (տես՝ Ելից 2:3,4):

❖ **«խեժաբեր փայտ»** Մենք հստակ չգիտենք այս բառի ստուգաբանությունը (BDB 781 7 172): Ահա տարբեր մեկնաբանություններից մի քանիսը. (1) Մեպտուազինտալ նշում է «տաշած փայտ»; (2) Վուլգատտան նշում է «հարթ փայտ»; (3) շատ մեկնաբաններ հավատում են, որ այն վերաբերում է մի տեսակ ծառի, շատ հավանական է նոճի ծառին (NRSV, REB), քանի որ հին Մերձավոր Արևելքում հիմնականում նավերը կառուցվում էին այս փայտից և պատվում էին խեժով:

❖ **«տապանին սենյակներ շինես /հայերենում բացակայում է/»** Ըստ երևույթին սա կենդանիների ամանձնացնելու համար էր, ինչպես նաև տապանի կառուցվածքին օգնելու նպատակով (նաև երեք մակարդակները՝ հարկերը):

6:15 «կանգուն» Աստվածաշնչում երկու տեսակի կանգուն գոյություն ունի (BDB 52): Սովորական կանգունը միջահասակ մարդու ամենաերկար մատի ծայրից մինչև արմունկի միջև ընկած չափսն է, սովորաբար մոտ 46սմ (տես՝ 2 Օր.3:11; 2 Մնաց.2:3): Գոյություն ունի նաև ավելի երկար կանգուն (թագավորական կանգուն), որը օգտագործվում է շինարարության մեջ (այսինքն՝ Սողոմոնի տաճարը), որը տարածված էր Եգիպտոսում, Պաղեստինում և երբեմն էլ Բաբելոնում: Այն ուներ 85 սմ երկարություն (տես՝ Եզեկ.40:5; 43:13): Տապանի ֆիզիկական չափերը հավանաբար 450 ոտնաչափ էր, 75 ոտնաչափի և 45 ոտնաչափի վրա: Ավում է, թե այն քառակուսի խորանարդաձև էր, սակայն հավանաբար այն ուներ թեք կողեր, որպեսզի հնարավոր լիներ վերահսկել այիքների հոսանքը:

Հնում մարդիկ չափերի համար կիրառում էին մարդու մարմնի տարբեր մասեր: Հնագույն Մերձավոր Արևելքի ժողովուրդները օգտագործում էին՝

1. Լայնատարած բացված ձեռքերի միջև ընկած տարածության չափը /գրկաչափ/
 2. Արմունկից մինչև միջնամատի ծայրն ընկած տարածության չափը (կանգուն)
 3. Բացված ափի բթամատի ծայրից մինչև ճկույթի ծայրը /թիզ/
 4. Փակ ձեռքի բոլոր չորս մատների միջև ընկած հեռավորությունը /ուղուկ՝ չորս մատնաչափ/
- Կանգունը (BDB 52, KB 61) լիարժեք կերպով չէր ստանդարտացվել, սակայն կային երկու հիմնական չափեր՝
- ա. նորմալ տղամարդու արմունկից մինչև միջնամատ (մոտ 46 սմ, տես՝ 2 Օր.3:11)
 - բ. արքայական կանգունը մի փոքր ավելի երկար էր (մոտ 85 սմ, տես՝ 2 Մնաց.3:3; Եզեկ.40:5; 43:13)

6:16 «Տապանին լուսամուտ կշինես» Սա այն նույն բառը չէ լուսամուտի համար, որը գործածվում է 8:6-ում: Ճատերը ենթադրում են, որ դա հենց տանիքի տակ տապանի վերնահարկում տեղադրված լուսամուտ էր՝ լուսավորության և օդափոխության համար:

6:17 «ջրհեղեղը» Որոշ ենթադրություններ կան, որ այս տերմինը (BDB 550) կապ ունի ասորերեն «բնաջնջել» տերմինի հետ:

Արդյո՞ք ջրհեղեղը Նոյի օրերում համաշխարհային մասշտաբի էր, թե միայն անտիկ Մերձավոր Արևելքում: «Երկիր» տերմինը (*eres*) հաճախ թարգմանվում է «հող»՝ տեղանքային իմաստով (տես՝ Ծննդ.41:57): Եթե մարդիկ չէին սփռվել երկրագնդի ամբողջ տարածքով, որը անշուշտ ենթադրելի է 10-11 գլուխներում Բաբելոնի Աշտարակաշինության պատմությունից, ապա տեղայնական ջրհեղեղը կարող էր ամբողջ հարցը լուծել: Լավագույն գիրքը, որ կարդացել եմ տեղայնական ջրհեղեղի ռացիոնալ ապացույցի վերաբերյալ, դա Բեռնարդ Ռեմմիի *Գիտության և Սուրբ Գրքի Զրիստոնեական Տեսակետը* /Bernard Ramm's *The Christian View of Science and Scripture*/:

❖ **«կենդանության շունչ»** Սա երբայերեն *ruach* տերմինն է: Այն կարող է կիրառվել քամու, կյանքի, շնչի կամ հոգու համար: Ավում է, որ թե՛ մարդիկ և թե՛ կենդանիները ունեն *nephesh*, սակայն միայն մարդիկ են

ստեղծված Աստծո պատկերով (տես՝ 1:26-27) և «յուրահատուկ» արարած են (տես՝ 2:7): Այս համատեքստում բոլորը, որ ունեն շունչ՝ մահանալու են (տես՝ 7:22, կենդանիներ և մարդիկ):

6:18

NASB, NKJV, NRSV

«կհաստատեն»

TEV

«կդնեն»

NET

«կհիմնեն»

ԲԱՅԻ (BDB 877, KB 1086, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) հիմնական նշանակությունն է «բարձրանալ» կամ «կանգնել»: *Hiphil* արմատը կիրառվում է «հաստատել», «վավերացնել» (տես՝ 6:18; 9:9,11,17; 17:7,19,21; Ելից 6:4; Եզեկ.16:62):

Հայտնի չէ, թե որ խոստմանը՝ ուխտին է սա վերաբերում: Հավանաբար այն 9:9,11,17-ի ստվերն է: Կարևորն այն է, որ Աստված Ինքն է հաստատելու և պահելու Իր խոստումները անկում ապրած, ապստամբ մարդկության հետ: Նույնիսկ այդ ամբարշտության միջվայրում մարդու հետ փոխհարաբերության համար Աստծո հավիտենական ծրագրերը հարատևում են:

❖ **«Իմ ուխտը ... քեզ հետ»** Սա այս տերմինի՝ *berith* (BDB 136) առաջին կիրառությունն է: Այն բացատրվում և իր ընդարձակ իմաստն է արտահայտում Ծննդ.9:8-17-ում: Այն ձևավորում է ընդհանուր մոտիվ թե՛ ՀԿ և թե՛ ՆԿ-ի համար Աստծո և մարդկության միջև փոխհարաբերությունը հասկանալու հարցում: Երկու կողմից էլ կան փոխադարձ պատասխանատվություններ, պարտավորություններ և խոստումներ: Սա հարթակ է պատրաստում մեզ համար հասկանալու Աստծո կողմից անպայմանական ուխտի և մինչդեռ յուրաքանչյուր սերնդում մարդկության պատասխանի պայմանական ասպեկտի միջև եղած բարբառային լարվածությունը: Տե՛ս վարը տրված Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ
SPECIAL TOPIC: COVENANT

ՀԿ-ի *berith* (BDB 136) տերմինը՝ ուխտը, այնքան էլ հեշտ չէ սահմանելը: Եբրայերենում չկա դրան համապատասխան ԲԱՅԸ: Բոլոր փորձերը ստուգաբանական կամ համանման սահմանում ստանալու համար համոզիչ չեն ստացվել: Սակայն, այս հասկացության ակնհայտ կարևորությունը ստիպել է աստվածաբաններին հետազոտելու բառի գործածությունը, փորձելու սահմանել դրա գործնական՝ ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը մի միջոց է, որով միակ ճշմարիտ Աստված գործ է ունենում մարդկանց հետ: Ուխտի, դաշնագրի կամ համաձայնագրի գաղափարը կարևոր դեր է խաղում աստվածաշնչյան հայտնությունը հասկանալու մեջ: Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև ընկած լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մեջ: Կան ուխտեր, որոնք հիմնված են բացառապես Աստծո բնավորության և գործողությունների վրա:

1. հենց արաչագործությունը (տես՝ Ծննդոց 1-2)
2. Աբրահամի կանչը (տես՝ Ծննդոց 12)
3. Աբրահամի հետ ուխտը (տես՝ Ծննդոց 15)
4. Նոյին պահպանելը և նրան տրված խոստումը (տես՝ Ծննդոց 6-9)

Սակայն ուխտի բնույթը ինքնին պահանջում է պատասխան՝ արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվի և չուտի Եդեմի պարտեզի կենտրոնի ծառից
2. հավատքով Աբրահամը պետք է հեռանա իր ընտանիքից, հետևի Աստծուն և հավատա ապագա սերունդներին
3. հավատքով Նոյը պետք է կառուցի մի հսկայական նավ, որը հեռու է ջրից և հավաքի կենդանիներին
4. հավատքով Մովսեսը Իսրայելացիներին հանեց Եգիպտոսից դեպի Սինա լեռը և ստացավ հատուկ ուղեցույցներ կրոնական և սոցիալական կյանքի համար՝ օրհնության և անեծքի խոստումներով (տես՝ 2 Օր.27-28):

Մարդկանց հետ Աստծո փոխհարաբերության մեջ ըդգրկված այս նույն լարվածությունը հաղորդվում է «նոր ուխտի» մեջ: Այդ լարվածությունը կարելի է հստակ տեսնել համեմատելով Եզեկիել 18-ը Եզեկիել 36:27-38-ի հետ (ՅԱՀՎԵՅի գործը): Արդյո՞ք Աստծո ողորմած գործերի վրա հիմնված ուխտը

պարտադրում է մարդու արձագանքը: Սա Հին և Նոր Ուխտերի միջև գտնվող վառվող կետն է: Երկուսի նպատակն էլ նույնն են՝

1. ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերության վերականգնումը, որը մարդը կորցրել էր Ծննդոց 3-ում

2. արդար ժողովուրդ բարձրացնելը, որը կարտացոլի Աստծո բնավորությունը:

Երեմ.31:31-34-ի նոր ուխտը լուծում է այս լարվածությունը՝ հեռացնելով մարդկային մասնակցությունը որպես ընդունելության արժանանալու միջոց: Աստծո օրենքը արտաքին օրինապահության փոխարեն դառնում է ներքին ցանկություն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, սակայն փոխվում է մեթոդը: Անկում ապրած մարդկությունը ապացուցել էր, որ արժանի չէր լինելու Աստծո պատկերի արտացոլանքը: Խնդիրը Աստծո ուխտը չէր, այլ մարդու մեղավորությունը և տկարությունը (տես՝ Հռոմեացիների 7; Գաղատացիների 3):

ՀԿ-ի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև եղած նույն լարվածությունը մնում է ՆԿ-ում: Փրկությունը բացարձակ ձրի է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ, սակայն այն պահանջում է ապաշխարություն և հավատք (թե՛ սկզբում և թե՛ շարունակվող՝ հարատև): Այն թե՛ օրենքի հայտարարություն է և թե՛ Քրիստոսի պես լինելու կոչ, որը մատնանշում է, որ Աստծո կողմից ընդունված ես և պատվիրում սրբություն: Հավատացյալները չեն փրկվում իրենց վարքով, այլ հնազանդությամբ (տես՝ Եփես.2:8-10): Աստվածավախ ապրելակերպը դառնում է փրկության վկայությունը, ոչ թե փրկության միջոց (այսինքն՝ Հակոբոս և 1 Հովհաննես): Այնուամենայնիվ հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ: Այս լարվածությունը հստակ երևում է Եբրայեցիների գրքում:

❖ «**և տապանը կմտնես՝ դու և քո որդիները և կինդ ու որդիներիդ կանայք քեզ հետ**» Նոյի անարատությունը տարածվեց իր ամբողջ ընտանիքի վրա (տես՝ 1 Կորնթ.7:14):

6:19 «կբերես» Սա կարող է ենթադրել, որ կենդանիները (տեղի, թե ամբողջ աշխարհից, հայտնի չէ) եկան Նոյի մոտ, սակայն Նոյը նրանց տեղավորեց տապանի մեջ: Հավանաբար նա այս գործը սկսեց անել ջրհեղեղից մեկ շաբաթ առաջ: Ինչպես էին այդ կենդանիները ապրում միասին և սնվում տապանի մեջ՝ առեղծված է, սակայն այն դուրս չէ ո՛չ բնական, և ո՛չ էլ գերբնական հնարավորության սահմաններից:

6:21 Տապանի վրա Նոյի և կենդանիների համար սնունդ կար (BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Սակայն, մանրամասնությունները արձանագրված չեն: Այս պատմությունը ավելի շուտ աստվածաբանական է, քան պարզապես տեղեկատվական:

6:22 «Այդպես արեց Նոյը» Կարևորագույն թեման այն է, որ Նոյը հնազանդվեց Աստծուն (տես՝ 7:5,9,16), որը հանդիսանում է հենց այն պատշաճ արձագանքը, որն Ադամն ու Եվան և մնացյալ մարդկությունը չտվեցին (օր.՝ 6:5,11-12,13):

ԾՆՆԴՈՑ 7

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ջրհեղեղը	Մեծ ջրհեղեղը	Մեծ ջրհեղեղը (6:5-8:22)	Ջրհեղեղը	Պատրաստություն ջրհեղեղի համար (6:13-7:16)
7:1-5	7:1-12	7:1-5	7:1-5	7:1-5
7:6-12		7:6-10	7:6-10	7:6 7:7-10
		7:11-16	7:11-16	7:11-12
7:13-16	7:13-16			7:13-16ա 7:16բ Ջրհեղեղը
7:17-24	7:17-24	7:17-24	7:17-24	7:17-24

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԸ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:1-5

¹Եվ Տերն ասաց Նոյին. «Դու և քո ամբողջ տունը մտե՛ք տապանի մեջ, որովհետև այս սերնդում քե՛զ տեսա արդար Իմ առաջ: ²Ամեն մաքուր անասուններից քեզ համար յոթ-յոթ հատ վերցրո՛ւ՛ արուն և նրա էզը, իսկ այն անասուններից, որ մաքուր չեն, երկու-երկու հատ՝ արու և նրա էզը: ³Երկնքի թռչուններից էլ յոթ-յոթ հատ՝ արու և էգ՝ ամբողջ երկրի վրա սերունդը ողջ պահելու համար: ⁴Որովհետև յոթ օրից հետո երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև են

բերելու, և ամեն էակի, որ արարել էի, երկրի երեսից ջնջելու են»։⁵Եվ Նոյն արեց այն ամենը, ինչ Տերը պատվիրել էր նրան:

7:1 «Տերն ասաց Նոյին» Այստեղ սա Աստծո համար ուխտի անունն է՝ ՅԱՀՎԵ, սակայն 16 համարում Նա անվանվում է *Elohim /Էլոհիմ/*: Այս տերմինների ռաբբիական հասկացությունը Աստծո անվան հետ կապված որպես փրկչի (ՅԱՀՎԵ) և որպես Արարչի (Էլոհիմ) կարծես թե համընկնում է Հնգամատյանի կիրառությունների հետ: Տես Հատուկ Թեմա. Աստվածության անունները, 2:4-ում:

❖ **«մտեք տապանի մեջ»** ԲԱՅԸ (BDB 92, KB 112) *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է:

❖ **«որովհետև այս սերնդում քե՛զ տեսա արդար Իմ առաջ»** «Արդար» տերմինն այստեղ կիրառված է այն նույն նշանակությամբ, ինչպես կիրառված է Հոբի «անմեղության» համար (տես՝ 6:9): Սա չի ակնարկում, որ նա անմեղ էր, այլ մեկն էր, որը համակերպվել էր և կատարում էր այն ինչ հասկանում էր կամ մշակութային ձևավորված էր այդ օրերում Աստծո հետ կապված հարցերում: Ուշադրություն դարձրեք, որ Նոյի արդարությունը ազդում է իր ընտանիքի վրա: Սա աստվածաշնչյան ճշմարտություն է: Սա չի նշանակում, որ մարդը կարող է Աստծո առջև արդար գտնվել մեկ ուրիշի արժանիքի շնորհիվ, այլ սա ակնարկում է, որ հոգևոր օրհնություններ են հոսում այն մարդկանցից, ովքեր ճանաչում են Աստծուն, դեպի իրենց ծանոթներին և հարազատներին (համեմատեք 2 Օր.5:9-10; 7:9 և 1 Կորնթ.7:14):

7:2 «մաքուր անասուններից յոթ-յոթ հատ վերցրու՝ արուն և նրա էգը» Ուշադրություն դարձրեք այս համատեքստում մաքուրի և անմաքուրի տարբերությունը, քանի որ սա նախամովսիսական գոհաբերության միջավայրում է տեղի ունենում (տես՝ Ղևտ.1-7): Ոչինչ չի ասվում մաքուր կենդանիների չափանիշների կամ նպատակի վերաբերյալ: Մովսեսը հետագայում հստակ կերպով այս տարբերությունը դրեց Ղևտացիների գրքում (տես՝ գլուխ 11) կերակուրի օրենքների և գոհաբերության համակարգի հետ կապված: Ծատ քննարկումներ են եղել յոթ զույգերի վերաբերյալ (տես՝ NRSV, NJB, JPSOA): Արդյո՞ք դա նշանակում յոթ առանձին կենդանիներ, թե յոթ զույգերով:

7:4 «յոթ օրից հետո երկրի վրա... անձրև են բերելու» Ռաշին ասում է, որ սա արդար Մաթուսաղայի համար սզալու ժամանակահատված էր, քանի որ նա նոր էր մահացել: Ռաբբիները հավատում էին, որ Աստված չուղարկեց ջրհեղեղը նախքան Մաթուսաղայի մահը:

Յոթօրյա շաբաթը այնքան հնուց է գալիս, որ դրա ծագումը երբեք էլ չի ժամանակագրվում: Թե՛ ամիսը և թե՛ տարին կարող են նվազեցվել լուսնային փուլերի և եղանակային փոփոխության պատճառով, սակայն ոչ շաբաթը: Հավատացյալների համար Ծննդոց 1-ն է տալիս շաբաթի օրինակը:

❖ **«քառասուն օր և քառասուն գիշեր»** «Քառասուն» տերմինը Աստվածաշնչում բավականին հաճախ է գործածվում (նայե՛ք համաբարբառում): Երբեմն այն տառացիորեն նշանակում է քառասուն օր, սակայն լինում են դեպքեր, որ այն պարզապես նշանակում է երկար անորոշ ժամանակահատված (լուսնային մեկ պտույտից ավելի երկար, որը քսանութ ու կես օր է, սակայն տարվա եղանակի փոփոխության տևողությունից ավելի կարճ): Միջագետքի մի քանի պատմություններում ջրհեղեղի ժամանակային սանդղակը յոթ օր է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 7:6-12

⁶Եվ Նոյը վեց հարյուր տարեկան էր, երբ ջրհեղեղը երկրի վրա եղավ: ⁷Եվ Նոյն ու իր որդիները, և իր կինը և իր որդիների կանայք իր հետ տապան մտան՝ ջրհեղեղի ջրերի պատճառով: ⁸Մաքուր անասուններից և այն անասուններից, որ մաքուր չեն և թռչուններից, և երկրի վրա բոլոր սողուններից ⁹զույգ-զույգ՝ արու և էգ, գնացին Նոյի մոտ՝ տապանի մեջ, ինչպես որ Աստված Նոյին պատվիրել էր: ¹⁰Եվ եղավ, որ յոթ օր հետո ջրհեղեղի ջրերը եկան երկրի վրա: ¹¹Նոյի կյանքի վեցհարյուրերորդ տարվա երկրորդ ամսում՝ ամսի տասնյոթերորդ օրը. նույն օրը մեծ անդնդի բոլոր աղբյուրները ճեղքվեցին, և երկնքի պատուհանները բացվեցին. ¹²և անձրև եղավ երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր:

7:11 «մեծ անդնդի բոլոր աղբյուրները ճեղքվեցին, և երկնքի պատուհանները բացվեցին» Համար 11-ում տրված ժամանակագրությունը հստակ է տրված (որը ենթադրում է պատմական իրողություն), ինչպես

նան բայերը, որոնք նկարագրում են այս բնական աղետը, որը տեղի ունեցավ երկրագնդի վրա (երկու *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ, BDB 131, KB 149 և BDB 834, KB 986): Երբայերեն տեքստի համար 18 և 19-ում կարող ենք տեսնել այս աղետի մասշտաբները: Երկրագնդի շատ ֆիզիկական կերպարներ հնարավոր է փոփոխության են ենթարկվել, հատկապես Մերձավոր Արևելքում: Ջրի երկու տեսակի աղբյուրներ կան՝ (1) անդունդի աղբյուրները և (2) ջրի երկնքի պատուհանները (տես՝ Սաղմ.78:23; Մաղ.3:10): Սա Ծննդոց 1-ում Աստծո կատարած գործի ճիշտ հակադարձն է: Ջրային քառսը վերադառնում է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 7:13-16

¹³Հենց նույն օրը Նոյը մտավ տապանը և Նոյի որդիները՝ Սեմը, Քամը և Հաբեթը, և Նոյի կինը և նրա որդիների կանայք նրանց հետ. ¹⁴Նրանք և բոլոր զազաններն իրենց տեսակի պես և բոլոր ընտանի կենդանիներն իրենց տեսակի պես և երկրի վրա սողացող բոլոր սողուններն իրենց տեսակի պես և բոլոր թռչուններն իրենց տեսակի պես՝ ամեն տեսակի թևավոր թռչուն: ¹⁵Եվ մտան տապանը՝ Նոյի մոտ զույգ-զույգ ամեն մարմնից, որի մեջ կյանքի շունչ կար: ¹⁶Եվ մտնողներն արու և էգ մտան ամեն մարմնից, ինչպես Աստված նրան պատվիրել էր: Եվ Տեր Աստված նրա ետևից դուռը փակեց:

7:14 Սա իր մեջ բովանդակում է Ծննդոց 1-ում նշված բոլոր ցամաքային կենդանիներին, բացառելով միայն ջրային կենդանական աշխարհը:

7:16 «Եվ Տեր Աստված նրա ետևից դուռը փակեց» ՅԱՀՎԵՆ (այսինքն՝ ուխտի, Փրկիչ Աստվածը) Ինքը փակեց դուռը: Ռաբբիներն ասում են, որ Նա այդ արեց, որպեսզի ամբարիշտներին չթողնի տապանը մտնել: Նրանք նույնիսկ այնքան են չափազանցացրել այս դեպքը, որ ասում են, որ Աստված տապանը շրջապատել էր առյուծներով և արջերով, որպեսզի դրսի մարդկանց հեռու պահի դրանից: Ինձ համար տապանը հանդիսանում է մարդկության հանդեպ ՅԱՀՎԵի ողորմության և ս մեկ դրսևորում, որպեսզի շարունակի Մեսիական տոհմաձառը, նույնիսկ դատաստանի մեջ, որը ի վերջո ապահովելու էր փրկությունը (տես՝ Ծննդ.3:15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 7:17-24

¹⁷Եվ ջրհեղեղը քառասուն օր եղավ Երկրի վրա, և ջրերը շատացան և տապանը վեր հանեցին, և այն երկրից վեր բարձրացավ: ¹⁸Եվ ջրերը սաստկանում էին և շատ շատանում էին երկրի վրա: Տապանը շրջում էր ջրերի մակերեսին: ¹⁹Եվ ջրերը Երկրի վրա շատ գորացան, և երկնքի տակ եղող բոլոր բարձր լեռները ծածկվեցին: ²⁰Ջրերը տասնհինգ կանգուն վեր բարձրացան, և լեռները ծածկվեցին: ²¹Եվ Երկրի վրա շարժվող ամեն մարմին մեռավ՝ թռչունները, արջառներն ու զազանները, երկրի վրա սողացող բոլոր սողուններն ու բոլոր մարդիկ. ²²բոլորը, որոնց ռունգերի մեջ կենդանության շունչ կար, այն ամենքը, որ ցամաքի վրա էին, մեռան: ²³Եվ ջնջվեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները. դրանք երկրից բնաջնջվեցին, և միայն Նոյը կենդանի մնաց և իր հետ տապանում եղողները: ²⁴Եվ ջրերը Երկրի վրա հարյուր հիսուն օր բարձրացած մնացին:

7:19 Այս համարի լեզուն՝ խոսքը անշուշտ ակնարկում է համաշխարհային ջրհեղեղ (տես՝ 8:21; 2 Պետ.3:6): Բայց արդյո՞ք դա այդպես էր: «Երկիր» տերմինը (*eres*, BDB 75) կարող է նշանակել «հող, ցամաք» (տես՝ 41:57): Այն կարող է Ղուկ.2:1 և Կող.1:23-ի պես դարձվածք լինել (տես՝ *Աստվածաշնչի Խոթիին Խոսքերը*, IVP էջ՝ 112-114 /*The Hard Sayings of the Bible*): Ինչ վերաբերում է ջրհեղեղի մասին աստվածաբանությանը, դրա տարածությունը նշելը անհարկի է: Նույնիսկ Միջագետքում չկան ջրհեղեղից մնացած նստվածքներ, առավել ևս ամբողջ աշխարհում: Ջրհեղեղները տարածված էին Միջագետքում՝ իրենց գետաբերաններում իրար միացած երկու մեծ գետերի համակարգի պատճառով: Հետաքրքիր քննարկման համար կարդացե՛ք Բեռնարդ Ռեմմի *Գիտության և Սուրբ Գրքի Քրիստոնեական Տեսակետը* /Bernard Ramm, *The Christian View of Science and Scripture*/:

7:22 «կենդանության շունչ» (տես՝ 1:30-ի գրառումը): Ջրային կյանքը խնայվեց:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս եք ինքներդ հասկանում «Աստծո որդիներ» արտահայտությունը և ինչո՞ւ:
2. Ի՞նչ եք կարծում, ինչու պետք է հրեշտակները ցանկանային իրենց համար մարդկային կանայք առնել:
3. Ովքե՞ր էին հսկաները /Նեֆիլիմները/:
4. Ինչպե՞ս կարող էր Աստված գղջալ:
5. Ի՞նչ է նշանակում Աստծո հետ քայլել:
6. Ինչո՞ւ ձկները չդատվեցին ցամաքային կենդանիների հետ միասին:
7. Ի՞նչ էր նշանակում մաքուր և անմաքուր կենդանի Նոյի ժամանակներում:
8. Արդյո՞ք ջրհեղեղը տեղայնացված էր, թե համաշխարհային: Ինչո՞ւ:

ԾՆՆԴՈՑ 8:1-22

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ջրհեղեղը հանդարտվում է	Նոյի ազատումը	Մեծ Ջրհեղեղը (6:5-8:22)	Ջրհեղեղի ավարտը	Ջրհեղեղը հանդարտվում է
8:1-5	8:1-5	8:1-5	8:1-5	8:1-5
8:6-12	8:6-12	8:6-12	8:6-12	8:6-12
8:13-19	8:13-14	8:13-19	8:13-14	8:13 8:14 Նրանք դուրս են գալիս 8:15-19
	Աստծո Ուխտը Ստեղծագործության հետ (8:20-9-17)		Նոյը զոհ է մատուցում	
8:20-22 (22)	8:20-22 (22)	8:20-22	8:20-22 (22)	8:20-22 (22)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԸ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ակնհայտ գուգահեռներ կան Ծննդոց 1 և Ծննդոց 7-ի միջև՝ այդ ջրային քառսի վերադարձի մեջ:

Բ. Ակնհայտ գուգահեռներ կան Ծննդոց 1 և Ծննդոց 8-ի միջև՝ Աստծո կողմից կյանքի նպաստավոր վայր հանդիսացող ցամաքը վերականգնելու մեջ:

1. Համեմատեք 1:2 և 8:1
2. Համեմատեք 1:6-7 և 8:2
3. Համեմատեք 1:22,24 և 8:17
4. Համեմատեք 1:28 և 9:1-2

Գ. Ծննդոց 8:1-19 հանդիսանում է 7:11-24-ի հակադարձումը: Սա անշուշտ գրական կառուցվածք է:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. 8:1-5

¹Եվ Աստված հիշեց Նոյին և նրա հետ տապանում գտնվող բոլոր կենդանիներին, բոլոր անասուններին, և Աստված երկրի վրա մի քամի բերեց, և ջրերը նվազեցին: ²Եվ վիհի աղբյուրները և երկնքի պատուհանները փակվեցին, և անձրևը երկնքից դադարեց: ³Եվ ջրերը գնալով երկրի վրայից քաշվում էին, և հարյուր հիսուն օր հետո ջրերը քչացան: ⁴Եվ յոթերորդ ամսում՝ ամսի տասնյոթերորդ օրը, տապանը Արարատ լեռների վրա նստեց: ⁵Եվ ջրերը գնալով քչանում էին մինչև տասներորդ ամիսը, տասներորդ ամսի մեկին լեռների գագաթները երևացին:

8:1 «Աստված» Այս տերմինը *Elohim /Էլոհիմ/* է: Տե՛ս Ծննդոց 1:1-ի գրառումները կամ Հատուկ Թեմա, 2:4-ում:

❖ **«հիշեց»** Այս տերմինը (BDB 269, KB 269, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կիրառվում է Աստծո կողմից ինչ-որ մեկի հանդեպ տեղին և անձնական գործողություն իրականացնելու իմաստով (տես՝ 8:1; 9:15; 16; 19:29; 30:22): Այն ուխտը, որն Աստված պատրաստվում էր դարձյալ կապել, Նրա էության՝ ով լինելու շնորհիվ է: Նոյը կլինի նոր մարդկության սկիզբը:

❖ **«Նոյ»** Այս անունը (BDB 629) կարող է նշանակել «հանգստություն», տարածված ստուգաբանությունն հիմնված ոչ թե բանասիրության այլ նրա հնչողության վրա:

❖ **«Աստված մի քամի բերեց»** ԲԱՅԸ (BDB 716, KB 778) *Hiphal* ԱՆԿԱՏԱՐ է: Աստված գործածեց արագացված կերպով բնական միջոցներ, որպեսզի ցամաքեցնի ջրհեղեղի ջրերը՝ հ. 2, ինչպես որ արեց Ելիցում (տես՝ Ելից 14:21):

Նաև կարող ենք տեսնել Աստծո գործողությունները 8-9 գլուխներում որպես գլուխ 1-ի գործողությունների գուգահեռում: Սա մարդկության համար մի նոր սկիզբ էր: Եթե այդպես է, ապա այստեղ քամին գուգահեռվում է 1:2-ի «Հոգին շարժվում էր» խոսքին:

❖ **«նվազեցին»** Այս նույն տերմինը (BDB 1013, KB 1491, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կիրառվում է Եսթեր 2:1-ում Թագավորի բարկության համար:

8:4 «Արարատ լեռները» Սա բացատրվել է երեք կերպ. (1) մի լեռ, որը գտնվում է թուրք-ուսական սահմանի վրա, (2) Վանա լճի մոտ դեպի հյուսիս գտնվող մի լեռ, (3) տերմինն ինքնին վերաբերում է մի ամբողջ լեռնաշղթայի (ասորական *ուրարտու*, BDB 76), ոչ թե հստակ մի գագաթի (ուշադրություն դարձրեք հոգնակի թվին՝ «լեռներ»):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. 8:6-12

⁶Եվ եղավ, որ քառասուն օրից հետո Նոյն իր շինած տապանի պատուհանը բացեց ⁷և ազոավին արձակեց, և սա դուրս եկավ, գնում ու գալիս էր մինչև երկրի վրայից ջրերի ցամաքելը: ⁸Հետո աղավնուն ուղարկեց իր մտաից, որ տեսնի, թե արդյոք ջրերը նվազե՞լ են Երկրի երեսից: ⁹Եվ

աղավնին իր ոտքը հանգստացնելու տեղ չգտնելով վերադարձավ նրա մոտ՝ տապանը, քանի որ ամբողջ երկրի երեսին ջուր կար: Եվ Նոյն իր ձեռքը մեկնեց, առավ նրան և բերեց իր մոտ՝ տապանի մեջ: ¹⁰Եվ յոթ օր էլ սպասեց և նորից արձակեց աղավնուն տապանից: ¹¹Եվ երեկոյան աղավնին նրա մոտ եկավ, և ահա բերանում ձիթենու նոր կտրված մի տերև կար. և Նոյն իմացավ, որ ջրերը Երկրի վրա քչացել են: ¹²Եվ յոթ օր էլ սպասեց և աղավնուն արձակեց, և նա այլևս չվերադարձավ նրա մոտ:

8:6 «քառասուն օր» Այս արտահայտությունը սովորաբար նշանակում է «ժամանակի երկար ու անորոշ հատված»: Այս համատեքստում օրերը՝ թվերը այնքան մասնահատուկ են նշվում, որ նշանակում է այն նշգրիտ քառասուն օր էր:

❖ **«պատուհանը»** Սա 6:16-ի բազմանշանակ (տառացի՝ «տանիք»), BDB 844 I) տերմիններից տարբերվող մի տերմին է: Դրա չափերը և տեղը հայտնի չեն, սակայն հնարավոր է եղել է հենց տանիքին:

8:6-12 Չգույշ եղեք, որ այս թռչուններին այլաբանորեն չմոտենաք: Գոյություն ունի ճիշտ այսպիսի մի զուգահեռ Միջագետքի գրականության մեջ (այսինքն՝ Գիլգամեշի Էպիկականը 11:145-55), որը կարծես թե չափից ավելի յուրահատուկ կլիներ պատահականության համար: Գոյություն ունի գրական կապ Աստվածաշնչի (այսինքն՝ Ծննդոց 1-11) և Միջագետքի գրականության միջև:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 8:13-19

¹³Եվ եղավ, որ վեցհարյուրմեկերորդ տարում՝ առաջին ամսի մեկին, ջրերը երկրի վրայից ցամաքեցին. և Նոյը տապանի ծածկը վերցրեց ու նայեց, և ահա, երկիրը չորացել էր: ¹⁴Եվ երկրորդ ամսում՝ ամսի քսանութերորդ օրը, երկիրը չորացավ: ¹⁵Եվ Աստված խոսեց Նոյի հետ և ասաց. ¹⁶«Դ՛ուրս եկ տապանից՝ դու և քո կինը և քո որդիները և քո որդիների կանայք քեզ հետ: ¹⁷Քեզ հետ եղող բոլոր կենդանիները ամեն մարմնից՝ թե՛ թռչուն, թե՛ անասուն և թե՛ երկրի վրա սողացող բոլոր սողունները քեզ հետ հանի՛ր, որ երկրի վրա բազմաման և երկրի վրա աճեն և շատանան»: ¹⁸Եվ դուրս եկավ Նոյը՝ և իր որդիները և իր կինն ու իր որդիների կանայք իր հետ: ¹⁹Ամեն կենդանի, ամեն սողուն, և ամեն թռչուն, Երկրի վրա բոլոր շարժվողները՝ իրենց տեսակներով, դուրս եկան տապանից:

8:13 «Նոյը տապանի ծածկը վերցրեց» Սա կարծես թե ակնարկում է, որ նա հեռացրեց տանիքի մի մասը (BDB 492): Չնայած որ հետագայում այս նույն տերմինը վերաբերելու է կենդանիների կաշվին, որով ծածկում են խորանը, այստեղ դժվար թե այդ նշանակությունը ունենա:

8:15 «Աստված խոսեց Նոյի հետ» Այս ամբողջ համատեքստը հայտնում է Նոյի համբերությունն ու հնազանդությունը Աստծո հրամաններին (այսինքն՝ 8:15-19) որպես զուգահեռ 7:1-5:

8:16 «Դ՛ուրս եկ» Սա հհ. 16-17-ի մի քանի հրամաններից առաջինն է.

1. «դ՛ուրս եկ», *Qal* ՀՐԱՄԱՅԱՅԱԿԱՆ (BDB 422, KB 425), հ. 16
2. «հանի՛ր», *Hiphil* ՀՐԱՄԱՅԱՅԱԿԱՆ (BDB 422, KB 425), հ. 17
3. «աճեն», *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ կիրառված ՀՐԱՄԱՅԱՅԱԿԱՆ իմաստով (BDB 1056, KB 1655), հ. 17
4. «շատանան», *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ կիրառված ՀՐԱՄԱՅԱՅԱԿԱՆ իմաստով (տես՝ 9:1,7, BDB 915, KB 1176), հ. 17

Այս հրամանները համազոր են Ծննդոց 1:22,24-ին: Ինչ-որ իմաստով Աստված ամեն ինչ նորից է սկսում: Քառսի ջրերը բնաջնջեցին ամբողջ ցամաքային կյանքը, բացի այն ինչ տապանում էր: Աստծո սկզբնական նպատակը շարունակվում է (տես՝ 6:18):

8:17 Աստծո այս հրամանները (նաև 9:1) համազոր են Ծննդոց 1:22,24-ին: Տե՛ս այս գլխի սկզբում տրված Համատեքստային Հասկացությունները:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 8:20-22

²⁰Եվ Նոյը մի զոհասեղան շինեց ՏԻՐՈՋ համար և վերցրեց բոլոր մաքուր անասունից և բոլոր մաքուր թռչունից և զոհասեղանի վրա ողջակեզներ մատուցեց: ²¹Եվ ՏԵՐԸ հոտոտեց անուշ հոտը,

և ՏԵՐՆ ասաց Իր սրտում. «Այլևս չեմ անիծի Երկիրը մարդու պատճառով, որովհետև մարդու սրտի խորհուրդը մանկուց չար է, և այլևս չեմ հարվածի երբեք ամեն մի կենդանի արարածի, ինչպես արեցի: ²²Որքան ժամանակ որ երկիրը կմնա, սերմն ու հունձքը, և ցուրտն ու տաքը, ամառն ու ձմեռը, և ցերեկն ու գիշերը չեն դադարի»:

8:20 «Եվ Նոյը մի գոհասեղան շինեց» Նրա առաջին գործը եղավ երկրպագությունն ու գոհությունը: Չոհաբերությունը հնուց եկած գործողություն է (տես՝ 4:3; 12:7,8; 13:18; 22:19): Սա նաև Գիլգամեշի Էպիկականում տրված Գիլգամեշի առաջին գործողությունն էր ջրհեղեղից անմիջապես հետո (տես՝ 11:156-158):

❖ **«բոլոր մաքուր անասունից»** Մաքուր և անմաքուր կենդանիների չափորոշիչն անհայտ է (տես՝ 7:2), սակայն ըստ երևույթին կապ ունի գոհաբերության հետ, և որ թե սննդակարգային կանոնների (տես՝ Ղևտ. 11; 2 Օր. 14):

8:21 «Տերը հոտուեց անուշ հոտը» Աստվածաշնչում այս արտահայտությունը գործածվում է Աստծո կողմից գոհաբերության ընդունված լինելու իմաստով (հատկապես Ղևտ. և Թվոց): Այն չի ակնարկում, որ այդ միաբ կերակուր էր Աստծո համար, ինչպես որ նշվում է Գիլգամեշի Էպիկականում (տես՝ 11:159-161): Աստվածաշունչը երբեք գոհաբերության համակարգը չի դիտարկում որպես կերակուր Աստծո համար, ինչպես որ ծրջապատող ազգերի սովորությունն էր:

❖ **«Այլևս չեմ անիծի Երկիրը... այլևս երբեք չեմ հարվածի ամեն մի կենդանի արարածի»** Այս գուգահեռ խոսքերը ցույց են տալիս Աստծո սրտում Նրա ստեղծագործության հանդեպ ունեցած Իր սիրո (տես՝ Եսայի 54:9) և Իր արդարության միջև լարվածությունը: Մարդկությունը չար է և ապականված, սակայն Աստված որոշել է մեզ հատ աշխատել ժամանակի ընթացքում և շտկել այդ վիճակը վերջին օրերում: Այս դատաստանի մեջ Աստծո վերաբերմունքը մեղավոր մարդկության հանդեպ փոխվեց: Մարդիկ դեռևս չար են: Աստծո վերաբերմունքը կրկին կփոխվի, երբ Իր ժողովուրդը ի վիճակի չի լինի պահելու Մովսիսական ուխտը: Աստված հաստատելու է մի նոր ուխտ (տես՝ Երեմ. 31:31-34 և Եզեկ. 36:27-38): Մարդիկ Աստծո առջև կարդարանան Մեսիայի կյանքի և գոհաբերության շնորհիվ:

Չնայած իհարկե ճիշտ է, որ Աստված խոստանում է, որ երբեք ևս մի ջրհեղեղ չի ուղարկի, 2 Պետ. 3:10-ը պնդում է, որ Նա երկիրը կսրբի՝ կմաքրի կրակով: Աստված աշխատելու է մեղավոր մարդկության հետ, սակայն Նրա նպատակը արդարությունն է (տես՝ Ղևտ. 19:2; Մատթ. 5:48):

❖ **«մարդու սրտի խորհուրդը մանկուց չար է»** Ջրհեղեղից առաջ այդքան ակնհայտ չարությունը (տես՝ 6:5,11,12,13) դեռևս ընկած մարդկության ներսում է, ինչպես որ Նոյը և նրա ընտանիքը այս փաստը հստակ կհաստատեն:

8:22 Բնության մեջ առկա այս հաստատուն վիճակն է, որ արևմտյան գիտության համար վերելք է հանդիսացել: Աստված հաստատեց միօրինականությունը (այսինքն՝ բնության մեջ տեղի ունեցող կանոնավոր, միօրինակ գործողությունները): Սակայն, ուշադրություն դարձրեք «որքան ժամանակ որ երկիրը կմնա» սկզբնական արտահայտությունը: Համար 22-ը անգլերեն թարգմանության մեջ տպագրված է պոետիկ տեսքով:

ԾՆՆԴՈՑ 9:1-29

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ծիածանի ուխտը	Ստեղծագործության հետ Աստծո ուխտը (8:20-9:17)	Աստծո ուխտը Նոյի հետ	Աստծո ուխտը Նոյի հետ	Նոր Աշխարհի կարգուկանոնը
9:1-7	9:1-7	9:1-7	9:1-6	9:1-7
(6-7)	(6-7)	(6)	9:7	(6)
9:8-17	9:8-17	9:8-17	9:8-17	9:8-11 9:12-16 9:17
	Նոյը և Նրա Որդիները	Նոյի անեծքը Բանանին	Նոյը և Նրա Որդիները	Նոյը և Նրա Որդիները
9:18-19	9:18-19	9:18-19	9:18-19	9:18-19
9:20-27	9:20-23	9:20-27	9:20-27	9:20-27
(25-27)	9:24-27 (25-27)	(25-27)	(25-27)	(25:27)
9:28-29	9:28-29	9:28-29	9:28-29	9:28-29

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵԶՍՏ. 9:1-7

¹Եվ Աստված օրհնեց Նոյին ու նրա որդիներին և ասաց նրանց. «Աճեցե՛ք և բազմացե՛ք և լցրե՛ք Երկիրը: ²Եվ ձեր ան ու երկյուղը երկրի բոլոր գազանների վրա ու երկնքի բոլոր թռչունների վրա լինի. երկրի վրա բոլոր շարժվողների ու ծովի բոլոր ձկների վրա. դրանք ձեր ձեռքն են հանձնված: ³Ամեն մի շարժվող կենդանի ձեզ համար թող կերակուր լինի, կանաչեղենի պես ձեզ եմ տվել բոլորը: ⁴Միայն թե միսն իր կյանքով, այսինքն՝ իր արյունով չուտե՛ք: ⁵Եվ ձեր արյունն էլ ձեր կյանքի համար կպահանջեմ, ամեն կենդանու ձեռքից կպահանջեմ, և մարդու ձեռքից. ամեն մարդու եղբոր ձեռքից մարդու կյանքը կպահանջեմ: ⁶Ով որ մարդու արյուն թափի, նրա արյունը մարդու միջոցով թափվի, որովհետև Աստծո պատկերով Նա ստեղծեց մարդուն: ⁷Իսկ դուք աճեցե՛ք ու բազմացե՛ք, մեծապես աճեցե՛ք երկրի վրա ու նրանում բազմացե՛ք»:

9:1 «Աճեցե՛ք և բազմացե՛ք և լցրե՛ք Երկիրը» Ուշադրություն դարձրեք երեք *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ՝ «աճեցե՛ք /անգլ.՝ պտղաբեր եղեք/» (BDB 826, KB 963), «բազմացե՛ք» (BDB 915, KB 1176), «լցրե՛ք Երկիրը» (BDB 569, KB 583): Սա մարդկության համար երկրորդ սկիզբն է (տես՝ 1:28), սակայն նկատեք, որ մեղքը հրամանի մեջ փոփոխության պատճառ էր եղել՝ «տիրեցե՛ք և իշխեցե՛ք» խոսքը բացակայում է:

9:2 «ան ու երկյուղը» Մարդկությունը կենդանիների հետ մի նոր փոխհարաբերության մեջ է մտնում, ոչ թե խաղաղության և ընկերության, ինչպես որ Եղեմի պարտեզում էր և լինելու է ապագայում (Եսայի 11), այլ ան ու վախի (BDB 432) և երկյուղի (BDB 369): Մեպտուազինտան այս համարին ավելացնում է «անասուններ» բառը, սակայն տնային կենդանիներին սա չի վերաբերում:

9:3 «Ամեն մի շարժվող կենդանի ձեզ համար թող կերակուր լինի» Սկզբում մարդկությունը բուսակեր էր (համենայն դեպս Եղեմի պարտեզում), սակայն անկումից հետո և քանի որ ինչ-որ ժամանակ դեռ բերք չէին կարող ունենալ ջրհեղեղից հետո, միայն դարձավ մարդու համար թույլատրելի: Նաև ուշադրություն դարձրեք, որ տարբերություն չկար մարդու և անմարդու կենդանիների միջև սպառման հարցում (շատ տարբեր է Ղևտացիների 11-ից), սակայն տարբերություն կար գոհաբերության դեպքում (տես՝ 7:2):

9:4 «միայն թե միսն իր կյանքով, այսինքն՝ իր արյունով չուտե՛ք» Սա գոհաբերության համակարգի համար դրված աստվածաբանական հիմքն է (տես՝ Ղևտ. 17:10-16; 2 Օր. 12:16,23; Գործք 15:29) և Բրիստոսի մահվան նշանակությունը: Մեղքի համար կյանք է վճարվում: Աստված Իր ողորմությամբ այն փոխանակում էր կենդանու կյանքով:

9:5-6 «նրա արյունը մարդու միջոցով թափվի» Սա «աչք աչքի դիմաց» արդարության առաջին հայտարարությունն է: Այն ցույց է տալիս Աստծո կողմից հրահանգված մահապատժի իրավունքը: ՀԿ-ում սա իրականացվում էր «go'el» (հարազատին փրկագնող): Հնարավոր ՆԿ-յան համարների համար տե՛ս Գործք 25:11 և Հռոմ. 13:4:

Համար 5-ը արձակ է, մինչ համար 6-ը տպագրված է պոետիկ զուգահեռ տողերով:

Գոյություն ունի Եբրայերեն հավանական բառախաղ, որը նույնիսկ կարող է ազդել արյուն (*dam*) և մարդ (*adam*) բառերի ստուգաբանության վրա: Ասորերենում մարդ (*adam*) տերմինը կապված է սրբարան (*adman*) տերմինի հետ: Հետևաբար հնարավոր է ինչ-որ կապ լինի արյուն-երկրպագություն-մարդկություն բառերի միջև (տես՝ Ռոբերտ Բ. Գրիլսթոուն, *Հին Կտակարանի Հոմանիշներ*, էջ՝ 45 /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*):

❖ «որովհետև Աստծո պատկերով Նա ստեղծեց մարդուն» Սա ցույց է տալիս մարդկության առաջնայնությունը (տես՝ 1:26,27; 5:1,3): Ինչպիսի՛ սրանչելի արտոնություն և պատասխանատվություն:

9:7 «Մեծապես աճեցե՛ք երկրի վրա» Սա զուգահեռ է 1:22,24,28: Գլուխ 8-9 ձևավորում է Ծննդոց 1-ում Աստծո արտահայտված կամքի և գործողությունների վերանախաձեռնում: Այս համարն ունի չորս *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, մինչ հ. 1-ն ունի երեքը: Ռաբբիներն ասում են, որ սպանության այս համատեքստի պատճառով (հ. 5-6) նրանք, ովքեր մերժում են երեխաներ ունենալ, նույնպես խախտում են այս հրամանը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:8-17

⁸Եվ Աստված խոսեց Նոյի և նրա որդիների հետ՝ ասելով. ⁹«Եվ Ես ահա Իմ ուխտը հաստատում եմ ձեզ հետ և ձեզանից հետո ձեր սերնդի հետ, ¹⁰և ձեզ հետ եղող ամեն շնչավոր կենդանու հետ՝ թե՛ թռչնի, թե՛ անասունի և թե՛ ձեզ հետ եղող ամեն գազանի հետ, տապանից ելածներից բոլորի հետ՝ երկրի բոլոր կենդանիների հետ: ¹¹Եվ Իմ ուխտը հաստատում եմ ձեզ հետ, որ այլևս ոչ մի մարմին չքիչեղեղի ջրերից չի կործանվի, և այլևս ջրիեղեղ չի լինի երկիրը կործանելու համար»: ¹²Եվ Աստված ասաց. «Մա է այն ուխտի նշանը, որ Ես դնում եմ Իմ և ձեր միջև և ձեզ հետ եղող ամեն շնչավոր կենդանու միջև հավիտենական դարերի համար. ¹³իմ աղեղը դրեցի ամպի մեջ, և դա ուխտի նշան թող լինի Իմ ու երկրի միջև: ¹⁴Եվ թող լինի, որ Ես երկրի վրա ամպ բերելիս՝ աղեղը երևա ամպի մեջ: ¹⁵Այն ժամանակ Ես կհիշեմ Իմ ուխտը, որ Իմ ու ձեր միջև և ամեն մարմնից ամեն շնչավորի միջև է, և ջրերն այլևս հեղեղ չեն դառնա՝ ամբողջ կենդանությունը ոչնչացնելու համար: ¹⁶Եվ աղեղն ամպի մեջ կլինի, և Ես այն կտեսնեմ, որպեսզի հիշեմ այն հավիտենական ուխտը՝ Աստծո և ամեն կենդանի արարածի միջև, որ երկրի վրա է»: ¹⁷Եվ Աստված Նոյին ասաց. «Մա է այն ուխտի նշանը, որ Ես հաստատեցի Իմ ու երկրի վրա եղող ամեն մարմնի միջև»:

9:9 «Ես ահա հաստատում եմ» Այս ուխտը անպայմանական է և ամբողջովին կախված է Աստծո շնորհից (տես՝ 9,11,12,17): Մյուս ուխտերը՝ ներառյալ Ադամի հետ և Աբրահամի հետ կապած ուխտերը, ունեն պայմաններ: Տե՛ս Հատուկ Թեմա. Ուխտ, 6:18-ում:

9:12 «բոլոր /հավիտենական/ սերունդների /դարերի/ համար» «Բոլոր» (*olam*), ինչպես հ. 16-ում, նշանակում է «հավիտենական»: Տե՛ս Հատուկ Թեմա 3:22-ում: Նաև Ռաշին նշում է, որ «սերունդներ» բառը սխալ է հեզված Եբրայերեն տեքստում: Նա մեկնաբանում է դա, որպես թե այդ ուխտը միայն այն սերունդների համար է, որոնք ունեն արատավոր հավատը:

9:13 «աղեղ... նշան» Հնարավոր է, որ ծիածանը առաջին անգամ այստեղ է հայտնվում: Ծննդոց 2:5-6 ակնարկում է, որ սկզբում երկիրը ռոտովում էր ոչ թե անձրևի միջոցով, այլ մի ուրիշ կերպ (այսինքն՝ գետնից գոլործի էր բարձրանում): Հնարավոր է, որ աղեղը (BDB 905) մի գենը էր, որն Աստված իջեցրեց (այսինքն՝ դատաստանով չի բնաջնջի մարդկությանը): Հին ժամանակներում աղեղ վեր բարձրացնելը խաղաղության խորհուրդն ուներ: Նաև հնարավոր է, որ Աստված մի նոր իմաստ հաղորդեց ամբողջ ֆիզիկական գոյությանը:

❖ **«և ջրերն այլևս հեղեղ չեն դառնա՝ ամբողջ կենդանությունը ոչնչացնելու համար»** Մա չի նշանակում, որ ընդհանրապես ջրիեղեղներ չեն լինի, այլ այլևս համաշխարհային ջրիեղեղ չի լինի, որը կբնաջնջի ամբողջ մարդկությանն ու կենդանական աշխարհը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:18-19

¹⁸Եվ Նոյի՝ տապանից դուրս եկած որդիներն էին Սեմը, Քամը և Հաբեթը: Եվ Քամը Քանանի հայրն է: ¹⁹Այս երեքը Նոյի որդիներն էին, և սրանցից ամբողջ երկիրը բնակեցվեց:

9:18 «Սեմ» Այս անվան ստուգաբանությունը կարող է նշանակել «անվանի» կամ «անուն» (BDB 1028 II):

❖ **«Քամ»** Այս անունը կարող է նշանակել «տաք» (KB 325 II): Հնարավոր է, որ այն անդրադարձել է Եգիպտոսի հնագույն անվան վրա (այսինքն՝ «տաք հողեր»):

❖ **«Հաբեթ»** Այս անվան ստուգաբանությունը կարող է լինել «տարածող» կամ «ընդարձակող» (BDB 834, տե՛ս Եբրայերեն բառախաղը հ. 22-ում):

❖ **«Քանան»** Նա (BDB 488) հավանաբար նշված է երկու պատճառով. (1) Նոյի հարբած վինակը և արդյունքում անեծքը ազդելու է Քանանի վրա կամ (2) Քանանացիները հետագա տարիների ընթացքում (այսինքն՝ Մովսեսի կյանքի ընթացքում) կդառնան Իսրայելի հիմնական աստվածաբանական պրոբլեմը:

9:19 Մա Աստծո կողմից պարբերաբար կրկնվող նպատակ է (այսինքն՝ երկիրը լցնել): Բաբելոնի Աշտարակը այս երևույթի ճիշտ հակառակն էր:

Հետաքրքիր է, որ ժամանակակից միտոքոնդրիոմական ԴԵԹ ուսումնասիրությունները եզրահանգել են, որ առաջին մարդիկ եկել են Աֆրիկայի հյուսիսից, մինչ արդի բանասիրությունը հայտնաբերել է, որ բոլոր մարդկային լեզուները ծագել են հյուսիսային Հնդկաստանում: Ուշադրություն դարձրեք, թե աշխարհագրական առումով որքան մոտ են այս փաստերը աստվածաշնչյան իրողությանը:

Ըստ երևույթին բոլոր մարդկային տարբեր ցեղերը այս երեք եղբայրների ուղղակի սերունդներն են: Արդի ԴԵԹ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր ցեղերի մարդիկ գենետիկորեն նույնն են:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 9:20-27

²⁰Եվ Նոյն սկսեց այգեգործությամբ զբաղվել և խաղողի մի այգի տնկեց: ²¹Եվ խմեց գինուց ու հարբեց և իր վրանի մեջ մերկ էր: ²²Եվ Քամը՝ Քանանի հայրը, տեսավ իր հոր մերկությունը և դրսում իր երկու եղբայրներին պատմեց: ²³Եվ Սեմն ու Հաբեթը հագուստն առան և իրենց երկուսի ուսերին դրեցին ու ետ-ետ գնալով՝ իրենց հոր մերկությունը ծածկեցին. և նրանց դեմքերը դեպի ետ էին, և իրենց հոր մերկությունը չտեսան: ²⁴Երբ Նոյն իր գինովությունից ուշքի եկավ, իմացավ, թե ինչ էր արել իր փոքր որդին իրեն: ²⁵Եվ ասաց. «Անիծյալ լինի Քանանը, ծառաների ծառա լինի նա իր եղբայրների առաջ»: ²⁶Նաև ասաց. «Օրհնյալ լինի Սեմի Տեր Աստվածը, և Քանանը նրա ծառան լինի: ²⁷Աստված թող ընդարձակի Հաբեթին, և նա Սեմի վրաններում բնակվի, և Քանանը ծառայի նրան»:

9:20 «Նոյն սկսեց այգեգործությամբ զբաղվել» NASB և RSV թարգմանությունները կարծես թե շատ մանրամասն են դիտարկում Եբրայերենի բառերը. Նոյը առաջին այգեգործը չէր. իսկ ի՞նչ կասեք Կայենի մասին (4:2) կամ Դամեթի (5:29): NRSV թարգմանությունը տալիս է «Նոյը՝ հողագործ»:

9:21 «հարբեց» Հարբեցողությունը (BDB 1016 I, KB 1500) Սուրբ Գրքում պարբերաբար դատապարտվում է (տես՝ Առակ.23:29-39): Մինչդեռ խնդիրը գինին չէ, այլ մարդու կողմից դրա չարաշահումը (տես՝ 2 Օր.14:26; Սաղմ.104:15; Առակ.31:6-7):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԻՆԻ ԵՎ ՈՉԵԼԻՑ ԽՄԻԶՔ
SPECIAL TOPIC: WINE AND STRONG DRINK**

**I. Աստվածաշնչյան տերմինները
Ա. Հին Կտակարան**

1. *Yayin* – Սա հունարեն գինի բառի ընդհանուր տերմինն է (BDB 406), որը կիրառվել է 141 անգամ: Ստուգաբանությունը անհայտ է, քանի որ ունի Եբրայերեն արմատ: Այն միշտ նշանակում է թթվեցրած պտղաջուր՝ հիմնականում խաղողի: Տիպիկ սուրբգրային հաստվածներն են՝ Ծննդ.9:21; Ելից 29:40; Թվոց 15:5,10:
2. *Tirosh* – Սա «նոր գինին» է (BDB 440). Մերձավոր Արևելքի կլիմայական պայմանների պատճառով թթվեցումը /խմորվելը/ սկսում էր հյուսիս քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերում է թթվեցման ընթացքի մեջ գտնվող գինուն: Մի քանի տիպիկ սուրբգրային հաստվածների համար նայեք 2 Օր.12:17; 18:4; Ես.62:8-9; Ովս.4:11.
3. *Asis* – Ակնհայտ է, որ սա ակոհոլային ընպելիք է («քաղցր գինի» BDB 779, օր.՝ Հովել 1:5; Ես.49:26).
4. *Sekar* – Սա «ուժեղ խմիչք» տերմինն է (BDB 1016). Եբրայերեն արմատը կիրառվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինում: Այն իր մեջ պարունակում է ավելացված մի բան, որը ավելի է ակոհոլացնում: Այն *yayin* բառի հոմանիշն է (տես՝ Առակ.20:1; 31:6; Ես.28:7).

Բ. Նոր Կտակարան

1. *Oinos* – *yayin* բառի հունարեն համարժեքը
2. *Neos oinos* (նոր գինի) – *tirosh* բառի հունարեն համարժեքը (տես՝ Մարկ. 2:22).
3. *Gleuchos vinos* (քաղցր գինի, *asis*) – Թթվեցման սկզբնական փուլում գտնվող գինի (տես՝ Գործք 2:13):

II. Իսմորումը

Ա. Իսմորումը սկսում է շատ շուտով՝ խաղողը տրորվելուց մոտ վեց ժամ հետո:

Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ մակերևույթին թեթև փրփուր է երևում (խմորման նշան), ապա այն ենթակա է գինու տասանորդի (*Ma aseroth* 1:7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղոր գինի»:

Գ. Սկզբնական ուժեղ խմորումը ավարտվում էր մեկ շաբաթ անց:

Դ. Երկրորդ խմորումը տևում էր մոտ քառասուն օր: Այս վիճակում այն համարվում էր «հին գինի» և կարող էր մատուցվել զոհասեղանի վրա (*Edhuyyoth* 6:1):

Ե. Գինին, որը հանգստանում էր իր մրուրի մեջ (հին գինին) համարվում էր լավ գինի, սակայն օգտագործումից առաջ պետք է լավ քամվեր:

Զ. Գինին համարվում էր պատշաճ կերպով հնեցված, սովորաբար մեկ տարի խմորումից հետո: Երեք տարին ամենաերկար ժամանակն էր, որ կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է նոսրացվեր ջուր խառնելու միջոցով:

Է. Միայն վերջին 100 տարիներին է, որ ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների շնորհիվ հնարավոր է դարձել խմորման ժամկետը երկարացնել: Հնագույն ժամանակներում մարդիկ չեն կարողացել կանգնեցնել բնական խմորման ընթացքը:

III. Աստվածաշնչյան կիրառությունը

Ա. Հին Կտակարան

1. Գինին Աստծո պարգև է (Ծննդ.27:28; Սաղմ.104:14-15; Ժող.9:7; Ովս.2:8-9; Հովել 2:19,24; Ամովս 9:13; Չաք.10:7):
2. Գինին զոհաբերության մասն է կազմում (Ելից 29:40; Ղևտ.23:13; Թվոց 15:7,10; 28:14; 2 Օր.14:26; Դատ.9:13):
3. Գինին օգտագործվում էր Իսրայելի տոնակատարություններին (տես՝ 2 Օր.14:26):
4. Գինին օգտագործվում էր որպես դեղամիջոց (2 Թագ.16:2; Առակ.31:6-7):
5. Գինին կարող է իսկական պրոբլեմ լինել (Նոյ՝ Ծննդ.9:21; Ղովս՝ Ծննդ.19:33,35; Սամսոն՝ Դատ.16:19; Նաբադ՝ 1 Թագ.25:36; Ուրիա՝ 2 Թագ.11:13; Ամնոն՝ 2 Թագ.13:28; Հեղի՝ 3 Թագ.20:12; Իշխանները՝ Ամովս 6:6 և Կանայք՝ Ամովս 4):
6. Գինին ունի իրեն կցված զգուշացում բռնության դեմ (տես՝ Առակ.20:1; 23:29-35; 31:4-5; Ես.5:11,22; 19:14; 28:7-8; Ովս.4:11):
7. Գինին արգելված է որոշ խմրի մարդկանց (ծառայության մեջ գտնվող քահանաները՝ Ղևտ.10:9; Եզեկ.44:21; Ուխտավորները՝ Թվոց 6; և իշխանները՝ Առակ.31:4-5; Ես.56:11-12; Ովս.7:5):
8. Գինին օգտագործվում է էսկատոլոգիական միջավայրում (Ամովս 9:13; Հովել 3:18; Չաք.9:17):

Բ. Միջաստվածաշնչյան՝ անկանոն գրքերը

1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող.31:27-30):
2. Ռաբբիներն ասում են. «Գինին դեղամիջոցներից ամենալավն է, որտեղ չկա գինի, այնտեղ կարիք կա դեղերի» (BDB 58բ):

Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը վերածեց գինու (Հովհ.2:1-11):
2. Հիսուսը գինի խմեց (Մատթ.11:18-19; Ղուկ.7:33-34; 22:17):
3. Պետրոսը մեղադրվեց «նոր գինով» գինովցած լինելու մեջ՝ Պենտեկոստի օրը (Գործք 2:13):
4. Գինին կարելի է օգտագործել որպես դեղամիջոց (Մարկ.15:23; Ղուկ.10:34; 1 Տիմ.5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահեն գինին: Սա չի նշանակում, որ ամբողջովին զրկվեն դրանից (1 Տիմ.3:3,8; Տիտ.1:7; 2:3; 1 Պետ.4:3):
6. Գինին կիրառվում է էսկատոլոգիական միջավայրում (Մատթ.22:1գ; Հայտն.19:9):
7. Հարբեցողությունը դատապարտված է (Մատթ.24:49; Ղուկ.12:45; 21:34; 1 Կորնթ.5:11-13; 6:10; Գաղ.5:21; 1 Պետ.4:3; Հռոմ.13:13-14):

IV. Աստվածաբանական հասկացությունը

Ա. Բարբառային լարվածությունը

1. Գինին Աստծո պարզև է
2. Հարբեցողությունը մեծ պողոլեմ է
3. Մեր օրինակը Քրիստոսն է (Մատթ.15:1-20; Մարկ.7:1-23; Հռոմ.14; 1 Կորնթ.8-10)

Բ. Աստծուց նշանակված սահմաններն անցնելու հակվածությունը

1. Աստված է բոլոր բարիքների աղբյուրը:
2. Մարդը չարաշահել է Աստծուց տրված բոլոր պարզևները՝ դրանք հանելով Աստծո կողմից դրված սահմաններից դուրս:

Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական արարչագործության մեջ ոչ մի չար բան չկա (տես՝ Հռոմ.14:14, 20):

9:22 «տեսավ իր հոր մերկությունը և դրսում իր երկու եղբայրներին պատմեց» Քամի մեղքը (1) իր հոր հանդեպ անհարգալից վերաբերմունքն էր կամ (2) ինչ-որ տեսակի սեռական գործողությունը (տես՝ Ղևտ.18:6,7): Եբրայեցիների մոտ մերկությունը գիտակցական լրջություն է ներկայացնում:

Աստվածաբանական իմաստով, սա ցույց է տալիս անկման վայրէջքի շարունակական ձգողությունը: Նոյը հարբած: Քամը իր հոր հիմարության և մերկության վրա ուրախանալիս: Անհարգանքի և սեռական բռնության հանդեպ ունեցած հակվածությունը հետագայում ցայտուն կերպով երևալու են Քանանի սերունդների մեջ: Հակվածությունները պետք է որ ակնհայտ լինեին Նոյին, որը անիծեց ոչ թե Քամին, այլ Քանանը:

Որպես հետգրություն, այս էպիգոդը ընդհանրապես ոչ մի կապ չունի սևամորթ ռասայի ներկայացուցիչներին աստվածաշնչորեն ստորադասելու հետ: Անշուշտ աֆրիկացիները սերվել են Քամից, սակայն քանանացիները սևամորթ չեն (այսինքն՝ Եգիպտոսի ժայռապատկերներից):

9:24 «Նոյը ... իմացավ» Հավանաբար նա իմացավ, քանի որ հարցրեց, սակայն հավանական է, որ նա դա հասկացավ այն ծածկոցից, որով Սեմն ու Հաբեթը ծածկեցին նրան:

❖ **«փոքր որդին»** Քամը միշտ երկրորդն է նշվում Նոյի որդիների ցանկում: Այս եբրայերեն բառը կարող է լինել գերադրական «ամենափոքրը» կամ համեմատական «ավելի փոքրը»:

9:25 «/ուստի/ նա ասաց» Հիշեք եբրայերենում խոսված խոսքի գործության հասկացությունը՝ Ծննդոց 1, ինչպես նաև հայրական օրհնության կարևորությունը՝ Ծննդոց 49:

❖ **«Անիծյալ լինի Քանանը»** ԲԱՅԸ (BDB 76, KB 91) *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է: Ռաբբիներն ասում են, որ առաջինը Քանանը տեսավ Նոյի մերկությունը և պատմեց իր հորը՝ Քամին, սակայն հավանաբար Նոյը այս անհարգալից վերաբերմունքը տեսավ Քամի ամենափոքր որդու՝ Քանանի մեջ, ուրեմն ամենափոքր որդի հասկացությունը վերաբերում է Քամի բոլոր սերունդներին: Նկատեք, որ սա Աստծո կողմից անեծք չէ, այլ այկոհող չարաշահող Նոյի կողմից:

Իսրայելի հետագա պատմությունից ակնհայտ է, որ քանանացիները դիտարկվում են որպես չար կռապաշտ ժողովուրդ, որոնք պետք է ամբողջովին բնաջնջվեն: Հենց նրանց երկրում էր, որ դեռ ապրում էին հսկաներ: Դա նրանց արգելված պողոպեղության պաշտամունքի մասին է, որ խոսվում է Ղևտացիների գրքում:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՌԱՍՍԻԶՄ
SPECIAL TOPIC: RACISM**

I. Ներածություն

Ա. Սա հասարակության ներսում մեղավոր մարդկանց կողմից կիրառվող միջազգային արտահայտություն է: Սա մարդկության էգոն է, որը ուրիշների թիկունքում ինքնաբավ է: Ռասսիզմը շատ առումներով ժամանակակից երևույթ է, մինչև ազգայնականությունը (կամ ցեղայնությունը) շատ ավելի հին արտահայտություն է:

- Բ. Ազգայնականությունը սկսվել է Բաբելոնից (Ծննդոց 11) և սկզբնապես կապված է Նոյի երեք որդիների հետ, որոնցից սերվել են այսպես կոչված ռասսաները (Ծննդոց 10): Ինչևէ Սուրբ Գրքից հայտնի է, որ մարդկությունը մի աղբյուրից է սերվել (տես՝ Ծննդ.1-3; Գործք 17:24-26):
- Գ. Ռասսիզմը բազմաթիվ նախապաշարմունքներից պարզապես մեկն է: Դրանցից մի քանիսն են (1) կրթական սնուրիզմը, (2) սոցիալ-տնտեսական հպարտությունը, (3) ինքնա-արդարացնող կրոնավոր օրինապաշտությունը, և (4) քաղաքական դոգմատիզմի որդեգրումը:

II. Աստվածաշնչյան Աղբյուրներ

Ա. Հին Կտակարան

1. Ծննդոց 1:27 – Մարդիկ՝ կին և տղամարդ, ստեղծվեցին Աստծո պատկերով և նմանությամբ, որը նրանց յուրիատուկ է դարձնում: Այն նաև ցույց է տալիս նրանց անհատական արժեքը և արժանապատվությունը (տես՝ Հովհ.3:16):
2. Ծննդոց 1:11-25 – Արձանագրում է այս արտահայտությունը. «... իր տեսակի պես...» տասն անգամ: Այս խոսքը գործածվում է պաշտպանելու ռասսայական խտրականությունը: Սակայն համատեքստից հայտնի է, որ այն վերաբերում է կենդանիներին և բույսերին և ոչ թե մարդկանց:
3. Ծննդոց 9:18-27 – Այս խոսքը գործածվում է պաշտպանելու ռասսայական գերակայությունը: Պետք է հիշենք, որ Աստված չանիծեց Քանանը: Նոյը՝ նրա հայրը, անիծեց նրան, երբ արթնացավ իր խումարից: Աստվածաշունչը երբեք չի արձանագրում, որ Աստված հաստատեց այս երդումը՝ անեծքը: Եթե անգամ հաստատեք, սա չպետք է որ ազդեր սևամորթ ռասսային: Քանանը Պաղեստինում բնակվողների հայրն էր և Եգիպտական ժայռապատկերները ցույց են տալիս, որ նրանք սևամորթ չէին:
4. Հեսու 9:23 – Սա գործածվում է ապացուցելու, որ մի ռասսան ծառայելու է մյուսին: Սակայն համատեքստում Գիբոնացիները Հրեաների հետ միևնույն ռասսայից են սերված:
5. Եզրաս 9-10 և Նեեմիա 13 – Սա հաճախ գործածվում է ռասսայական իմաստով, սակայն համատեքստը ցույց է տալիս, որ ամուսնությունները դատապարտվում էին ոչ թե ռասսայական (նրանք Նոյի նույն որդուց էին սերվել, Ծննդոց 10), այլ կրոնական պատճառներով:

Բ. Նոր Կտակարան

1. Ավետարանները

ա. Հիսուսը մի քանի անգամ օգտագործեց Հրեաների և Սամարացիների միջև եղած ատելությունը, որը ցույց է տալիս, որ ռասսայական ատելությունը անհարկի է:

- (1) Բարի Սամարացու առակը (Ղուկաս 10:25-37)
- (2) Ջրհորի մոտ սամարացի կնոջ դեպքը (Հովհաննես 4:4)
- (3) Երախտապարտ բորոտը (Ղուկաս 17:7-19)

բ. Ավետարանը ամբողջ մարդկության համար է

- (1) Հովհաննես 3:16
- (2) Ղուկաս 24:46-47
- (3) Եբրայեցիների 2:9
- (4) Հայտնություն 14:6

գ. Արքայությունը իր մեջ բովանդակելու է ամբողջ մարդկությանը

- (1) Ղուկաս 13:29
- (2) Հայտնություն 5

2. Գործք Առաքելոց

ա. Գործք 10-ը միանշանակ Աստծո տիեզերական սիրո և ավետարանի տիեզերական պատգամի վերաբերյալ է:

բ. Պետրոսը հարձակման ենթարկվեց Գործք 11-ում իր գործողությունների համար և այս խնդիրը չլուծվեց մինչև Գործք 15-ի Երուսաղեմի Խորհուրդը գումարվեց և եկան միևնույն հայտարարի: Առաջին դարի հրեաների և հեթանոսների միջև լարվածությունը շատ մեծ էր:

3. Պողոսը

ա. Քրիստոսի մեջ խոչընդոտներ չկան

- (1) Գաղ.3:26-28
- (2) Եփես.2:11-22
- (3) Կող.3:11

բ. Աստված աչառ չէ

- (1) Հռոմ.2:11
- (2) Եփես.6:9

4. Պետրոսն ու Հակոբոսը

ա. Աստված աչառ չէ, 1 Պետրոս 1:17

բ. Քանի որ Աստված աչառություն չի դնում, ուրեմն նույնը պետք է անի Իր ժողովուրդը, Հակոբոս 2:1

5. Հովհաննես

ա. Հավատացյալների պատասխանատվության ամենաուժեղ սահմանումներից մեկը գտնվում է 1 Հովհաննես 4:20-ում

III. Եզրահանգում

Ա. Ռասսիզմը կամ դրա հետ կապված՝ նախապաշարմունքը Աստծո զավակների համար լիովին անընդունելի է: Ահա մի մեջբերում Հելեն Բառնեթից, որը խոսեց 1964 թ-ին Նոր Մեքսիկայի, Գյորիենտայի Քրիստոնեական Կյանքի Հանձնարարության համաժողովին.

«Ռասիզմը հերետիկոսություն է, քանի որ աստվածաշնչյան և քրիստոնեական չէ, առավել ևս գիտական չէ»:

Բ. Այս հիմնախնդիրը Քրիստոնյաներին հնարավորություն է տալիս ցուցաբերելու իրենց Քրիստոսակերպ սերը, ներողամտությունը և կորած մարդկանց հասկանալը: Այս ոլորտում քրիստոնեական մերժողականությունը ցույց է տալիս անհասուն վիճակ և առիթ է տալիս չարին դանդաղեցնելու հավատացյալի հավատքն ու աճը: Այն նաև կարող է խոչընդոտ հանդիսանալ մեղավոր մարդկանց համար Քրիստոսին գալու հարցում:

Գ. Ի՞նչ կարող եմ անել: (Այս բաժինը վերցված է Քրիստոնեական Կյանքի Հանձնարարական բուկլետից, որը կոչվում է «Ռասսայական Կապեր» /Christian Life Commission “Race Relations”/)

ԱՆՀԱՏԱՊԵՍ.

- Հանձն առեք ձեր պատասխանատվությունը ռասսայականության հետ կապված խնդիրների լուծման մեջ
- Այլ ռասսաների պատկանող անձանց հետ աղոթքի, Աստվածաշնչի ուսումնասիրության և հաղորդակցության միջոցով, փորձեք մաքրել ձեր կյանքը ռասսայական խտրականությունից:
- Արտահայտեք ձեր համոզմունքները ռասսայականության վերաբերյալ, հատկապես այնտեղ, որտեղ մարդիկ հրահրում են ռասսայական ատելություն և անձեռնմխելի են:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

- Ընդունեք ընտանիքի ազդեցության կարևորությունը այլ ռասսաների հանդեպ ճիշտ վերաբերմունք զարգացնելով:
- Փորձեք զարգացնել Քրիստոնեական վերաբերմունք՝ կեցվածք, պարբերաբար խոսելով այն մասին, թե ինչ են տնից դուրս լսում երեխաներն ու ծնողները ռասսայականության հարցի շուրջ:
- Ծնողները պետք է զգուշանան այլ ռասսաների պատկանող մարդկանց հետ հարաբերվելու Քրիստոնեական օրինակ ծառայելու հարցում:
- Առիթներ ստեղծեք ռասսայական տարբեր պատկանելիության մարդկանց հետ ընտանիքներով ընկերանալու:

ՁԵՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

- Ռասսայականության թեմայի շուրջ քարոզելու և սովորեցնելու միջոցով, համայնքը կարող է մոտիվացվել լավ օրինակ ծառայելու ամբողջ հասարակության մեջ:
- Համոզվեք, որ եկեղեցում երկրպագության, հաղորդակցության և ծառայության դռները բաց են բոլորի համար, ճիշտ ինչպես ՆԿ-յան եկեղեցիներում վերցված էին ռասսայական արգելքները (Եփես.2:11-22; Գաղ.3:26-29):

ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ

- Աշխատանքային միջավայրում օգնեք հաղթահարելու ամեն տեսակի ռասսայական խտրականություն:
- Աշխատեք ամեն տեսակի հասարակական կազմակերպությունների միջոցով ապահովելու հավասար իրավունքներ և հնարավորություններ, հիշելով, որ ռասսայական խնդիրն է հարձակման թիրախը և ոչ թե մարդիկ: Նպատակը հասկացողություն զարգացնելն է, և ոչ թե դառնության մթնոլորտ ստեղծելը:
- Եթե իմաստուն եք գտնում այսպես անելը, ապա այս հարցով մտահոգված քաղաքացիներից կազմակերպեք ռասսայական փոխհարաբերություններ զարգացնելու համար ընդհանուր հանրային և մասնավոր գործողությունների կրթության համար համայնքում հաղորդակցության բաց դասեր:
- Աջակցեք օրենսդրությանը և օրենսդիրներին ռասսայական արդարության օրենքներն ընդունելու հարցում և հակառակվեք այն մարդկանց, ովքեր հանուն իրենց քաղաքական շահերի ռասսայական խտրականություն են գործադրում:
- Եղեք հարկադիր պաշտոնյաների ջատագովը, որպեսզի օրենքները առանց խտրականության հարկադրեն մարդկանց կատարելու:
- Խուսափեք բռնությունից և ձևավորեք հարգանք օրենքի հանդեպ, անելով ամեն հնարավոր բան որպես Քրիստոնյա քաղաքացի, համոզվելու համար, որ օրինական կառույցները գործիքներ չեն դառնում այն մարդկանց ձեռքերում, որոնք խտրականություն են զարգացնում:
- Որպես օրինակ ունեցեք Քրիստոսի հոգին և միտքը բոլոր մարդկային փոխհարաբերությունների մեջ:

❖ **«Ծառաների ծառա»** Սա երբայերենի «ամենացածր ծառա» գերադրական նշանակությունն ունի: Սա իրականացավ այն ժամանակ, երբ Հեսուն գրավեց Պաղեստինը:

9:26-27 Այս երկու համարների «թող» բառերը ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են, երեք հատուկ ձևեր և միայն մեկն է համատեքստորեն ակնարկվում:

9:26 «Տերը» «ՅԱՀՎԵՆ» կարծես թե ուխտի անվան հատուկ կիրառության համար է (տես 2:4-ի գրառումը) Մեսիայի տոհմածառի մեջ Մեմին ընդունելու համար (տես՝ Դուկ.3:36):

❖ **«Սեմի Աստվածը»** Սեմ նշանակում է «անուն» և կարող է Աստծո հատուկ անվան՝ ՅԱՀՎԵԻ (BDB 1028 II) հետ կապված բառախաղ լինել: Սեմի ընձյուղը Մեսիական ընձյուղն է: Սա 11:4-ի հակառակն է:

9:27 «և նա Սեմի վրաններում բնակվի» Ոմանք սա դիտարկում են (1) քաղաքական իմաստով, ինչպես Հռոմեական կամ Եվրոպական մշակույթի տիրակալությունը կամ (2) հոգևոր իմաստով՝ հրեաների օրհնությունների մեջ հեթանոսների ներգրավվածամբ, որը նաև Աբրահամի հետ ունեցած ուխտի մի մասն է հանդիսանում (տես՝ 12:3; Եփես.2:11-3:13):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 9:28-29
²⁸Եվ Նոյը ջրհեղեղից հետո երեք հարյուր հիսուն տարի ապրեց: ²⁹Եվ Նոյի բոլոր օրերն ինը հարյուր հիսուն տարի եղան, ու մեռավ:

9:29 Մահը դեռևս իշխում էր (տես՝ գլուխ 5):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտոդոսիայի մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս անկումը ազդեց Նոյի հետ Աստծո ունեցած ուխտի վրա:
2. Արդյո՞ք մահապատիժը աստվածաշնչյան գաղափար է:
3. Արդյո՞ք Նոյը անիժեց սևամորթ ռասային:
4. Ինչի՞ն է վերաբերում համար 27-ը:

ԾՆՆԴՈՑ 10:1-32

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Նոյի սերունդները	Նոյից սերված ազգերը	Ազգերի ցանկը	Նոյի որդիների սերունդները	Երկրի ազգերը
10:1	10:1	10:1	10:1	10:1
10:2-5		10:2-5	10:2-5	10:2-5ա 10:5բ
10:6-14	10:6-14	10:6-14	10:6-12	10:6-7 10:8-12
			10:13-14	10:13-14
10:15-20	10:15-20	10:15-20	10:15-20	10:15-19 10:20
10:21-31	10:21-31	10:21-31	10:21-31	10:21 10:22-23 10:24-30 10:31
10:32	10:32	10:32	10:32	10:32

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Ո՞րն է գլուխ 10-ի մանրամասնությունների աստվածաբանական նպատակը:

1. Այն ցույց է տալիս, որ Աստված հետաքրքրված է բոլոր ազգերով էլ: Գլուխ 11 ժամանակագրորեն խախտված հերթականությամբ է: Սա կարծես թե ցույց է տալիս, որ 10-ը միայն դատաստան չէ (տես՝ 11:1-9), այլ առաջին հերթին 1:28-ի և 9:1,7-ի իրականացում (այսինքն՝ աճեցեք և երկիրը լցրեք):
2. Այս նույն ազգերին հաճախ անդրադարձ է կատարվում մարգարեների գրքերում (տես՝ Եսայի 7-23; Երեմ.46-51; Եզեկ.27-30; 38-39) որպես ցեղախմբեր, որոնց Աստված դատում է:
3. Այն հարթակ է պատրաստում Աբրահամի կանչի և նրա սերմի համար, որպես քահանաների թագավորություն՝ ամբողջ աշխարհին ՅԱՀՎԵԻՆ մոտեցնելու համար (տես՝ 12:3; Ելից 19:5-6):
4. Այն հետևում է Ծննդոցի ձևաչափին, որը կենտրոնացում է նեղացնում է դեպի Մեսիայի տոհմանցյուղը (տես՝ 9:26):
5. Կարծես թե այստեղ նշվում են մոտ 70 ցեղաձմբեր: Ռաբբիներն ասում են, որ գոյություն ունեն աշխարհում 70 լեզուներ, հավանաբար 2 Օր.32:5-ից: Շատերը Ղուկաս 10:1-ը կապում են այս բանի հետ, պնդելու Ավետարանի միսիոներության համաշխարհային բնույթը:

Բ. Ինչպե՞ս և ինչո՞ւ այն չի համապատասխանում ժամանակակից էթնոլոգիական հետազոտությանը:

1. Ժամանակակից հետազոտությունը հիմնված է լեզվաբանական սկզբունքների վրա, մինչ աստվածաշնչյան դեպքերը կենտրոնանում են աշխարհագրական տվյալների վրա: Աշխարհագրական այս տեղեկատվությունը ներգործության է ենթարկվում (1) տարեթվի և (2) մարդկանց շարժի, թե՛ գաղթի և թե՛ պատերազմի պատճառով (տես՝ Եզեկ.16:3; Ովսեա 12:7):
2. Անհրաժեշտ է հաշվի առնել այս դեպքի աստվածաբանական բնույթը
ա. Հավաքական ծածկույթը
բ. Մարդկության միաբանությունը (Ադամ և Նոյ)
գ. Իսրայելի հետ ամենաչնչին կապ ունեցող ազգերի հետ ամենաքիչն են գործ ունեցել (կամ ընդհանրապես գործ չեն ունեցել):
3. Այս գլուխը պարունակում է շատ հոգնակի թվով անուններ: Սա ցույց է տալիս, որ հաճախ նախահայրն է ներկայացնում տվյալ ազգատոհմին: Հաճախ ազգատոհմերը զբաղեցնում էին մեկից ավելի աշխարհագրական տեղանքներ:
4. Սա արևմտյան, մանրակրկիտ, գիտական արձանագրություն չէ: Մենք հաճախ մոռանում ենք, որ սա այս տեսակի մեջ առաջին ցանկն է: Դրա ճշգրտությունը հաստատված է Սուրբ Գրքի հանդեպ ունեցած մեր կանխակալ ենթադրության հավատքով: Սակայն սա չի նշանակում, որ դրա նպատակն է եղել բոլոր ոլորտների մասին մեզ սպառիչ տեղեկություններ փոխանցելը կամ մեր արևմտյան մտածելակերպի հետ համակերպվելը: Իր օրերի համար այն ապշեցնելու աստիճան ճշգրիտ է:
5. Այս ցանկը, ինչպես ամբողջ Թ-որան, դպրական վերանայման և խմբագրման թեմա էր: Այս ցանկում տրված մի քանի անուններ (այսինքն՝ Շումերները, Սկյութացիները, Փղշտացիները և Մարերը) չկային այլ հնագույն Մերձավոր Արևելքի գրականության մեջ մինչև Ք.Ա. 1500-1000թթ.:
6. Քանի որ Ասիայի և Պոլինեզիայի ժողովուրդները (հետևաբար նաև ամերիկացիները) և Աֆրիկայի շատ ժողովուրդներ այս ցանկում չկան, հնարավոր է, որ այն միայն պարունակում է այսօրվա համար ռասայական նկատելի բազմազանության մի քանի հատվածներ: Եթե սա ճիշտ է, ապա աստվածաբանական չափազանցություն կլինի ասել, որ ռասասները սերվել են հենց Նոյի երեք որդիներից:
Սրա նպատակը չէ նվազեցնել մարդկանց միաբանությունը՝ մեկ լինելը (որը հաստատել են ԴՆԹ-ի ուսումնասիրությունները), որը հստակ հաստատվում է Ծննդոց 1 և 2-ի առաջին մարդկային գույգի միջոցով:

Գ. Կառուցվածքը

1. Հաբեթը՝ հհ. 2-5, զբաղեցնում է Միջագետքի հյուսիսային տարածքը՝ Իսպանիայից մինչև Կասպից ծով:
2. Քամը՝ հհ. 6-20, զբաղեցնում է Միջագետքի հարավային տարածքը՝ Աֆրիկայից մինչև Հնդկաստան:

3. Սենը՝ հհ. 21վ., գրադեցնում է Միջագետքի Սեմական տարածքները՝ Միջերկրական ծովից մինչև Հնդկաստան:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:1

¹Արդ, սա է Նոյի որդիների՝ Սեմի, Քամի ու Հաբեթի ծննդաբանությունը. ջրհեղեղից հետո նրանց որդիներ ծնվեցին:

10:1 «Արդ, սա է ... ծննդաբանությունը» Այս արտահայտությունը գլուխ 10 և 11-ի համատեքստում երեք անգամ կրկնվում է (10:1; 11:10,27): Հնարավոր է, որ սա հեղինակի կողմից կիրառվող գրքի կամ Բարեկոնյան կտրվածի վերջնապատկերի, ուրվագծման կերպն էր, որպեսզի նշի այն սեպագիր կավե տախտակները, որոնք կապված էին կամ հաջորդում էին իրար:

❖ **«Սեմ, Քամ և Հաբեթ»** Նրանց անունները թվարկելու այս հերթականությունը անպայմանորեն կապված չէ նրանց տարիքի հետ, այլ աստվածաբանական դասավորություն է, թվարկելով Մեսիական ճյուղին պատկանողին առաջին հերթին և ապա ամենահեռու գտնվողին՝ վերջում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:2-5

²Հաբեթի որդիները՝ Գոմերը, Մազոզը, Մադան, Հավանը, Թոբելը, Մեսեքն ու Թիրարը: ³Եվ Գոմերի որդիները՝ Աքաբասը, Բիփաթը և Թորգոման: ⁴Եվ Հավանի որդիները՝ Եդիսան, Թարսիսը, կիտացիք ու դոդացիք: ⁵Սրանցից բաժանվեցին ազգերի կղզիները՝ իրենց երկրներով, ամեն մեկն իր լեզվով, իրենց տոհմերով, իրենց ազգերով:

10:2 «Գոմեր» Կարծես թե սա վերաբերում է Բիմերացիներին (BDB 170), որոնց մասին նշվում է Հոմերոսի *Իլիականում*, գլուխ 11:13-19: Նրանք բանացել էին Փոքր Ասիայի հյուսիսային տարածքը: Հավանաբար նրանք գաղթեցին դեպի հյուսիս և դարձան Եվրոպական ցեղախմբեր: Սա կարելի է տեսնել նրանց մասին նմանատիպ տերմինով արտահայտված հյուսիսային Գերմանիայում՝ «Բլիմբի», իսկ Ուելսում՝ «Բիմբի»:

❖ **«Մազոզ»** Այս անվան շուրջ շատ քննարկումներ են եղել, դրա Եզեկ.38-39 և վերջին ժամանակների դեպքերի հետ կապված լինելու պատճառով: Սակայն, պետք է նշել, որ Մազոզը (BDB 156) Մեսեքի և Թոբելի հետ միասին, որ նույնպես նշված են հ. 2-ում, առաջին ցեղերն են, որ առնչվում են Փոքր Ասիայի և Սև ծովի ծովեզերքի հետ: Շատ հնարավոր է, որ նրանք գաղթել են հյուսիս և դարձել ժամանակակից Ռուսաստանի ցեղախմբեր: Սակայն, հնում նրանք ավելի մոտ էին Ավետյաց Երկրին: Շատերը պնդում են, որ Մազոզը կապ ունի Սկյութիացիների հետ՝ Սև ծովի հարավ-արևելյան տարածքը: Այս տեղեկությունը վերցված է Չոզեֆոսից:

❖ **«Մադան»** Շատերը պնդում են, որ սա վերաբերում է Մարերին (BDB 552), ովքեր ապրում էին Կասպից ծովի հարավային և հարավ-արևմտյան տարածքներում, և ովքեր դարձան շատ կարևոր Իսրայելի համար, երբ միացան Պարսից թագավորությանը, որպեսզի դուրս բերեն Նեոբաբելոնյան Կայսրությանը (Նաբուգոդոնոսորին):

❖ **«Հավանը»** Սա (BDB 402) կարծես թե վերաբերում է Յոնիական (հարավային) Հույներին (տես՝ Դան.8:21; 10:20, 11:2): Այս խմբի անունը հեզվում է «Հավանա» Սանսկրիտերենում, «Հունա»՝ հին Պարսկերենում, և «Հունան»՝ Ռոսսետա քարե տախտակի վրա: Հետագայում նրանք դարձան ոչ միայն Հունաստանի թագավորություն, այլ հավանական է, որ Էզեան տարածաշրջանի ծովային ժողովուրդների մի մասը (այսինքն՝ Փյունիկեցիներն ու Փղշտացիները):

❖ **«Թոբել»** Շատերը պնդում են, որ սա (BDB 1063) վերաբերում է Փոքր Ասիայի կենտրոնական մասում ապրող Տիբերիացիներին: Թե՛ Թոբելի և թե՛ Մեսեքի մասին նշվում է Եզեկ.38-39-ում, որպես Փոքր Ասիայի բնակիչներ:

❖ **«Մեսեք»** Շատերը պնդում են, որ սա (BDB 604) մի ցեղախումբ էր, որ ապրում էր Սև Ճովի հարավային և հարավ-արևմտյան տարածքներում (տես՝ Եզեկ.27:13; 32:26; 38:2; 39:1): Այս տեղեկությունը գալիս է Հերոդոտուսից:

❖ **«Թիրաս»** Եղել են մի քանի հավանական նույնականացում այս խմբի համար (BDB 1066), որոնք տարածված են մեկնաբանների մոտ: Այս անուններից և տեղանքներից շատերը պարզապես անհայտ են: Հնարավոր տարբերակներից են (1) Ետուրյանները, (2) Էզեյան ծովահենների ազատոհմը, որ կոչվում էին Պեղասգյաններ՝ թափառականներ, (3) Ջոզեֆուսն ասում է, Թրակյանները, կամ (4) Ռաշին ասում է, որ դա վերաբերում է Պարսկաստանին:

10:3 «Ասքանաս» Սա այն անունն է (BDB 79), որը հետագայում որդեգրեցին Եփրոպայի Հրեաները (այսինքն՝ Գերմանիա): Ներկայիս տեսություններն են (1) Սկյութացիները Գերմանիայի տարածքում, (2) Ուրմիա լճի մոտակայքում ապրող ժողովուրդը, կամ (3) Փոքր Ասիայում մի ցեղախումբ:

❖ **«Րիփաթը»** Հաստատվել է, որ սա մի ցեղախումբ է (BDB 937) Ռեբաս գետի մոտակայքում կամ Բոսֆորի մոտակայքում գտնվող ցեղախումբ:

❖ **«Թորգոման»** Սա (BDB 1062) (1) մի ցեղախումբ է Փոքր Ասիայում՝ Կապադոկիայի տարածքում, (2) հնագույն Քարթեմիշ քաղաքի մոտ, կամ (3) մի ցեղախումբ Փռուզիայում: Բոլոր այս երեք հավանական տեղանքները գտնվում են ներկայիս Թուրքիայի տարածքում:

10:4 «Եդիսա» Շատերը պնդում են, որ սա վերաբերում է (BDB 47) Կիպրոսի բնիկ ազգաբնակչությանը: Նրանք նշվում են Եզեկ.27:7-ում:

❖ **«Թարսիս»** Չնայած որ Ալբրայթը տեղակայում է սա Սարդիններում, ժամանակակից շատ գիտնականներ տեղակայում են այն հարավային Իսպանիայում (այսինքն՝ Տարտեսոս): Դրա մասին նշվում է 2 Մնաց.9:21; Սաղմ.48:7; 72:10; Հովնան 1:3; 4:2-ում:

❖ **«Կիտացիք»** Հաստատուն կարծիք կա այն մասին, որ սա վերաբերում է Կիպրոսի արևելյան ափին հանգրվանած բնակիչներին (BDB 187):

10:5 «սրանցից բաժանվեցին ազգերի կզգիները» Այս արտահայտությունը կիրառված է շատ հեռու գտնվող ժողովուրդների համար այլաբանորեն, սակայն այստեղ կարծես թե այն վերաբերում է Միջերկրական և Սև Ճովերի ծովեզերքի վրա ապրող բնակիչներին, որին հետևում է Հաբեթի որդիների գաղթը՝ վերաբնակեցումը:

❖ **«իրենց երկրներով... իր լեզվով... իրենց տոհմերով... իրենց ազգերով»** Կարծես թե սա արտահայտում է այն քառակի բաժինները, որոնց բաժանված է այս գլուխը. (1) աշխարհագրական, (2) լեզվաբանական, (3) էթնիկ, և (4) քաղաքական:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:6-14
6Եվ Քանի որդիները՝ Քուշը, Մեսսոբերը, Փուղը և Քանանն էին: 7Եվ Քուշի որդիները՝ Սաբան, Եփլյան, Ռիգման և Սեբեթաբան: Եվ Ռիգմայի որդիները՝ Սաբան և Դեթան: 8Եվ Քուշը ծնեց Նեբրովթին. սա սկսեց երկրի վրա հզորանալ: 9Նա Տիրոջ առջև մի հզոր որսորդ էր. դրա համար ասվում էր. «Նեբրովթի պես հզոր որսորդ Տիրոջ առջև». 10Եվ նրա թագավորության սկիզբը Բաբելոնն էր, և Արեքը, Արաղը և Քաղանեն՝ Սենաար երկրում: 11Այդ երկրից դուրս եկավ Ասուրը և շինեց Նինվեն և Ռորովթ քաղաքը և Քաղանը: 12Եվ Նինվեի ու Քաղանի միջև Ռեսենը. սա մեծ քաղաքն է: 13Եվ Մեսսոբերը ծնեց խուղացիներին, անամացիներին, դաբացիներին, նեփթուբացիներին, 14պաթուրեսացիներին և քաստուբացիներին (որոնցից առաջ եկան փղշտացիները) և կափթորացիներին:

10:6 «Քուշը, Մեսսոբերը, Փուղը և Քանանը» Քանի այս որդիները քննարկվում են նաև հաջորդող համարներում՝ Քուշը (BDB 468), հհ. 7-12, Մեսսոբերը՝ (BDB 595) հհ. 13-14, և Քանանը՝ (BDB 488) հհ. 15—19: Փուղը (BDB 806) թեև չի քննարկվում, սակայն կարծես թե վերաբերում է կամ Արևելյան Աֆրիկային

(Մոմալի), հարավային Արաբիային, Լիբիային կամ Կյուրենին: Այսքան շատ հավանական տեղանքների դեպքում պարզ է, որ մեզ ստույգ հայտնի չէ:

10:7 «Սաբա» Որքանով որ ներկայումս մեզ հասանելի տեղեկության համաձայն կարող ենք ասել, սա վերին Նեղոսի տարածքում գտնվող մի տեղանք է (BDB 685): Այն նշվում է Եսայի 43:3-ում:

❖ **«Եվիլա»** Սա տառացի նշանակում է «ավազահող» (BDB 296), հավանաբար տեղակայված է ինչ-որ տեղ Եգիպտոսում:

❖ **«Սաբթա»** Սա (BDB 688) կարող է կամ լինել ներկայիս Եթովպիայի տարածքում, որը արևելյան Աֆրիկան է, կամ էլ Արաբիայում մի քաղաք:

❖ **«Ռիզմա»** Սա կարծես թե հարավ-արևմտյան Արաբիայի Սաբաթիններն են (BDB 947):

❖ **«Սերեթաքա»** Սա նույնպես վերաբերում է Եթովպիային (BDB 688):

❖ **«Սաբա»** Սա (BDB 985) կարծես թե Սաբայի Թագուհու հայտնի տեղանքը՝ Արաբիայից դեպի հարավ-արևմուտք (տես՝ 3 Թագ.10:1-10; Հոր 1:15; 6:19; Սաղմ.72:10,15; Եսայի 60:6; Երեմ.6:20):

❖ **«Ղեթան»** Սա կարծես թե Արաբիայում ինչ-որ տեղ է (BDB 186): Ակնհայտ է, որ Քուշի որդիները բնակեցրեցին Աֆրիկայի արևելյան տարածքը և Արաբական թերակղզին: Այն նշվում է Եսայի 21:13; Երեմ.25:23; 49:8; Եզեկ.25:13; 27:20-ում:

10:8 «Նեբրովթի հայրը» Նեբրովթ (BDB 650) հատկապես անվանվել է, քանի որ նա էր առաջին մեզա քաղաքակրթության հիմնադիրը: Սա նշանակում էր, որ Քամի սերունդները կառուցեցին Բաբելոնը: Նա առնչվում է Քուշի որդիների հետ Քասսեթիների անվան հետ լեզվաբանական նմանությունների պատճառով: Քուշից սերված երկու խմբեր կան. առաջինը հ. 7-ում, Կարմիր Ծովի արևելյան կողմում և այս մեկը՝ հ. 8-ում, Կարմիր Ծովի արևմտյան կողմում:

❖ **«Նեբրովթ»** Այս տերմինը հավանաբար նշանակում է «ապստամբ», համաձայն Ռաշի և Լեոպոլդի: Այս մտապահելով, հաջորդող երկու արտահայտությունները՝ «հզոր» և «հզոր որսորդ», մեկնաբանվում են բացասական նշանակությամբ, որպես «տիրան՝ հսկա», «զավթիչ» կամ «մարդասպան»: Համենայնդեպս մեզ հայտնի չէ, թե արդյոք սա է դրա նշանակությունը, բայց կարծես թե այն համապատասխանում է համատեքստին: Այս մարդը կառուցելու էր Միջագետքի ամենամեծ քաղաքներից մի քանիսը և անկասկած նա էր սկսելու աշխարհում առաջին տիրակալությունը: Շատերն են պնդում, որ սա վերաբերում է Տուկուլի-նինուտա I-ին, սակայն նա չի ապրել նախքան Ք. Ա. 13-րդ դարը, երբ տիրում էր Ասորեստանի և Բաբելոնի վրա: Նրան կոչում էին Նինուս, սակայն նրա ժամանակաշրջանը շատ ավելի ուշ էր, որպեսզի համընկներ Նեբրովթի հետ: Ուրիշներն էլ պնդում են, որ սա վերաբերում է Սարգոն I-ին, Աքքադիա քաղաքի իշխանը:

10:9 «Տիրոջ առջև մի հզոր որսորդ» Որոշ մեկնաբաններ պնդում են, որ Աստծո կողմից մի որսորդի ուշադրություն դարձնելը ցած է Իր արժանապավոթյունից, եթե այս արտահայտությունը չվերաբերեր առաջին զավթչին և մարդկանց աշխարհիկ քաղաքակրթության համակարգը զարգացնողին (տես՝ Միք.5:6), այս դեպքում հասկանալի է, թե ինչու է Աստված ուշադրություն դարձնում նրան:

10:10 «Բաբելոն» Բաբելոնացիներն ասում են, որ այս տերմինը (*bab-ili*) նշանակում է «աստվածների դարպաս»: Սակայն Ծննդոց 11-ում, հրեաները այն թարգմանել են (*balil*) «նա խառնեց» (BDB 93):

Այս համարում թվարկված բոլոր քաղաքները տարբեր ժամանակներում Սենաարի ամենամեծ քաղաքներն են հանդիսանում:

❖ **«Քաղանե»** Ոմանք ասում են, որ սա (BDB 484) վերաբերում է Նիփիուր քաղաքին, մինչ ուրիշները նոր իմաստ են տվել այս բառին, որը նշանակում է «նրանք բոլորը»:

❖ «Սենաարի երկիրը» Լեզվաբանորեն այն կապված է «Շումեր» կամ «Շումերիա» տերմինի հետ (BDB 1042): Այն վերաբերում է Միջագետքի հարավային շրջանում գտնվող մի տարածքի:

10:11 «Այս երկրից դուրս եկավ Ասուրը /անգլ.՝ նա դուրս եկավ դեպի Ասորեստան/» Ոմանք ասում են, սա վերաբերում է Նեբրոլթին և դա կարծես թե լավագույնս է համապատասխանում համատեքստին (տես՝ Միք.5:6): Սակայն, ուրիշներն էլ, ինչպես նաև Մեպտուազինտան, Վուլգատտան, Սիրիակը, Մարթին Լյութերը և Ջոն Կալվինը, ասում են, որ դա վերաբերում է Ասուրին:

❖ «Նինվե» Սա (BDB 644) Ասորեստանի Կայսրության ամենամեծ մայրաքաղաքն է, որ տեղակայված էր Տիգրիս Գետի վրա (տես՝ 4 Թագ. 19:36; Եսայի 37:37; Հովնան 1:2; 3:2-7; 4:11; Նավ. 1:1; 2:8; 3:7; Սոփ.2:13):

❖ «Ռորովթ» Սա տառացի նշանակում է «լայն փողոցներով քաղաք» կամ «քաղաքի լայնարձակ տեղեր» և հավանաբար Նինվե քաղաքի նկարագրությունն է (BDB 944 II):

❖ «Քաղան» Սա ասորական մի մեծ քաղաք է (BDB 480 II): Դրա ժամանակակից անունն է Նեմրութ, որը ակնհայտ կերպով առնչվում է Նեբրովթ անվան հետ:

10:13 «Մեսարեմ» Շատերը պնդում են, որ սա վերաբերում է վերին և ստորին Եգիպտոսին (BDB 595):

❖ «ղուդացիներ» Հնարավոր է սա վերաբերում է Փոքր Ասիայում գտնվող Լիդիացիներին (BDB 530):

❖ «անամացիներ» Սա կարող է լինել մի ցեղախումբ, որը բնակություն էր հաստատել Եգիպտոսի արևմտյան օազիսում (BDB 777):

❖ «ղաբացիներ» Սա կարծես թե վերաբերում է հյուսիսային Աֆրիկայի ծովեզերքի անապատային ցեղերին (BDB 529):

❖ «նեփթուբացիներ» Սա կարծես թե Մեմֆիս քաղաքի մոտակայքում գտնվող ցեղախումբ էր (BDB 661): Բոլոր այս ցեղերը, որոնք նշված են հ. 13-ում, ըստ երևույթին կապ ունեն Եգիպտոսի և նրա հարակից շրջանների հետ:

10:14 «պարուրեսացիներ» Սա նշանակում է հարավային երկիր և հավանաբար վերաբերում է վերին Եգիպտոսին (BDB 837):

❖ «կափթորացիներ» Սա կարծես թե վերաբերում է Կափթոր անվամբ հայտնի Կրետե կղզու բնակիչներին (BDB 499):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 10:15-20

¹⁵Եվ Քանանը ծնեց իր անդրանիկ Սիդոնին, նաև Քետին, ¹⁶հերուսացիներին, ամորհացիներին, գերգեսացիներին, ¹⁷իսացիներին, արուկացիներին, ¹⁸սենացիներին, արվաղացիներին, զեմարացիներին և ամաթացիներին, և հետո քանանացիների տոհմերը տարածվեցին: ¹⁹Քանանացիների սահմանն էր Սիդոնից Գերարով մինչև Գազա՝ անցնելով Սոդոմը և Գոմորը և Ադման ու Մերոյիմը՝ մինչև Դասան: ²⁰Սրանք են Քամի որդիները՝ իրենց տոհմերով, իրենց լեզուներով, իրենց երկրներում ու ազգերում:

10:15 «Սիդոն» Սա հռչակավոր Փյունիկեան նավահանգիստն է և սկզբնապես եղել է մայրաքաղաք. գտնվում է Պաղեստինից դեպի հյուսիս (BDB 850):

❖ «Քետ» Սա (BDB 366) կարծես թե ոչ սեմական անուն է: Հավանաբար Քետացիների ցեղախումբը առաջացել է այստեղից: Աստվածաշնչում նրանք տեղակայված էին երկու տարածքներում. (1) Քերթոն քաղաքի շրջակայքում և (2) կենտրոնական Թուրքիայում՝ Պաղեստինից դեպի հյուսիս: Նրանք գերիշխում էին այս ամբողջ տարածաշրջանում Բ. Ա. 1800-1200 թթ.-ին: Իսացիներ կոչվող ցեղախումբը հնարավոր է նույնպես կապված է այս Քետ տերմինի հետ:

10:16 «Հերուսացիներ» Այս մարդիկ Սաղեմ կամ Հերուսա՝ հետագայում Երուսաղեմ, կոչվող տարածքի բնակիչներն էին (BDB 101):

❖ **«Ամորհացիներ»** Ամորհացի տերմինը (BDB 57) կարող է լինել հավաքական տերմին (տես՝ Ծննդ.15:16), ինչպես Քանանացիներ տերմինը: Մենք կարծում ենք, որ այն ունի «գեոնաբնակ» (տառացի անունը՝ «արևմուտքի բնակիչ») նշանակությունը, մինչ Քանանացիներն ունի «գավառացի՝ ցածրադիր տարածքում բնակվող» (տառացի անունը նշանակում էր «կարմիրի երկիր»): Աստվածաշնչում Քանանի բնակիչները թվարկվում են մի քանի հատվածներում. (1) երկու ցեղախմբերով՝ Ծննդ.13:7; 34:30; Դատ.1:4,5; (2) յոթ ազգերով՝ 2 Օր.7:1; Հեսու 3:10; 24:11; (3) տասն ազգերով՝ Ծննդ.15:19-20; և (4) ամենատարածված կիրառությունը վեց ազգերովն է, որը հիմնականում կիրառվում է Հնգամատյանում:

❖ **«Գերգեսացիներ»** Սա Քանանացիների մի ցեղախումբ էր, որը հաճախ Քանանի ցեղերի մեջ տարբեր անուններով էր անվանվում (BDB 173, տես՝ Ծննդ.10:16; 15:21; 2 Օր.7:11; Հեսու 3:10; 24:11; Նենմ.9:8; 1 Մնաց.1:14), սակայն ոչ մի տարածաշրջան կոնկրետ երբեք չի նշվել:

10:17 «խևացիներ» Նրանք կարծես թե կենտրոնական Պաղեստինի բնակիչներն էին (BDB 295): Ոմանք նրանց նմանեցնում են Խուռիներին: Թվոց 13:29-ը Պաղեստինում այս ցեղերի բաժանման համար տրված գեղեցիկ աշխարհագրական ամփոփում է:

❖ **«արուկացիներ»** Սրանք կարծես թե Սիդոնի հյուսիսում գտնվող ծովեզրյա մի քաղաքի և կղզու բնակիչներ են (BDB 792):

❖ **«սենացիներ»** Սրանք կարծես թե Արքեյի մոտակայքում գտնվող մի քաղաքի բնակիչներ էին (BDB 696):

10:18 «արվաղացիներ» Սա կարծես թե վերաբերում է Պաղեստինի հյուսիսային ափից հեռու գտնվող մի կղզու բնակիչների (BDB 71): Ինչպես նախորդ երկուսը, այն գտնվում է Տրիպոլիսից դեպի հյուսիս:

❖ **«ամաթացիներ»** Սա վերաբերում է Օրոնտես Գետի վրա գտնվող մի քաղաքի բնակիչներին (BDB 333):

10:19 «Սողոմը և Գոմորը և Ադամն ու Սեբոյիմը» Սրանք հարթավայրային այն քաղաքներն են, որոնք հետագայում Աստված բնաջնջում է: Դրանք տեղակայված էին Մեռյալ Ծովի հարավային եզրին:

❖ **«Ղասան»** Ջերոմն ասում է, որ սա գտնվում էր Մեռյալ Ծովի արևելքում (BDB 546):

10:20 Սա այս բաժանումների ամփոփումն է, շատ նման հ. 5-ին:

NASB (Թ-ԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:21-31
²¹Որդիներ ծնվեցին նաև Սեմին, որ Եբեի որդիների հայրը և Հաբեթի՝ ավագի, եղբայրն էր: ²²Սեմի որդիները՝ Եղամը, Ասուրը, Արփաքսաղը, Դուրը և Արամն էին: ²³Եվ Արամի որդիները՝ Հուսը, Հուլը և Գաթերն ու Մաշն էին: ²⁴Եվ Արփաքսաղը ծնեց Սաղային և Սաղան ծնեց Եբեթին: ²⁵Եվ Եբեթին երկու որդի ծնվեց. մեկի անունը՝ Փաղեկ, ըստ որում նրա օրոք բաժանվեց երկիրը. իսկ նրա եղբոր անունը Հեկտան էր: ²⁶Եվ Հեկտանը ծնեց Եղմովդատին, Սաղափին, Ասարմոթին, Հարաքին, ²⁷Ադորամին, Ուզալին, Գիկղային, ²⁸Գերղալին, Աբիմեելինի, Սաբային, ²⁹Ուփիրին, Եվիլային և Հոբաբին: Սրանք բոլորը Հեկտանի որդիներն են: ³⁰Եվ սրանց բնակավայրը եղավ Մեսայից մինչև Սոփեր արևելյան լեռը: ³¹Սրանք են Սեմի որդիները՝ իրենց տոհմերով, իրենց լեզուներով, իրենց երկրներում՝ իրենց ազգերով:

10:21 «Սեմ» Սա երբայերեն տերմին է, որը նշանակում է «անուն» (BDB 1028): Նրա կարևորությունը ակնհայտ է, քանի որ նա նշվում է թե՛ այստեղ և թե՛ 11:10-26-ում: Գլուխ 10-11-ի ապստամբ ժողովուրդները ցանկանում են կառուցել իրենց համար «անուն»: Նրա անունը առնչվում է 4:26-ի հետ (այսինքն՝ ՅԱՀՎԵԻ փառավորված անվան): Նա ներկայացնելու է օրհնության ընտրյալ տոհմաձառը (տես՝ 12:2):

❖ «**Երբեր**» Այս անվան ստուգաբանությունը շատ նման է «Երբայեցի» տերմինին (BDB 720 II), որը վերաբերում է ավելի մեծ խմբի, քան պարզապես հրեաներին: Շատ ենթադրություններ են եղել Երբեր տերմինի և Եգիպտոսում տախտակների և շատ փաստաթղթերի վրա գտնվող «Habirv» արտահայտության կապի վերաբերյալ (տես՝ Ծննդ. 14:13): Երբեր անվան հավանական ստուգաբանությունն է «վրայով և միջով անցնել», որը կարծես թե ակնարկում է քոչվոր ցեղի:

❖ «**Հաբերթի՝ ավագի, եղբայրն էր**» Ռաշին հաստատում է, որ Երբայերենը բազմանշանակ է այս հարցում, թե ով էր ավագ եղբայրը:

10:22 «Եղամ» Սա Տիգրիս Գետի արևելյան մասում գտնվող մի մեծ թագավորություն էր, որի մայրաքաղաքն էր Շուշանը: Սա հավանաբար այս գլխում թվարկված բոլոր ցեղախմբերի մեջ ամենարևելքում գտնվող ցեղախումբն էր (BDB 743):

❖ «**Ասուր**» Սա (BDB 78) կարող է վերաբերել (1) անձնավորության; (2) քաղաքի; (3) ազգի (այսինքն՝ Ասորեստան):

❖ «**Արփաքսաղը**» Սա (BDB 75) կարծես թե Նինվեի (Ասորեստանի մեկ ուրիշ մայրաքաղաք) հյուսիսում գտնվող ցեղախումբ էր: NIV թարգմանությունը նշում է Arphaxad.

❖ «**Ղուդ**» Սա հավանաբար վերաբերում է Փոքր Ասիայի Լիդիան ազգին (BDB 530): Հեռողոտուսը պնդում է, որ նրանք ասում են, որ քնիկ Նինվեից են՝ Սեմական ազգ:

❖ «**Արամ**» Սա վերաբերում է ներկայիս Սիրիայի տարածքին (BDB 74):

10:25 «Փաղեկ» Սա մի հատուկ տոհմանյուղ է, որից ծնվելու էր Աբրահամը և այս սերնդաբանությունը լիարժեք կերպով քննարկվում է 11:18-27-ում: Այն կարող է նշանակել «բաժանված» (BDB 811 II):

❖ «**ըստ որում /անգլ.՝ քանի որ/ նրա օրոք բաժանվեց երկիրը**» Երբայերեն տերմինը տառացիորեն նշանակում է «ռոռզման ջրուղիներ», որը համապատասխանում է հարավային Միջագետքին, սակայն տարածված ստուգաբանությունը «բաժանումներ» է (BDB 811, KB 928, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Փաղեկ և բաժանված (*niplega*) բառերի մեջ գոյություն ունի ձայնախադ: Սա կարող է վերաբերել գլուխ 11-ում նկարագրված լեզուների բաժանմանը: Հետևաբար գլուխ 10-ի տարածումը՝ սփյուռքը ի համեմատ գլուխ 11-ի ժամանակագրորեն չի հաշվարկվում:

10:26-29 Սա արարական ցեղերի նկարագրություն է:

10:28 «Սաբա... Եվիլա» Սա, հ. 22-ում Ասուրի հետ միասին, կարծես թե ընդգրկված է թե՛ Քամի ցանկում և թե՛ Սեմի: Հնարավոր է, որ սա (1) աշխարհագրական գաղթի պատճառով էր, (2) պատերազմական հաղթանակների, կամ (3) երկու ընտանիքների ամուսնությամբ ձուլման պատճառով: Ըստ տարբեր հիմնավորումների այս ցանկը բացառիկ չէ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:32

³²Սրանք են Նոյի որդիների տոհմերը՝ ըստ իրենց ծնունդների և ազգությունների: Եվ ջրհեղեղից հետո ազգերը սրանցից սփռվեցին երկրի վրա:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտորոշության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞րն է Ծննդոց 10-ի նպատակը:
2. Ինչո՞ւ է Ներբովժը առանձնացված հատուկ ուշադրության արժանանալով:
3. Ինչո՞ւ Իսրայելը, Մովսարը և Եդովմը չեն նշվում ազգերի այս ցանկում:

ԾՆՆԴՈՑ 11:1-32

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Տիեզերական լեզու, Բաբելոն, Խառնաշփոթ	Բաբելոնի Աշտարակը	Բաբելոնի Աշտարակը	Բաբելոնի Աշտարակը	Բաբելոնի Աշտարակը
11:1-9	11:1-9	11:1-9	11:1-9	11:1-4 11:5-9
Սեմի սերունդները	Սեմի սերունդները	Աբրահամի Ծննդաբանությունը	Սեմի սերունդները	Ջրհեղեղից հետո նահապետները
11:10-11	11:10-11	11:10-11	11:10-11	11:10 11:10բ-11
11:12-13	11:12-13	11:12-13	11:12-13	11:12-13
11:14-15	11:14-15	11:14-15	11:14-15	11:14-15
11:16-17	11:16-17	11:16-17	11:16-17	11:16-17
11:18-19	11:18-19	11:18-19	11:18-19	11:18-19
11:20-21	11:20-21	11:20-21	11:20-21	11:20-21
11:22-23	11:22-23	11:22-23	11:22-23	11:22-23
11:24-25	11:24-25	11:24-25	11:24-25	11:24-25
11:26	11:26	11:26	11:26	11:26
	Թարայի սերունդները		Թարայի սերունդները	Թարայի սերունդները
11:27-30	11:27-30	11:27-30	11:27-30	11:27 11:27բ-30
11:31-32	11:31-32	11:31-32	11:31-32	11:31 11:32

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրյալ մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզինք յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. 10-11 գլուխները հետադարձ ժամանակագրական հերթականությամբ են:

Բ. Չնայած որ լեզուների խառնակման արդյունքում եղավ ազգերի սփյուռք, և դա թվում է թե դատաստանի քայլ էր, հիշեք, որ ազգայնականության զարգացումն է, որ հակառակվել է, /մինչև հիմա էլ/ քաղաքական այն շարժմանը, որը տանում է դեպի ընդհանուր մեկ աշխարհի կառավարման: Հետևաբար, սա ինչ-որ իմաստով Աստծո ևս մեկ օրհնությունն էր:

Քրիստոնյաների համար Պենտեկոստեն եղավ Բաբելոնի Աշտարակի աստվածաբանական հետադարձումը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. 11:1-9

¹Եվ ամբողջ երկրի վրա մի լեզու և մի խոսվածք էր: ²Եվ եղավ, երբ նրանք Արևելքից քոչեցին, Սենաար երկրում մի հարթավայր գտան և այնտեղ բնակվեցին: ³Եվ միմյանց ասացին. «Եկե՛ք աղյուսներ շինենք և կրակով թրծենք»: Եվ աղյուսները նրանց համար որպես քար ծառայեցին, և կուպրը՝ որպես շաղախ: ⁴Եվ ասացին. «Եկե՛ք մեզ համար մի քաղաք շինենք և մի աշտարակ, որի գագաթը մինչև երկինք հասնի, և մեզ համար համբավ վաստակենք, որպեսզի ամբողջ երկրով մեկ չցրվենք»: ⁵Եվ Տերն իջավ մարդկանց որդիների շինած քաղաքը ու աշտարակը տեսնելու: ⁶Եվ Տերն ասաց. «Ահա ժողովուրդը մեկ է, և բոլորը մի լեզու ունեն, և ահա սկսեցին այս անել, և հիմա նրանց զսպող ոչինչ չկա՝ իրենց նպատակադրածն ի կատար ածելու: ⁷Եկե՛ք իջնենք ու խառնակենք նրանց լեզուն, որ մեկմեկու խոսածը չհասկանան»: ⁸Եվ տերը նրանց այնտեղից ցրեց ամբողջ երկրի երեսով մեկ, և դադարեցին քաղաքը կառուցել: ⁹Այդ պատճառով էլ այն Բաբելոն անվանվեց, որովհետև Տերն այնտեղ խառնակեց ամբողջ երկրի լեզուն, և Տերը նրանց ցրեց ամբողջ Երկրի երեսով մեկ:

11:1 «ամբողջ երկրի վրա մի լեզու էր» Ակնհայտ է, որ գլուխ 11-ը բացատրում է գլուխ 10-ում տեղի ունեցած սփյուռքը:

Այս մի լեզուն, որը ըստ երևույթին գնում է հետ դեպի Եդեմի պարտեզ, Երբայերենը չէր: Ամենահին գրավոր լեզուն, որ հայտնի է մեզ՝ ժամանակակիցներիս, դա Շումերական լեզուն է՝ թվագրվող Ք. Ա. 3000 (ABD, հատոր՝ 1, էջ՝ 1213) և մշակույթը՝ Ք. Ա. 10,000-8,000:

11:2 «Արևելքից քոչեցին /անգլ.՝ քոչեցին դեպի արևելք/» Սա կարծես թե ակնարկում է տապանի տեղանքից՝ Արարատի լեռներից, հեռացում: «Քոչել» բառի տառացի արտահայտությունը նշանակում է «վրանի ցիցերը հանել» (BDB 652, KB 704, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ): Միջազգետքը Արարատ լեռների հարավ-արևելքում է (որը ձգվում է ներկայիս Թուրքիայից դեպի Իրան):

❖ **«Սենաար երկիրը»** Սա վերաբերում է ստորին Միջազգետքին կամ Բաբելոնին, որը նաև կոչվում է Քաղդես (BDB 11042):

11:3 Այս համարը ունի *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և երկու իրար հետ կապված ԸՂԶԱԿԱՆ հոլովներ: Սա նկարագրում է շինարարական տեխնիկան, որը պատմականորեն ճշգրիտ է Միջազգետքի համար: Այս

տարածաշրջանում ժայռեր՝ քարեր չկային, ուստի աղյուսները թրծվում էին: King James թարգմանությունը նշում է «տիղմ», սակայն ըստ երևույթին դա վերաբերում է սև, կաշուն նյութին, որը եռում էր այդ տարածքներում: Մենք դա կոչում են կուպր, ասֆալտ, կամ ձյուլթ (BDB 330, տես՝ 6:14):

11:4 Այս համարը ունի մեկ *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և երկու իրար հետ կապված ԱՆԿԱՏԱՐՆԵՐ, որոնք կիրառված են որպես ԸՂՁԱԿԱՆՆԵՐ: Կարծես թե կան չորս տարրեր, որոնք ներգրավված են այս դեպքի մեջ. (1) քաղաքի և աշտարակի կառուցում; (2) որի չափը կգերազանցի այդ օրերի բոլոր կառույցների չափերից; (3) նրանք ուզում էին իրենց համար անուն՝ հռչակ ձեռք բերել, և (4) նրանք չէին ցանականում ցրվել՝ տարածվել այլ ուղղություններով (այսինքն՝ ամբողջ աշխարհով): Այս խոսքի կոնկրետ նշանակությունը անհայտ է: Շատերը պնդում են, որ այն առնչվում է Բաբելոնյան զիկուրատների հետ, սակայն երբայերեն բառը *migdal* է, որը նշանակում է «պարսպավոր աշտարակ» (BDB 153, տես՝ Դատ.8:9-17): Մա ակնհայտ փորձ էր մարդկության կողմից իրենց առանց Աստծո ղրակներով, և հետևաբար Նրա կամքին հակառակվելու: Փիլոն նույնիսկ ասում է, որ նրանք գրում էին իրենց անունը յուրաքանչյուր աղյուսի վրա, որպեսզի հանկարծ չսփռվեն: Մա մարդկային հպարտության առաջին օրինակն էր, որը կազմակերպված էր և գործում էր առանց Աստծո (տես՝ Դանիել և Հայտնություն 18 և 19):

❖ **«մի աշտարակ, որի գագաթը մինչև երկինք հասնի»** Միջագետքի մարդիկ երկնային մարմինների երկրպագուներ էին (այսինքն՝ երկնային լուսատուները աստվածներ էին): Այս աշտարակները բարձրավանդակներ էին, որպեսզի կարողանային հետազոտել գիշերվա երկինքը: Դրանք այն վայրերն էին, որտեղ տեղադրված էին կուռքերը և որտեղ դրանց երկրպագում էին ու հանդիպում:

11:5 Մա շատ մարդաբանական արտահայտություն է (տես՝ 18:21; Ելից 3:8):

11:7 «Եկե՛ք իջնենք» Մա համարը նույնպես ունի *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ երկու իրար հետ կապված ԸՂՁԱԿԱՆՆԵՐՈՎ: Մա ՀՈԳՆԱԿԻ թվով է, շատ նման 1:26; 3:22-ին: Չնայած, որ այս հատվածը մարդաբանական է թվում անգլերենում, այն չի վերաբերում Աստծո կողմից ցուցաբերած որևէ թուլության, այլ շնորհքի դրսևորման, քանի որ Նա կանգնեցնում է մեղավոր մարդկությանը իրենց կյանքերը իրենց իսկ մեղավոր ճանապարհներով ապրելու մտադրությունից (տես՝ Հռոմ.1-3):

«Եկեք» աստվածային գործողությունը խանգարում է «եկեք» մարդկային ընթացությանը (տես՝ հի. 3,4,7):

11:9 «Բաբելոն» Հետաքրքիր է նշել, որ հնեաբանությունը Միջագետքում պեղել է Շումերական մշակույթին պատկանող գրական փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ այդ ժամանակ բոլոր մարդիկ խոսում էին մի լեզվով (այսինքն՝ Մամուել Նոյ Քրեմերը իր հոդվածում «Լեզուների Բաբելոնը. Շումերական տարբերակը», *Ամերիկյան Արևելագիտության Ընկերության Ամսագիր*, 88:108-111 /Samuel Noah Kramer “The Babel of Tongues: A Sumerian Version” in *Journal of the American Oriental Society*/): Հայտնի երբայերեն ստուգաբանությունն է «խառնաշփոթ» (այսինքն՝ *balal*, BDB 93), որը կարծես թե նկարագրում է, որ Աստված է խառնել նրանց միակ լեզուն: Բաբելոնը տառացիորեն նշանակում է «Աստծո դարպասը» (աքքադերենով՝ *bab-ilani*), որը շատ նման է Չիկուրատների մի քանի անուններին, որոնք մեծ շինություններ էին՝ կատարին երկնային մարմինների պաշտամունքի համար տանարով: Բաբելոնը դառնում է մեղսալից աշխարհի իշխանության խորհրդապատկերը, մարմնավորված Նեբրովթի, հետագայում Նաբուգոդոնոսորի և վերջում Հայտնության գրքի ծովի գագաթի մեջ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:10-11

¹⁰Մեմի սերունդները սրանք են. Մեմը հարյուր տարեկան էր և ջրհեղեղից երկու տարի հետո ծնեց Արփաքսադին: ¹¹Եվ Մեմը Արփաքսադին ծնելուց հետո հինգ հարյուր տարի ապրեց և աղաներ ու աղջիկներ ծնեց:

Մեմի սերունդները Մեթից շարունակում են Մեսիական տոհմանյուղը՝ Ծննդոց 5:3-32 և 10:21-31-ից: Այս ընձյուղը շարունակելու է Թարան, Աբրահամը 11:10-25-ում (տես՝ Դուկ.3:23-38):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:12-13

¹²Եվ Արփաքսաղը երեսունհինգ տարի ապրեց ու ծնեց Սաղային: ¹³Եվ Արփաքսաղը Սաղային ծնելուց հետո չորս հարյուր երեք տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:

Մագորեթիկ Տեքստը բացառում է *Kainan* 13 համարում, սակայն Սեպտուագիկոսան ներառում է նրան, ինչպես դա անում է Դուկաս 3:36-ը:

❖ «Սաղա» Տե՛ս BDB 1019 II:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:14-15

¹⁴Եվ Սաղան երեսուն տարի ապրեց և ծնեց Եբերին: ¹⁵Եվ Սաղան Եբերին ծնելուց հետո չորս հարյուր երեք տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:

❖ «Եբեր» Տե՛ս BDB 720:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:16-17

¹⁶Եվ Եբերը երեսունչորս տարի ապրեց և ծնեց Փաղեկին: ¹⁷Եվ Եբերը Փաղեկին ծնելուց հետո չորս հարյուր երեսուն տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:

❖ «Փաղեկ» Տե՛ս BDB 811 II:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:18-19

¹⁸Եվ Փաղեկը երեսուն տարի ապրեց և ծնեց Ռազավին: ¹⁹Եվ Փաղեկը Ռազավին ծնելուց հետո երկու հարյուր ինը տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:

❖ «Ռազավ» Տե՛ս BDB 946:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:20-21

²⁰Եվ Ռազավը երեսուներկու տարի ապրեց և ծնեց Սերուզին: ²¹Եվ Ռազավը Սերուզին ծնելուց հետո երկու հարյուր յոթ տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:

❖ «Սերուզ» Տե՛ս BDB 974:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:22-23

²²Եվ Սերուզը երեսուն տարի ապրեց և ծնեց Նաբովրին: ²³Եվ Սերուզը Նաբովրին ծնելուց հետո երկու հարյուր տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:

❖ «Նաբովր» Տե՛ս BDB 637:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեզույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ էր Բաբելոնի Աշտարակը:
2. Ի՞նչ էին փորձում անել մարդիկ Աստծուն հակառակ Ծննդոց 11-ում:

ԾՆՆԴՈՑ 11:24-13:18 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Ծննդոցի այս բաժինը սկսում է ավելի բովանդակալից քննարկում Աբրահամի միջոցով Մեսիայի տոհմաձառի վերաբերյալ:
- Բ. Ծննդոցի հիսուն գլուխներն էլ Աստծո ուխտի ժողովրդի փրկագործության վեչաբերյալ է, ոչ թե ստեղծագործության: Մեկին կանչելով բոլորին կանչելը հանդիսանում է Գրքի կենտրոնական թեման:
- Գ. Աբրամը դիտարկվում է թե՛ իր թերություններով և թե՛ իր հավատարմությամբ: Գթառատ և ընտրող Աստվածը նրան կանչում է դուրս՝ Իր փրկագործության նպատակներով:
- Դ. Աստված ընտրեց Աբրահամին, որպեսզի ընտրի աշխարհը (տես՝ 12:3գ, Ելից 19:4-6; 2 Պետ.2:5,9; Հայտն.1:6): Աստված ուզում է, որ Իր պատկերով ստեղծված բոլոր մարդիկ փրկվեն (տես՝ Ծննդ.3:15; Եզեկ.18:23, 32; 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9):
- Ե. *Թարմուղը* առանձնացնում է այդ կանչի յոթ օրհնությունները.
1. Աբրամը դառնալու է մի մեծ ազգի հայրը:
 2. Նա օրհնվելու է իր կյանքի օրոք:
 3. Նրա անունը համբավ է ձեռք բերելու:
 4. Նա օրհնություն է դառնալու ուրիշների համար:
 5. Ուրիշները, որոնք կպատվեն նրան, օրհնվելու են:
 6. Ուրիշները, որոնք կմերժեն նրան, կանիծվեն:
 7. Նրա ազդեցությունը կլինի տիեզերական:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:24-25

²⁴Եվ Նաբովրը քսանինը տարի ապրեց և ծնեց Թարային: ²⁵Եվ Նաբովրը Թարային ծնելուց հետո հարյուր տասնինը տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:

11:24 «Թարա» «Թարա» հավանաբար նշանակում է «մնացող», «ուշացող» կամ «գաղթական» (BDB 1076): Հետո 24:2-ից պարզ է, որ նա և իր ընտանիքը բազմաստված էին: Նրա ընտանիքի անունները հիմնականում ակնարկում են, որ նրանք երկրպագում էին լուսնի աստվածուհուն՝ *Zin*-ին: Նրան երկրպագում էին Ուրում, Թեմայում և Խառանում: Սակայն Ծննդ.31:53-ը ակնարկում է, որ նա գիտեր ՅԱՀՎԵԻ մասին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:26

²⁶Եվ Թարան յոթանասուն տարի ապրեց և ծնեց Աբրամին, Նաբովրին և Առանին:

11:26 «Աբրամ, Նաբովր և Առան» Սա պետք է որ արտահայտի կարևորության և ոչ տարիքային հաջորդականությունը: Աբրամ կարող է նշանակել (1) «մեծարված հայր», (2) «հայր մեծարող» կամ (3) «Մեծարվածը իմ հայրն է» (BDB 4): Նաբովր անունը նշանակում է «հառաչանք» կամ աստղորեն տեղանուն (BDB 637), մինչ Խառան նշանակում է «լեռնաբնակ» (BDB 248):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:27-30

²⁷Եվ սրանք են Թարայի ծնունդները. Թարան ծնեց Աբրամին, Նաբովրին և Առանին. և Առանը ծնեց Ղովտին: ²⁸Առանը մեռավ իր հայր Թարայից առաջ, իր ծննդյան երկրում՝ քաղղեացիների Ուր քաղաքում: ²⁹Եվ Աբրամն ու Նաբովրը իրենց համար կանայք առան. Աբրամի կնոջ անունը Մարա

Էր և Նաբովրի կնոջ անունը Մեղքա՝ աղջիկն Առանի, ով Մեղքայի և Հեսքայի հայրն էր: ³⁰Քայց Սարան ամուլ էր, նա զավակ չուներ:

11:27 «Ղովտ» Տե՛ս BDB 532 II:

11:28 «Առանը մեռավ իր հայր Թարայից առաջ /անգլ.՝ իր հայր Թարայի ներկայությամբ/» Սա երբայերեն դարձվածք է, որը նշանակում է, որ Առանը մահացավ իր հորից առաջ:

❖ **«Քաղղեացիների Ուր քաղաքում»** Քաղղեական մշակույթը զարգացավ (այսինքն՝ հիմնվելով Շումերական մշակույթի առավելությունների վրա) և բարգավաճեց Աբրահամից հետո (BDB 505):

11:29 «Սարա» Տե՛ս BDB 979:

❖ **«Մեղքա»** Տե՛ս BDB 574:

❖ **«Հեսքա»** Այս անձը (BDB 414) և այս համարում նրա ներկայությունը անհայտ է: Ռաբբիներն ասում են (նաև Ջոզեֆուսը, Ջերոմը և Օգոստինոսը), որ խոսքը Սարայի մասին է, սակայն տեքստը փաստում է, որ նրանք տարբեր հայրեր ունեին:

11:30 «Սարան ամուլ էր» Սարայի, Ռաքելի և Ռեբեկայի երեխաներ ունենալու անկարողությունը (BDB 785) այն միջոցներից մեկն էր, որով Աստված հայտնում էր Իր գործությունն ու վերահսկողությունը մարդկային պատմության և սերնդաբանության վրա: Մարդկային սեռական սերնդաբանությունը Մեսիայի տոհմաձառի կարևորագույն առանձնահատկությունը չէ:

Իսրայելի պատմության հետ կապված նույնատիպ աստվածաբանական առանձնահատկություն կարելի է նաև տեսնել այն փաստի մեջ, որ Մեսիական տոհմաձառի մեջ չկա առաջնեկ: Մշակութորեն առաջնեկն է համարվում ընտանիքի՝ տոհմի գլուխը, բայց դա այդպես չէ ՅԱՀՎԵԻ ժողովրդի համար: Այն կատարվում է ՆՐԱ ընտրությամբ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:31-32

³¹Եվ Թարան առավ իր որդի Աբրամին և Առանի որդի Ղովտին՝ իր որդու որդուն, և իր հարսին՝ Սարային՝ իր որդի Աբրամի կնոջը, և նրանք դուրս եկան քաղղեացիների Ուր քաղաքից՝ Քանանի երկիրը գնալու համար. և եկան մինչև Քառան և այնտեղ բնակվեցին: ³²Եվ Թարայի օրերը երկու հարյուր հինգ տարի եղան, և Թարան Խառանում մեռավ:

11:31 «դուրս եկան» Շատ քննարկումներ են տեղի ունեցել այն հարցի շուրջ, թե արդյո՞ք Թարան վերցրեց իր ընտանիքին իր հետ, թե՛ Աբրամը: Ոմանք ենթադրում են, որ սկզբում Աստված կանչել էր Թարային, սակայն նա կրկին վերադառնում է իր կուռքերին: Ինձ թվում է, որ Աբրահամն է ամբողջ այս բաժնի կենտրոնը, ոչ թե Թարան: Թողնելով Ուրը, Աբրամը թողեց ոչ միայն իր բարեկամներին, այլ իրենց ազգային աստվածներին՝ կուռքերին: Նա թողեց հարմարավետ, նստակյաց կյանքը, որպեսզի հետևի նոր Աստծուն, որը գաղտնի խոսել էր իրեն:

11:32 «Թարայի օրերը երկու հարյուր հինգ տարի եղան» Եթե ավելացնենք 11:26-ը 12:4-ի հետ, որը հավասար է 145 տարի և 205-ից հանենք դա, ապա կստացվի Թարան Աբրահամի Խառանից հեռանալուց հետո ապրեց 60 տարի: Սա կարծես թե հակասում է Ստեփանոսի քարոզին, որ տրված է Գործք 7:4-ում: Ստեփանոսի պատմական վերանայման մի քանի կետեր հակասում են Հին Կտակարանի պատմության մեր ներկայիս գիտելիքներին: Հավանաբար նա կիրառում էր ռաբբիական մեկության մեթոդներ: Այլ գիտնականներ փաստում են, որ Աբրամը, չնայած որ առաջինն է 11:26-ի ցանկում, ծնվել է շատ ավելի ուշ և որ Ստեփանոսը իր թվերի մեջ ճիշտ էր: Հետաքրքիր է, որ Սամարացիների Հնգամատյանը նշում է «144»:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ինձ այնքան էլ չեն մտահոգում հավատքի հանգանակները կամ դավանությունները: Ես նախընտրում եմ հռչակել հենց Աստվածաշունչը: Սակայն գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի դավանությունները այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում ինձ, թույլ կտան գնահատելու իմ վարդապետական հայացքները: Մեր օրերում աստվածաբանական այնքան շատ սխալներ ու շփոթություններ կան, որ կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը՝ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանը, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնահայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից՝ Իր գերբնական առաջնորդությամբ: Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է: Այն նաև մեր հավատքի միակ աղբյուրն է և Իր եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ Հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է Արարիչն ամեն ինչի՝ տեսանելի և անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթառատ Աստված, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է Երեք տարբեր Անձերով՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք տարբեր անձիք են, սակայն միևնույն էությանմբ:
3. Աստված ակտիվորեն վերահսկում է այս աշխարհը: Նա Իր արարչագործության համար հավիտենական ծրագիր ունի, որն անփոփոխ է և այնպես է գործում յուրաքանչյուր անհատի համար, որ թույլ է տալիս մարդուն ունենալու ազատ կամք: Ոչինչ առանց Աստծո գիտության և թույլտվության տեղի չի ունենում, սակայն Նա թույլ է տալիս թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց կատարել իրենց սեփական ընտրությունը: Հիսուսը Հայր Աստծո Ընտրյալ Մարդն է, և մենք բոլորս էլ պոտենցիալ ընտրյալներ ենք: Դեպքերի վերաբերյալ Աստծո կանխագիտությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:
4. Մարդկությունը չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց մի գերբնական արարած, միևնույն է նրանք պատասխանատու էին իրենց հոժարական անձնակենտրոն վարքի համար: Նրանց ընթացությունը ազդեց մարդկության և ամբողջ արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենեք, թե՛ Ադամի մեջ մեր բաժինն ունենալու և թե՛ հոժարական ընթացությունը համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և Իր փոխանորդական մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքերի համար: Նա է Աստծո հետ հաղորդակցության վերականգնման միակ ճանապարհը: Նրա կատարած գործին հավատալուց գատ ուրիշ փրկության միջոց չկա:
6. Մեզնից յուրաքանչյուրն անձամբ պետք է ընդունի Աստծո կողմից առաջարկվող ներումը և Հիսուս Քրիստոսի մեջ ունեցած վերստին ծնունդը: Սա տեղի է ունենում Հիսուսի միջոցով Աստծո խոստումներին հոժարական վստահելու և մեղքից հրաժարվելու միջոցով:
7. Մենք լիարժեք ներում ենք ստանում և վերահաստատվում Քրիստոսի վրա ունեցած մեր վստահությանմբ և մեղքից ապաշխարությամբ: Սակայն այս նոր փոխհարաբերության կյանքի ապացույցը մեր վերափոխված և վերափոխող կյանքն է: Աստծո համար մարդկության նպատակը միայն երկինք հասնելը չէ, այլ հիմա Քրիստոսի պես լինելը: Նրանք, ովքեր իրոք փրկված են, թեև երբեմն մեղանչեն, կշարունակեն հավատքի և ապաշխարության մեջ ապրել իրենց ամբողջ կյանքի ընթացքում:
8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն» է: Նա ներկա է այս աշխարհում, կորած մարդկանց Քրիստոսին առաջնորդելու և փրկվածների մեջ Քրիստոսի կերպարը ձևավորելու համար: Հոգու պարզևները տրվում են փրկության ժամանակ: Պարզևները Քրիստոսի կյանքի և ծառայության իմաստն են, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում: Պարզևները, որոնք հիմնականում Հիսուսի վարքն ու շարժառիթներն են, պետք է գործադրվեն Սուրբ Հոգու պտուղներով: Հոգին գործում է մեր օրերում ճիշտ այնպես, ինչպես գործում էր աստվածաշնչյան ժամանակներում:
9. Հայրը հարուցյալ Հիսուս Քրիստոսին դրել է ամեն բանի Դատավոր: Նա վերադառնալու է երկիր դատելու ամբողջ մարդկությանը: Հիսուսին հավատացողները, որոնց անունները գրված են Գառան Կյանքի Գրքում, Նրա վերադարձի ժամանակ կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները: Նրանք հավիտյան Նրա հետ կլինեն: Սակայն նրանք, որ մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը, հավիտյան բաժանված կլինեն Երրորդություն Աստծո հետ ջերմ հաղորդակցության բերկրանքից: Նրանք կդատապարտվեն Սատանայի և նրա հրեշտակների հետ միասին:

Անշուշտ սա ամբողջը չէ, սակայն հուսով եմ, որ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական համն ու հոտը: Ես սիրում եմ այս արտահայտությունը.

«Կարևոր բաներում՝ միաբանություն, երկրորդականում՝ ազատություն, իսկ ամեն ինչում՝ սեր»: